


542-3
2-84

Handwritten
56

800
25

Handwritten
142

§ 2004



† ԱՂԷՔՍԱՆԴԻ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ԱՐԱՐԱՏԵԱՆՑ

1005 8

Արթուր Գոզգրեւ:

Այս գրքի մասնաշաղկապը խորհրդով հանձնելով
նպատակահարմար էր, իսկ երբ կը գտնուէր
դրան, ինչ որ կ'ընդհանրէր զբնակարարներու
խնայարարները, կ'ընտանայր ինչպէս
Յարութեան արարչի, որպէս խորհրդով
հարմար էր նպատակահարմար ընտել
դրան: Այս նպատակահարմարութեամբ:

Արթուր Գոզգրեւ նպատակով ինչպէս
իսկ նպատակով: Իսկ այս գրքով ընդ առնու
նպատակով իսկ, ինչ որ (իսկ, ինչ որ) ինչպէս
նպատակով: Ինչպէս նախ ինչպէս
իսկ ինչպէս նախ ինչպէս

Ինչ որ Գ. Գոզգրեւ

7-ի յունիստ 1910. Քաղկեդոն

766/100/1012
142
542-3
84
ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ



(ԳԱՒԱՌԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ)

1001
1012

Գրք


ԱՂԵՔՍԱՆԴԻ ԱՐԱՐԱՑԵԱՆՑ



ԹԻՖԼԻՉ

Տպարան Մովսէս Վարդանէանի
1889

1884



Աղէքսանդր Արարատեանցը ծնուեցաւ 1854. թ. մարտի 18-ին Շամշուղա գիւղում: Նորա հայրը, Տէր Պետրոսը, ոչինչ չէր խնայում որդու դաստիարակութեան համար, բայց Աղէքսանդրը վաղ զրկուեցաւ հօրից, եւ մանկան դաստիարակութիւնը յանձնուեցաւ սարկաւագուհի կոյս Եղիսաբէթին: Այս բարի անձնաւորութիւնը ամենազօրեղ տալաւորութիւն է գործում մանուկ Աղէքսանդրի մատաղ սրտի վերայ եւ վերջինս անյագութեամբ կարգում է բարեպաշտ կոյսի աղքատիկ գրագարանի գրքերը եւ վարժվում գրագիտութեան արուեստին: Եւ մինչդեռ մանուկը նոր է սկսում ճաշակել ուսման քաղցրութիւնը, ահա անգութ մահը խլում է նրանից իւր միակ դաստիարակչուհուն, իւր անգուգական բարերարին եւ տասնամեայ պատանին ստիպվում է ձեռք առնել հօտաղի մահակը, այնուհետեւ մայր բնութիւնից ստանալով իւր կրթութիւնը: Սորանով միայն կարելի է բացատրել այն հանգամանքը, որ նորա երկերի մէջ զարմանալի ճիշտ են նկարագրած գիւղն ու գիւղացին իրենց նախնական պարզութեամբ. իրենց բոլոր պակասութիւններով ու առաւելութիւններով. այս երկերի մէջ տիպերն այնքան կենդանի են եւ այնքան մարդու սրտին մօտ, որ կարծես թէ բոլորը կատարվում է ընթերցողի աչքի առաջ, նորա անմիջական ներկայութեամբ:

Доз. Цензурою, Тифлисъ 16 Апрѣля 1888 г.
 Типографія М. Вартапянца, Тройц. пер. домъ № 11



142-2014

2004

1884

Այդ՝ մանկական ուղեղը բեղմնաւորող չորս երկար ու ամենաթանկագին տարիները կարող էին նրա միջից իսպառ ջնջել, անհետացնել եւ ուսման առաջին կայծերը, եթէ բարեբաղտաբար չը բերուէր գիւղից Թիֆլիզ եւ չը յանձնուէր Ներսիսեան դպրանոց: Սակայն հազիւ թէ մի փոքր ժպտաց նրան բաղդը: ահա՛ յոյսեր խորտակող, ծիւրեր չորացնող չքաւորութիւնը շուտով եւ վերջնականապէս դուրս հանեց նրան դպրանոցից, թող չը տարւոյ վայելել իւր ճաշակած ուսման քաղցրութիւնը: Նա թողնում է դպրոցը, տանելով իր հետ ապագայում իր ազգին պիտանի լինելու մի, թէպէտ եւ աղքատիկ, սակայն բազմապատկուելու եւ զարգանալու ընդունակ պաշար: Նա այնուհետեւ մտնում է ուսուցչական ասպարէզը եւ չը նայելով որ յատուկ այդ պաշտօնի համար չէր պատրաստուած, բայց եւ այնպէս իւր աշխատասիրութեամբ եւ ինքնակրթութեամբ արժանի է կացուցանում իւր անձը այդ պաշտօնին, եւ նրա գործունէութիւնը յաջողութեամբ է պատկընդամբ գիւղական դպրոցներէ: Հայ գիւղերը՝ Շամշուղա, Մեծ Դաղէթ, Փիբ, Հաղբութ եւ Վաղարշապատ փայելել են նրա երկանց պտուղները եւ հայ-գիւղական համայնքները գտել են նրանում իրանց վիճակին կարեկից եւ վերքերին սպեղանի դնող մի աղնիւ մարդ, մի պարտաճանաչ ուսուցիչ:

Իայց աչալուրջ պատանու համար ի զուր չէին անցել բնութեան գրկում անցուցած տարիները, ուր գիւղացու հետ սերտ կապուած լինելով, իմօտոյ էր ուսումնասիրել նորա կացութիւնը, նորա նիւթական, մտաւոր ու բարոյական կեանքը: Չը նայելով իւր ուսուցչական ծանր


պաշտօնին, Աղէքսանդր Արարատեանը իւր տկար ոյժերը նուիրում է նա եւ ժողովրդական գրականութեանը, անարատ բնութեան հարուստ աղբիւրից ընծայելով իւր սիրելի Ազգին մերթ գողտրիկ ոտանաւորներ, մերթ վիպական արձակ գրուածներ: Աշխատասէր ուսուցիչը գիւղն ու գիւղացին իւր անկազմ՝ բայց ինքնուրոյն գրչի նիւթ շինելով, Ազգի մատենագրութեան մի քանի ուշադրութեան արժանի երկեր է ընծայում, ինչպէս օրինակ՝ «Երկու թումբ», «Խղճութեան արգասիք», «Քնարիկ մանկական», «Գիւղական խալիֆայ», «Փնջիկ» եւ ներկայ գրքոյկը, որի համար գրած հեղինակի երկտողը բարուք համարեցինք անփոփոխ տպագրել:

Իր ինքնուրոյն եւ զուտ հայկական գրոշմ կրող գրուածքներով նա զարգարում էր «Արարատի» էջերը, «Վարժարան» մանկավարժական ամսագրի մանկական բաժինը եւ երկար տարիներ աշխատակցում էր «Մեղուին», թղթակցելով սրան այլ եւ այլ գիւղերից, ուր ձգում էր նորան յեղյեղուկ բաղդը:

Նա թողել է բաւականաչափ թատրոնական վիպական գրուածներ, ի թիւս որոց՝ «Մանկական երգարան» «Տըլոտ Կարօ» «Անսէր ամուսնութիւն», «Սուտ ձգնաւոր» «Կրակի մէջ եմ ընկեր», «Չայն», «Փոքրիկ ախոյեաններ» «Մի ուսումնարան» եւ այլն:

Ա. Արարատեանը արժանապէս մտաւ հայ հեղինակների ակումբը, եւ արգէն առաջ էր գնացած մի պատուաւոր տեղ բռնելու այնտեղ, սակայն փողահաս մահը իղեց նրան իւր ընտանիքից եւ իբրեւ Ազգի մշակի, սրա մտաւոր անգաստանից: Նա կնքեց իւր մահկանացուն 1884 թ. Դեկտեմբերի 23-ին, նոյն ամսի 26-ին թեմիս

Առաջնորդ Արիստակէս Սրբազանի, արժանապատիւ բաճանայից եւ ուսուցչաց խումբն բազմութեան ներկայութեամբ հողին յանձնուեցաւ վազամեռիկ Արարատեանցի մարմինը, անմուաց յիշատակ թողնելով իրան յարգող պաշտօնակիցների եւ հայ-գրականութեան մէջ:



Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն Ի Տ Ե Ղ

Անցեալ տարի «Տփլիսի Հայերէն գրքերի հրատարակութեան» ընկերութեան տպագրութեամբ լոյս տեսաւ մեր «Գիւղական խալիճայ» գիրքը, որին քննադատելը մենք բողոքեցինք գրականութեան մէջ գործող ուժերին:

Այժմ էլ անս, լոյս եկք ընծայում մեր երկասիրութիւններից՝ «Հիմնարկութիւն գաւառական ուսումնարանի» վէպը այս վերնագրից պարզ երեւում է՝ քե սրա նիւթը ինչ աղբիւրից է առնուած:

Մեր այժմեան ծխական—ժողովրդական ուսումնարանները հիմնուել են երկու կերպ: Առաջինը «Խալիճայական» անբարեկարգ ուսումնարանները բարեկարգուել ու նոր կազմակերպութեամբ ջարուհակել են իրանց գոյութիւնը, ինչպէս մենք այդ նկարագրել ենք մեր «Գիւղական խալիճայ» գրքի մէջ: Երկրորդը ճիշտ սննդ կերպով, սննդ եղանակով ու միջոցներով, ինչպէս կը տեսնեք այս գրքում:

Մենք շարունակելու ենք մեր գործը այդ ճիւղի վերաբերութեամբ, քաջ համոզուած լինելով որ ապագայում անյիբանկ կը գնանատուին մեր աշխատասիրութիւնները եւ քե կենդանի նկարագիրը կը լինեն մեր ազգային լուսաւորութեան պատմութեան . . .

Այժմ ո՞վ որ կարգայ սիրում է, ո՞վ որ նետաքրքրվում է նոր նոր հրատարակութիւններով, բող ու շ ա գ ռ ու ք ե ա մ բ կարգայ էւ այս գիրքը. էւ եք նա չը կարողանայ կամ ծուլանայ գրքի պակաս—պռատի վրա մեր ուշադրութիւնը դարձնել, գոնէ խօս ինքը մի բան կարդացած ու մի քանի բան էլ ստովորած կը լինի. . .

Աղ. Արարատեանց.

տաքացնեմ, երեխանցս հետ թաթախաղ տամ, ան թէ
չէ՛ մտնեմ գոմը, տաւարիս տակը քերեմ, ձիուս թի-
մար անեմ...»: ձիշտ այս պատկերն էր ներկայացնում
Փ... գիւղը:



Իրիկնապահն ընկաւ թէ չէ՛ ժամհարը եկեղեցու
դրանը երևաց: Նա մի գձուձ քրքի մէջ փաթաթուել՝
մի անձ դա կոթ ձեռքին ծուին անելով, եկեղեցու
ճռճուան դուռը համ բաց էր անում, համ կմկմում.
«Ով որ վարձք ա ուզում, թող էս ցրտին ժամ դայ,
որ դրախտին տես գնայ, լսի փայ դառնայ...» Ասեա-
լով ցնւրտն էր ժամհարին ստիպում, որ խեղճը ինքն
իրան էլ բձրձը էր խօսում ու չորս կողմին չէր նայում:
Հէնց այս միջոցին երկու ձիաւոր անցնում էին:
«Ժամհար, ձայն տուեց նրանցից մէկը, տէր-Պողոսը
տանն ա՞»:

Ժամհարը մեծ մարդի պէս ք ա ո ա ն կ ա ջ ի տուեց:
«Ժամհար, ժամհար, տէր-Պողոսը տանն ա՞...»:

— Էս ինչ սարսաղ մարդ ա ըլել. նա որ տանը
չըլի՛ ժամի դուռը բաց կ'անեմ, տէրտէր եմ-որ ժամ
ասեմ: Ժամհար ապերը առանց գլուխը բարձրացնելու
այսպէս պատասխանեց ու ներս մտաւ տաճարը:

Ձիաւորները շատ զգուշ և կամաց էին քշում ձիա-
ները: Երևում էր՝ որ սրանք տէր-Պողոսի տունն էին
գնում:

Տէրտէրի տունը շատ հեռու չէր եկեղեցուց: Ձիա-
ւորների բաղդից՝ նորա փոքր տղան դուրս պոճաւ տանից

բոբիկ ոտքերով, արխալուղանց, սրահուձը ցուրտ խպշ-
տելով «նհ-նհ» արեց, «ծուլ-ծուլ» էլաւ ու այս ման-
կական երգը բարձրաձայն արտասանեց—

«Հիմիկանց դէնը բարիկենդան ա,
Բարիկենդանը մեզ ուրախ օր ա,
Ով որ ինչ ունի՝ կ'ուտի-կը խմի,
Ով ոչինչ չունի կ'ուզի - կը մ դըրի:
Չունքի՛ գալիս ա երկէն ա դիքը,
Որ մեր հանդին տայ գարնան ծաղիկը:»

— Երկէն աղիքը— հայ, հայ.

Գարնան ծաղիկը— հոյ, հոյ...

Երեխան ինքն-իրան խնդում էր: Մէկ էլ լանկարծ
եկեղեցու կողմը նայեց, ճանաչեց առաջի ձիաւորին ու
«մեր աղէն, մեր աղէն, ջան-ջան» ծկլթալով տուն
ընկաւ:

Շուտով տանըցիք դուքս թափեցին: Լսուեց մեծ
նանի ձայնը—

«Ես քեզ մատաղ, Էս... քու չճրին փոխ ըլիմ,
քու շունը դառնամ, ոտներովդ փաթաթուեմ, դառնդ
հաչամ-աղա ջան... Սղջի՛, տէրի անկաջը բռնեցէք:»

Երգող տղան ծլիկեց հօրն ականջաբռնուկ անելու:
Այդ ըսպէին տէրտէրը միջնաօթախուձը լուացվում էր,
որ ժամ գնայ: Ձիաւորներից մէկը հազիւ թէ կարողա-
ցաւ ասել. — տէրտէր, նանի, կրակը թէժացրէք սառել
փետացել ենք: Իսկոյն հարսներից մէկը տուն ընկաւ:
Երկսին էլ ձիաներիցը վէր բերին: Նանը մէկի վզովը
փաթաթուեց: Ձահիլները նրա սառած ձեռքը համբու-

րեցին: Երևի միւսը անծանօթ էր՝ ոչ ով չը վստահացաւ նրան ևս բարեւել: Եւ ինչպէս բարեւէին, գուցէ նա հայ չէր, հայերէն էլ չը գիտէր: Տէրտէրը, աչքի տակովը անծանօթի պատկերն ու հասակը դիտելով, հայի նմանութիւն տուեց — «գու էլ բարով ես եկել, աղբէր ջան, սասց, տուն համեցէք...»

Երկուսն էլ կաղէկաղ ներս մտան:

Բ.

Ո՛Վ Ք Ե Ր Ե Ն Ձ Ի Ս Ի ՈՐ Ն Ե Ր Ը.

Ինչպէս մի ժամանակ մելիքների, նոյնպէս և այժմ բեգերի ազգեցուծիւնը մեծ էր գիւղերի վրա: Մեծ մասամբ դրանք չէին ապրում գիւղերում-գիւղացի էլ չէին, այլ Գանձակ քաղաքում՝ որտեղից միայն ամառն էին այցելում գիւղերին ինչ ինչ շահասիրական նպատակներով: Մինը ազդում էր մի գիւղի, որից և ճանաչուած ու յարգուած էր. միւսը, երրորդը, չորրորդը ուրիշ ուրիշ գիւղերի: Բեգերի մէջ մրցում կար: Մինը յօլոր-մոլոր միջոցներով ճիգն էր թափում այս ու այն բեգի անունը կոտրել-վատ հռչակել ծանօթ գիւղի առջև, որ վերջինիս սէրն ու համակրութիւնը. հետևապէս, և սպասելի օգուտներն ինքը վայելէր: Գիւղերի օգուտն ու բարեքցանկացողների թիւը շատ քիչ էր. այդպիսի բեգերը բացառութիւն էին կազմում: Գիւղացիներն իրանք էլ զգում էին՝ որ բեգերը բացի իրանց հաւ ու ճիւղը, ոչխարն ու կովը, ձիու քուռակն ու դամազը ուղի տաւարը

և այլ տեսակ ընծաներն ստանալուց՝ ոչինչ օգուտ չեն տալիս իրանց. բայց թէ մի անգամ «մեր» էին ասել ու միջին մնացել:

Որդին հօրը տեսել էր տեղն ընկած միջոցին «այս ինչ» բեգին ղուլլուղ անելիս-պատուելիս, ինքն էլ ոնց հեռանար նրանից, հեռանալն էլ իր օջաղին անպատվութիւն էր համարում: Բեգի հետ խօսելը, քաղաքում նրա տուն մտնելը-թէկուզ սոված փորով էլ դուրս գար էլի մի պարծանք էր մեր գիւղացու համար: Ախր մի համեմատիր. լանթ ու մանթ շորերը հագին, փթալաշակ տրեխը ոտքերին, տղաթեւած գիւղացի... և յետոյ՝ քաղաքի փողոցները չափչփող, շլապկէն գլխին, աստղը ճակատին, ճռճռան պօլուսապոչկէն ոտքին, աչքը ճամբին, ականջը ձէնու՝ թէ որ գիւղացին իր համար եղ, պանիր և կամ մի ուրիշ ընծայ կը բերի... այսպէս ուռած ու փքուած բեգ: Ո՛րքան մեծ տարագայութիւն կայ երկսի մէջը: Հարկաւ, թոյլը կուգէր զօրեղի հետ միշտ բարեկամ լինել, չքաւորը՝ հարուստի, լիմարը՝ ուսեալի: *)

Վանի-բեգը թէ և այս տեսակ բեգերի դասակարգի մարդ էր, բայց նրա համար սուրբ էր գիւղացու անհատական շահն ու օգուտը. նա հասարակութեան ընդհատական

*) Գիւղացիք «ոսաշոր» հագած մարդին բեգ պատուանունն էին տալիս: Աւելի պատկառում եւ վախենում էին այն սպակաւորից, որ կրում էր ճակատին կակարդը: Այս նշանից ուստա գեղացին շատ բան է հասկանում... որ նա իսկ բեգ է. շատ բան կարող է շինել-շատ բան էլ քանդել... որ նրա բրի երկու կողմն էլ կտրուի է: Այս գաղափարը մերոնց մեջ ինքն-իրան չի մտել, այլ մտցրել են:

նուր շահերին անձնանուէր էր և երբէք իրան թոյլ չէր տուած միամիտներէց գոփել-գըլելու: Փ... գիւղը իր ծննդեան սրբավայրը լինելով, ցանկանում էր՝ որ մինը թէ միւսը և թէ ընդհանուրը վնաս չըկրի իր պատճառով: Նա արքունական ծառայութեան մէջ պաշտօն ունենալով, գոհացուցիչ ռոճիկ էր ստանում, որով և կերակրում իր ընտանիքը: Գանձակում Վանի-բեգի տունը Փ..., գիւղացիների իջևանն ու պատուարանն էր: Ով որ քաղաք գնար-գնանք մեր Վանի-բեգին հանդիպենք-կասէր: Ահա, այս մարդն էր՝ որ այսօր թողել էր իր ընտանիքը քաղաքում, եկել գիւղը՝ որ բուն-բարիկենդանի ուրախ օրերը իր հայրենիքում անց կացնի: Բայց և այնպէս՝ նրա գիւղը գալու իսկական պատճառը միայն այդ չէր: Եթէ չէք մոռացել, նրա հետ մի ուրիշ ձիաւոր էլ կար՝ բոլորովին անծանօթ գիւղին: Սա էր եղել պատճառը, որ քնորջ էր տուել բեգին դէպի գիւղ. սա որ չը լինէր՝ բեգն իր տան սեղանին նստած՝ կախէթի կարմիր գինին շպոտելիս միայն կը յիշէր գիւղին: Անծանօթ ձիաւորը Վրաստանի և իմերէթի հայոց դպրոցաց թեմական վերատեսուչն էր:

Այս աշնան սկզբից թեմական վերատեսուչը Տրփիսը թողել, գաւառական քաղաքների ու գիւղերի դըպրոցներին այցելում էր: Շամշադնայ վիճակից գալով Գանձակ, մասամբ կարգի դրեց այդ քաղաքի առասպելական անցեալի տէր ուսումնարանները, ապա ուզեց շրջել Գարգման գաւառը, բայց այդ լեռնային երկրում էլ դեռ ոչ «ուսումնարան» խօսքն էին լսած և

ոչ «վերատեսուչ»: Սա մօտիկ մարդկանցից տեղեկացաւ՝ որ բեգերը մեծ ազդեցութիւն ունեն գիւղերի վրա, վճռեց, որ առաջին ուսումնարանը առաջին գիւղում բանալիս տեղին ծանօթ բեգը իրեն աջակից ունենայ. նա փորձով գիտէր՝ որ երբ մի կենդրոնական գիւղում ուսումնարան կը հաստատուի, շրջակայ գիւղերն էլ անշուշտ կը ձգտին նմանուիլ նրան, ոչնչով պակաս չը մնալ նրանից: Գաւառում միակ ուսումնարանը եթէ կանոնաւոր յարատեւութիւն ունենայ, ինչ կարծիք, որ միւսնոյն ժամանակ բարերար ազդեցութիւն էլ կ'ունենայ հարևան գիւղերի վրա: Սեր վերատեսուչի իդէան էր— ունենալ կենդրոններում ուսումնարաններ՝ միայն ապահով և կանոնաւոր:

Այսպէս, խոհուն մտածմունքով թեմական վերատեսուչը Գանձակում մի քանի անգամ վիզիտ գնաց Վանի-բեգի տունը, ծանօթացաւ և ինչինչ սիրալիբ խօսքերով գրաւեց նրա սիրտը և կարողացաւ այս ցուրտ ձմեռը նրան իրեն աջակից ու ուղեցոյց վերցնել: Ինչինչ տանջանքով նրանք անցան լեռներ ու ձորեր, դաշտեր ու թմբեր, և նեղ կէճաններով, տեղ ոտքով, տեղ ձիով շարունակ օր ու կէս, ճամբա կտրեցին, հասան Փ... գիւղը, որ մենք տեսանք:

— Հարսները իսկոյն ջուր տաքացրին, թանկագին հիւրերի ոտքերը լուացին և օջաղի կրակն աւելի ու աւելի թէթացնելով՝ քաշվեցին միջնաօթախն իրանց հուճուկ-պուճուկներով: Այնուհետև հիւրերը մի փոքր տէր-

տէրի հետ խօսեցին, իր և գիւղի «հալ ու աֆալը» հար-
ցրին ու դռները կրակին դէմ արած թինկ տուին բար-
ձակալների վրա:

«Զեզ մատաղ, զարթուն կացէք, իրիկնահաց կերէք,
սոված կըլէք» — կմկմաց նանը Վանի-բեգի ականջումը:

— Չէ, ա՛ նան, ասաց բեգը, չէ՛, քունը մեզ հա-
մար աւելի քաղցր ա, թո՛ղ, աչքներիս լուսը թռչում,
գլուխներս ծանրանում ա:

«Դէ վեր կացէք, տեղերը քցեմ. պուճուր հարսիս
եօրղան-դոշակը թափ-թագայ ա:»

— Թո՛ղ, նանի, էս խալիչի վրա քնելն աւելի քաղ-
ցըր ա: Միայն երբոր կը քնենք՝ շորով ծածկի:

— Վանի-բեգ, ասաց վերատեսուչը, նանին ասա, որ
էս գիշեր կրակը չը հանգցնի:

— Հա՛, նանի, էս գիշեր կրակը թէժ պահի ու զգո՛յշ
կաց, որ պէժ չը թռչի ու շորերներս էրի:

«Լա՛ւ, զատէն, դուք քնեցէք»:

Նանը ծածուկ «Յիսուս-Քրիստոս» արեց նրանց վրա:

Գ.

ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ՕՐՕՐԸ:

Կէս գիշերն անցաւ: Նրազ չըկայ: Օջաղի կրակը
մղմեղել է: Տան սոխախկումը թէ աքաղաղներն են բարձ-
րաձայն երգում և թէ թառած հաւերը շարունակ կըռ-
կոռն: Մէջքումը-դունից մօտիկ դալ թար շունը գէ-
լահահ էր տալիս: Մի քանի անտէր կատուներ երդ-
կիցը մլաւելով դէպի ներս էին պուշկում, իսկ տան կա-

տուն մկներ որսալուց դադարել ու վերատեսչի գլխի
մօտ իր համար տաք տեղ էր արել և անդադար «բը՛ռ-
բը՛ռ» անում: Ճուրները շարունակ ճուրք-ճուրքում,
ձայն էին հանում: Մկներն էլ շարունակ վշտի էին
տալիս սրա ու նրա տեղաշարի վրա ծվծվալով: Տէր հօր
խուրմփոցը չարաչար լսվում էր: Մի անկիւնում տէրտէրի
տղերանցից մէկը մերթ անկապ անկապ խօսում, մերթ
լռում էր: Միւս անկիւնում օրօրոցի երեխան, տէրը
փրկէ, թէ ինչպէս ճղավում, բղավում, ծիծ է ուզում
և քնակով մայրը «թը՛խկ հա չը՛խկ» օրօրոցն էր
օրօրում, որ գուցէ երեխային կարողանայ շմացնել,
շշկլացնել ու քնացնել... Սյս չեղաւ, չը լաջողուեց: Հարսն
ուշքը հաւաքեց, քունը գլուխը քցեց, մի քանի ան-
գամ «փիշտ-փիշտ» արեց, մի փոքր ծիծ տուեց երեխա-
յին, և ապա նկատելով որ տան մէջ մեռելու թիւն է
տիրում, համ օրօրեց, համ բարակ ձայնով օրօր կանչեց.

«Նանիկ արա, բալա ջան,

Օրօրոցիդ ես ղուրբան...»

Որ լիսանալ-ձէն կըտաս,

Կաթը կը տամ-կը մամս...»

Հիմի նանա, ես էլ նանամ,

Քունս հանեմ-թէգ վեր կենամ...»

Կորի կատու, կորի ա՛յ շուն,

Իալիս աչքին իմ սրտի քուն...»

«Քնի միջին էրազ տեսնես,

Էրագումդ ասլան ըլնէս.

Թուանք առնես, զամէն կապես.

Սև ձին նստես ու դուրս ընկնէս.

Մեր խեղճ գեղի տէրը դառնաս,
 Մեր դուշմանին մահ ու գրող տաս՛...
 Հիմի նանա, ես էլ նանամ,
 Որ կշտանամ-թէզ վեր կենամ՛...»

Լուսնակի աղօտ լոյսը երգկովն ընկել էր ուղիղ թեմական վերատեսչի երեսին: Նա ընկնելով այդ լուսնաշողքի և տանը լսվող ձայների արդեցուլթեան տակ, զարթնեց հէնց այն րոպէում՝ երբ հարսը մթին անկիւնումը երգում էր: Այս ամենին անսովոր մարդը նստեց իր տեղը և երկնիւր ժամանակ դիտում էր ամեն մի երևոյթ: Նա շատ ափսոսեց, որ ինչի մի փոքր շուտ չէ զարթնել ու գեղջկուհու օրօրն ու քաղցր եղանակը ամբողջապէս լսել: Նրան երազ էր թվում, թէ իրանք ինչպէս են այս ամայի տունը մտել և ինչպէս հէնց շորերով պառկել ու քնել: Նա իր ծոցի ժամացուցին նայեց, տեսաւ՝ որ դեռ ժամի երկուսն էր և նորից պառկեց:



ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ:

Անցաւ միջոց: Տղերքը կամաց կամաց զարթեցին: Տէրտէրը յօրանջելով քուրքը հագաւ, մօտեցաւ կրակին ու խօսք բացեց: «Է՛հ, Վանի-բեգ, իրիկունը ես ձեզանից ըսկի մի բան չիմացայ, թէ էս ցրտին ո՞ր էք եկել:

Ես գիտեմ՝ որ առանց բանի չէք: Էս պարոնն էլ պատուական, ուսեալ ու շնորհքով մարդ ա երևում»:

— Տէրտէր, ասաց բեգը, էնպէս բանի համար ենք եկել. որ ասենք՝ կուրախանաս:

— Լաւ տէրտէրը, խօսքը կտրեց վերատեսուչը, մեզ նման մարդիկ տեսնելիս պէտք է միշտ ուրախ լինի ու օգնի մեր բանին ու գործին:

«Որդիք, աթալարն ասում ա — իմ հացը կէս անող չը տեսնեմ, ամեն բանի դարուլ եմ-ես էլ ըդէնց. իմ հացին ձեռը չըտաք, բաշ ուստա, աչքիս վրա:»

— Զեր հացը ո՞րն է:

«Իմ հացը, աղբեր ջան, երեք բան ա- ժամը, ժողովուրդը ու մի քանի մօնթեր»:

— Է՛լ, հարցրեց բեգը. — «Էլ ոչինչ»:

— Մի քանի մօնթեր... մտմտաց վերատեսուչն ու նայեց Վանի-բեգի երեսին:

— Շատ լաւ, մօնթերը ո՞նց են քո հացը. նրանք քեզ թնչ են տալիս:

«Վանի-բեգ, բա դու չը գիտես. ութ մօնթ ունիմ, ամեն տարի նրանց տէրերը մի մի օրավար վար են աւնում ինձ համար, եղից՝ եղ, պանրից՝ պանիր, մեղրից՝ մեղր են դարկում. գինի, արաղ ու պատիւներն էլ ժամանակին միշտ ստանում ենք: Վախտ վախտ մօնթերը մեր տան բանն էլ շինում են-փէտը կտորում են կրակի համար, ձիուն ջուր են տալիս, մի-մին գոմը քերում են, թրիքը դուրս են տալիս, մեր տանըցոնց բանը լըսում են... բա սա հաց չի: Մօնթ կարդացնելը խօ հեշտ բան չի: Ինչ բան դժար ա, հալբաթ արդիւնաւոր ա...»:

— Հապա տիրացուլթիւն չեն անում:

ձշմարիտ, ժամը զարդարում են. փոխերն ու քարոզները փլաւի պէս են ուտում: Էս գեղումը մենք հաստատ տիրացու չունենք, մօնթերն են մեր երեսը պարզ անում: Որդիք, բա սա հաց չի:»

— Ասենք այդ լաւ է, տէր հայր, ասաց վերատեսուչը, որ շնորհք ունես վարդապետում ես մօնթեր պահել, միայն ինչի դրանք շատ չեն. միթէ չէիր կարող 40-50 և մինչև անգամ 100 աշակերտ ունենալ ու գրել-կարդալ սովորեցնել:

«Որդի, սրանից մի քանի տարի առաջ էս գեղը մի վարպետ եկաւ, թէ հայ-հարայ... Էս գիտուն եմ, ես խալֆա եմ, ինձ բռնեցէք գեղիս երեխանցը կարդանեմ... խալիսն էլ տարով բռնեցին: Նա մի երկու տարի գեղիս գոմերումը 100 աշակերտ կարդացրեց, ամա ինչ օգուտ. հարըրից մինն էլ բան չը դառաւ, ուտում-նարանն էլ փող մի շեյաւ: Ետ մօնթ կարդացնելը շատ ջան կը պահանջի, ամա ես ծերացել—էլ էնքան ուժ չունեմ: Վանի-բեգիցը տասնըվեց տարով մեծ եմ. դրանից մեծութեան նշանները երևում են, բա ես ինչ կըլեմ: Համ էլ բողկը որ սեհրակ ցանես՝ աւելի կըմեծանայ: Թող քիչ լլի՛ պտղատու, քան թէ շատ՝ անպտուղ: Անտառումն էլ անպտուղ ծառեր շատ կան, մեզ թնչ:»

— Այդումը որ ծառեր շատ կան՝ պտղատու չեն, շուտ վրաբերեց վերատեսուչը:

«Եդ էլ, որդի տնկողն ա իմանում: Ո՛ւրա էն բաղմանչին, որ իրա բողի անպտուղ ծառերն էլ պտղատու շինի: Տեսէք, որդիք, ձեզ մի բան ասեմ, որ մինչև օրս կարելի ա լսած չէք: Մեր ժամանակումը երեք դարդի ուտում-նարաններ կան, ասենք՝ երեք դարդի խալֆաներ կան:»

— Ի՞նչպէս: ...
«Ասեմ: Մի սմարան կայ՝ որ էս մեր վանքերումն են մօնթ պահում ու ան վարդապետն ա կարդացնում, ան նրա սարկաւազը: Մի ժամանակ Չարեքայ վանքումն էլ կար ու ես էնտեղ եմ կարդացել Չամչեան քերականութիւնը՝ ողորմածիկ Դանէլ վարդապետիցը. ամա հիմի՛ այ Թարգմանչաց վանքի դասմարանը ձեզ օրինակ, որ Թէոդորոս վարդապետն ա վարժապետը: Էս մէկ: Մի դասմարան էլ կայ՝ որ թոկից փախած հազարի աման լպտած մարդիկը անճանաչ գեղերումը իրանց գիտուն ու հոգևոր մարդ էին հաշվում ու խալֆա դառնում... ան թէ չէ՝ հէնց գեղերի բաբաթ գիր իմացողը, լաւ խելօք ու իրան պահող տիրացուն խալֆա էր դառնում ու 50-60-100 երեխայ կարդացնում տարիներով: Ձեզ օրինակ— էս գեղի Վարդան խալֆէն, Մարդի խալֆէն, Բէգլար խալֆէն ու շատ շատերը, որ էս մհալումն են ու ես ճանաչում եմ: Էս էլ երկու:— Մի ուսմարան էլ կայ՝ որ գեղերի բանիբուն տէրտէրները մօնթեր են պահում, ոնց որ ես... էս էլ երեք: Եանի գրուտ չի ասածս, որդի:»

— Ասենք՝ դրուտ ա, խօսեց բեգը. բա թնչ ա էդ երեքի զանազանութիւնը:

— Վանի-բեգ, տէր հօրից ուրիշ պահանջ մի անելդա ինչ էլ ասաց՝ շատ ուղիղ և մինչև անգամ պատմական նշանակութիւն ունէր: Արդարև, այժմ մեր մէջ երեք դասակարգի ուսումնարաններ կան. այսպէս ասենք վանական, խալիֆայական և մասնաւոր կամ հէնց տէրտէրական: Վանական ուսումնարանը գեղերի համար կենդրոնական է համարուած և այնտեղ երեխա-

ները ոչ թէ միայն ժամասացութիւն են սովորում, այլ և խրթին գիտութիւններ — ճարտասանութիւն, Չամչեան քերականութիւն, արամաբանութիւն, Աստուածաբանութիւն և այսպիսի տեսակ տեսակ գիտելիքներ: Վանական ուսումնարանը ընդունում է գիշերօթիկ և երթևեկ աշակերտներ: Ինչպէս վանքի միաբանութիւնը, նոյնպէս և ուսումնարանը պահպանվում է մեծ մասամբ ժողովրդի առատաձեռն նուէրքներով ու արուքերով: Վանական ուսումնարանի սկզբնական նպատակը չէ եղել ժողովրդի համար մարդիկ պատրաստել, այլ գիտուն վանականներ՝ երկնքին ու սրբերին սիրահար մահկանացուներ:...

Խալիֆայական ուսումնարանը՝ որ միշտ վանականից խորշել է մեր այժմեան ժողովրդական կէնտ ու հատիկ ուսումնարանի տիպն ու պատկերն է: Նա ժողովրդական է և որի արդիւնքը ստացուել է այնքան, որքան միջի գործող խալիֆան զարգացած, հասկացող ու բարեխիղճ գործող է եղել: Թողնենք այն՝ թէ այդ «գիւղական խալիֆայքը» որքան մանուկներ էլ փչացրել, բթացրել ու մահուան դուռն են հասցրել... Խալիֆայի ուսումնարանը ժողովրդի սեփականութիւն լինելով, նորա նպատակը գիւղի համար գրագէտ մարդիկ պատրաստելն է: Խալիֆայական ուսումնարանը երբէք չէ բացուած այնպիսի գիւղում, որից մօտիկ վանական ուսումնարան չի ելել: Վերջինս միշտ հալածել է առաջինին՝ ուղղակի կամ անուղղակի ծաղրելով նրա իմար ու բթացնող ուղղութիւնը և վնասակար ընթացքը: Խալիֆայականը միշտ նիւթականապէս վնասել է վանականին՝ որ հէնց այդ հալածանքի գլխաւոր պատճառն է, Գա-

լով երրորդին՝ որ տէրտէրներն են մօնթեր կարդացնում, ճշմարիտ ասած, դրանք իսկապէս ուսումնարան չեն: — Բա քնչ, հարցրեց տէրտէրը:

— Տէրտէրների պահած մօնթերը լինում են մեծ մասամբ իրանց ազգականների և հարուստների երեխաները, որոնք ամեն կերպ ծառայում են տէրտէրներին՝ և արդիւնք էլ տալիս: Դրանք ոչ մի իրաւունքի, հասարակաց դատաստանի չեն ենթարկվում, իսկ վանական և խալիֆայական ուսումնարանները միշտ, լաւ թէ վատ, ժողովրդի նկատողութեան տակ են... — Ասենք՝ էդպէս ա, ամա էլի մի բան ա տխր...:

— Հալբաթ մի բան ա, միջամտեց բեզը, մեծ բան ա: Բայց խօսադ գեղի երեխերքը չես կարդացնում:

— Չէ, իմը ութից — տասից չի անց կենալ. աղաչեն էլ՝ չեմ ընդունիլ:

— Տեսար, տէր հայր, խօսեց վերատեսուչը, որ սոււմ եմ թէ դա իսկապէս ուսումնարան չի, որ լինէր՝ գեղի բոլոր ցանկացող երեխաներին պէտք է ընդունէիր:

— Հիմի, որդի, քնչ ես կարծում, իմ մօնթերն են շատ պտուղ տալիս, թէ էն խալիֆաների:

— Եդ, տէրտէր, աշխատողիցն ու ինչ տեսակ խալիֆա լինելուցն է կախուած: Ամեն մարդ էլ մի տեսակ խելքի ու գիտութեան, մտքի ու բնութեան տէր չէ. մէկը ծով է, միւսը աշխատաւոր. մէկը՝ բթամիտ, միւսը գիտուն... Դու կարող ես օրէնք մի անգամ դաս տալ մօնթերիդ և աւելի շատ բան սովորեցնել, քան նա՝ ով օրէնք երկու անգամ է տալիս և ընդհակառակը փչացնում երեխային... Դաս տալն էլ խելքի ու շնորհքի

բան է. երեխան զօռով բան չես սովորիլ, ինչպէս որ ծառի ճիւղը ձգձգելով չի երկարիլ...

— Մախլաս, որդի, խօսքը երկարացրինք: Էդ ասածներինցդ ես էլ քիչ-միչ տեղեակ եմ: Խալիսի երեխանց դավի ին մեզ չեն տուել, որ համ քնահառամ ըլենք, համ խալիսի ըրեխանց դարդը քաշենք. էս էլ մի բան չի: Ուրիշ բան խօսանք: Վանի-բեզ, դու ասա...

Այս խօսքում լսուեց եկեղեցու զանգի զնգոցը: — Օրհնեալ է Աստուած, ասաց տէր հայրն ու տեղիցը կանգնեց լուացուելու:

— Լաւ, տէրտէր, ասաց բեզը, դու ժամդ գնայ, յետոյ կը խօսենք ու կիմանաս մեր գալու նպատակը:

— Թող կատարուի ձեր կամքը, որդիք: Տէր հայրը լուացուեց ու «եկեսցէ» ասելով դուրս գնաց:

Վանի-բեզը այժմ պէտք է ուրախացնէր տանըցոցը տալով նրանց մի մի ընծայ, որ բերել էր իր հետ քաղաքիցը: Նա լինելով այս տան մօտիկ ազգականը՝ ամեն քաղաքից գալով ուրախացնում էր տանըցոցը իր բերած ընծաներով: Նա խուրճիկից հանեց մէկ կապուկ, բաց արեց ու կանչեց.

«Խնսի հարս, առաջ դու արի. քեզ համար մի ջուխտ չմուշկ եմ բերել ու մի գլխաղուխ»:

Հարսը ձեռքը համբուրեց ու ուրախ-ուրախ ստացաւ:

«Աննման հարս, քեզ համար մի կարմիր գօտիկ ու մի կանաչ-խաս քնթկալ եմ բերել, արի, առ»: —



«Սալբինազ հարս, քեզ համար էլ կարմրագոյն մնթանացու ու մի ըռկալ (ըռխակալ) եմ բերել: Արի, դու էլ քու փայն ստացի»: —

«Նանա, էս քնթաղուխն էլ առ, տուր տէրտէրին՝ որ ձեռին պահի, քիթը սրանով սրբի»:

«Նանի, միտդ ա՛, որ ամառն ինձանից չէջմակ էիր ուզում. ահա, բերել եմ, առ. աչքերիդ դիր, տես բան ես ջուկում՝ թէ քոռացնում ա»:

«Երեխերք, ձեզ համար էլ նուռը, տանձ ու կանֆէտ եմ բերել. եկէք, էս էլ ձեզ տամ»:

Այսպէս, բեզն ամեն մէկին իր վայել իր ընծան տալով՝ աւելացրեց. «Իէ, չը կռուէք, ամենքդ ձեր բաժնով բաւականացէք. մէկ էլ որ ամառը կը գամ՝ ուրիշ լաւ լաւ բաներ կը բերեմ ձեզ համար...»:

Հարսներն անկիւն քաշուած տնտղում էին ստացած ընծաները: Պառաւ նանը չեջմակը քթին սազացնելով՝ փորձեր էր անում: Նա կամաց, քթի տակին, ասաց բեզին. «աղա ջան, էս չեջմակը կասես ան շատ ջահիլի ըլի, ան ջլիզ քաւթառի, աչքերս չուզում՝ սևանում ա»:

Վերատեսուչը հարցրեց. նանի, դու չեջմակ էլ բանացրել ես թէ հէնց առաջին անգամն է: :


Նանն իշարաթով պատասխանեց. վերատեսուչը նրա միտքը չը հասկացաւ:

«Նանի, դու ախր մեծ կին ես, ինչի՞ ինձանից չը խօսքան ես մնում»:

Նանն ընկաւ բեզի ականջին: — Ձեզ մատաղ, ոնց խօսամ, ախր լեզուս գալիս չի: Ես օխտը տարուալ պսակած — շղաթաթախ հարսն էի. տէրն էլ էն վախտը

1901
1919

142-2014



տիրացու էր. նա որ տանից դպի գեղամէջ ան մի ուրիշ տեղ էր դուրս գնում, դրան ճեղքերիցը թաքուն ծկրակում էի՝ թէ տեսնեմ ո՞նց մարդ ա, ինչոյ ու բուսաթ ունի: Դէ հիմիկուայ հարսները էս կանէն: Յերեկը սաղ օրը ոտիս վրա պտիտ պտիտ էի անում. սուփրի վրա էս խօ հացի չէի նստում, պուճախներումն էլ էնքան չէի ուտում որ կշտանամ: Երբոր տան մեծ ու պուճուրը քնում, ամենքն էլ խողաղվում էին, էն վախտը մի կտոր հաց ու պանիր էի վեր ունում, տեղումս նստած ուտում, ամա էն էլ՝ մարդս շատ վախտ խլում, դէն էր շպուտում, հէնց գիտէր՝ թէ էս ա չքա ծակ եմ, չեմ կշտանում: Մեր ժամանակն ըսէնց էր: Էս ա քառասուն տարուան կնիկ եմ, քնթկալը բերնիցս վեր չեմ քցել ո՛չ մեծի, ո՛չ էլ պուճուրի մօտ, ոչ ով իմ ձէնն սւ շունչը չի լսել, մէնակ իմ ծակն են իմացել: Հիմիկուան հարսները... աման—գատ...»:

Ե.

ԵՐԿՈՒ ՀԱՐՍԸ ՋՐԻ ՃՍՄԻՆ

Այս առաւօտ այնպէս պալը գկայ էր, որ թքէիը՝ գետին չէր ընկնի: Վանի-բեզի գիւղը գալը մի քանիսը միայն գիտէին: Երկու հարսը կուժն ուսած՝ իրար պատահեցին ժամի պատի տակին: Նրանցից մէկը տէրունց Խասի հարսն էր. միւսը՝ Նազին խօսք բաց արեց.

«Աղչի, Խասի, իրիկունը ձեր տունը ս՛վ ա եկել:»

—Մեր անէն, Նազի ջան:

«Խասի, բա քեզ հմար բան չի բերէ:»

—Մի լաւ աղլուխ...

է՛լ»:

—Մի ջուխտ չմուշկ...

«Երնակ քեզ, աղչի, սաղ տարին անց ա կենում, մի մատի փաթաթան առնող չունեմ. աղլուխը գլխիս փթում ա...»

—Խի՛. քու մարդն ինչ ա:

Ե՛հ, իմ մարդը... նրա օրը ձեզ այսն չի՛. մէնակ մարդի օրը ինչ կըլի. էնքան թաթին ու տոտին, կռներին ու ձեռներին ա արել, որ իր ազիզ, թագաւորի բարեբար, ջանիցն ընկել ա»:

—Աղչի, ձեր պսակը երկու տարի ա, բտէնց թէզ ջանից ընկա՛ւ: Դու նրան սւ գրող էս դառէլ...

«Խի՛ եմ գրող դառել. մահն ու գրողը փիս օքմնու բգիցը կպչի: Չես գիտում, որ սրտիցը չար մարդը թէզ կը պառաւի: Էս հլա թո՛ղ, աղչի, ուշքս էլի ձեր աղի վրայ ա. բա նա մէնակ քեզ հմար ա գատ բերէլ»:

—Չէ. մէկէլ հարսներին էլ մինթանացու, գօտիկ, քնթկալներ բաշխեց. նանին էլ մի լաւ չէջմակ...

«Չէջմակ...»

—Հա:

«Երնակ նրան, որ չէջմակի էլ արժանացաւ: Բա էս ցրտին ձեր աղէն սւր ա եկել, խէր ա թէ շառ»:

—Խէր ու շառը Աստօճ գիտայ. ամա առաւօտս նրանք խօսում էին՝ էս էլ լսում էի պուճախիցը. սմարանի վրա էին խօսում: Հալբաթ ուզում են էս գեղումը սմարան բաց անեն:

«Սմաւար»:

—Չէ, քառ էս, սմարան: Սմարանն էլ չէս գիտում: Զուռնա պտի՛ քեզ բան հասկացնի...»

«Քառն էլ ես, լալն էլ. ես սմարանի երես եմ տեսել, որ գիտենամ, ան կերել էմ...»

—Սմարանը ուտելու բան չի, այ նադան. մի տղա բեր, համ մարդդ կուրախանայ, համ սմարանումը խալֆէն ու տէրտէրը նրան կը կարգացնեն ու դու էլ կիմանաս սմարանն ինչն ա:

—Ինչ բերեմ...»:

—Փափլիկ տղայ՛...»

Վայ, աղչի, քու մագին փախչի. խե էս: Տղէն իմ ձեռին ան, որ բերեմ: Թող Աստօծ տան, տատ Եղսանը փթաթի, ես էլ պահեմ ու յետնա ով տէրտէրին չըտայ, ջուղտ աչքով քօռանայ-օխտը դռան հացով կշտանայ...»:

—Լաւ, լաւ, հրէ աղբրաւորներ են գալիս. լեզուիդ օրօն արա, դու քար ես, քու սիրտը յպառաժ. իմ լեզուն կպել, լաշս փէտացել, ոտն ու ձեռ դողում են...»

Նրանք շտապեցին դէպի ծլծլան աղբիւրը, որ գտնվում էր գիւղից դուրս:

Այժմ մենք հարսներին թողնենք աղբրումը որ իրար ն ո բ ա թ (հերթ) խլեն, իրար գլխի վայ տան, իրար կուժ դէս ու դէն շպուտեն, շատ վախտ էլ իրար գլխի մագեր պոճոկեն... ու գնանք, տեսնենք, թէ ովքեր ինչպէս պէտք է տեսնուեն տէրտէրանց հիւրերին:

2.


ԱՂԱՆԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տէր-Պօղոսը ժամաւորներին իմաց արեց աղաների գայն ու ինքը ցրտին չը՝ գիմանալով՝ շտապեց դէպի տուն:

Գիւղերում սովորութիւն կայ՝ որ երբ մի աստիճանաւոր կամ բեզ է գնում մի որ և է գիւղ, տեղի իշխանները տանուտէրի հետ նրան տես են գնում և այնուհետև պարոնները ալլ ևս չեն ուզում հեռանալ նրանից: Սրա պատճառը աղքատ դասին լաւ յայտնի է: Աստիճանաւորին չէ որ պէտք է հասարակութեան հաշուով պատուիլ, կշտացնել: Իհարկէ, այս բանը ձեռնտու է պարոններին, իրանց գրպանից խօ բան չէր պակասում: Նրանք աստիճանաւորին պատուելով՝ համ նրա մօտ պարգերես են երևում, համ էլ առատ սեղաններին միշտ մասնակից լինում, ուտում, խմում, լվլվում... Այս այսպէս շարունակվում է: Ապա տարուայ մէջ գալիս է մի անիծած օր, որ այդ կեր ու խումի գինը մէկը տասնով և ուրիշ շատ նոյն տեսակ գաղտնագողի հաշիւներ խառնում են հասարակաց հարկի հետ «միսը փէտ» անում, խեղճ ու նաչարից հաւաքում...»

Ինչ տարակոյս, որ աղաներին էլ տես պէտք է գային... Մինը միւսին իմաց անելով՝ խմբուեցին մի

քանի իշխաններ, որոնք երես ունէին աղայի դիմաւորելու, տանուտէրին էլ գինետանը գտնելով մի մի բաժակ օղի կոնծեցին ու դուրս եկան դէպի տէրտէրանց տունը:



«Տղերք, ասաց տանուտէրը, գնում ենք՝ ամա ծնկներս գալիս չի: Էս վախտին դրանք խէր բանի հմար չեն եկած ըլիլ: Հիմիկուց ասում եմ, ինչ էլ կասեն՝ կտրական պատասխան չը տաք: Դուք սո՛ւսէք, ես լաւ կըխօսեմ»:

—Քոխվա՛ Չատի, հէնց իմ սրտիցը խօսեցիր, վրաբերեց Վերգին. գշերս փիս երազ եմ տեսել, բուրդա բիր ալամաթ վար: Էն ով որ Վանի-բեգի հետ եկել ա՛ նրանից ես քաշվում եմ: Նրա սֆաթին լաւ մտիկ արէք, բալքի մի բան ջոկենք:

—Ես վախում եմ, ասաց Պետրոս-ապերը, որ դա սլէստ չի ըլի՛ ան ըսէնց մի մարդ: Քոխվա, մեր փուլ Ոսկանը որ քեզ վրա նաչալնիկին գանգատ էր տուել, թէ դու փիսուս թիւն ու գեշու թիւն ես անում գեղիս մէջ, ես վախում եմ՝ դա հէնց գանգատի հմար ըլի զրկուած: Սայեաղ կացէք:..

—Ես էլ էդ փքրին եմ, ասեց Միրգէն:
Տանուտէրի թուքը ցամաքեց: Նա էլ չիմացաւ ինչ խօսի ու յետոյ վրաբերեց. «Իմ գեշու թիւնը, աղբէր, թնչ ա ըլել, էն որ սրանից ու նրանից «ինչ էլ առել եմ», իրար հետ ենք կերել, իրար մէջ բաժանել: Էս չի: Ուրիշ խօ բան չըկայ:

Ոսկանը որ էդ գանգատը տուել ա ինձանից, բա դուք ինչ կասէք. չէ որ ես էլ ձեզ իմ ընկեր նշանց կը տամ»:

—Լաւ, ասաց Միրգէն, մեզ էլ սուր ես մատնում: Մենք ինչ կարող ենք անիլ, խախի շատը Ոսկանի կռանն ա...:

«Դուք էն կանէք, որ պէտք ա ինձ պահէք:»
—Էս չորս մարդով...:

«Հա՛: Դուք որ դոշներդ դէմ տաք, ով ձեր առաջին կարայ ձէն-ծպտուն հանել. Մէլունց Վարդին, Քիբունց Վաթօն, Հաւգողանց Դալին, Մնականց Մակին, Աուրդունց Հանէսը՝ թէ Բրուտանց Լանթակը... Հէնց դիփն էլ սոված կտորվածքի են»:

Գնանք, հլա առաջ տեսնանք, դա ինչ մարդ ա:
—Հա, լեզուիցն ու սֆաթիցը կը ճանաչուի:



Վերատեսուէն ու բեգը խորին խորհուրդի մէջ էին, երբ որ մարդիկը դուռը ճռուացրին որ գլխարկները վերցնելով, գլուխ տալով ասացին. «ըզորմի Աստօծ քու հօրն ու մօրը, Վանի-բեգ: Բարով էք եկել»:

—Ձեր հօրն ու մօրն էլ բարում կենաք:
Տանուտէրն առաջ կանգնեց: Վերատեսուէն ու բեգը շարժուելով իրանց դիրքը փոխեցին:

«Ժամիցն էիք գալիս»:
—Հա, բեգ ջան, ջանիդ պահապան:
«Ձեզ էլ պահապան: Տանուտէր, գեղդ սնց ա, լաւ ա: Խալխին սնց ես պահում»:

Տանուտէրը կարմրատակելով-փառք ըլի Աստօծու,
սնդ սալամաթ...

Տէրտէրը չայգանը ձեռքին՝ կրակափայտին բզեղով՝
փսփսուամ էր: Այս լեռնային երկրում ի ն ք ն ա ե ու ասածդ
հազուագիւտ բան էր: Շատ պատուաւոր ու հարուստ
տներում թէյը չայգան ու վէին պատրաստում: Բացի
սորանից՝ նրանք ճանաչում էին այնպիսի բոյսեր, որոնց
չորացնելուց յետոյ՝ թէյի տեղ գործ էին ածում— օրինակ,
խոռ, լորենու կոկոնից նոր բացուած տերև, դաղձ,
պիտնա:

Վերջապէս՝ տանուտէրը նկատելով որ տէրտէրը
թէյ է պատրաստում, աչքերը չորսոււ արեց, բեղերը
ծամեց. «ա տէր, թէյ արա, խօսքը կտուրը քցեց նա,
աղէքը ճամբա եկած են, բզարած կըլեն, տաք տաք
չայը լաւ կըլի»:

— Բերնիդ ջուրը խի՞ ա գնում քոխվա, քեզ խօ չը
պէտք ա տամ— ասաց տէրտէրն ու իր գործը շարունա-
կեց:

— Վոյ է... տէրտէր, վրաբերեց մի ուրիշը, չայն
ինչ մեր բանն ա. թող քաղքցիք խմեն, հազար զայգի
զատ ուտեն, քաղքաւարի ապրին- մերը կաթն ու մա-
ծունն ա, սերն ու էրէժանն ա, սոխ ու հացն ա, կար-
միր գինին՝ սիթտակ լաւաշն ա...:

Եդ ես էլ գիտեմ, Պետրոս ապեր, էնդուր էլ ձեզ
համար բերել եմ կախէթի կարմիր գինի: Միայն բանը
էդ չի: Զէք հարցնում թէ՛ աղա՛, էս ցրտին ո՛ւր էք
եկել, խէր ա՛ թէ շառ»:

— Աստօծ խէրը վրաբերի, լսուեց ամենքից:

«Մենք շառի հետ դաւի չունենք»:

Տանուտէրը սրտապնդուեց: Աստօծ քեզ անպակաս
անի մեր գեղի գլխիցը, աղա ջան, որ թուիդ տակին մեզ
էլ պահես...:

«Բարիկենդանի օրեր են, եկել ենք համ մի մեծ
բան կա՛յ՝ կատարե՛նք, համ էլ իրար հետ մի
քէֆ անենք...»:

Քէֆը իրա կարգովը, աղա՛, ամա էն մէկելը ինչ
բան ա, վաղեց տանուտէրը:

Խալխի հաւաք վախտը կասենք, իմանաք: Տեսնում
էք մօտիս նստող աղին. էն բան կատարողը սա՛ ա:»

Վերատեսուչը մինչ այս կէտը լուռ էր: Նա առա-
ջին անգամ այդ գիւղի ներկայացուցիչներին տեսնելով
ուզում էր կարելի եղածին չափ իմանալ նրանց ինչ լի-
նելը: «Ե՛ս եմ, վերջապէս խօսեց նա ալո՛, որ պէտք
է այս գիւղի համար մի փառաւոր գործ կատարեմ:
Վաղուանից ամեն բան ձեզ կը պատմեմ ու մենք բոլորս
միասին, սիրով, ձեռք ձեռքի տուած կը կատարենք»:

— Աղա՛ ջան, մենք կուզենք՝ որ մեր սէրը ձեզ պէսի
հետ, մեր ձեռը ձեր ձեռի տակին ըլի: Աստօծ տայ որ էդ
բանը խէր ըլի: Ուզուրով բանից մենք փախչող չենք:

«Այդ ամենը, բարեկամ, հիմի դարդակ խօսքեր են,
երբ որ այդ ամենը գործով կը տեսնեմ, այն ժամանակը
միայն կը հաւատամ ու շնորհակալ կը լինեմ...»

Դէ հիմի մուրախաս էք, կարող էք գնալ. մենք
էլ քիչ հանգստանանք: Միայն առաջուց իմացէք, որ
մենք ձեզանից պահանջ չունենք ու չենք ուզում, որ
մեր անուռով ճաշկերոյթներ սարքէք, ծախսեր անէք...
իմացա՛ք:

— Շատ լաւ, ասացին ու քչփշալով դուրս եկան:

է.

ԱՀԸ ՇՍՏ Ա՛ ՔՍՆՅ ՄՍՀԸ.

«Տղերք, ձեր խելքը ինչ կտրեց էս գնալ-գալուցը»:

— Ինչ պէտք ա կտրի քոխվա, ասաց մէկը. ըստեղ մի և կայ. տեսաք ո՞չ-էնքան վախտ Վանի-բեզը խօսաց, ամա նա կէնտ մի անգամ ձէն հանեց:

— Աղբէր, որ և չըլի, դրանք էս ձին-ձմեռը բա ո՞ւր են ջափայ քաշել, եկել. քանդուած գեղս մի լաւ բան չի տեսնում, ասաց Միրզէն ու կոխքին թքեց:

— Հէնց էն ա՛ էն, ինչ որ առաջ էլ ասեցի, Ոսկանի տուած զանգատն ա, նա խնդրել էր նաչալնիկիցը, որ սլէստչին զարիբ մարդ ըլի—անտես, անճանաչ, որ կողմնապահութիւն չանի: Եդ մարդի ը ու ե-վ ու շը ուրիշ զայդի ա: Տեսաք ո՞չ տան միջին էլ աչքերին չեչմակ էր դրել—ջհել էր՝ ամա մեծ մարդ էր երևում: Գոխվա՛, ինձանից քեզ խրատ, պատրաստ կաց...

— Դրուստ թալիմ կերած ձիու պէս՝ թալիմ կերած մարդ ա հո՛ւ... Ես որ ն ը ա պճղի ղդար բան գետենամ, աշխարհ կը քանդեմ, հազար քոխվա կուլ կը տամ...

«Ե՛հ, Վերգի, լաչարութիւն անելը սիրում ես, արհամարհեց տանուտէրը, տնայէն, մարդ ես, դու էլ մի քիչ խելօք բան խօսա, թէ ո՞ւր են եկել էդ մարդիկը:

— Ո՞ւր, ասեմ. քու գործերին վերահասու պէտք ա ըլեն, թաքուն հարց ու փորձ պէտք ա անեն. լաւդ ու վատդ, խօսքդ ու բանդ, հոգիդ ու ջիգարդ իմանան ու քեզ ընէնց, էծի պէս, կախ տան: Հիմի էս խալխի հետ խօ պէտք ա մտնենք միկիտանի դուքանը, ամա ն ա-ես ու իմ Աստօծը կիմանայ...

Տանուտէրը լ զ ա պ ա տ ա ու եղաւ. «Ագա՛, սարսաղ է՛ս, ի՛նչ ես ասում»:

Սարսաղը դու ես՝ որ խելքդ չի հասնում ամեն բանի: Խօջանց Ոսկանի հեսաբով դու ու թ հ ա ը ի ը մ ա ն է թ է լ ա կ ա ն փ ո ղ ե ս բ ե թ ա ը ա բ ա ը ե լ, սավայի փ ո ղ ը ծ լ ը՛ն գ-ջ ի բ ը տ ը լ ը ն գ ը... գնա՛, ձեռներդ ծոցդ դիր, դրուստն իմացի, նրա ձեռին-ոտին ընկի, եկած ճամբէն օրհնի, կերածիդ կէսը տուր, մի լաւ եօրդա ձի էլ թամքի, տակը քաշի ու ջանդ թափի. թէ չէ քեզ դրուստն ասեմ՝ մեզանից քու հարային հասնող չի ըլիլ: Սաղ գեղը վրէդ հիս ըլած ա, մեծ ու պուճուր վրէդ խօսում են, քեզ ինչը կազատի. համ էդ դոշիդ մէնդալը ինձ կըտան, համ էլ դ ու դ ս ա դ-խ ա ն ու մ ը լ ու ա ն ու ն ց ը ն կ եր ը կը դառնաս, նրանց հետ կը կուռես: Ա՛յ մարդիկ, ինչ էք երեսպաշտութիւն անում, դրուստը չեմ ասում:

Չէ, կտրեց Պետրոսը. շատ սուտ ես խօսում: Որ էդ սրտին էիր՝ խթ էս մարդի հետ սաղ երկու տարի՝ տարէն տասն երկու ամիս՝ կեր ու խում ես արել. հմի էլ ջանդ դուրս գայ՝ պէտք ա քեօմագ անես: Իմացա՛ր...

— Իմացայ, Պետի ապեր, ամա տեղը ծակ ու ծուկ ա:
 — Եանի դանդորդի, Հասկացար:
 — Անդրդրմ, ամա մարաղ մտած ականջ կնյ:

«Մենք էլ իմացանք, մենք, մի քանի-քայլ Հեռուից վրաբերին երկու երկու մարդիկ. էդ Հարամուն քեօմադ արէք-էն դունիումը լետ տաք. ինչ որ է, խեղճ խալխիցը կերել էք, քնթնեքովդ վեր գայ... Հմի էլ ընէնց էք խօսում՝ որ չէք իմանում ո՛ւմ միսը լափէք, ում ոսկուր կռծէք...»

— Ադա՛, ինչ էք շան պէս հաչում, բարկացաւ Պետօն:
 «Շուն ու լաչարէն նա ա՛ ով որ միկիտանի դուքանի դոնիցը պոկ չի գալիս, ով որ ինձ պէսի շառը դուքանումն ա կտրում, ով որ սրա ու նրա ջբին ա մտիկ անում, ով որ մինը հարըրով ջ ա ո ու մ ա խլում՝ ջիբը քցում, ով որ անհոգի, անհաւատ ա, ով որ մեր գեղը Սողոմ-Գոմորն ա ուզում շինի... էս դայդի մարդկերանց հօր տունը ս ո թ ա-քաղաքն ընկնի-հա՛: Ոսկանի տունն էլ քանդուի, թէ մի թէզ էն թղթին ճամբա էր տուել:»

Տանուտէրի խումբը երկար լուելուց լետոյ՝ Վերդին գոռաց.— Բոխմա, ինչ ես կնիկ դառել փէյնում կանգնող-երկու լաչարի աղաքին. տ ո ու ն ք ց ի թ է գ, խ բ ա-տուեն:

«Գզի՛ր, գզի՛ր»:

Գզիբը գետնից դուրս եկաւ, որ այնտեղ իր մեծերի համար խորոված էր անում. «Տա՛ր էդ Սաքնին ու Վա-

նէսին տուն քցի, դուռը կողպի ու բնալիքը բեր ինձ: Թէզ, էս սհաթի տա՛ր, կրկին գոռաց տանուտէրը:

— Մեզ խի էք տուն քցում, ձեր բալէն թաղել ենք, ասաց Վանէսը. բա դուք Աստօ՞ չո՛ւնէք: Բոխմա, Մլմելանց Պետնի ու Ադունց Վերդի խօսքովն ես նրատու՛մ-վերկենում...:

Գզի՛ր, ըսխին տուր, թո՛ղալ մի ըսխին անի, հրամայեց Պետին:

Գզիբը նրանց դազանակի առաջն արեց...

Հէնց այդ միջոցին՝ երբոր բռնակալ խումբը ուզում էր գինետունը մտնի, եկեղեցու պատի տակիցը մի ձիաւոր դուրս արեց: Վերդին որ այն կողմն էր նայում, ասաց:

«Տղերք, էս էլ կասես էս սլեստչու ձիաւորներինցը ըլի: Կէնտ-կէնտ են երևում. Աստօ՞ խէրը վրաբերի»: Ամենքն էլ ապուշ նայեցին ձիաւորին, մինչև որ նա հասաւ իրանց մօտ. «էս շինիս ըստառ-շինան հո՛ւվ ա»:

— Ես եմ:

«Հունց իմանանք՝ վար տիւ ըս»:

— Բա դոշիս մէնդալը չէս տեսնում:

— «Լիաւ. գէ ինք կալ էս թօղթը. Եմալ-բեզը թահդի ըղարկեց, թամբահ ըրաւ՝ թա կարթալ տօք, մաչինը լիաւ իմաց օ մին թահրաւ պէզը քանդէ...»

— Ադա՛, ինչ բան ա:

— Գըտաս չըմ, թղթին մաչիցը խաբար կալ, ես մհէն թահդի ըմ, Գեադաբեգ ըմ քնես:— ասաց ու ձիուն մտրակեց:

Մարդկանց վրա ջուր մաղուեց: «Տղերք, ասաց տանուտէրը, թխր սա թնչ թուղթ ա: Սիրտս բամփում ա: Ահը շատ ա՝ քանց մահը: Դուք մտէք դուքանը, հացի պատրաստութիւն տեսէք, ես էս թուղթը մի պիտէր Վարդանին կարդացնել տամ, տեսնեմ՝ սա թնչ ալամաթ ա, թնչ գուլում...»

Ը.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐՏՈՒՆՁ ՏԱՆՈՒՏԵՐԻ ԴԻՄ.

Տունը մէջիցը կը քանդուի.
Գեղը մեծիցը: (առած)

Անմեղ յանցաւորները հասան այն գոմի սրահը, որը-ընդհանուր խօսքով-դուղսաղխանա էր անուանվում: Գղիը ուրախ ուրախ դուռը բաց արեց ու ասաց «դէ մտէք, ձեր տեղն էս ա»:

— Գղիը, միրուքդ ձեռիս կը մնայ, գոռաց Սաքին:

— Ձէնդ կտրի, թէ չէ՝ ճիտապուկ կանեմ՝ հաւի պէս թէփուին կը տաս, գոռաց միւսը:

«Աղա՛, Սաքի, էս թնչ ա, ինչ ա»-ձայն տուին ուրիշները:

— Զեզ մատաղ, գող չենք, պիճ չենք, լաչար չենք, մարդի տուն չենք քանդել, էս աղիզ օրը մեզ խի են գոմը քցում...»

Աղբէր, Ոսկանին իմաց արէք, բալքի նա մեզ ճար անի՛...»

Զայն տուողները շատ էլ այրվեցին, շատ էլ նեղացան, բայց թնչպէս կարող էին տանուտէրի բան ու մը խառնուել. այս դէպքում իրանք էլ կը պատժուէին: «Անկառավար գեղը ըսէնց կըլի էլի»-ասեցին ու լռեցին: «Նի մտէք, կրկնեց գղիը, թէ չէ՛ գնում եմ քոս-վին ասեմ»:

— Գղիը, տեսնում ես՝ ամենքն էլ վախում, սուս են անում. մենք կըմտնենք, ամա դու ու քու երկինքը...»

Էն երկինքը, որ մի մի հաւից ձեռը վեր կալէք»:

— Աղբէր մի մի հաւ կը տանք քեզ որ քոսվին կակղացնես, որ թէզ աղատի էս գոմիցը, թէ չէ՛ թրքահտումը կը խեղտուենք...»

«Հաստատ»:

— Էն խաչը:

Նրանք ներս մտան գոմը:

Ոսկանի անունը շատ ենք լսում, ընթերցող, բայց իրան դեռ չենք ճանաչում: Նա այս գիւղի մէջ մի հատիկ, ճշմարիտ ու հասկացող մարդն է: Նա տանուտէրի խմբի ախոյեանն էր. խեղճ դասի միակ պաշտպանը: Այս պատճառով էլ ամեն նեղացած նրա անունն էր յիշում, նրանից սպասում փրկութիւն: Միշտ ուրիշներին օգնելով, միշտ գիւղի ներկայացուցիչների բռնակալութեան ու անկարգութեան դէմ կռուելով, ինքն էլ չբաւոր, իր օգուտներից միշտ զրկուած մարդ էր: Տանուտէրը Ոսկանի միջնորդութիւնը, նրա խօսքը ամեն անգամ յարգել է միայն նրա համար, որ իր դէմ բողոք չը բարձրացնի և շատ սխալուել է, ըստ որում՝ Ոսկանն արդէն

Հասարակութեան բողոքագիրը ներկայացրել էր ուր հարկն է և այդ բանի համար էլ նա այսօր Գանձակումն է: Ուրեմն՝ խեղճ բռնուածները ի զուր յոյս տածեցին, ի զուր Ոսկան, Ոսկան կանչեցին:

Շուտով գիւղը գրմբոց ընկաւ. շուտով ամենքն էլ իմացան՝ որ Սաքին ու Վանէսը բռնուած են: Գիւղամիջում խումբ խումբ մարդիկ հաւաքուեցին: Մինը քնթի տակին էր փօթփօթում, անիծում, նզուլում զըզրին ու իր մեծին, միւսը աշկարաւ Բռնուածի եղբայրն էլ ճշում, բարձրաձայն գոռում ու իր սրտիցը ինչ որ բղխում էր՝ չէր խնայում: «Բա՛ Սատօ՛ վեր կունի, ասում էր նա, իմ աղբերը հմի էն գոմումը թրքի հոտով կշտանայ, քոխվէն ու սիրդաշները միկիտանի դուքանումը ճնճուստան խորովածի հոտով ու գինի արաղով... Տղերք, բա սա դատաստան ա՛. բա էս գեղի հարային մի հասնող չկայ. բա էս խալխի ունեցածը, հախ թէ նհախ, մի երկուսի ծմծման աղբուրը պէտք ա դառնայ...»

Վերատեսուէն ու բեգն էլ տէրտէրանց տանիցը դուրս էին եկել. ուզում էին գիւղին նայել, նրա դիրքը տեսնել, այդ լուրը որ լսեցին, յառաջ գնացին դէպի մօտիկ խօսողները:

Երևի մի յանցանք են գործել, որ պատժուել են այդ տղերքը» — ասաց վերատեսուէր:

Ինչ յանցանք, վրաբերեց բեգը, գիւղերում շատ անգամ առանց յանցանքի էլ մարդ են պատժում: Տանուտէրի կամքն է, ինչպէս ուզում՝ այնպէս էլ վար-

վում է: Միայն, պրէժգէ նազը ուզնատ, ըշտօ... կոտրտեց նա ուուերէն, որ մեր խալխի փէշակն ա՛ մէկին տանուտէր կը դնեն, լեւոյ՛ գեղը քանդում ես—կասեն նրան: մէկին երեցփոխ կը ջոկեն՝ եղնա կը բամբասեն թէ՛ ժամի փողերը կերաւ, մէկին դ ու ո ղ չ է կը բըռնեն, եղնա ուշուեց ու քիւֆը կը տան նրան, թէ կանաչիքը ուտացնել տուիր, հայրը չեն տալ: մէկին ջուար (ջրպետ) կը ջոկեն, եղնա գլխին կը տան՝ թէ փիս մարդ ես-դուրս կորի, մեզ խաբեցիր, բազերը չօքացրիր: Գու շատ մի խղճալ սրանց: Գեղըցու լեզուն կակուղ կ'ըլի, իրանք անխելք, սօ եստ՝ սրանց խելքը աչքներումն ա, դրսից...

«Այդ բոլորը զարմանալի չէ, քանի որ քաղաքի հասարակութիւններն անգամ այդ և աւելի վատթար պիտերի են ենթարկուած: Նրանց տարօրինակ քայլերը ահուելի չափսերի են հասնում: Ո՛րտեղ կայ լաւ հասարակութիւն, որ լաւ մարդ արտադրի: Աբա Գանձակում մէկը ցոյց տուր, որին դու շատ լաւ ծանօթ ես»:

—Տէր մի արասցէ: Ելի Աստօ՛ գեղերին օրհնի: Գեղը քաղաքի հետ սրբաւնիք չի ըլիլ: Ես փիս ու մուռտառ սովորութիւններն էլ քաղաքիցը չի մտել գեղերը...

«Հաբա սոսում ես: Ինչ պահանջես գզրիցը, զորոզչուցը, ջուարիցը, յիմար տանուտէրիցը ու տէրտէրիցը, որ բաղդի բերմամբ տիրացել են այդ սուրբ պաշտօններին ու իրանք գզրի չափ միայն հասկացողութիւն ունեն: Իէ ծատտանձից պահանջիր՝ որ միւս տարին քեզ գուլարի տանձ տայ. պահանջիր հօնի ծառից՝ որ քեզ թուփը տայ,—անկարելի է. բայց երբոր այդ ծառերի վրա մենք կը պատուաստենք մեր ուզած ծառի շուշը

և կը հոգանք նրա դալարելուն, աճելուն, այն ժամանակ առանց մեր պահանջի էլ մենք կը ստանանք մեր ուզած պտուղները: Ուրեմն՝ մենք առ ժամս պէտք է բաւականանանք այնքանով, ինչքան որ մեզ տուած է և ինչպէս մարդիկ էլ որ ունենք: Հասարակութիւնը երբ լաւ լաւ մարդիկ կը ծնի, վատերն իրանց իրանց կը կորչեն...»

— Հալբաթ, արևի առաջին աստղերը կը չքուեն:

Այսպէս խօսելով սրանք մօտեցան մի խումբ մարդկանց: Բեզը ձայն տուեց.

«Այ տղերք, էն տղերանցը խի դուրսդ խանէն տարան»:

Մարդիկը ծանկով ընկածի պէս եղան, որովհետև չէին տեսել աղաներին, որոնք պատէպատ, ցամաք կէծանի մանգալով գնացին: Վանի-բեզին ճանաչեցին ու բոլորն էլ հէնց կանգնած գլուխ տուին:

«Ասացէք, ինչք բռնուեցին էն տղերքը»-կրկնեց բեզը:

— Մենք էլ չենք գիտում, աղա ջան. մեղք են, խեղճ են, իշի ախոռումը մարդ չի ապրիլ—էն էլ էս ազիզ օրը. մի իլլաջ արա: Եդ բռնուած տղերքը մեր գեղի աչքն են, հալալ, զո՛ւլալ, անմեղ-անարատ ապրում են, խօսքը մարդի ճակատի մէջ տեղն ասում: Հալբաթ քոխվէն ուշուսնց ա տուել, նրանք էլ ջուղաբ կ'ըլին տուած, դրա խաթէր տուն ա քցել...»

Վանի-բեզը նեղացաւ «այ ջահիլներ, հրամայեց նա, գնացէք, ուր էլ նրանք ըլին, դուռը բաց արէք, դուրս թողացէք: Քոխվի պատասխանը ես կը տամ, ես»: Վեր-

ջին խօսքում նա ձեռքով կրծքին մի քանի անգամ խփեց երևի իր խօսքին աւելի ուժ տալու համար: Տըղերքը «հարայ տուին» ու իրար բռթելով վազեցին: Մնացածներից մէկը շարունակեց:

— Աղա, մեր գեղի սրտա հեռ էլ տէր ու տիրականն էլ դու ես. խի չես մի լաւ տիրութիւն անում մեզ: Աստօժ վկայ, լեզուներս ա բլբլում, մեզանում հալ չը կայ...»

Ձեր տէրը Աստօժն ա, բօղ, բօղ»-ցուցամատը դէպի երկինք բարձրացրեց:

— Ե՛հ, աղա, էդ բօղն էլ բանը թէզ ա լսում, դատաստանը լետի անում: Ենքան «Աստօժ-Աստօժ» ենք արել, որ իլլաջահան ենք ըլել: Մեռնեմ նրա ոտի տակին, դէ մի թէզ զօրութիւնը նշանց տայ, է...»

«Որ այդպէս է, խօսեց վերատեսուչը, ինչք ձեր նեղութիւնը չէք յայտնում իշխանաւորներին»:

— Ո՛ւմ, գլխիդ մատաղ:

«Թէ տէրտէրիցն էք նեղութիւն քաշում, գանգատուեցէք հոգևոր առաջնորդին, թէ տանուտէրիցը, գանգատ արէք նաչալնիկին, թէ հէնց խեղճ էք, չքաւոր ու ձեր օրը սև ա անցնում, աշխատանքի դիմեցէք. աչքներդ բաց պահեցէք, մի ծուլանաք: Աստուած աշխատողին կը տայ»:

Ե՛հ, այ դարիբ աղա, մինը գիտում ես, մինը՝ չէ: Մենք հզար դարդ ունենք, որ մէկիցը դանգատ գնանք: Ժամանակիցն ա՝ թէ մեր բաղդիցը-էս գեղի ջաղացը թարս ա պարտում: Մեր Ոսկան-ապերը տարէն տասն երկու ամիս գանգատի ճամբին ա. ամա էլի զատ չի շինում, էս գեղ քանդող ջանաւարներին կարում չի

խրատի: Մեր ազարը մեր միջիցն ա բհամ եկել: Ասելու բան շատ կայ, ամա հէնց մինն ասեմ: Գիտա՞ք, փողը դժոխքի դռներն էլ բաց ա անում, սարերը դգում, ճամբա շինում: Փող ունեցողի հետ կուռել կըլի: Անպողը պողաւորին ինչ անի: Մեր քոխվէն չի, ոչ էլ նրա սիրդաշները. են եմ, դու ես, որ ամեն բեգի էլ ամեն տեղ էլ փողակապ անենք, պատիւներ տանք, ով կարայ մեզ ինչ անի: Խալխումս էլ հաւատ չի մնացել, ոչ մեծ ու պուճուր, ամենքն էլ թերահաւատացել, իրար ըռեխ են կոծում, իրար միս լափում: Մեր տէրը տէրտէրն ա, քոխվէն ա, քեանդ խուղէն ա, որ հէնց դրանք են մեր շաղացը թարսացրել, փրսւղ էր ել:

Դուք էլ ա մի ճար արէք, աղա, խրատող չունենք, քարոզող չունենք, մեր պապերի ճամբիցն էլ ըսէնց կամաց-կամաց դուրս կգանք ու Սողոմ-Գոմորի օրին կը հասնենք...:

«Տեսնում էք էս աղին, ասաց բեգը, սա հէնց ձեր ուզած մարդն ա. սա ձեր ամեն պակասութիւնն էլ կը հոգայ: Միայն սա ինչ էլ որ ասի, դուք պէտք ա լսէք: Տարին էլ մի տարի ա, քոխվէն էլ դուրս կը գայ իր դուլլուղիցը, են վախտը ով մտիկ կը տայ դրա ըռխին»:

— Աղա ջան, հէնց ում քոխվա ենք շինում՝ հարստանում ա: Եդ Չատին սովածների մինն էր, հիմի դովլաթով լցուել ա: Առաջ մենք ում քոխվա էինք գնում, եդ մարդը տնազ էր անում նրան ու ինքը մեծ մեծ բաներ խոստանում, որ թէ քոխվա ըլի, խեղճի կուռը կը պահի, մի շալի-մի գէնիշկա կաշառք չի վեր ունիլ, շառն արդար կանի՝ Աստծու յոյս կողման է... Մենք էլ հաւատացինք ու դրան քոխվա դրի՞նք... էն

օրուանից խորխրհան ըլաւ, խելքն ու միտքը, աչքն ու լեզուն փոխեց, դուրս եկաւ մի՛ մի՛ ալամաթ, մի՛ մի՛ ջանաւար մարդ... Ա՛յ թագա աղա, բա սրան մի իլլաջի դուռը չկայ...

Վերատեսուէր իլլաջի դուռը շատ հեռու էր տեսնում տարիներից լետոյ. երբ գիւղի մէջ կը հաստատէր ուսումնարան, որ պտուղ կը տար ու միշտ բարերար ազդեցութիւն կ'ունենար թէ գիւղի մարդկանց և թէ նրանց կառավարութեան վրա, վերջապէս՝ երբ ուսումնարանի սաները գիւղի բարեկարգութեան նպաստաւոր անդամներն ու գործողները կը լինէին:

«Լաւ, լաւ, բեգը օգուտ քողեց վերատեսչի լուութիւնից, գեղի բանը ամեն տեղ էլ ըդէնց ա. որ գեղացին ա կարում իրա լաւն ու վատը իմանալ, որ դուք իմանաք: Դուք սուտը զորթիցն էլ չէք կարում ջոկել որ խաբվում ու Չատնի պէս մարդին քոխվա էք գնում: Նա ինչ էլ անի, ձեր հախն ա: Դուք առաջուց նրա ազգ ու տակը չէիք իմանում: Սխր գէլի ճուտը ինչքան էլ լաւ պահես, շուն կը դառնայ: Եանի էս էլ մի կողմը գնենք. դուք ձեր որ քոխվիցն էք շնորհակալ ըլել, որ Չատնիցը ըլէք: Միրգէն քոխվա էր—փիս էր, Բաղալը փիս էր, Վետիսը-փիս էր, Չանէսը-փիս էր, Բեգլարը-փիս էր... հմի էլ Չատին ա փիս: Փիսը դուք էք—ամենքըդ, որ մի լաւ մարդ չունէք. վատ ըշտօ... Զեզ որ մի լաւ բան ասենք՝ չէք կատարիլ, ամա մի փիս բան կատարելու համար Գաղստան կը գնաք...»

— Ըտէնց ա, էլի:

«Ըտէնց ա?»

Նրանք ցած գնացին դէպի Միրգուենց դուռը:

խալիք մեր մահալուծե թամաշա էին անում... Յա-
ջորդը ինձ ճաշի կանչեց, օրհնեց գեղիս ու հանդիս,
աջը համբուրեցի, նա էլ ճակատիցս պաշեց...»:

— Դրո՞ւստ, էլ թնչ տեսար:

«Ե՛հ, հարցրին՝ գեղդ, ռահաթդ ո՞նց ա, լաւ ես
պահում, խաթրդ ունե՞ն... Ես էլ ասեցի՝ շէն կենայ
Ստեփան դարգեահը շատ լաւ են, պահել ա բարի աղօթք-
ներդ»:

— Եսնի մեր գեղի անունն էլ տվող կա՞յ:

«Իմ անունը, սուտ ու կցան չկայ սրանում»:

— Չատի քոխվա, նրանց խօսացնողը քեզ հետ դու
չես»:

«Բա թնչն ա, ո՞վ ա»:

— Ինձ էլ որ գաթա ու նազուկ տաս, փթերով
եղ ու պանիր, գուրով մեղր ու կարագ, ես էլ քեզ
գլխիս վրա հը դնեմ՝ հալվա կը կանչեմ. ամա արի տես՝
որ քու ասածները դիփ սուտ են, հէնց մեզ նհախ խօ-
սացնում ես:

Դու քեզ ընէնց ես պահում՝ որ կասես քու ազգ
ու տակը ճանաչող չը կայ: Աղբէր, էս մօտիկ գեղերումն
էլ դհա մեծ մեծ ստառշինէք կան, խի՞ չեն քեզ պէս...

«Ես թնչ եմ որ...»

— Դու մի ուրիշ ջուռա մարդ ես. քու բանը, քու
գործը, քու սֆաթն էլ ուրիշ ղայդի ա: Աբա դէ սաս,
ո՞վ ա քեզ պէս:

«Ա՛յ սարսաղ, ինձ նման ո՞վ կայ. հազիր պոխ-
տան ասեց՝ բ ո լ շ ի տ է բ է ն է տ խ ո շ ի է ս տ ա ու-
շ ի ն ի... նրա հետ ուերէն խօսացի, զարմացաւ, գիտէս»:

Թ.

ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԵԱՆ ԽՆՁՈՐ.

Տանուտէրը ուստա մարդ էր. նա կարողանում էր
փայլել միամիտների առջև. նա աշխատում էր նմա-
նուիլ բեգի օրինակին թէ խօսելում, թէ շարժուելում
և թէ ուրիշ ուրիշ բաներում: Այս պատճառով էլ շա-
տերը նրան շատ անգամ նկատում էին. «Սազ չի գալիս՝
սազ, քոխվա Չատի, քու դնին կաց, քու հօր խասիա-
թին, քու պապի խաչը ճանաչի. Սուրուից բաժանվող
ոչխարը գէլերոց կըլի, իլխուց փախչող ձին գողերոց...»:

Տանուտէրը երբոր քաղաքից կամ այս ու այն աս-
տիճանաւորի մօտից տուն էր դառնում, խալխի առաջին
սուտ-սուտ պարծենում էր. «Նաչալնիկն ինձանից շատ
ու շատ շնորհակալ կացաւ՝ իմ ղոչախ գործ կատարելու
հմար. նա իր մհալի տասնըութ ստառշինաների կշտին
ինձ գովեց, գուրէնատօրիցը նշան խոստացաւ... Պոխ-
տաւը ինձ չայի վրա համեցէք արեց, փունջ էլ խմաց-
րեց, իրար հետ սովէտ տեսանք... Մմալ-բեզը ինձ հետ
կունէկուռն ընկած՝ Գեանջու կամըջի վրա ման եկաւ,

— Էդ ուսերէն լեզուն էլ մի եաղի դառաւ մեզ հմար: Գիտանք որ դու էդ քու լեզուովն ես առաջ գնում:

Տանուտէրն այսպիսի գրոյցներով էր գիւղացիներին կուրացնում, և ինչպէս վերևում գիւղացին նկատեց, այս տանուտէրը արդարև իր տիպով մի բացառակի անձն էր այս գաւառում, որի մասին հետզհետէ շատ բան կը լսենք:

Կարծեմ դեռ չէք մոռացել, ընթերցող, այն ըոպէն, երբոր տանուտէրը ձիաւորից ստացաւ մի նամակ և տարաւ կարդացնել տալու: Գիւղական կառավարութեան գրագիրը կարդաց՝ որ այս էր—

«Յարգելի բարեկամ քոխվա Չատի,

Ես էլ գիտեմ՝ որ Վանի-բեգի հետ ձեր գեղը մի անծանօթ մարդ եկաւ: Զգոյշ կաց, դրանք գեղին օգուտ տալու չեն եկել. ինչ էլ ասեն-խնդրեն, դու շուտով մի կատարի, օրն օրի վրա քցի, թող զգուեն ու հեռանան: Իրանց տուած վնասը առաջ քեզ կը դիպչի, լաւ իմացի, ետոյ գեղին: Վանի-բեգին քեզ բարեկամ չիմանաս. էդ զարիբ մարդին դա՛ ա էս ցրտին բերել գեղը, որ խալխը հաւաք վախտը-բարիկենդանին ամենի քէփով վախտը իրանց չար նպատակը կատարեն:

Ի՞նչ էլ խօ անասուններ չէք, ասածս գլխի ընկէք: Էս նամակը ոչ ովի նշանց չը տաս, որ կարդալ տաս՝ ճղի, դէն քցի: Ես ոնց որ բարեկամդ՝ առաջուց իմաց եմ անում: Սյուսհետեւ մեղք ու վարձքը քո և իշխան-

ներիդ շինքը-ես անպարտ եմ: Հիմի ժամանակ չունէի, կարճ գրեցի, էքուց-էլօր երկար կգրեմ: 1877—փետրվար:

Բարիդ կամեցող Շմալ-բեգ»:

«Շըմմ... Հէնց սիրտս էլ վկայում էր, որ էստեղ մի ալամաթ զատ կայ: Ախր ինչ պէտք ա ըլի, պիսեր Վարդան, որ դա ըտէնց գիր ա գրում: Մի նոր կարդա, ապրես, լաւ լսեմ»:

Տանուտէրը ուշքը հաւաքեց՝ ծանկով ընկած որսորդի պէս. գրագիրը ծանր կարդաց...

«Քո խելքը ինչ ա կտրում էդ թղթիցը, պիսեր Վարդան»:

— Իմ խելքը շատ բան ա կտրում: Ես հէնց եմ իմանում թէ՛ նոր ստառչինա են ուզում ջոկել: Անի-ծած Ոսկանը երկու օր առաջ պարծենալով գնաց քաղաք. ասում էր՝ «գանգատս ժաժ տամ»: Սիմի ապերն էլ նրա հետ գնաց: Վանի-բեգի հետ եկած մարդը կասես թէ նրանց տուած գանգատի զօրութիւնովն ա եկել:

«Լաւ. բա իրանք ո՛ւր են»:

— Ո՞ր:

«Ոսկանն ու Սիմին»:

— Կը գան՝ խօ կորչիլ չեն: Ի՞նչ քու թաղարիքը առաջուց տես. ընէնց արա, որ դուշմանի սրտով չը լինես: Սաղ երկիրը քեզ վրա խօսում ա:

Որ տեսնես բանդ փիս ա, դու քու կամքովը ա գտավ կա տուր, դուրս արի: Մենք եղնա կասենք՝ մարդն ինքը չուզեց զուլլուղ անիլ...

«Պիսէր Վարդան, էդ ես էլ գիտեմ. հմի հլա գնամ... Ե՛ս սուրբ Կարապետ, Քրիստոս-Աստուած...»

—Տղերք, քոխվէն ա, տեղ արէք:

—Տեղիցը կպած չենք, թող գալ:

Ժ.

ԹԻՔԻՆ ԿՈՒԼ ՉԻ ՔՆՈՒՄ.

Գինետան առանձին փոքրիկ օթախում սուփրէն քցել, խորովածն արել՝ մարդիկը համ ուտում-համ խօսում էին.

—Վերդի, քոխվէն եղացաւ հա...

—Բան չկայ, Պետրոս, նա առանց մեզ շատ քէֆեր ա արել, հմի էլ մենք ուտենք, խմենք, մինչև որ կգայ:

—Տղերք, սկի բան էք վարավորդ անում. քոխվի ըռէվուշը թռած ա, վախում ա հա...

Միրզան, բալամ բա չես գիտում, որ ասած ա՝ գող-սիրտը դող: Շատ բան իրանու գլխու ա բռնել, մենք սկի խաբար չենք: Աղբեր, ինչ բան, ինչ հետաք մեր ձեռովն ա անց կացել, ջուղաբը մենք տանք, ինչ որ մեզանից թաքուն ա՝ ինքը: Լաւ չեմ ասում:

Ե՛հ, Վերդի, թնչ ես դարդ անում, հէնց ըզէնց էլ կլլի: Ոչխարն իրան ոտիցը կախ կը տան, էծը իրան: Ամեն մարդ իրա մեղքի տէրն ա:

Այս ըոպէում դրսեկից ոտի թմփոց լսուեց:

Ենթաց քինթ ու պուռնգգ վեր թողած ես քոխվա Չատի, պոչով ընկած եզան պէս, ասաց Պետրոսը՝ երբոր նա ներս մտաւ:

—Ե՛հ... հալբաթ ըզէնց կասէք: Ել չէք հարցնում թէ՛ էն թրւղթը թնչ էր, ո՞վ էր ղրկել, ինչ էր գրել:

—Դէ ասան, ասան-լսենք: Եւ տանուտէրը սկսեց իր հասկացածին չափ աւելացնելով, պակասացնելով, թարս ու շիտակ պատմել նրանց և վերջում աւելացրեց. «Ապրին. Շմալ-բեգի որդիքը, ըսէնց, ըսէնց, ըսէնց, գրում ա ու ասում՝ դուք եդ դարիբ աղին ասեցէք-դու ո՞վ ես, մենք քեզ ո՞չ ճանաչում ենք, ո՞չ էլ կը լսենք»: Հմի դուք թնչ էք ասում, աղբեր:

—Չէնց մեր միտքն էլ եդ էր, ասաց Վերդին. ամա թէ որ կը տեսնենք ըսէնցով ոչինչ չի դառնում, էն վախտը...

—Էն վախտն թնչ:

—Էն վախտը, ասաց Միրզէն. մեղը պէտք ա քըսենք եդ աղի բերանին ու մի հանգով մեր ասածն անենք էլի: Ըսէնց չի, աղբեր. թէ դուք ուրիշ հնար գիտէք՝ ասեցէք:

—Շատ լաւ, խօսեց Պետրոսը, որ եդ ու մեղդը շան տկճորը կոխի, վեր չունի, թնչ կանես: Որ երծաթիդ վրա թքի ու աղբահարը շպուտի, թնչ կանես: Ըսէնց մարդիկ էլ կան, խաբար էք: Նա կասի՝ ես օրէնքի մարդ

եմ, օրէնքով պէտք ա ժաժ գամ: Վերջը՝ քեզ ստառ-
շինութիւնից դուրս կը քցի ու, Ոսկանի հետաքով, մի
քանի հարիր մանէթ էլ շտրափ կը խլի, ո՞նց կանես:
Մեզ էլ կասի՝ դուք դրա սիրդաշներն էք, սո՛ւս կացէք.
Խօ չենք կարող կուլ քցել: Ախր ձեր միջի ա զ ս ա խ-
կալուն ես եմ, գլուխս հազար քարի ա դիպած, ամեն
հետաք էլ գլխովս անց ա կացել. մազերիս համբարքովը
ես գործ եմ կատարել, հմի հէնց գիտաք՝ բան չըգիտեմ,
ան մեծացել՝ խելքս լետ եմ տուել. էհ...
—Մենք էլ էդ ենք փիքը անուամ է, վրաբերեց Միրզէն:
—Ախր հետաքը հէնց էդ ա է...

Իսկոյն ներս մտաւ գզիրը: «Քոխվա, գլխիդ ու արևիդ
մատաղ, Վանի-բեգն ու մի ուրիշ հազաժ-կապաժ աղա
քու տուն արած տղերանցը գոմիցը դուրս անել տուեցին:
Ես ուզեցայ չը թողնեմ, նրանց բարեկամներիցը մի
լակոտ, մի մի բողար ու չամբար ինձ էլ մի լաւ սիլլա
տվուց, թէ՛ սո՛ւս, լեզուիդ օրօն արա, թէ՛ չէ՛ միրուքդ
կը փետենք: Բա սրա դատաստանը թնչ ա»:

Տանուտէրը չը լսելու դրեց. Վերդին խօսեց. ա՛
գեադա, դրան դատաստանը մի ըռխալէ ուշուանց տալն
ա. գնա մտի էն ծակը, խէլլի մ նրանց ուշուանց
տուր, պուժանք գնաց...

Գզիրը մնաց շուարած: «Տղերք, բանը կամաց-կա-
մաց բաց ա ըլում հա՛»-կմկմաց քոխվէն:

Տօ հաց կեր, թնչ ես դարդ անում:

—Թիքէն կուլ չի գնում, չէ...

ԺԸ.

ԴԱՐՁԵԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՃԳՈՂՈՒԹԻՒՆ ՏԱՆՈՒՏԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ ԴԵՄ.

Այժմ մենք գնանք վերատեսչի ու բեգի մօտ: Սը-
րանք՝ երբոր բ ու ն ու ա ծ ն եր ի ն գոմիցը դուրս թող-
նել տուին, եթէ չէք մոռացել, խօսելով դէպի Միր-
զունց սրահը գնացին, ուր ժողովուրած էին շատ մարդիկ,
որոնք աջ ու ձախ խօսում էին ինչ ինչ խնդիրների
վրա և լանկարծ տեսնելով բեգերին՝ լուռ ու մուռնջ
նայեցին նրանց վրա: Իեռ մի քանի քայլ հեռուից բեգը
խօսեց. «բարով, հազար բարի: Ձեզ հմար մի ուրիշ
դոնաղ էլ եմ բերել, մի երկու օրուայ դոնաղ. տեսնեմ
ո՞նց կընդունէք մեզ ու պատիւ կը տաք»:

—Ղոնաղն Աստուանն ա, գլխներիս վրա տեղ ունէք
ամենքդ էլ, ասեցին մի քանիսը և ապա գլուխ տալով
«բարով էք եկել» կրկնեցին ամենքը: Մինը խկոյն մի
խալիչայ դուրս բերեց, սրահումն ընկած ք ե օ թ ու կ ի
վրա քցեց ու «Համեցէք» արեց բեգերին այնտեղ նըս-
տելու:

—Աղա՛ ջան, քաղաքիցը թնչ խաբար...

«Քաղաքում ամեն ինչ բոլ ա, ասաց բեգը, ամեն
ինչ էժան, ամենքն էլ առողջ»:

— Աղա՛, անկաջիս մի քամի ա դիպել, ասում են՝ որ դուք...

«Ի՞նչ քամի, Մակի, մենք քնչ...»:

— Դուք էս գեղը բանի էք եկել, մեզ խի՛ մի ոտն առաջ չէք ասում:

«Շատ հետաքրքիր է այս մարդի միտքը, կամաց ասաց վերատեսուչը. ասա՛, բարեկամ, մի քաշուիլ, ականջիդ ի՛նչ քամի է դիպել»:

— Աղա՛, էն դայդի քամի ա, որ էս ջամահաթի միջին չեմ կարող ասել: Դուք ձեր բանը հալբաթ լաւ էք իմանում: Մենք էլ ձեր կռանն ենք: Երբոր դուք ձեր գործը կը կատարէք, թէ մեզ էլ խօսք կը հասնի՛ կը խօսանք...

Դժուար էր միմեանց հասկանալ: Վերատեսուչը կարծեց թէ՛ երևի այդ մարդը իմացել է իրանց այս գիւղը գալու նպատակը, և այդ առիթով է խօսում, այն ինչ՝ պ. գիւղացին դրա մասին մազի չափ անգամ տեղեկութիւն չուներ, նրա լսածն էլ հէնց այն էր, ինչ որ եզրակացրել էին գինետան մէջ այժմեան քէֆ անողները:

«Նղբայր, ասաց վերատեսուչը. իմ գործի մէջ հէնց առաջին խօսքը ձեզ պէսներին է հասնելու: Մենք առանց ժողովրդի մազ անգամ չենք կարող քամու տալ և ինչ որ անենք այս գիւղում, բոլորը ձեր օգուտն է լինելու»:

— Աղա՛, վախում ենք...:

— Մի վախէք. ձեզ ոչ ով չի վախացնում»:

— Վախում ենք մեր գեղի անկշտում ու աչքածակ հարամիքը ձեզ էլ խաբեն, իրանց կուռը քցեն, ու մենք էլի մնանք չոր քարին նստած զկռտալիս...

— Յուզայիցն էլ բէթար ա էն մարդը, աղա, խօսեց ուրիշը. որ գեղի ըռահաթի խօսքը չուանի չի դնիլ, կընկնի մի երկու փոր պաշտող, հաւի պէս աներես, գեղին փրսըվէր անող մարդկերանց խելքովն ու մեզ պէս անճար, անտէր քեասիբի ըւխին մտիկ չի տալ...

— Ես վախում եմ մեր գեղը Ա. գ. ո. ո. ո. նման փլատակ մնայ, վրաբերեց երրորդը, ախր, ձեզ մատաղ, էս քան մեծ գեղի միջին շառ ու շամաթին մի հալալ-գուլալ դատաստան չըլթ: Երբոր ամեն մարդ իրա չափսը կը ճանաչի, իրա հոգին միտը կը քցի, Աստօժ վկայ, էս գեղի միջին մեռոն կ'եփուի: Ամա...

— Երկու տարի ա, աղա՛ ջան, ընդմիջեց մէկը, ինչ Յուզի պէս չարչարանք ա տուել մեր Չատի քոխվէն: Մի 15 մանէթի բորաթ ունեմ, 15 մանէթ էլ ջոկ եմ ծախս արել, շառ ու էլի շառ ա մնացել, խօսքս՝ խօսք, աղաչանքս՝ աղաչանք: Սա քնչ մարդութիւն ա: Միրումանց Վիտիսին-մեր հին ստառչինին տնազ էինք անում որ լաւը չի, ամա տեսնում էք՝ եզինը եկել ա, աղաքինը յիշվում ա: Ախալիս, իմ էս հեսաբին խօ դուք ամենքդ էլ վկայ էք...

— Հրեղէն սուրը առաջ փիս մարդի տուեն ընկնի, գոռաց մի ուրիշը, եղնա գալ ու էս գեղի անիրաւ մարդկերանց ջանը խրթուի, որ մեզ պէսի՛ դադըր իմանան, իրանց տ ու ը ր ս ու չ ա փ ս ը լ աւ ճանաչեն: Հաւը որ հաւ ա, ջուրը խմում՝ Աստծուն մտիկ ա անում, աղօթք անում, շնորհակալ ըլում, որ մի քանի կում ջուր հասցրեց իրան: Բա մարդը հաւիցը ինչքան խելօք ա, Աստծու ջիգարն ա, նրա ամանաթն ա, ինչքան խղճտանք պէտք ա ունենայ, ոնց պէտք ա իրան ստեղծողին մո-

ուանայ: Է՛հ, որ մինն ասեմ. սուս կենալը խերիաթա...

— Աղա ջան, հմի ես ասեմ: Զի՛ս, էն քիւրան ձի՛ս գողացան, գողի տունը Սոթաքաղաքն *) ընկի: Դէս ընկայ, դէն ընկայ, հայ ձի, վայ ձի, կորաւ ու կորաւ: Դու մի ասի՛լ՝ ձիս թուրքին տվողը էս գեղըցի ա: Վկաներ ունեմ—որդում, կրակն են ընկնում՝ որ ձիդ տանել տվողը ֆլան-ֆլանն ա: Հինգ ամիս ա, լաց եմ ըլում, տազ եմ անում, մեր օրհնուած քոխվէն սառցի պէս քար ա կտրում-հետևում չի: Մի վախտ էլ էրկու մանէթս առաւ, թէ շառդ կը կտրեմ, էն էլ բաթ մի շըլաւ, թուշ գնաց. բասա խղճմտանք ա՛, բա մենք նըհախ տեղը մարդի վրա խօսող-բամբասող մարդիկ ենք... Վերատեսուչը կարծես թէ մոռացել էր ուսումնարանական խնդիրները. նա գրավում էր գիւղացոց սըրտածմլիկ խօսքերով նա լուռ ու մունջ լսում էր՝ թէ ով ինչ է խօսում:

— Խի՛, դու գիտում չես էս դիփ, Վան-բեգ, մէջ ընկաւ չգիտեմ քանի երրորդ մարդը, որը մինչև հիմա մարաղ մտած լսում էր. խի՛ չես մեր մեծ աղին գլխի քցում, որ դատաստանը արգար անի. ախր վերև Աստօծ կայ, մենք էլ նրա տակին ենք. նա մեր ամեն բանն էլ իմանում—իրա դաւթարումը գրում ա...

«Աղբէր, վերջապէս խօսեց բեգը, մինչև երեխէն լաց չըլի, մէրը ծիծ չի տալ. դուք էրբ էք ձեր դար-

*) Սոքա-քաղաք խօսքը առասպելական է եւ դիւրացիք անեծքի տեղ ընդունելով՝ երեսակայում են մի քաղաք-դժոխքից դժոխք, որտեղ ընկնողը հոգով ու մարմնով տանջվում է:

դերը ինձ ասել, որ ես անտեսեմ արել: Հիմի էս աղէն ինչ անի. հազարը հազար բան ա ասում: Դուք թղթով լաց ըլէք ձեր դարդերը—տուէք նաչալնիկին—էսօր ռահաթի տէրը նա ա, ու իմաց արէք թէ մեր քոխվէն էլ լի գի ու ջամահաթի մարդ չի, ըսէնց ըսէնց մնին էրում, մնին դադում ա, մի վախէք, նաչալնիկը դրան մի օր էլ չի պահել, էն սհաթին դուրս կը քցի զուլուղիցը: Ոչ մի մեծաւոր չի ուզի՛լ՝ որ իր ձեռի տակի ռահաթը նեղութեան մէջ՝ ըլի, պակասութիւն ունենայ: Ախր որ հէրը կուզի իր որդու ցաւը...»:

— Եդ ամենը գրել ենք, աղա, գրել ենք, գոռացին ամեն կողմից:

«Բա ինչ էք արել գրածը»:

— Մեր Ոսկանը տարել ա՛ որ տեղին տայ, ան հարկ ըլի մեր բանը՝ ան թարկ. ան մենք էս քոխվի ու իրա սիրդաշներէ եսիրը դառնանք, ան նրանք օրէնքի ղուլը: Տօ աղբէր, օրհնուի օրէնքը. ըսէնց մկրատ ա-դուգ... սրանք սըր կարան ազատուել, սըր...

Ա՛յ աղա, բա դուք մեր էս բանի հմար չէք եկել. բա էն քամին նհախ ա անկաջիս գիպել, հարցրեց առաջնախօս Մակին:

«Թէ մենք սըր ենք եկել, եղբայր, գթաշարժուելով ասաց վերատեսուչը, դուք շուտով կիմանաք: Մենք եկել ենք էնպէս մի բան անենք, որ էս գեղի երեխերը, ձեր որդիքը այսուհետև այդ դառը օրերն էլ չը տեսնեն, ինչ որ դուք էք տեսնում»:

«Մեր գործը հոգևոր ա, մարմնաւոր չի»-վրաբերեց բեգը:

— Ո՛ւր ա... Հոգևոր դատաստան պէտք ա կտրէք,

Թէ չէ՝ ձեզ դրուստն ասեմ՝ մեղանում էլ ոչ օրինաւոր ժամ գնալ կայ, ոչ իր վախտին պաշտում-պատարագ տեսնալ, ոչ քարոզ լսել, ոչ մեծ ու պուճուճ, ոչ սէր-տէր, ոչ քոխվա, ոչ իշխան... Աղբէր, գիփս էլ փիսացել ենք: Ղորթ ա, շատ բան ենք ասում, ամա մեր գեղի երեսը փիս ա շրջուել. սկի խալխն էլ խալխ չեն: Սրա մեղը խօ մէնակ քոխվի վրա չի, գեղիս մեծամեծների ու տէրտէրի: Տէրտէրը պէտք ա խրատի, չէ, ամա անում չի. քոխվէն պէտք ա ճամբէն ծռի ոչ, չէ, ամա ծռում ա. մեծամեծները պէտք ա հոգևոր մարդիկ ըլին, իրանց թուի տակին պահպանեն գեղիս խեղճ ու նաչարին, չըթողան՝ որ նրանք հարամու ըռեխ ընկնեն, չէ, ամա հէնց իրանք են հարամի դառնում: Քոխվէն տեսնում ա՝ որ գեղիս առաջնախօսները-կոտրած գթալի պէս ամեն բանի մէջ ընկնողները իրան դարար են, հմի նրանց խելքովն ա նստում՝ վեր կենում, նրանց ծափովը ծափ տալիս: Ելի քոխվէն շատ խղճմըտանք ունի՝ քան քեանդ-խուզաները:

Վերատեսուէր քեթուկի վրա նստած տեղիցը կանգնեց. «Այդ ամենը, ասաց նա, շատ լաւ էք ասում, որ ձեր քոխվէն, տէրտէրը, իշխանները վատ մարդիկ են, ձեզանից գուփում են սոված գալլի պէս: Սբա ասացէք, այդ մարդիկը կարող են ինձանից զօռով ուտել կամ ինձ մի վնաս տալ...»

—Նրանք քեզ տեսնալիս կը դողդողան:

«Վանի-բեզի...»:

—Սրանց հոգին դրա ձեռին ա:

«Հաբա այս ինչիցն է, որ դրանք մեզ պէսին չեն կարում ոչինչ անել և դեռ մեր առաջին կուչ են գալիս,

իսկ ձեզ այդքան նեղացնում, այդպէս գիւղի անարատութիւնը խախտում են... Ասացէք է... Թնչ է պատճառը»:

—Աղա, պատճառն էն ա՝ որ դուք աղա էք, մենք՝ գեադա:

«Իորա պատճառն Թնչ է: Մթթէ չէիք կարող դուք էլ աղա դառնալ: Ի՞նչն է մարդիս աղա շինողը, մեծացնողը, հարստացնողը...»:

—Ասեմ, աղա ջան, հարցրեց մէկը

«Ասա»:

—Չակատի գիւրը, բա՛ղտը:

«Ել»:

—Աղա ջան, խօսեց Մակին, ես իմ կարճ խելքովս գիտեմ՝ որ պատճառը ոչ թէ բաղդն ա ու ճակատի գիւրը, էն ա՝ որ դուք ուսում ունէք, մենք չէ. դուք ձեր օրերը սմարաններումն էք անց կացրել, մենք մեր օրերը էն երևող ձորերումը... Թէ մենք էլ ուսում առած ըլէինք մենք էլ մի մի աղա կըլէինք, ոնց որ Վանի-բեզը. ամա մեր հօր շինքը ծկըթի, էս մութը տեղն են մեծացրել, դրուստ «անուն հօր» անելն էլ չը գիտանք...

«Շատ ապրիս. բոլորովին դրուստ ասեցիր: Ուսումն է՝ որ մարդիս մեծացնում, հարստացնում, մխիթարում, կեանք ու կենդանութիւն է տալիս: Այս ժամանակումս ով որ ուսում չունի՝ ձեր օրումն է: Այս բանը որ դուք էլ իմանում էք՝ ինչի՞ ձեր երեխանց անուսում էք մեծացնում»:

—Աղա ջան, վրաբերեց մէկը. մի երեխայ ունեմ, քեզ բաշխեմ, տա՛ր, քու հոգևոր գիւն շինի...

«Ասենք քո որդուն ես տարայ, բա էս գիւղի հարիւ-

րաւոր երեխանցն ո՞վ տանի. նրանք ում հոգևորդին դառնան»:

— Թող ամեն մարդ իրան տղի դարդը քաշի:

«Ամեն մարդ որ իր տղի դարդը քաշի, վրա բերեց բեզը, տասը տարուց յետոյ էս գեղումը էլ լիմար մարդ չի ըլիլ»:

«Ամեն ծնող պարտական է իր որդուն ուսում տալ: Առաջ մի փոքր բան իմացողը պէտք է այս բանը սկսի, յետոյ լիմարները օրինակ կը վերցնեն: Եւ երբոր ամենքը միասին կ'ցանկան իրանց որդոց դաստիարակութիւնը, այն ժամանակ մենք այս գիւղում բաց կ'անենք մի կանոնաւոր ուսումնարան, որ ամենքի երեխան էլ բան սովորին»:

— Որ ըտէնց մի բան անէք. աղա ջան, վրաբերէց մէկը, չանք տղէս կարդա, ես հէնց առաջուց իմ հասու իրանքը կը տամ:

— Ո՞վ չի տալ, կրկնեցին մի քանիսը, ո՞վ իր որդուն կը գրկի ուսումից ու վերջը մեր օրը կը քցի...

«Ոչ ո՞վ, խօսեց բեզը, իր որդուն: ուսումից գրկողը մարդ չի, Յուդայիցն էլ բէ՛թար ա»:

— Անորդա, միջամտեց Մահին, ամա էս գեղումը սմարան բաց անելը շատ հետաքննել կուզի, շատ խօսք ու գրից. չունքի՛ ըստեղ սմարան է՛լ ա ըլիլ ու քանդվել ա... Քանի որ էս գեղի մեծամեծները իրանց ճամբ բին չեն, դուզ չեն, ըստեղ բան չի շինուիլ, շինածն էլ կը քանդուի: Աղա ջան, թէ կարում էք՝ առաջ նրանց իրանց կարգին դրէք, եղնա ամեն բան հեշտ ա...

«Լաւ կ'ըլի, միամիտ կացէք, ասաց բեզը. ամեն մարդ իրա կարգը կ'ճանաչի ու էս գեղն էլ մի լաւ ուսումնարան կ'ունենայ»: Այս խօսքից յետոյ բեզն ու վերատեսուչը ճանապարհ ընկան դէպի տուն, որոնց պատուելու համար՝ մի խումբ մարդիկ էլ նրանց հետ գնացին:

Շուտով մի պառաւ կին՝ տղաթևած մօտեցաւ վերատեսչին. մի քանի անգամ գլուխ տալով քնթկալը վեր քաշելով՝ կմկմաց. «Աղա, ոտդ էս հանդին ու հանդաստանին վրա գալ. բարով ես եկել, բարով էլ գնաս — մի ա ը գունիմ, երեսս ոտիդ տակը դիր ու կատարիր: Լսել եմ թէ աշխարհիս «շառ ու շամաթէն» դու ես կտրում, հախ ու նհախը իրարից ջոկում, դողդողալով կուշող եմ եկել»:

— Ասա, ինչ դարդ ունիս:

«Աշխարհը գիտի, որ ես մի անճար — օրս սե ըլպօ՛ պառաւ եմ: Շատ որդիք եմ թաղել, շատ դովլաթ կորցրել, շատ ու շատ կսկիծներ էլ քաշել: Իմ հիմիկուան դովլաթը մի քանի հաւ ու ճիւ ա: Էն էլ թողում չեն որ ձեռիս մնայ: Էս Չատի քոխվի մեծ տղէն նշանած ա — ամենքն էլ գիտան: Նա մի գիշեր ուզում ա, իրա զանքաչանց գնալ, ամա ձեռը դարդակ չի կարում: Գողեգող գալիս ա, իմ հաւաքնիցը իրեք հաւ ճիտ ա պուկ անում ու տանում, որ գոմի, ախոռումը չառլամիշ ըլեն»:

Ճիտապիկ անելիս, հաւերը քենուն տալիս ու բմբուլը փետուելիս էլ տեսնողներ են ըլում: Էն օրից

էսօր լաց եմ ըլում, ծեծվում եմ, քոխվէն շառս չի կտրում, չունքի՛ գողն իրա տղէն ա: Աղա՛, սէրը Քրիստոսի խաթէր, նրանից առ իմ հաւերը՝ որ չուանց հիմի գթալմանս ձուով լցրած կ'ըլի՞՞էին, ինձ տուր: Տէրտէրը մեր տունը նշխարք ա ղրկում, ձու չունեմ, որ իրան տամ. տնօրհնէքն ու գերեզման օրհնէ՞քին ինչ պէտք ա տամ. ո՛ւր ա ձու...»:

Բեգը լռեց: Վերատեսուչը նկատելով խեղճ պառաւի կուչ եկած աչքերի մէջ լճացած արտասուքը՝ խղճահարուեց.

— Նանի, ասաց նա, քո մի հաւը ի՞նչ արժէր:

«Իրեք ան չորս շալի, ամա ինձ համար թանգ էր. չունքի՛ տարի ա անց կենում—կապէկի իրես չեմ տեսնում. բէրող չունե՛մ, դադող չունե՛մ...»

— Ա՛ռ, ես քեզ երեք մանէթ եմ տալիս, ասելով հանեց գրպանիցը ու տուեց պառաւին. միայն իմացիր որ դա քո հաւերի գինը չէ. դու կտրող ես քո հաւերն էլի պահանջել տանուտէրիցը:

Պառաւը չ'իմացաւ ինչպէս յայտնի իր գոհունապիւթիւնը, ուզում էր նրա ոտքի տեղը համբուրի. «աբուդ շատ, քեզ ըմբարու՛, ոտդ փշի չ'առնի՛, ձեռդ երկար, մաջկոդ տիւր, մէջքդ զայիմ ըլնի՛...» Պառաւն այս օրհնանքը լետեիցն էր ասում. նրանք գնում էին:

Վերատեսչի արարմունքը զարմանալի թուաց—Աղա՛, ասաց Մակին, էդ փողը քոխվէն պէտք ա տար, դու խի՛ առի: Խի՛ չի նրանից առար, ջանը հանցիր: Չ'ըլի՛ թէ՛ դու էլ կողմնապահութիւն ես անում:

Աղբէր, սուղուեց նա գէպի իր ընկեր մարգիկը, էս

Չատնի բաղդը բանում ա՛, բանում. տեղիցը վերկենողը դրան քեծագ ա ըլնում...:

— Եղբայր, պատասխանեց վերատեսուչը, դուք կարծում էք՝ ես այն փողը գողութեան համար տուի՛, երբէ՛ք: Ես միմիայն պառաւին ողորմութիւն տուի: Մնացէք միամիտ. ես վատ մարդկանց ատելով ատում եմ: Զեր բոլոր գանգատները ես չեմ մոռացել—չեմ էլ մոռանալ: Միայն հիմի այս ամենը թողնենք ու ձեզ հարցնենք, թէ ինչի՛ բարիկենդանի ուրախ օրերն այսպէս տխուր-տրտում էք անց կացնում. բա ձեզ համար խաղոց ու խնդոց չկայ...:

Ոնց չկայ: Էսօր շաբաթ ա, էքուց կիրակի, էքուց ու էլօր ամեն բան մենք կը մոռանանք ու քէփ կանենք, զուռնա-գհոլ ածել կը տանք, «Շահ-շահի» կը խաղանք: Ո՛վ ա տէրը. անտէր գեղա՛, հէնց ինչ ուզենք, կանենք, կը խաղանք: Էս երկու օրուան իրաւունքը մեր ձեռին ա...:

Այս խօսքից լետոյ նրանք ներողութիւն խնդրեցին աղաներիցն ու լետ դարձան: Բեգը տեսնելով որ վերատեսուչը հէնց ինչ տեղ հասնում ոտը դնում է, ասաց. «Պ. վերատեսուչ, ինձ հետ արի, ոտքդ կէծանիցը դուրս մի՛ դնիր, եթէ ոչ՝ կամ ձնի մէջը կը խրուես և կամ ոտիդ տակը կը ծակուի՛ կընկնես մի մութ գոմ. դու չը կարծես թէ՛ մեր ոտքերի տակին հաստաւ հող կայ, կտուրների վրայով ենք անց կենում...»:

— Ինչ ես ասում, ա՛յ մարդ. ուրե՛մն զգուշանամ...:

խօսք բացեց. «Տէր Հայր, դու աւելի լաւ կ'իմանաս, ասաց նա, ի՞նչի հայոց գիւղերը բոլորն էլ խոր ձորերումն են հաստատած. ի՞նչ է դրա պատճառը»:

Տէր Հայրը հետեւեալ բացատրութիւնը տուեց այդ մասին:— Որդիք, դրա պատմութիւնը շատ երկար ա, օխտն օր ու գիշեր որ ասեմ՝ պռծնիլ-չեմ, ամա կարճ կտրենք, մանաւանդ՝ որ հաց ուտելիս էլ շատ չեն խօսիլ: Տէր զալուստը իմ պապս էր— ես նրաճ վրա հասայ: Նա միշտ հին պատմութիւններ էր անուճ, մենք էլ լսում— սովորում էինք հեքիաթի պէս: Կռուի տարիներում, ասում էր նա, աղա Մահմադ խանը իր անթիւ ղոշունով Գանջու աշխարհին վրա տուեց, ջարդեց ու փշրեց ամեն բան, էն վախտը հայերը նեղն ընկած, մէր—մանուկ իրար փաթաթուած, իրանց տըները, գեղերը, կալուածներն ու դովաթն անտէր թողած՝ դպա ձորերն ու պնդոցներն էին փախչում... Մեր էս ձորերին ու պնդոցներին էլ, Վանի բեգ, խօ գիտես, հազար-հազար մարդ չի կարող մօտենալ, հազար թուր ու թուանք չի կարող մի ցլէպ պոկել, մի քերձի կողք փշուել: Մի տեղ որ ադամորդու ոտք չը դիպած ըլի, կեծաճներ ու ջղիրներ չունենայ, միայն արջերն ու քաւթառներն ըլեն վշտի տալիս, ի՞նչ ահալի ու դողալի կ'ըլին էն տեղերքը... Հիմի ա՛ որ մարդկերանցով ու տաւարածներով ձորերը վժվժում են, կենդանութիւն կայ. էն վախտը ո՞վ էր տուել, ան ո՞վ սիրտ կ'անէր մէնակ էդ ձորերը մտնել... Հա՛. փախած ու քոչ ընկած հայերը մի քանի տարի էդ պնդոցներումը սոված ծարաւ, ձիւ ու իշի միս ուտելով ապրել են ու ագատել իրանց հասած աղջկերքը, սիրուն հարսներն

ԺԲ.

ՄԵՂԸ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՆ Է:

«Երկնքիցը մի քար կայ կախ ընկած, ով որ իրան չը հաւանի—գլխին կ'ընկնի»: (Ժողովր. խօսք)

«Ա՛ հարսներ, Խասի՛, Աննման, տուներ վեր քաղեցէք, հաւերը սրահը դուրս արէք, օջաղի չորս կողմը սրբեցէք, շոր քցեցէք, աղէքը գալիս են, ես էլ շունը գոմն եմ քցում» — դրսից ձայն տուեց նանն ու կանչեց — «Բողա՛ր, Բողա՛ր, Բողա՛ր...»

Հարսներն իսկոյն կատարեցին նանի հրամանը: Տէրտէրը որ միայնակութիւնից թմրել, քնել էր, զարթնեց ու ճլմկոտում էր:

«Եարաք կրակը թէժ ա, շատ մրսեցինք» — ասելով ներս մտան այս տան հիւրերը:

— Տնաշէններ. ո՞րտեղ էք էսքան վախտ. ախր սոված մնացինք, ասաց տէրտէրն ու հարսներին հրամայեց սուփրէն քցեն: Իսկոյն ձեռի ջուր բերին—լուացուեցին ու սուփրէն փռեցին: Հաց ուտելիս վերատեսուչը

ու գեղեցիկ տղերքը անիրաւ պարսիկներէց. մինչև որ աշխարհքը խաղաղուեալաւ: Էս խաղաղ վախտը նրանք էլի ձորերիցը դուրս չեն եկել, վախենալով թէ՛ կարելի ա էլի անիրաւները վրա կը տան... Հէնց պնդոցների մօտ էլ քարերն ու ապառաժները ճղելով՝ տներ են շինել, գեղեր քցել ու մինչև էսօր էլ ապրում են... Ա՛յ, պատճառն էս ա՛ որ մեր գեղացիք ձորերումն են ապրում: Էս մեր կնանոց երեսը որ չ ա ղ ր ա թ ո վ, ը ո խ կ ա լ ո վ ք ն թ կ ա լ ն ե ր ո վ կալնած ա, գիտէք ինչ բանից ա մնացել, էլի էդ անիրաւ զղբաշնորից. հայերը երբոր տեսել են՝ իրանց էլ սիրուն հարս ու աղջիկ չի մնում, բռնում ու տանում են իրանց բեգերի ու խաների հմար, սովորութիւն են անում երեսները կալնել տալ, որ գօնէ դրանով կարողանան ազատել իրանց սրտի կտորին մուռտառ ցեղիցը: Էն օրից էսօր մեր կնանոց գ լ ու խ ր բ ե ո ն ա ծ—երեսը կալնած ա: Ամա հմի փառք ըլի Աստծուն, ոչ էս կայ՝ ոչ էն, ոչ աղջիկ են թոցնում մօր ծոցիցը, ոչ հարսը մարդի ձեռիցը ու ոչ էլ տան ապրանքն ու դովլաթն են աշկարա խլում, տանում... Մեզ պահող ձեռը էնքան ուժով ա, որ անհաւատ թուրքն էլ, քուրդն էլ, պարսիկն էլ նրանից սասանում — ծակն են մտնում, ոնց որ մի օր հայերը պնդոցներն էին քաշուել, տապ արել, մարաղ մտել...

«Շատ բարի, տէր հայր, խօսեց վերատեսուչը, եթէ որ հիմի ոչ այս կայ և ոչ այն, ամեն տեղ ապահով է, ինչք մերոնք այդ ձորերիցը դուրս չեն գալիս ու էլի իրանց հանդերումը—հարթ տարածութեան վրա գեղեր հաստատում»:

—Որդի, դրան էլ շատ պատճառներ ունի. մին՝ որ ոչ գեղ շինիլն ա հեշտ, ոչ գեղ քանդելը. ասած ա՛ գեղ փոխես, գեղովը մին քանդուես, տուն փոխես՝ տանովը մին քանդուես: Ով որ տուն չի շինել՝ պատերը բանովի գիտի: Երկրորդ էլ՝ որ հայերի պապական օջախը սուրբ ա համարվում, նրանից անկարելի ա բաժանուիլ: Մի մարդ որ 50—60 տարի ապրում ա մի ծածքի տակ, ունի օջաղ, կալ, կալապան, մարաք, գոմ, օղա, խոզարան, ետթաղ, մառան, բաղ, հնձան, բաղջա ու հազար հաջաթ—հուջաթ... Նա՞նց էդ ամենը թողնի ու գնա ուրիշ տեղ—մի էդքան էլ նոր շինի, ան ի՛նչ պէս, ի՛նչով շինի, էդքան շէնքերը խօ մի տարումը չեն շինուած...

«Լաւ, հասկացանք, առաց բեզը, հացդ կեր, սոված կը մնաս»:

—Ես համ ուտելու՝ համ խօսելու սովոր եմ, միամիտ մնացէք: Աղա՛ որդի, ո՞նց ա, ասածներս հաւանեցիր:

«Ճշմարիտ, տէր հայր, քո ասածները գ ու ա փաստեր են մեր ազգային պատմութեան համար»:

—Ախր ինձ էլ տէր-Պաղոս կ'ասեն է՛.—հպարտացաւ նա: Ես էլ պակաս գիտունը չեմ, ամա ս՛կ ա հարց ու փորձ անողը...

այնքան կասկածներ էր տանում. «Անիծած Ոսկանը քանի գեղումս չի, մտածում էր ինքն իրան, քանի որ նա կորած ա, աղի հետ մի լաւ դոստանամ, սիրտը մտնեմ, ջիգարն ինձ վրա քցեմ... փառքդ շատ ըլի, Աստօծ, որ ողորմութիւնդ ինձ ամեն տեղ էլ հասցնում ես...»:

ԺԳ.

ՅԱՆԻՄԱՆՈՒԹԻՒՆ ՏԱՆՈՒՏԵՐԻՆ ՈՒ ԻՇԻԱՆՆԵՐԻՆ.

Տեսարանը փոխուեց. նոր մարդիկ աւելացան:

«Զանքաչի սիրեկան ենք հա, աղա ջան, ձայն տալով ներս մտաւ տանուտէրը, հէնց ինչ տեղ էլ մտնում սուփրի ենք հանդիպում, սուփրի ծէրին նստում...»:

— Ես շատ քոխվա եմ տեսել, վրաբերեց տէրտէրը ժպտալով, ամա սրա նման պնդերես ոչովի չեմ տեսել:

«Համ քոխվա ըլեմ՝ համ պնդերես չըլեմ, ոնց կըլի, տէրաէր ջան. ինձ նման լաւ քոխվա երբ ես տեսել որ հմի էլ թ ո վ բ ա թ ես անում»:

— Արի, լաւ, նստի, դուք էլ նստեցէք Միզզան, Պեարոս: Ոնց որ որ տեսնում եմ ձեր փորումը պատարագ կայ, մերումը կնունք էլ չկայ: Թողէք մենք էլ ձեզ պէս տըռզենք, եղնա խօսենք: Ողջ ըլէք, սաղ ըլէք. Աղան, Վանի-բեզ, բարի էք եկել—ասաց տէր հայրն ու օղին կուլ տուեց:

Տանուտէրը անչափ ուրախացաւ, որ յաջողեցրեց նստել մի սուփրի վրա այն մարդի մօտ՝ որի մասին

«Տանուտէր, խօսք քցեց վերատեսուչը. դու ինչք մեզանից հեռու ես պըտըտում»:

— Աղան, գլխիդ մատաղ, ամաջում ենք: Որովհետեւ մենք չենք իմանում՝ թէ գալդ ինչք՝ համարա, սրտեղից ես եկել, ուր ես գնալիւ, էս գեղումը ինչ պէտք ա շինես, որ էնդու գետրա քեզ հանդիպենք: Անրդա, թահ, ըրիցդ ու ուէվուշիցդ մեծ մարդ՝ չինովնիկ ես երևում, ամա քեզ սկի լիս չես քցում, Վանի-բեզն էլ բան չի ասում, թէ տեսնենք՝ հոգևոր մարդ էս թէ մարմնաւոր, գործդ ու փէշակդ քնչ ա...:

«Ես հոգևոր կողմի մարդ եմ: Այս ձեր բեզի հետ միասին Գանձակիցն ենք եկել, կը մնանք այս գիւղում մի քանի օր, կը կատարենք մեր գործն ու շուտ կը վերադառնանք: Միայն դու ու տէր հայրը մեզ պէտք է օգնէք, որ մեր գործը յաջող ելք ստանայ: Ի հարկ է, հակառակութեան բան չունենք...»:

— Աղան ջան, Վանի-բեզը գիտի, էս գեղումը հէնց ինչ բան էլ բռնես, հազար հակառակ լիս կ'ընկնի: Բան չինելիս թէ մինը հակառակ խօսաց, ամենքն էլ կը պրանուեն նրա դիհը ու մեզ ամօթալի կը թողան: Խօզի սուրուն քեզ օրինակ, թէ մի խոզ քարափովը վեր ընկնի, ամենքն էլ դէնը կը թրմփան, կը մնայ:

խեղճ խոզարածը մէն-մէնակ քարի ծէրին պըպըզած... էս գեղումը, տես, տէրտէրը ջոկ մարդիկ ունի, ես ջոկ. Ոսկանը ջոկ, մուղղըսի Վիրապը ջոկ... Միտդ քցի մի գուլթան, որ եզները թարս լծած ըլեն, թարս ու շիտակ քաշեն, իրար դոշով ընկնեն, գուլթանը մնայ տեղը...»

«Դա շատ վատ բան է, որ գիւղը բաժանն է ընկել, բայց միթէ հնար չկայ այդ թարս ու շիտակը ուղղել»:

—Խի չկայ: Երբոր առաջուայ դովրանը յետ կգայ, որ ճ ա մ բ ի ց դուրս ե կ ո ղ ի միսն ու կաշին ուղղով կարմրացնում էին, հա՛, էն վախտը ամեն բան էլ լաւ կըլի: Ամա հմի ինձ պէսին քոխվա են շինում... թալուս եմ՝ վայ ա, սուս եմ կենում՝ վազլախ ա. էլի սուս կենալը լաւ ա: Մարդ որ իր լեզուն պահի, մեծ բան ա:

—Խօսալ չես, վրաբերեց Միրզէն, սուս կը կենաս, ամա գեղի լաւն ու վատը, խէրն ու շառը քեզանից ա հարցմունքս ըլում...

«Չէ, խօսեց վերատեսուէր, պէտք է խօսել, միայն այնպէս՝ որ չիմացողին իմացնես—ոչ թէ ծեծես... չը գիտցողին սիրով գլխի քցես—ոչ թէ ի գուր գեղի գոմերում բռնել տաս... վճիռները պէտք է խղճմտանքով անես, խօսքդ, վարմունքդ ու գործդ օրինակելի պէտք է լինեն—ոչ թէ... Տանուտէրը գեղի մարմնաւոր տէրն է, տէրտէրը՝ հոգևոր: Այս երկուսդ որ ուզենաք, որ խելօք լինէք՝ ինչ բարիք ասես՝ որ չէք հասցնել գեղին: Բայց երբոր դուք իրար կ'ատէք, երբոր ձեր բարոյական և ծառայական պարտքերը չէք լճանաչիլ, ի հարկ է, գեղն էլ էս օրին կը լինի: Ախր ամնուտէր, հէնց այս իմացէք, որ երբ հայրը որդուն հայրութիւն չի անում, որդին էլ նրան որդիութիւն չի անում... Դուք

հայրն էք, առաջ մի լաւ հայրութիւն արէք, յետոյ որդիութիւն պահանջեցէք»:

—Էդ անում են, աղան ջան, մէջ ընկաւ Պետրոսը պաշտպանողական գիրք բռնելով, ամա մեր խալխը լաւութիւնը չեն իմանում: Ով որ սրանց լաւութիւն անի, վրա կը թափեն՝ նրա միսը կը լափեն: Օձը քեզ օրինակառաջ տաքացնողին ա կծում: Էս խեղճ քոխվէն, ես, Միրզէն, Վերդին ու ուրիշ շատերը ինչ լաւութիւն ասես՝ որ չենք արել էս գեղին, ամա որ խօսացնես՝ կասեն՝ գեղը քանդեցին, կերանք տարան...

Տօ աղբեր, ձեր թնչը կերանք, թնչը լափեցինք. խի՞ չէք յետ առնում կերածը, ան խի՞ էք տալիս՝ որ ուտենք, ան թնչ ունէք, որ ձեր ինչն ուտենք... Էս տէրտէրը քեզ լաւութիւն ա անում, մօծթեր էլ ա կարգացնում, ամա, տէրտէր ջան, ո՞վ ա ձեռք պաշում: Ըսէնց ա. խալխի բան շինողը խեղճ ու նաչարի վրացաւորը վերջը սոված կը սատկի: Էն Աստօծը՝ հէնց ով խելք ունի խալխիցն ուտի, խմի, քէփ անի-էլի քիչ ա: Աղան ջան, սիրտս էրուած ա՛ ընդուր եմ ըսէնց խօսում: Առաջ տասը տարի մ ո վ ը ո վ ի առաջին դուլլուդ եմ արել, եղնա էլ վեց տարի քոխվա եմ ըլել էս գեղումը, հմի էլ տեսնում ես՝ մազով-միրքով քեանդ-խուրա եմ, քոխվի աջ կուռն եմ...

Վերատեսուէր թէ և տեղին անծանօթ էր, բայց գիտէր՝ որ այս մարդիկը ոտով-գլխով մեղաւոր են՝ գոնէ իրանց անշնորհք վարմունքի ու արարմանց համար: Ամբողջ գիւղը բողոքաւոր է դրանցից, Ոսկանը գանգատազրեք է առաջարկում ուր հարկն է, այլ և այլ եղծմունքներ ամեն օր կատարվում են—այս ամենի մասին տե-

ղեկացել էր վերատեսուչը և այժմ արա մօտ դեռ արգարանում են Պետրոսն ու Չատին:

— Էդ դիփ դրուստ ասեց Պետրոս ապերը, էլի տանուտէրը մէջ ընկաւ. երկու տարի աւել ա՛մի քոսոտ խալֆա ընկած ա գեղիս քամակիցը, ութ թուման փող ա պահանջում: Ամիսը հինգ անգամ գալիս ա, ինձ գտնագատ անում, քո ու փոշման յետ դառնում: Ամա մի հարցրու թէ՛ էդ թնչ փող ա, որ խալխի վրա չուանց օրս մնացել ա: Հարցրու, աղա ջան, խի՞ ես սուս կենում...:

«Ի՞նչ փող ա»:

— Սրանից ութ տարի առաջ սատանի տնկաջը խլացաւ՝ էս գեղը մի տկլոր քօս ա էկաւ, թէ ես խալֆա եմ՝ ձեր երեխանցը կը կարգացնեմ, թողէք ձեր գեղումը սմարան բաց անեմ: Խալխն էլ տարէնը ութ թումանով բռնեցին: Միտս չի 100-200 երեխայ էր կարգացնում: Դէ հայերի մէջ ինչ բան ա երկարում, մուրազին հասնում, որ ոս երկարէր:

Քանդուեց: Խալխն էլ քուսացան՝ փողը չը տուին, մի դարդակ սանաթով ճամբու դրին՝ թէ եգնա կը տանք: Չուանց օրս էլ էլ մնում ա: Հմի որ շահն էլ հեսաբ եմ տնում, թամամ քսան թուման ա դառնում, էս փողն ա՝ որ խալֆէն պահանջում ա, ես էլ օրն օրի վրա եմ քցում, խաբում, դարդակ ճամբու դնում: Հէնց հմի էլ էդ բանի հմար եկել ու զահլէս տանում ա: Ես որ խալխին վնասող մարդ ըլիմ, գիտաս, աղա ջան, ինչ կանեմ. քսան թումանը խալխիցը ձկուացնելով կառնեմ ու կէսը ես անուշ կանեմ, կէսն էլ քօսա-խալֆին կը տամ: Ամա որ չեմ անում՝ ո՞վ ա շնորհակալ ըլում ինձանից:

«Այս էլ մի նոր արգելաուիթ» ինքն իրան մըտմըտաց վերատեսուչը:

— Աղա՛ որդի, խօսեց տէրտէրը ձեռքերը թաշկինակով սրբելով. էդ խալֆան սրանց երեխանցը մի տարի ա կարդացրել, խօ բան էլ չի սովորացրել, ամա ես հէնց տիրացու ժամանակիցս եմ մօնթեր պահում: Իմ ձեռն ընկնող երեխէն անշնորհք չի մնացել: Մեր օջաղին տուած ա. ով որ մեր օջաղն ընկնի, նա մաղբուն չի մնալ: Էս բանը ամենքն էլ գիտեն: Ամա էս ասա, թէ՛ ա՛յ քօսին ութ թուման տվող խալխը, խի՞ չէք ձեր տէրտէրին էլ տարեկան մի քանի թուման տալիս, հը՞...:

— Տէրտէր, պատասխանեց Միրզէն, դու գիտում չես, որ մեր խալխը դարիբ-սեան են (օտարասէր). ախր ուրիշի թանը համով կ'ըլի, հարօը՝ սիրուն...:

— Միրզէն շատ դրուստ ասեց. տէրտէր, ինչի՞ ես խռտնում, մէջ ընկաւ բեզը՝ որ մինչ հիմի լուռ էր. բա սուտ են ասել թէ՛ տանու տէրտէրին «օրհնեա տէր» չի ըլիլ, չէ: Հէնց բոլորդ էլ, տանուտէր, սուտ էք խօսում: Էս գեղի նման լսող խալխ, հալալ ապրող ժողովուրդ ոչ մի տեղ չկայ: Փիսը նա ա՝ ով որ գեղի վրա բամբասում ա: Չէք էլ ամաչում, ինձ մօտ էք բամբասում: Դուք չը գիտէք, որ ես ձեր ամեն բանն էլ գիտեմ, ձեր մեծ ու պուճուրին էլ ճանաչում եմ: Էս խեղճ գեղը փչանում ա մեծերիցը: Սրանք իրանց կարգին չեն, պապական կարգերն էլ ոտնատակ են տուել. տէրտէրը իր կեանքումը քարոզ չի խօսում, որ էս մոլորուածները գոնէ ճամբից յետ դառնան... գեղի մէջ չկայ առաջուալ սէրը. յոյսը, հաւատը. չկայ էն ջերմեռանդութիւնը՝ որ մըջիւն սպանելը մեղք էր հա-

մարվում, հազար հետ «մեղա Աստծու» էին ասում...
Պ. Վերատեսուչ, ահա, դուք կը տեսնէք որ մեր գործի
խառնողը գեղի մեծամեծները պէտք է լինեն...

«Մեծամեծներն էլ սրանք են. ահա տէրտէր, տա-
նուտէր, իշխաններ...»:

— Հա, հէնց սրանք:

— Վանի-բեգ ջան, մենք չենք խառնիլ, միամիտ
կաց, ասաց Միրզէն:

— Ով որ ձեր բանը խառնի՝ նրա հոգու ճամբէն
խառնուի, ասաց Պետրոսը:

— Որ լաւ բաւ ըլի, գեղին վնաս չըլի, մեզ բեռն
ու շալակ չը դառնայ, խի՞ կը խառնենք, կմկմաց տա-
նուտէրը:

— Ձէ, կեղծաւորութիւն էք անում, փիս մարդ
էք, ընդմիջեց տէրտէրը. էնպէս պէտք ա անէք, որ
էս մարդիկը իմ տանիցը գոհունակ դուրս գնան, թէ
չէ՛ եդնա քեզ ձեռք կառնեն, Չատի քոխվա, բուրդ ու
գզի կը տան. լաւ իմացի ասածս հա...:

— Երնակ ասէք, աղա՛ ջան, ինչ գործ պէտք ա
կատարէք, անենք, վերջացնենք՝ էլի, հետաքրքրութեամբ
առաջարկեց տանուտէրը:

«Տանուտէր, ինչ հետ կը համաձայնուէք, բարի.
չէք համաձայնուիլ, դարձեալ բարի: Դուք չիմանաք
թէ կարող էք իմ անելի գործին մազի չափ վնասել.
առանց ձեզ էլ ես իմ անելիքը կանեմ: Նայեցէք ձեր
շուրջը և կը տեսնէք՝ որ քարերն ու պատերն էլ քո
դէմ գանգատաւոր են: Դու որ ժողովրդի սէրն ու հա-
մակրութիւնը չես վայելում, ինչ բարիք սպասենք
քեզանից: Ես կարող էի քեզ իսկոյն դուրս անել իմ

մօտից, որ դու քո զրախօսութիւններով խառնում ես
մեր խաղաղութիւնը. բայց իմաց, որ տան արող պա-
տուի համար միայն լսում եմ...»

Այս խօսքերը թեմ. վերատեսուչը այնպէս արհա-
մարհանքով արտասանեց, որ լսողները փշաքաղեցին,
բեզը ուղեւով վերատեսչի սիրտը առնել, խօսեց.

«Տանուտէր, դու երբ կարող ես մի տեղ հաւաքել»:

— Եսօր, աղա ջան, հարսանիք կայ, որ չեմ կա-
րող. միայն էքուց տեսնենք, թէ որ կարացի, մեծ
բան ա:

— Սղա՛, քեզ մատաղ, ասաց Պետրոսը վերատեսչին,
նհախ ես նեղանում մեզ վրա. դու դեռ լաւ չես ճա-
նաչում ոչ մեզ, ոչ էլ մեր խալխին: Հաւատայ որ՝ քու
աջ կուռը մենք պէտք ա ըլինք: Դու մեզանից մի հե-
ռանալ: Խնդրեմ մեզ ասէք՝ էդ ի՞նչ բան ա, որ պէտք
ա կատարէք: Եդ բանումը մեր քոխվի վրա թնչ կայ...

Վանի-բեգն իսկոյն գլխի ընկաւ, որ նա միտք է
որսում, ասաց. «մեր բանը առանց քովի չի վերջա-
նալ: Քոխվէն էլ ա միջին, խալխն էլ, իշխաններն էլ,
տէրտէրն էլ»:

— Բա Ոսկան՞ը...

«Նա հէնց գործի գլխումն է»:

— Եանի ըսէնց շաղախուած՝ խմոր դառած ենք,
էլի:

Հա, հէնց ըտէնց: Եքուց աշխատիր խալխին հա-
ւաքել, տանուտէր, որ վերջացնենք թէ չէ՛ դու զիտես,
մենք քեզ չենք նեղացնում»:

Տանուտէրի սիրտը դող ընկաւ: Նա կրակափայտիցը
մի ցլ է պ պուկեց, նրանով ատամը քչփորում էր: Մի

մարվում, հազար հետ «մեղա Աստծու» էին ասում...
Պ. Վերատեսուչ, ահա, դուք կը տեսնէք որ մեր գործի
խառնուրդ գեղի մեծամեծները պէտք է լինեն...

«Մեծամեծներն էլ սրանք են. ահա տէրտէր, տա-
նուտէր, իշխաններ...»:

— Հա, հէնց սրանք:

— Վանի-բեգ ջան, մենք չենք խառնիլ, միամիտ
կաց, ասաց Միրզէն:

— Ով որ ձեր բանը խառնի՝ նրա հոգու ճամբէն
խառնուի, ասաց Պետրոսը:

— Որ լաւ բաւ ըլի, գեղին վնաս չըլի, մեզ բեռն
ու շալակ չը դառնայ, խի՞ կը խառնենք, կմկմաց տա-
նուտէրը:

— Չէ, կեղծաւորութիւն էք անում, փիս մարդ
էք, ընդմիջեց տէրտէրը. էնպէս պէտք ա անէք, որ
էս մարդիկը իմ տանիցը գոհունակ դուրս գնան, թէ
չէ՝ եղնա քեզ ձեռք կառնեն, Չատի քոխվա, բուրդ ու
գզի կը տան. լաւ իմացի ասածս հա...

— Երնակ ասէք, աղա ջան, ինչ գործ պէտք ա
կատարէք, անենք, վերջացնենք՝ էլի, հետաքրքրութեամբ
առաջարկեց տանուտէրը:

«Տանուտէր, ինձ հետ կը համաձայնուէք, բարի-
չէք համաձայնուիլ, դարձեալ բարի: Դուք չիմանաք
թէ կարող էք իմ անելի գործին մազի չափ վնասել.
առանց ձեզ էլ ես իմ անելիքը կանեմ: Նայեցէք ձեր
շուրջը և կը տեսնէք՝ որ քարերն ու պատերն էլ քո
դէմ գանգատաւոր են: Դու որ ժողովրդի սէրն ու հա-
մակրութիւնը չես վայելում, ինչ բարիք սպասենք
քեզանից: Ես կարող էի քեզ իսկոյն դուրս անել իմ

մօտից, որ դու քո զրախօսութիւններով խառնում ես
մեր խաղաղութիւնը. բայց իմաց, որ տան արող պա-
տուի համար միայն լսում եմ...»

Այս խօսքերը թեմ. վերատեսուչը այնպէս արհա-
մարհանքով արտասանեց, որ լսողները փշաքաղեցին,
բեզը ուղեւով վերատեսուչի սիրտը առնել, խօսեց.

«Տանուտէր, դու երբ կարող ես մի տեղ հաւաքել»:

— Էսօր, աղա ջան, հարսանիք կայ, որ չեմ կա-
րող. միայն էքուց տեսնենք, թէ որ կարացի, մեծ
բան ա:

— Աղա, քեզ մատաղ, ասաց Պետրոսը վերատեսուչին,
նհախ ես նեղանում մեզ վրա. դու դեռ լաւ չես ճա-
նաչում ոչ մեզ, ոչ էլ մեր խալխին: Հաւատայ որ՝ քու
աջ կուռը մենք պէտք ա ըլինք: Դու մեզանից մի հե-
ռանալ: Խնդրեմ մեզ ասէք՝ եղ ի՞նչ բան ա, որ պէտք
ա կատարէք: Եղ բանումը մեր քոխվի վրա քնչ կայ...

Վանի-բեգն իսկոյն գլխի ընկաւ, որ նա միտք է
որսում, ասաց. «մեր բանը առանց քովի չի վերջա-
նալ: Քոխվէն էլ ա միջին, խալխն էլ, իշխաններն էլ,
տէրտէրն էլ»:

— Բա Ոսկանը...

«Նա հէնց գործի գլխումն է»:

— Եանի ըսէնց շաղախուած՝ խմոր դառած ենք,
էլի:

Հա, հէնց ըսէնց: Եքուց աշխատիր խալխին հա-
ւաքել, տանուտէր, որ վերջացնենք թէ չէ՝ դու գիտես,
մենք քեզ չենք նեղացնում»:

Տանուտէրի սիրտը դող ընկաւ: Նա կրակափայտիցը
մի ցլ է պ պուկեց, նրանով ատամը քչփորում էր: Մի

քանի ըստ է լուսնի լուսնը տիրեց: Այս խօսակցութիւնից տանուտէրը պարզ նկատեց՝ որ իր գլխին մի գալիք կայ. իրան սուտ ուրախ երևացնելով տեղիցը կանգնեց, Պետրոսն ու Միրզէն էլ կանգնեցին: Դէ մենք մուրախաս ըլինք, ասաց տանուտէրը. գնանք ձեզ հմար պատրաստութիւն տեսնենք:

«Ի՞նչ պատրաստութիւն» — հարցրեց վերատեսուչը:

— Ոչխար բերել տանք, մորթենք, լաւ գինի ու արագ ու ուրիշ լաւ լաւ կերակուրներ ճարենք...

«Այդ սճաւ հաշուից. սճաւ պէտքէ դրանց փողը վճարէ»:

— Էդ ի՞նչ քու բանն ա, որ հարցնում ես, աղա՛ ջան:

«Հաբա ուտելը իմ բանն ա, հաշիւն իմանալը — իմ բանը չէ: Այդպէս էք գիւղի մէջ երկպառակութիւն գցել, գիւղին զինել ձեր դէմ, նրա պապական սրբութիւնքն անգամ անհետացրել... Դ՛ուրս գնացէք, միւս անգամ իմ երեսին չերևաք: Եթէ հարկաւոր կը լինէք՝ ինքք ձեզ խնդրելով կը կանչեմ»:

Նրանք դուրս գնացին բոլորովին գունատուած:

— Օրհնեալ լինիս, որդի, ինչպէս շուտ ճանաչեցիր դրանց աղուէսութիւնը: Դուք ամեն սհաթի ինձ մօտ էք, ես սկի չեմ իմանում ձեր միտքը, դրանք ուզում են վախտին իմանալ, չունքի՛ քոխվի սիրտը դողում ա: Դրանք էնքան անաբու են, որ առանց ամաչելու՝ ձեր կողքին նստում, թիքա-փշրուենք են ուտում... Ձեզ պէսին տեսնելիս՝ դրանք սուտ պէս պէտք ա դողան, դողողան. ամա քանդուի ժամանակս...:

ԺԴ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

«Անջուր մի բոբիկանայ, ջուրը տես՝ տրեխդ հանի»: (ծողովորդ խօսք)

Երբ դատելի առարկան երևակայական է, երբ դատողի աչքից ու հայեացքից հեռի է նա, մանրամասն էլ չէ ուռումնասիրուած, մարդս միշտ կարող է սխալվել նրա մասին դատելիս:

Մարդիկ երևակայութեամբ չեն տեսնում, լսում, շօշափում, ճաշակում, փորձեր անում՝ փորձվում և հետևապէս չեն էլ հասնում մի ուղիղ, որոշ եզրակացութեան իրանց անձանօթ — երևակայական առարկայի մասին:

Օրինակ՝ լսել, որ անտառումը ոչ չի ծառ կայ, այս էլ իմանալ, որ նա իր կազմութեամբ ու արտաքին տեսքով շատ նմոն է ճապկի և կամ ալ աթահուի ծառերին և յետոյ նստել տաք ու զարգարուն սենեակի մէջ ու, համեմատական տեսակէտով, երևակայել թէ՛

ոչ չի ծառն այս ու այն յատկութիւնն ունի—նրա ճղները փնջաձև են, տերևները սապաձև, կոկոնները սև ու սպիտակ, ծաղիկները մոխրագոյն, պտուղները գնդաձև ու խիստ համեղ և ինքը վերջապէս, շատ ու շատ պտղաւէտ... Մինչդեռ ոչ այս է, ոչ այն, այլ նա մի առասպելական *) —անպտուղ ծառ է:

Օրինակ՝ լսել, որ աշխարհումս գիւղեր շատ կան, բայց մի քանիսի մօտից միայն անցնել և ստացած տըպաւորութիւններն անցողական լինելով՝ շուտով քամուտալ... բայց որովհետև գիւղ են տեսել, Տփլիսի փողոցներումն էլ շատ անգամ են գիւղացիներ նրանց աչքովն ընկել, ուրեմն և կարող են նրանց ապրուստի, կեցութեան, տնտեսութեան, աշխատութեան, ընտանեկան յարաբերութեանց, սովորութեանց, նախապաշարմանց ու այլ և այլ կողմերի վրա ասել, խօսել, դատել, վիճել, գրել և պնդել, որ իրանց ասածը ճիշտ է: Մինչդեռ ոչ այսպէս է, ոչ այնպէս, այլ սխալվում է դատողը, որովհետև՝ չի ուսումնասիրել իր դատելի առարկան: Այս տեսակ մարդկանց թիւը շատ շատ է մեզանում: Նայենք մեր չորս կողմը, կը տեսնենք՝ որ շատ քիչ մարդիկ ճշմարտապէս — իրօք ուսումնասիրած են մեր աշխարհը. ուրեմն և ամենաճիշտ գաղափար ունեն նրա այժմեան

*) Գիւղացիք ոչի ծառը պետք չեն ածում եւ մինչեւ անգամ վնասակար են համարում: Եթէ այդ ծառից կտրած ձիպուտով խփեն մի եզան, ասում են եզը փորացաւ կընկնի. եթէ մեկի այգում բսել է նա, այգին անպտուղ կը մնայ. եթէ նրա մանրահատիկ պտղից մեկն ուտի,—կը բուռնարուի: Այսպէս է արհամարուած այդ խեղճ ծառը:

դրութեան վրա: Բայց մի քանի ծաղկով մեզ դարունք չի գալ: Այդ մի քանի ծաղիկն էլ, դժբաղտաբար պոռոտախօս փշերի գլուխը չեն կարում անցնել... Այս է պատճառը, որ դատելը մեզանում աւելի հեշտացել է, քան նոյն իսկ առարկայի ուսումնասիրելը. և դատողների թիւը անչափ շատացել, աճել ու բազմացել է, քան նոյն իսկ լռիկ ու մնջիկ ուսումնասիրողների, որից հետևում է օգային ամբողջների կառուցումն, որպիսիք մի թեթև քամու առաջ փշրտվում ու ջարդվում են... Այս է պատճառը՝ որ մեզանում աշխատանքը չէ գնահատվում և իւրաքանչիւր մարդ իրանից դուրս փրկուլութիւն չէ տեսնում... Այս է պատճառը՝ որ մենք այսօր պարծենում ենք շատ բանով, որ ունինք շատ ինչ, բայց եթէ հեռուից չը դատենք, մտնենք մեր ունեցածի մէջ, կը տեսնենք՝ որ ունինք մի փառաւոր և խոշոր ոչինչ...» *):

Թեմական վերատեսուչը այժմ մի գիւղում, արդէն հասկանալի է, թէ ինչ մարդկանցով է շրջապատուած և որքան նեղութեանց ու խոչնդոտների է ենթակայ... Մինչդեռ այս այսպէս է, մինչ դեռ նա՝ իւր եղական

*) «Ունիք խոշոր ոչինչ» —ասում են այն համեմատութեամբ, որ մեր ունեցած լուրջ պարունկերը ուղտ են հռչակում. իսկ ուղտի առջեւ լուրջ, արդարեւ, ոչինչ է: Դուք կարծում եք թէ՛ լուրջ ուղտ հռչակելով՝ հայութեան դաստիարակութեան գործին խիստ էր նպաստում, եւ կամ այդքան ուսումնարան, դպրոց, հոգաբարձու, ազգասէր, յառաջադիմութիւն գոռայուցն ու պոռայուցը ինչ էր շահուում... Մենք մեր միւս երկասիրութեանց մեջ մանրամասն ցոյց կտանք այս ամենից ստացուած շահն ու վնասը:

ուժով, Ֆիզիքայէս տանջուելով, հոգեպէս մաշուելով, ուղուժ է նոր սերունդը երջանիկ կացուցանել ապագայուժ, որի հիմունքը հաստատուժ է հայ-ժողովրդի ապաուժ սրտի վրա... Բայց գտնվում են նրան ևս բամբասողներ, զրպարտողներ, որոնք ոչ թէ աջակցելու շնորհք ունին, այլ և գիւղ ասածդ չը գիտեն, չեն տեսել, միայն հեռուից «հայրենիք, հայրենիք» պուռալով ուզել են հայի աչքերին թող ու մոխիր փչել, թէ իրանք շատ թ ուն դ ազգասէր են:

Թողնենք մի ուրիշ օրուան այս զրոյցը, որ իսկապէս մեր ճանձրոյթն էլ շարժեց, գնանք խաւարի մէջ ճրագ վառող, յանուն լուսաւորութեան տանջուող, մեր հերոսների մօտ:

«Վանի բեգ, աղա, որդի, տունը ձեզ ամանաթ, դուք՝ Աստուծոն: Ծան տէրը հմի դուք էք, էլ ես չեմ: Ես կանչուած եմ—գնում եմ հարսանիքի հալաւն օրհնեմ: Ինտեղից հարս ու փէսին ժամ կը տանենք, կը պսակենք: Ես մի հարսանիքն ա մնացել—տ ա շ տ ա ք եր ա ն ք ր: Ես էլ որ պուժնեմ՝ էլ ոչ «տարան-հիջ» կը լսեմ, ոչ «գուռնա-գհոլ»: Իրիկունը թէ որ հարսանքատէրը ձեզ կանչի, եկէք, շատ կ'ուրախանան, որ չը գաք, ըստեղ տ ն պ ա հ պէտք ա դառնաք, թամաշիցն էլ զրկուէք»: Այսպէս խօսեց տէրտէրը և գաւազանը ձեռքին, կանգնած, պատասխանի սպասեց:

—Լաւ, տէրտէր, ասեց բեգը, դու գնա բանիդ: Թէ որ մեզ կը կանչեն՝ կը գանք:

Տէրտէրը հպարտ հպարտ դուրս գնաց: Հարկաւ նրա հպարտութիւնը կը բռնէր: Նա էր տան տէրն ու թագաւորը, գիւղի տէրն ու հոգևոր հայրը, երկու սիրահար անհատներին իրար հետ յաւիտենական թոկով կապողը, «ելցէ պղծութիւն, իջցէ սրբութիւն» ասողը, մարդկանց և Աստուծու միջնորդը... այլ և ուրախ խընճոյքներում թէ տխուր հանդէսներում սուփրի ծէրին միշտ բազմողը...: Հարսներն էլ մի ժամ առաջ էին գնացել, որ նորահարսին զուգեն ու զարգարեն երգով—խնդումով. միայն Աննաման հարսը տանն էր, որը կուկուան հաւերին դէպի սրահն էր քաշուժ: Վերատեսուչը ծալապատիկ նստել չկարողանալով՝ թինկ տուեց բարձակալի վրա՝ կրակի դիմացը:

«Վանի բեգ, դու ճանապարհին ասում էիր՝ ջուրը չը տեսած՝ մի կարգադրիլ, թէ այսպէս ու այնպէս կ'անենք... Շատ բարի. բայց ահա մէկ օրն էլ անցաւ, ինչ մեք այստեղ ենք և դեռ ոչինչ չենք շինել: Ի՞նչ այստեղի հանգամանքներին աւելի ծանօթ ես, ինչ ես մտածում, որ միջոցն աւելի մատչելի է մեր նպատակին»:

—Եթէ հեռուից վճռէինք մեր բան շինելու եղանակը, ճշմարիտ, շատ սխալուած կը լինէինք: Բայց այժմ ահա ջուրը, ահա մեր ոտքերը, ջրի յորդութեան համեմատ կարող ենք հանուել կամ սկի չը հանուել, որ ջրախեղդ չը լինինք: Ն է տ ա մ կ լ ի...:

«Ուրեմն այժմ պէտք է գործել: Աստուած երդկիցը ոչինչ չի վեր ածիլ: Անգործ մնալուց ոչինչ չենք

շահուի: Մեզ համար ընդհանուր էլ թանկ է: Կանչել տանք գիւղի մեծամեծներին, որոնք աւելի կամ պակաս ազդում են ամբողջին, պարզութեամբ խօսենք, տեսնենք, նրանք կը կամենային մեր առաջարկութիւնը սիրով ընդունել»:

— Ես անհոգ եմ, ասաց բեգը հաստատամտութեամբ, որ ամենքն էլ կամք կը տան: Դու մի նայիլ թէ՛ գիւղը տանուտէրիցը դժգոհ է, տանուտէրը այսպէս վատ մարդ է, թէ տէրտէրը մօնթեր ունի, թէ հին խալիֆան փող է պահանջում գիւղիցը... Եթէ մեր խօսքը սրանք չը կատարեն, զիտես, չետոյ ինչ կանեմ... Աբա մի տասն անգամ իրար վրա Վանի-բեգ ասա՛, նոր կիմանաս թէ՛ «ես ո՛վ եմ այս գիւղում...»:

«Բեգը գիւղում—շատ լաւ եմ ըմբռնում դրա նըշանակութիւնը. և եթէ այդ էլ չհասկանայի՛ ձեզ ո՛ր նեղութիւն կը տայի դէպի այս կողմը»:

— Ասեմ իմ պլանը: Թող խալիսի մէջ ես համաձայնութիւն կայացնեմ, միայն շղօլնի կարգ ու կանոնի մասին խօսիլը դու զիտես: Ն ո՛ւ, կ ա՛ կ տ վ ո՛յ մ ն է ն ի է...:

«Ինչի՛ բաժանենք մեր աշխատանքը: Ինչպէս միասին եկել՝ նոյնպէս միասին էլ գործենք»: Միացած ուժերը մթթէ աւելի զօրեղ չեն լինում»:

— Ես վախում եմ, որ ձեզանից ու ձեր խօսքերից խալիսը խռտնեն, չունքի՛ անծանօթ էք: Սրանց խափած, սրանց կանանց իշարաթներն անգամ ես լաւ եմ հասկանում. իրանք էլ ինձ ու «իմ ուժը» շատ լաւ են ճանաչում: Թող ես համաձայնացնեմ բոլորին:

Պարզ է, որ վերատեսուչը բեգին ոչ մի անգամ և

ոչ մի գործում փորձած չէր, ուրեմն և դժուարանում էր հաւատալ: Եթէ այս հանգամանքի վրա աւելացնենք և այն՝ որ արդէն վերատեսչին շատ լաւ յայտնի էր՝ թէ ոչ մի բեգ չէր ուզի իրեն ստրուկ դարձած գիւղում կանոնաւոր ուսումնարան հիմնուի, որի մշտական գոյութեամբ նրա մտքի և հոգու աչքը բացուի, այլ միշտ գիւղը կոյր ու կաղ մնայ, որ չը նկատուի բեգի շահասիրական գաղտնիքները ու այդպէս միշտ օգտուի նա ժամանակի կուրութիւնից: Նա խկապէս կամենում էր՝ որ Փ... գիւղում այդ բեգի կամքովն ու մասնակցութիւնովը ուսումնարան բացուէր, որպէս զի բեգը միշտ հաշտ աչքով նայէր այդ սուրբ գործին:

«Ո՛չ, բարեկամ, ասաց նա վճռական ձայնով. աւելի լաւ է միասին գործենք և գործի մէջ իրար ճանաչենք»:

— Ներեցէք, պարոն, մի օրինակ ասելուս: Երկու հասարակ, ամա խորամանկ մարդիկ երբ որ ընկնում են մի թուրքի անծանօթ գեղ, մէկը իր ընկօրը հրատարակում է աղա, բեգ ան պրիստաւ, իսկ ինքը նրա ծառան է ձեռնում: Ամեն միւր իր ր ո լ ը լաւ է կատարում ու եղպէսով խալիսի աչքին հող ու մոխիր են փչում, վախացնում ամենքին: Տանուտէրն ու զգիրը էն գեաղայի (ծառայի) գերին են դառնում, էլ պատիւ չի մնում, որ սրանց չեն տալիս: Սարի ախմախները չեն իմանում, որ դրանք հասարակ ճամբորդներ են... Տեսնում ես, ինչ սիրուն օրինակ ա: Հալբադ մենք էն տեղը չենք ընկել, որ ղորթ ըգէնց բան բռնենք մեր փորի խաթէր. միայն ես քեզանով, քու անունով պարծենալով ու վախտ վախտ հ ա թ ա թ ա յ (սպառնալիք) տալով, խալիսին շուտով մ տ ք ի կը բերեմ: Ես էնպէս

բան կանեմ՝ որ էքուց ուսումնարանի բանը վերջանայ, թէ մենք շնորհակալ ըլենք խալխիցը, թէ նրանք մեզանից...

Վերատեսուչը այդ օրինակի վրա միմիայն ծիծաղեց: Նա այդ արարմունքը վերաբերեց ստոր և պարզամիտ մարդկանց, որոնք աշխարհին երեսին սրիկայուլթեամբ են ապրում: Խաբեբայ միջոցներով ոչ մի ուսումնարան հիմք չի ունենալ: Ասենք թէ բեզի առաջարկած միջոցով գիւղացիք մի կերպ ճամբ ու կը դնէին դրանց և վերատեսուչն էլ մի վճռապետ կ'ուղարկէր այստեղ-օրինակ-300 մանէթով, բայց այնուհետև ինչ կը լինէր խեղճ երիտասարդի-դրու(թիւնը *) և ինչ յարատևութիւն կ'ունենար ուսումնարանը:

Դձրձեալ ոչ. ես ուզում եմ սրտանց և պարզ խօսքով գիւղացիներին հասկացնել մեր նպատակը և սրա օգտակարութիւնը կենդանի օրինակներով ապացուցանել: Ես ուզում եմ՝ երկուսս էլ երևայինք ոչ թէ աղաներ, այլ հասարակ մարդիկ, որ ոչնչով չենք զանազանուի իրանցից՝ բացի ստացական կրթութիւնից...

— Էն ժամանակն էլ կասենք, վրաբերեց բեզը ծիծաղելով, բազում աշխատեցաք և կալաք ոչինչ...

*) Մեր գաւառական-ծխական ուսումնարաններից որք ապահոված է, որք ամեախախուտ գրութեան մեջ չէ, որի կեանքը բեից չէ կախուած... ինչի. որովհետև մի կերպ-խաբրիչուհ, կամ զգրու հիմնուել են ու վախտ փակուելով, վախտ բացուելով պահպանել են իրանց գոյութիւնը: Թե ուսումնարանը իր փող չունէ, թէ հոգաբարձուք բծախնդիրները են, թէ ուսումնարանը իր սեփական շէնքը չունէ եւ ամիսը մի անգամ տեղափոխում են նրան, թէ ժողովրդականը

«Վնաս չունի. մենք մեր պարտքը կատարած կը լինենք: Թող մարդկային խորիցից դուրս գան նրանք՝ որոնք գութ ու խիղճ չունեն»:

— Զնաչիտ՝ ես փաս...

«Այո, դուք փաս: Դուք չը կարծէք թէ՛ ես չեմ կարող ուսումնարան բաց անել՝ առանց հասարակութեան համաձայնութեան: Այդ և՛ս կարող եմ. միայն նպատակս այն է՝ որ ամեն մարդի սիրտ ու միտքը կապած լինեմ ուսման հետ»:

— Բձրի. էդ ամենը ես էլ հասկանում եմ. միայն ճամբէն երկարում ա...

«Երկար ճամբէն անվնաս կը լինի: Թող մեր տեսած ճամբում մեզ գայլն ուտի»:

— Նո՛ւ, խաբաջօ...

Այս խօսքում մի աղմուկ լսուեց դրսիցը, որը հետզհետէ աւելի սաստկացաւ: Զուռնա-դհոլի զլոցն ու զնգոցը որոշուեց: Հարայ-հրոցը թեծացաւ: Վանի-բեզը խսկոյն տեղիցը վեր թռաւ. «դուրս գնանք, հարսանիք ա»:

գոեհիկ են, բառիս բուն նշանակութամբ, թէ վատ վարդկանց եւ լոյսափառ բեզերի ճնջում կայ ուսումնարանի վարչութեան վրա, թէ հաց ու ջուր չկայ ուսուցչի համար եւ ոչ ուճիկ, թէ երեսայքը դասական պիտոյքներ չունեն... Այս եւ սրանց մման շատ նեղութեանց մեջ խեղճ վարժապետը տանջվում է երկաթի համբերութամբ: Ղեռ պատերազմում է սկզբի ամիսներում եւ ի վերջոյ... վերջն դուք գուշակեցիք:

Երկուսն էլ շտապ-շտապ դուրս եկան սրահը: Բարեկամ տներին փեսայի ու ազաբներին համար ձուլածեղ էին դուս՝ բերում՝ սինու մէջ դրած: Աղաբները լոշի պատառի մէջ ձուլածեղին, մի մի թիքա կլորում, համ կուլ էին քցում, համ զուռնի ձէնի հետ գոռում. «Աստօժ շնհաւոր անի...»:

ԺԵ.

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑԻՑ ԾԱԾՈՒԿ ԱՍՊԱՐԷՋ

Ընթերցող, արի մենք էլ հետևենք հարսանքալորներին, թողնելով աղաներին իրանց կամքին: Միշտ մի և նոյն խնդրով զբաղուել, մի և նոյն շրջանից դուրս չգալ, մի և նոյն նիւթի մասին լսել—միակողմանիութիւն է: Ամեն մի անցք, ամեն երևույթ կապ ունի մեր ընտրած նիւթի հետ: Հարսանիք, մկրտութիւն, խաղ, պար, բամբասանք, գանգատներ ու գովեստներ կամ նպաստում են վերատեսչի նպատակի իրագործելուն և կամ խոչնդոտն լինում: Գիւղերում այսպէս է:

Ամբոխը կանգ առաւ Մերումանց դրանը: Սրանց աղջկանը Լանթունց Չատնի հետ պէտք է պսակէին: Այս բանը ամբողջ գիւղին ուրախացրել էր: Ազգական, բարկեամ, ետդ—ամենքն էլ խնդում ու հազար օրհնանք էին ուղարկում դէպի Մերումանց դուռը: Չուռ-

նաչին այնտեղ «ծնդրապար» սկսեց. մի քանի հարսներ պար եկան: Աղջկայ հայրը դուրս եկաւ, փեսացուի ճակատիցը պաչեց, խաչեղբօր հետ էլ պռօշտի արեց ու ձայն տուեց:

«Այ խալխ, այ ջամահաթ, փէսիս ոտնամուտը բարի ըլի. սրա ոտնամուտը բաց անելու հմար*) Նարգիզ գոմշակովը բաշխում եմ իրան... տղերք, գոմիցը դուրս քաշեցէք Նարգզին...»:

Թողը պողերը քցած՝ գոմիցը դուրս բերին Նարգզին. խեղճ հայվանը աջ ու ձախ խլշկոտում, փռուացնում ու տըլնգում էր: Տէրը նրա ախանջը դանակով առնացրեց, ինչպէս այդ անում են մատաղացուին, որ փեսան միամիտ մնայ դրան ստանալու համար: Ապա «աղ ու հաց» դուրս բերին, փէսացուն ու խաչեղբայրը մի մի թիքայ բերաններն առան. այս կը նշանակէր՝ որ նրանք միշտ հաւատարիմ են մնալու այս բարեկամ տան հետ: Սրանից յետոյ նրանք ներս մտան...

*) Ինչպէս որ գեղի հարսնացուն իր մարդանց տան մեծ ու պուճուրից, հեռու-մօտիկ ազգականից, խնամուց, բարեկամից փախչում-ժածկվում է մինչեւ իր պսակը (դեռ պսակից յետոյ է) նոյնպէս էլ փեսացուն իր աներոջից, սրա մեծ եղբայրներից ու տան նահապետից փախչում—ժածկվում է: Եթէ նա նշանաժանց էր գնում գիշերները, մի քանի խնձոր կամ մի ուրիշ բան կախեցնում էր երդկիցը, այն էլ այն ժամանակ՝ երբ տանցիք մրափած են, գորանքը՝ որի ալանջը միշտ մեկու է լինում. դուրս էր գալիս փեսի հետ սրահումը ասում, խօսում ու ճանապարհ դրնում: Փեսէն սրահով էլ գոն է մնում: Այս է պատճառը՝ որ տները փեսացուի ոտնամուտը բացում է մի ընծայ տալով:

Հարսնացուն չը կար, չէր երևում այնտեղ: Նրա դասակարգն ուրիշ օթախումն էր: Գոմ-օգէն սրբել, պատրաստել էին, որ այնտեղ Հարսն ու աղջիկ մի ասպարէզ բանան-տղամարդկանցից ծածուկ: Խնդրենք Հարսներին մէկին՝ որ ուրիշներին խափս տալով՝ մեզ մի կերպ ներս տանի այնտեղ ու պուճախի մթնումը պատն դուս կուչուր անենք, շունչը փորներս քցենք և այնպէս հանդիսատես լինինք: Բայց զգո՛յշ, կամաց, չը հաղանք, շփլթոց չը հանենք, եթէ ոչ՝ ահա՛ այստեղ կը փորձենք գեղջկուհու բազուկների ուժը...

Օթախի վերի կողմումը մի մեծ թախտ էր սագա-ցրած, որի վրա գցած էր մի խալիչա. իսկ դիմացի պատն ի վեր կախած էր մի կապերտ: Տախտի մէջ տեղը նստած էին մեծերը, ծայրերից մօտիկ՝ փոքրերը: միքանիսի երեսին քցած էր քող—չաղրաթ, որից, հասկացվում էր նրանց հարսներ լինելը: Սրանք էլ՝ աղջկանց պէս՝ իրանց երեսը բաց էին արել. ո՞վ կար— ումնից ամաչեն...

Նրանց ալ ու կարմիր շորերը կասես ալ ու կարմիր ծաղիկներով բեռնաւորուած թփեր լինին. նրանց հրապուրիչ թշերը կ'ասես մայիսուան կարմրաթշիկ վարդեր լինին. նրանց սև աչք-ունքը մարդի սիրտ են կախարդում. նրանց բարակ շրթունքին խաղում է քաղցր ժպիտ...

Աշկարա երևում է՝ որ նրանք իրար գեղեցկութեան դէմ մրցում են. նրանցից ամեն մինը աչք-ունքը խա-

ղացնելով՝ ուզում է գեղեցիկների գեղեցիկը ինքը լինել և կամ գեղեցիկ մասի իշխանուհին... բայց արդօք ո՞վ կը տանի յաղթանակը, ո՞ւմ կը մնայ մրցանակը...

Ինչպէս տղա-ազաբների, նոյնպէս և աղջիկ-ազաբների մէջ մինը գլխաւորն է յիշվում, որին կանչում են ազաբ-բաշի: Սա ընդհանուր կարգապահն է իր սեղանակիցների մէջ: Սա լողացնում է փեսացուին, շորերը հագցնում. նոյն դերը կատարում է և աղջիկ-ազաբ-բաշին, որ սովորաբար հարսերից մէկն է լինում: Երբոր զուռնա-դհուլի ձէնը լսուեց դրսից, մեր աղջիկները կրկչալով, քսքսալով թիլիկ-միլիկ եկան. խնդումը կատարելութեան հասցնելու համար՝ մի քանիսը հէնց նստած տեղը լատան կունները ծնդրապարի տարան, ուսերքն ու մէջքը շարժեցին, որով և իմաց արին թէ պարը անգիւրններն է ընկել...

«Աղջկերք, ասաց գլխաւորը. հմի հարսը կուզեն, ուր ա բողչէն»:

— Ա՛ռ, Խասի հարս, ա՛ռ, ես պահում էի...

Թագի տակի շորերը որ մէջ տեղը դուրս բերին բողչով, Ձանին գլուխը թեքեց, աչքերը լցրեց:

«Ի՛նչ ա, Ձանի ջան, ի՛նչ ես սևակնել: Երնակ էս Մայնին, Վարդիթերին ու Խամփերուն պսակելիս ըլն. տես, ոնց են կրկնում»:

— Ես էլ, Խասի հարս, ուրիշ հարսնացուի կշտին խնդում-խիթարվում էի, ամա հմի... ըստե՛ղ...

«Ըստեղ ի՛նչ»:

— Ձեմ կարում սուս կենալ. լացս ինքն իրան գալիս ա: Եանի քու պսակի օրը մտիդ չի:

«Ո՛նց չի մտիս, ես էլ քեզ պէս»-ասելով Խասին կապուկը բաց արեց:

— Էդ էլ ձեզ փէշակ, շուտ վրաբերեց մի աղջիկ, սուտ էլ որ լաց էք ըլում: Աշխարհքն իմանում ա՛ որ դու, Ձանի ջան, ամենքիցս էլ պէտք ա շատ ուրախ ըլես, էլ թնչ ես թնկթնկում...»

«Ըհ... Ղուժաշ, կամաց պատասխանեց Հարսնացուն, իմ սիրտը քու փորն ընկնի, նոր իմանաս՝ լացս սուտ ա թէ դորթ...»

Ծատերը ծիծաղեցին:

Այ Ղուժաշ, ասաց Խասին, էս օրը քու գլխովն էլ անցկենայ, դու էլ լաց ըլես: Աղջկերք, տեսնում էք, Ղուժաշը էս օրի հմար պատրաստ ա հա...»:

Ամենքն էլ նայեցին Ղուժաշին. նա կարմրեց:

«Ուրիշին զնամիշ ես անում, դու կարմրատկում», վրաբերեց Խասին:

Վոյ... հողն իմ գլխին...

«Աղջի Ղուժաշ, էլի ձայն հանեց գլխաւորը. սո՛ւս կաց, ամօթ ա:

Տեսար, նորահարսի լացն էլ ըզէնց ա գալիս է... Երբոր սուրբ Սարգիսը քեզ էլ մի լաւ բաղդ կը տայ, մի ո՞նի էք ա քու ըլ, ըհէլ, ջիվան, շէնքով ու շնորհքով մարդ կը տայ, էն վախտը շատ լաց կըլես, հմի հլա սուս կաց...»:

Ղուժաշն աչքերը սրբեց, եթէ չ'ամաչէր՝ նա դուրս կը գնար ու էլ լետ չէր գալ: Խասին աչքով— ունքով իմաց արեց տուրիշներին՝ որ էլ բան չպսեն Ղուժաշին: Էլ որ աղջիկն էր գիթ, որ բան ասէր, ասողը Ղուժաշի

օրը կընկնէր: Հարսնացուն դեռ հեկեկում էր: Իսկոյն դռան թխկոց լսուեց:

«Տեսէք ո՞վ ա, հրամայեց Խասին, ու դուռը բաց արէք»:

Ներս մտաւ մի միջահասակ կին ու ասաց.

Խոսի հարս, ախր Հարսնացուն ուզում են, թէք արէք է՛: Խասին որովհետեւ նրանից չը խօսկան էր, իշարաթով իմաց արեց, որ հմի կսկսեն զուգել հարսնացուին:

«Սմա ընէնց զուգեցէք, ասաց նա որ հաւան կենամ: Աղջի Ձանի, ինչ ես լաց ըլում. կը գնամ՝ տէր տէրին կ'ասեմ՝ կը գայ աշխարհի արոււրը գլխիդ կ'ածի: Ո՛ր աղջիկն ա իր հօր տանը մնացել, որ դու մնաս: Մի բուռը մոխիր ես՝ ուրիշի ենք տալիս պէտք ա գնաս: Չուրն ենք քցում՝ պէտք ա սո՛ւս կենաս, ընկնես. կրակն ենք քցում՝ պէտք ա աչքերդ խփես, մէջն ընկնես: Վախել մի, քու հէրն ու մէրը անջիգար չեն. քեզ ոչ ջուրը կը քցեն, ոչ կրակը: Թող լաւ զուգեն: *) Ս՛ու, ա հարս, էս ճրպենդը, ճակատ բլորելուն պէտք կը գայ: Մեզ ու շուճնց ատեղ չը շինէք, թէք արէք»:

— Նա փսփսալէ դուրս գնաց:

*) Արդեօք քաղաքներումն ի հարնացուն այսպէս եզոգվում քե հազար անգամ նա հայելուցը խոսվում է, որ իրան սիրուն չի երեցնում, հազար անգամ շինովի մագերը դես ու դեն քցում՝ անիծում է, որ քաջ ալ գլխին չի սագում, հազար անգամ իր մօղի շորերին նայում, ծկրակում ու կնճիւն է երեցնում, քե ինքի իր ուղածին պէս չեն շորերը, զարդ ու զարդարանքը: Անկարելի է համեմատել գեղջիկուհուին նրանց հետ...

Գլխաւորի լեզուն նոր բացուեց: «Դէ, աղջկերք, սուս կացէք, էլ ձէն-ծպտուն չը լսեմ, թէ չէ՝ ախոռիցը կը ծկրակէք: նորահարսին»:

Լուսթիւնը տիրեց: Խասին Չաննի գլուխը բաց արեց, նորէն սանրեց նրա սև սաթի մազերը-ծամեր հիւսեց, թիկունքովը քցեց և մի քաղցր համբուր ճակատին նուիրեց *):

—Մեզ հմար էլ, մեզ հմար էլ թուշիցը պաչի, լսուեց աղջկանցից:

«Ըհը... էս էլ ձեզ հմար, բալքի սիրտներդ տեղն ընկնի, բարով ձեր ճակատն ու թուշն էլ պաչ տենայ, պռոշներդ՝ պռոշտի»—ասաց Խասին ու ուրախութիւնից յափշտակուելով՝ Չաննին պինդ գրկեց: Չաննին աչքերը սրբելով, թնկթնկալով արդէն անձնատուր էր եղել գըլխաւորին, որը նրան գրկի այս ու այն կողմն էր քցում, տրորում-ինչպէս վեց ամսական երեխայի:

«Հմի գլուխդ դուզ բռնի, Չանի ջան, խաս ու դու մաշը հագիդ ա, մնացել ա դոշդ ու գլուխդ՝ էդ էլ զարդարենք, պռծնենք, աշխարհքը վրէդ հայել-մայել մնաց: Աղջկերք, դուռը պինդ փակեցէք, հերթին մտիկ արէք-մարդ չըլի, չը լսի մեր ձէնը: Մայի, Սոփի, Վարդիթեր, դուք էլ ձէնիս ձէն տուէք, ձէն պահեցէք»—ասաց Խասին ու սկսեց այս նախերգանքը:

*) Այդ համբուրը առաջին անգամն է դիպչում հարսնացուին: Սովորութեան համեմատ՝ գլխաւորը բաց արեց հարսնացուի երեսի մի փարդէն. . .

—Սիրուն ասենք, սիրուն ջան. Ես էլ, դու էլ ալ մարջան.

Մեր սրտերը թող ցնծայ, Լանթունց Չատին քեզ ընծայ. . .

—Աղջի, Մայի, Ինչ էք կըրթնել, Չուռնի հաւին խի էք դմբել, Խի խաղս չի ըլում ձեր ձեռ ոտը. Բերէք գլխի փէտէ կոթը. . .

Խասին փէտէ կոթը հարսնացուի գլխին սաղացնելով, ապա գլխակապը վերցնելով՝ էլի սկսեց.

—Տիկին անենք մերոնց Չաննի, Գլխակապը դնենք գլխին. . .

Գեօմագ հասէք, սիրուն աղջկերք, Արժան ըլի սա իր թագին. . .

—Այժմ էլ ականջների փալասը վերցրեց ու սկսեց.

—Անկաջներին փալաս դնենք, Բառ Պետօի գուռնէն փչենք.

Հէնց քառանայ՝ ոնց որ Պետին, Իշարաթը առնի Չատին. . .

—Այժմ էլ թ շ ա կ ա լ ը ,

Նաշխուն թշին թշակալը

Դնենք հաւաք, որ չը տեսնան

Սրա թուշը տան խիզանը—

Եադ աչքերն էլ քուռանան. . .

Հիմա էլ թ ո փ ը —

Թոփչին կապել ա սրա հմար

Երծաթի թոփ՝ էդ էլ շարենք,

Լէն ճակատին.

Եղնա, աղչի, չալ աչքերը
Կարմիր շալով մթնացնենք...

«Խասի հարս ջան, կուլը մնաց»:

— Սուս, ես բան չեմ թողնել, ասաց նա ու կուլ-
կապը վերցրեց.

Լանթուկն Զատին սրան սազ ա,

Փափիկ կուլը նրան հազ ա.

Եկէք կապենք—որ քիմսանայ

Ո՛չ կարենայ, ո՛չ էլ տեսնայ:

«Բա դոշկալը»—մէջ ընկաւ մի ուրիշը:

— Աղչի, քնչ էք շկլացնում.

— Իոշկալը տուր շուխտ նուների,

Գաղենք աչքիցն ուրիշների.

Երբ տրրփայ ու ձէն ածի,

Ազիզ-մազիզ հոգին զարթնի...

(Ամենքը միասին)

Կարմիր ասե՛նք, կարմիր կապե՛նք,

Մեր թագուհու սիրտը շահե՛նք.

Սրան տանի թագաւորը,

Սրանց ըլի բարի օրը...

Առաջուայ կինը դարձեալ ներս մտաւ, նայեց հարս-
նացուի ոտին ու ձեռին, գլխին ու մէջքին, երեսի քողը
մի փոքր երկարացրեց—մինչև գոտկատեղը հասցրեց ու
ասաց. «Լաւ ա, շատ լաւ ա, ուրախ կենաս, Խասի ջան.
առ էս խնձորը-խաչեղբայրը դարկեց հարսին զուգողի
հմար»: Խասին կարծում էր թէ՛ մէկ մանէթից աւելի
կը ստանայ, բայց դժբաղդաբար, մէկ սպիտակ արասա-

նոց էր խրած խնձորի մէջ: Նա ամօթից լուեց, փողը
քիս էն քցեց, խնձորը՝ շիրը:

Հարսնացուի ծնողքը նոյնպէս ներս մտան: Հայրն
ասաց. «Բալա ջան, Զանի, իմ աշխատանքը չմոռանաս.
հօրդ օջաղին խէթ աչքով չմտիկ տաս: Աստօժ քեզ
ջուխտ ձեռով քու տիրունչը բաշխի: Հիմիկանց դէնը
քու տէրը առաջ Աստօժն ա, եղնա Լանթուկն Զատին»:
Այս խօսքում նրա սիրտը փոքր մանկան սիրտ դարձաւ,
էլ չկարաց խօսել-շատ գրկեց թռչկան որդուն, որը
կամաց ձայն հանեց.—Ապե՛ր, բա ինձ ուր ես ղարկում...

Ապեր չը կար. նա դուրս էր գնացել:

Այժմ էլ մայրը մօտեցաւ.

«Զանի ջան, բալա, ուր էլ ըլես՝ մօրդ կաթը մտա-
հան չանես: Քեզ պահել եմ, ցրտից ու կրակից ազատել
եմ, հարամուց ու պատուհասից թափել եմ-թէ տան
միջին՝ կտրի տակին, թէ աչքիցս հեռու՝ թէ աչքիս
աղաքին հազար մի խրատներ եմ տուել, օրհնանք ու
անէծք ասել. այ որդի, անէծքս շուրը տանի, օրհնանքս
գլխիդ գեօլ տայ.—Ղամի ըռեխը տան, սրի ծէրովը
ծակոտեն, գլխիդ մոխիր մաղեն, վիզդ կէծ կասկարէնք
քցեն, մէջքիդ էրկանք գնեն՝ ձաւար անեն-ան ուն դէջը
կոտրես, փիսքան չանես, ընէնց կանց՝ որ քե-
զանով աշխարհն իմանայ՝ թէ մեր աղջկերքը նա-
մուսով են, հալալ կաթնակեր են, աշխա-
տաւոր, մեծին հնազանդ, չուանց թոռնատէր
դառնալն էլ մեծիցը չխօսքան մնող են.
Իմացար, բալա:

Որ թուրքի ձեռը գերի ընկնես, գլուխդ թող
տայ՝ չանք անունիդ վրա մի կեխտ չգայ: Որ գողերի

ճանգն ընկնես՝ շինքդ սրի տակն առ, լուսեղէն հրեշ-
տակ դառ, չանք անուկ մնայ հալալ: Հոգիդ մտահան
չանես, հաւատիդ ու անուկիդ վրա դողաս: Որ նեղ օր
ընկնես՝ յայսդ չը կտրես. չունքի՝ նեղ օրը լէն օրուայ
օրօրոցն ա: Աստճու անունը երեկոյ-առաւօտ, վախտ-
բեկախտ յիշի... Իրեսդ մարդի ոտի տակին դիր, նրան
իրա մեծի մօտ երես պարզ արա, նրա երես-
թքանքը չըլես հա... Իէ, որդի, ծլէք, ծաղկէք,
պտուկներ տաք, ձեր շուաքի տակին շատ մարդ նստի,
դինջանայ, ձեր քաղցր հոտ ու համը առնի, չկշտանայ...»

Մայրն էլ չկարաց խօսել: Աղջկայ թշերիցը քողը
յետ դցեց, պաչեց, պաչեց ու էլի պաչեց... Մայրական
սիրտ պէտք է ունենալ, մայրական գուլթ ու խնամք,
որ հասկացուի թէ հէնց այս բոպէում այդ խեղճ մօր
ներսը ինչ զողանջումներ, ինչ արեկոծուլթիւններ են
կատարվում: Աղջիկն էլ մօր ծծերի վրա: Այսպէս եր-
կնր նրանք իրար գրկեցին:

«Քեզ մատաղ, Ձանի ջան, վախել մի, ես քեզ
տես կը գամ... Ի՞նչ որ գնում ես, էլ ո՞վ կ'ըլի իմ
քեօմազը, իմ ջուր բերողը, իմ տունն ու դուռը սըր-
բողը...»

— Աղջիկ, մէրա, ինձ ում տունն էք դարկում... խի՛
էք թողում...»

Ի՞նչու թխկացրին. «Իէ հա, հարսը դուրս բերէք,
թէք, թէ չէ՝ հերթիկովը կը թռցնենք»:

Մայր ու աղջիկ իրարից բաժանուեցին:

Հարսնացուի մի թւեց Խասին՝ բռնեց, միւսից՝
Մային, մէկէլ աղջիկներն էլ շրջապատեցին ու դուրս
տարան:

Իեղճ Ձաննի արտասուքից դռնակն ու քողի ներքի
ծայրերը թրջվում էին, տեսնող չը կար:

Տէրտէրը մի քանի բոպէ առաջ շտապեց եկեղեցի,
դուռը պինդ փակեց, որ խաչեղբօրից դռնաբացէք
առնի, ապա ներս հրաւիրի հարս ու փէսին:

Այժմ դուռնաչին աւելի ուրախ գլեց «տարան-հի՛յը».
դհուլի դմբղմբոցը թնդացրեց օդը. հրացաններ ու ա-
տրճանակներ արձակեցին, որոնց ճայթիւնի թնդոցը
հասնելով ապառաժներին ու քարափներին՝ նորէն ար-
ձագանք էր լսվում: Գոռու-գոչոցն աւելի ու աւելի
սաստկացաւ:

— Աստուած շնհաւոր անի՛...»

Անի՛... անի՛...»

Ժ. 2

ՎԱՆԻ-ԲԵԳԻ ԱՆՆԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ:

Հարսանքաւորները երբոր եկեղեցի մտան, գիւղը
մի փոքր խաղաղուեց: Վերատեսուչն ու բեգը նոյնպէս
հանդիսատես էին: Բեգը վերատեսչին մինչ տէրտէրանց
տան սրահը տարաւ և տեսնելով որ տանուտէրն ու Միրզէն

միասին անցնում են, ինքն էլ նրանց հետ ընկաւ՝ գնաց Քիքունց օթախը: Վերատեսուչը այլ ևս գուրս չ'եկաւ տանիցը. նա բաց արեց իր առձեռն ունեցած թըղ-թեղէնները՝ շուռ ու մուռ էր տալիս, մլուղ-շլուղ անում, մինչև որ նրա քունը տարաւ ու հանգիստ քնեց՝ կրակի դիմացը թինկ տուած...:

Քիքունց օթախը գիւղի մէջ լաւ տներից մէկն էր: Տանուտէրը օտարականներին սովորաբար այդ տանն էր հիւրասիրում: Իեզը այնտեղ խօսում էր Միրզի ու տանուտէրի հետ.

«Քոխվա Չատի, ասաց բեզը. ինձ ինչի՞ տեղակում չես, ինչպէս պէտքն ա: Ուզումէք որ՝ ես էլ ուրիշ բեզերի նման ձեզ հետ վարվեմ որ եզնա տեղակէք: Ես զարիբ աղի մօտ ինձ խի՞ էք սևերես թողում...»:

— Վանի-բեզ ջան, պատասխանեց տանուտէրը, մեր ջանն էլ քու ուղուրին լետ դրած ա. էն ուրիշ բեզերը քու մի պճեղն էլ չ'աժէ...:

— Չէ, աղա՛ ջան, քոխվէն կեղծաւորութիւն ա անում. իրեսը չի բռնում՝ որ սրտինը դրուտ ասի. ես ասեմ: Եդ զարիբ չ'ինովնիկը ուրիշ զայգի մարդ ա երևում: Քեզ դրուտն ասեմ՝ մենք դրան ից սաղը չենք ընկնում: Դա ո՞վ ա, ո՞ւր ա եկել, քնչ հուսարի տէր ա: Քոխվէն խօսում ա, ամա սիրտը դողում ա...:

«Միրզա, գողի սիրտը միշտ կը դողայ: Ես ձեզ քանի հետ եմ ասել՝ որ գեղին լաւ պահեցէք, նրան վնաս միք տալ: Բա գուք չէք գիտնում՝ որ գեղի զօռը սար ու քոլ ա դզում, քերծ ու քարափ ա ճղում: Ո՞վ կարայ գեղի զօռին դիմանալ: Աստուած մի արասցէ,

որ սաղ գեղը մէկի հետ ընկնի ու նրա վրա բերան բաց անի... Հմի, ոնց որ տեսնում եմ, գեղի շատ փայլ ձեզ վրա բամբասում ա: Դուք ձեր արարմունքը շատ լաւ գիտէք: Ես էլ գիտեմ...»:

— Հալբաթ մեր ամեն բանն էլ գիտաս, վրաբերեց Միրզան. ամա, թէ խաչը կը սիրես, աղա ջան, ասա ո՞ւր էք եկել, ովէ էդ զարիբ աղէն: Երէսիցը անշար մարդ ա երևում, ամա մարդիս սիրտը Աստօճ գիտի:

«Դա հոգևոր մարդ ա, հոգևոր դործերի ծուռն ու շիտակը իմանող: Դա ամեն ուեզդն ի քաղաքներ աւ գեղեր պտտում ա, որ իմանայ թէ՛ մէստնի եկեղեցիքն ու խաչերը ինչքան դախոգ ունին, որ գեղը շօլ ունի, որը չունի: Ինչտեղ էլ շօլ չկայ, դա բաց ա անում...»:

— Ուրիշ իրաւունք ու զօռ ո՞ւնի, հարցրեց Միրզէն:

«Դրան շատ իրաւունքներ ունի. դրա պրավի կիսի կէսը ես չունեմ»:

— Աղա՛ ջան, ասաց տանուտէրը մի փոքր սրտապնդուած, էդ պրավի համար դա բաշպօրտ ան բիլէթ ունի, որ մեզ նշանց տայ, արխէյնանանք ու ձեր սրտի բանը կատարենք:

Իեզը խոժոռուեց. «Ա՛յ յիմար, բա ես սուտ եմ խօսում: Դա տէրութիւնից հաստատուած մարդ ա: Ունեվօ դաժէ ատկրիտնի լիստատ գուրէրնատրա... Դա ամեն հրամաններ ու թղթեր էլ ունի թէ մեր հոգևոր տէրիցը, թէ գուբէրնատրիցն և նաչալնիկիցը, որ քոխվաները նրան ձի ու ձիաւոր տան մի գեղից մէկէլ գեղը գնալու համար: Հմի իմացա՞ք...»:

— Աղա ջան, դէ խճ ես չարանում. մենք էլ զա-
կօնի ենք խօսում, որ էքուց-էլօր մի բան պատահի՝
մենք ջուղաբ տվողը չ'ըլինք...

«Այս մարդիկը ինձ ուրանում են, չեն ուզում հա-
ւատալ իմ խօսքերին» — ասաց բեգը ու տան երկարու-
թեամբ սկսեց ման ու ման անել:

— Միրզա ջան, կմկմաց տանուտէրը, է ս է ն ա հա...
դարաբաղցին որ բերեց...

— Հա, միտս ա... Աստուած ամեն մարդի իր
գործքովը բարի տայ, պատասխանեց Միրզէն սրտմտելով:

«Ինչ ա, էդ ինչ բան ա» — հետաքրքրուեց բեգը:

— Ոչինչ, աղա ջան, բան էր՝ միտս ընկաւ ասեցի:
Բեգն իսկոյն կասկածանքի մէջ ընկաւ. նա շատ
ստիպեց, որ բացատրեն «էս էն ա հա» խօսքը, տանու-
տէրը սարով-քովով քցեց:

«Վերջապէս, քոխվա, էդ դարաբաղցու բերածը մի
օր կըյայտնուի՝ թաքուն չի մնալ, էն վախտը ե ա վ ա մ
պ ա կ ա ժ ու, ես ձեզ նշանց կտամ:»

— Զուր խճ ես նեղանում, Վանի-բեգ, ասաց Միր-
զէն, սաղ գեղի բերանը խօ մեզ վրա ծախած չի, որ
քեզ մի կ տ ր ա կ ա ն ջ ու ղ ա բ տանք:

«Դուք իմանում էք՝ թէ մենք թնչ ենք պահան-
ջում...»

— Զէ, դէ թամամ ասա, մենք էլ թամամ իմանանք.
ու ինչպէս էլ կասես, մեր գլուխը չարի կը տանք, կը
կատարենք:

«Երկսով եկել ենք, որ էս գեղումը մի դուխովնի
մի... մի... հոգեւորական շկօլ բաց անենք, գեղիս բո-
լոր երեխէքը կարդան:»

— Հէնց էդ ա, հարցրեց Միրզէն:

«Հէնց էս ա: Առաջ էս գեղումը պէտք ա բաց
անենք, եղնա էն դարիբ աղէն մէկէլ գեղերումն էլ կա-
մաց կամաց բաց կ'անի: Ինձ էլ էս ցրտին, էս ազիզ
օրը իրան հետ էս բանի հմար ա բերել: Պէտք ա ա-
ռաջ դուք դաբուլ կենաք, եղնա խալխը:»

— Եդ առանց խալխի չի ըլի, ասաց սառնութեամբ
տանուտէրը:

Մենք էդ բանին դաբուլ կը'լենք, ամա առաջ պէտք
ա խալխի հետ մասլահաթ անենք: Ի ու հմի ասեցիր,
աղա ջան, որ խալխը մեզ վրա դուվուում են...

«Մախլաս. դուք՝ մեծամեծներից իրար մէջ խօսա-
ցեք, մասլահաթ արէք ու էն պէս արէք, որ ես էս
դարիպ մարդի կշտին սևերես չ'ըլեմ: Կսում էք խօսքս:
Առաւօտն ինձ ուրախ խաբար պէտք ա ասէք:»

— Շատ լաւ, աղա ջան, մենք էլ կաշխատենք խալ-
խին ու է ի (մտքի) բերել:

«Իէ հմի գնանք» ասաց բեգն ու առաջ ընկաւ:

«Քոխվա Չատի, ասաց Միրզէն ճանապարհին՝ երբոր
բեգիցը բաժանուեցին, գնա ու քէֆ արա: Լաւ ենք
պոճնում...»

— Հա. անջաղ սիրտս մի քիչ տեղն ընկաւ: Ամա
տեսնում էս — Շմալ բեգը առաջուց մեզ ոնց գլխի քը-
ցեց, էն թղթի կտորը մեզ հասցրեց...

«Տօ, դէ նրա պէս մարդիկը դրանց պէսի միտքը
կիմանան: Վանի-բեգը իրան ծ ա մ ծ ա մ լեզուով խօ-
սալիս շատ փայլ ուսերէն ա խառնում, որ՝ պարտական

ըլեմ թէ բան իմանամ: Եդ մարդը սկի բեզի զձՀմ ու
գօռ չունի: Աբա Շմալ բեզը ան Ներսէս բեզն ըլէր,
դրուտն ասա, քոխվա, նրանց աղաքին կարիր ըտէնց
խօսով...»

— Ե՛հ... Վանի-բեզը, գիտնս, սուս ու փուս մարդ
ա. դրա ամեն բանը թաքուն ա— մզմզան ա: Ամա,
Հախ Աստծու, դրա սրտի ու խղճմտանքի բարուծիւնը
ոչ ով չունի: Մի բանում միայն ծուռն ա ժաժ գալիս:
Շհարումը ոսերէն ա սովորել, գալիս ա իր ծննդանոցը,
մեզ վրա ծախում... Մթամ դա չի գիտում՝ որ մենք
ուսի տանը չենք մեծացել, ոսի կաթը չենք խմել ու
ուսի լեզուն էլ չենք գիտում... Ասում ա՛ լեզուս ոսե-
րէնին ա սովոր՝ հայերէնը վրա չի գալ: Սա ինչ խօսք ա:
«Իա էն խօսքն ա, ասաց Միրզէն շեշտելով, որ
մեր բեզը էնտեղն ա հասել, որ իրա պապի գթալմանը
մտահան ա արել, պասուցն ու ուտուցը մոռացել,
լեզուին էլ ոսի կարկատան կպցրել ու մեզ փափուկ
փափուկ խրատ ա տալիս: Կասես թէ՛ մենք ոչ հացա-
կերենք, ոչ աչք ունենք, ոչ խելք...»

Այսպէս խօսելով սրանք դէպի հարսանքատուն
գնացին: Արդէն ճրագ-վառոցն էր:

ԺԷ.

ՊՍՌԱԻՆԵՐԻ ԱԶՔԱՒԱՑՈՒԹԻՒՆ, ԱՌԱԿ, ՀՐԱԻԵՐ.

Այն միջոցին՝ երբ վերատեսուչը տանը միայնակ
մնալով քնեց, նանը չգիտեմ որտեղից փսփսալէ ներս
մտաւ ու «ես քոռանամ դարիբի հմար, որ գլուխը չոր
քարին, կողքը չոր տափին, փափուկ չկայ, փափուկ
չկալ-բաց բաց քնել ա» ասեց ու տէր հօր շալէ փարա-
ջէն քցեց նրա վրա: Վերատեսուչը թէ և զգաց ծանրու-
ծիւնը, սակայն՝ ցրտից ու ճանապարհին լն գ լն գ ա-
լ ու ց ջարդուած լինելով՝ սթափուել չը կարողացաւ:
Նանն այնուհետև ինքն իրեն դժգոհեց հարսներին,
որ ամեն բան իր տեղը չեն դրել, այլ փախել են հար-
սանքատուն ու ինքը սկսեց կարգաւորել: Աւելը դռան
տակին ցից դրեց. կասկարան մեծ սնի տակին, շամ-
փուռները պատիցը կախեց, կաւամանները դուրաբումը
շարեց, պղնձէ կթի տակին մոխիր շաղ տուեց, որ ցելը
ցամաքի և յետոյ պղնձէ մեծ սինին ուզեց ցից դնել
այն թարեքի վրա, ինչ տեղ պղնձ կարգը շարած
էր: Նանը դեռ սինին իր տեղը չէր պնդացրել և յան-
կարծ չըր՛խկ... թարեքի տախտակը վայր ընկաւ ու

ամաններն այս ու այն կողմ գլլալով զնգզնգացին։
Վերատեսուչը զարթնեց-ծանկով ընկածի պէս՝ տեղը նստեց։ «Ո՞վ ես, ի՞նչ արիր»— ձայն հանեց նա։ Նանը լռեց ու ամօթից տապ արեց մեծ սնի տակին։ «Ո՞վ ես, ի՞նչ արիր»— կրկնուեց հարցը։ Նանը մեղը խեղճ կատուի վրա դրեց.— փիշտ, փիշտ, քու տիրոջ գլուխն ուտես. փիշտ հա, տէրդ մեռնի... դուրս թռաւ. միջի օթախն ընկաւ...

Սյս վայրկենում բեզը դուռը ճռռացրեց։ Վերատեսուչը ակամայից ծիծաղեց։ Իեզն այդ ծիծաղը իրան վերաբերելով ասաց.— բան չկայ, էդ զամէջանիէն կը տանեմ։ Վերատեսուչը ծիծաղի պատճառը բացադրեց։ Իեզն ինքն էլ ծիծաղեց ու ասաց.

«Նանի, դու հէնց ամեն վախտ էլ խալխի վրա ցաւես քցում. ի՞նչ անդինջ ու անդարար պառաւ ես»։

—Ս՛յ աղա, անտէր կատուն էր, ես չէի։

«Նանի պատճառն էլի դու ես»։

—Է՛հ... անդէք, բա էն պառաւի նաղլը լսել չէք։

«Ի՞նչ նաղլը»։

«Ս.սս, նանի, լսենք, հետաքրքրուեց վերատեսուչը։ Նանը սյզրեց բեզի կողքին ու քնթկալը բարձրացնելով սկսեց—

«Մի հարուստ տուն ա ըլում դովլաթաւոր։ Էն տան մեծը մի պառաւ՝ ինձ նման։ Էս պառաւը շատ աչքաբաց կնիկ ա ըլում։ Իէ պառաւի աղաթն ա՛ աչքաբաց կրլի էլի։ Նա տղերանցն ու հարսներին, չուանց էն քորփա երեխանցն էլ պարապ չի թողնում, միալար

ձէն ա տալիս, — կացինը դրանը մնաց՝ տունը բերէք, գոմը քերելու ա՛ քերեցէք. խոտը հանդին հաւաքելու ա՛ հաւաքեցէք. Նարգիզ կովը մնաց անկիթ՝ կթեցէք, ո՛ւր ա չալտիկ հորթը, ո՛ւր ա նարինջը... Ըսէնց, մի սհաթ դինջութիւն չի տալիս ոչ ուրի։ Տան հարսներն ու տղերքը բզարում են էդ պառաւի արարմունքիցը-աման դատն են ընկնում։ Մի օր տնահաւան ուզում են ազատուել նրանից ու քցում են թորնի մէջը, բերանը կաշնում։ Ամեն օր մի կտոր հաց են քցում ընտեղ, որ ուտի, ընտեղ ապրի ու սուս կենայ, էլ խալխի ջանն ու հոգին չառնի։ Խեղճ պառաւի ուշքը էլի տան դովլաթի վրայ ա։ Նա թորնի միջին ա՛ ամա անկանջը ձէնու, աչքը ճամբին. թէ ում ձէնը կը լսի, ում երեսը կը տեսնի։ —Որ մթնում ա՛ դուռը տաւարով լըցվում ա։ Տաւարը պէտք ա ականեն՝ տեսնեն պակաս ապրանք կայ, հանդումը խօ տաւար չի կորել։ Մեծ հարսը՝ որ հմի պառաւի տեղն ա, բարձր-բարձր ձէն ա ածում. էս Սօնա կովը, էս Նարգիզը, էս խիւնէն, էս շէկօն, էս չալօն, էս սարղըզը, էս վարթիկեզը, էս դարագեօզը... էս ձիւն, էս մադեանը, էս քուռակը... Լաւ լաւ, վերջն ասում ա, ապրանքը թամամ ա, դալն արէք։ Պառաւը դրա ձէնը թորնումը լսում ու իր միջումը հետք անում-տեսնում ա՛ որ մինը պակաս թողեց ու էն սհաթը իշի պէս գոռում ա։ Նոր ամենքն էլ բղավում են «էջն ուրայ էջն ուրա»։ Գնում են հանդը իշին մանգալու, տեսնում են գէլը նրան մաքրազարդել ա, անդ իր ներն են մնացել ձորի չաղրախումը։ Հա, նոր իմանում են, որ իրանց դովլաթը պառաւի գլխին ա պտտում։ Նրան նոր հանում են ու մեղա

գալիս՝ որ անմեղ տեղը թորոնը քցեցին: Չարն ընտեղ,
բարին ըստեղ: Էս էր, աղա ջան, հմի դուք էս նազլիցը
ինչ ուզում էք՝ Հասկացէք» — ասեց պառաւը, տեղիցը
կանգնեց ու իր բանին գնաց:

«Ճշմարիտ, խօսեց վերատեսուչը, լաւ տպաւորու-
թիւն գործեց ինձ վրա այդ հեքիաթը»:

— Մեր նանը, վրաբերեց բեգը, էդպէս նազլեր ու
հեքիաթներ շատ գիտի: Ախր էդ էլ իրան վրա
ասեց, որ էստան դովլաթն էլ իրա գլխին ա պտտում,
ու թէ ինքը մեռնի՝ տէրտէրը օրէնհացի մուրացկան
կը մնայ...:

Ինու վանի-բեգը իր խօսքը չէր վերջացրել, երդ-
կիցը մի ձայն լսուեց:

Չայնն ասում էր: «Ես Հարսանքի ազաբներինցն եմ:
Ինձ դարկեցին՝ որ էդ երկու աղիդ էլ մեծըմ, համե-
ցէք անեմ, թագաւորը կանչում ա...»

— Ազա, խի՞ չես դռնովը գալիս, բարձր խօսեց
բեգը:

Աղա ջան, տէրունց շունը փիս մարդի պէս թա-
քուն կծողներինցն ա: Իրա խաթէր չկարացի տուն մըտ-
նեմ: Հեսաբը մին ա, էստեղից ասած, ես տանիցը...»

— Ազա, դա դու թագաւորի ազաբ ըլես ու մի շա-
նից վախենանս...»

«Ինտանը որ քարից ան երկաթից ըլի, փիս ու
ոսկոռ չըլի, էն վախտը Գավրէլ-Մուքէլիցն էլ ա չի
վախիլ: Թէդ արեք, աղէք ջան, աղաբ-բաշին հետս
կը կուուի, կատի՞ դետացար...»

— Իու գնա, դու գնա, ասա-փլաւ կանչոցին մենք՝
կգանք:

«Ա՛յ աղէք, փողականչ էլ կայ»:

Ջհէլ տղան կտրիցը թմփթմփալէ վաղեց:

«Արդեօք մեզ կը յաջողի այնտեղ՝ բաղմականների
հետ խօսել ուսումնարանի բացման մասին», հարցրեց
վերատեսուչը բեգին:

— Կը յաջողի, ամա հմի էնքան խալխին բան
հասկացնելը դժուար ա:

Մեր ցէլը էն պէտք ա ըլի, որ գնանք պատուի
համար: Երկուս՝ Հարսանքի խաղերը լսենք, իրեք՝ սրանց
մէջ սովորութիւն կայ՝ որ վերջը փող են կանչում, եթէ
չը գնանք՝ կասեն՝ փողի համար չեկան — սկոուպօյ
են...»

«Մէկը — գլխաւորը թողեցիր, բարեկամ, չորրորդն
էլ այն՝ որ մենք այժմ գտնվելով գիւղում՝ թնչ իրա-
ունքով չը պէտք է մասնակցենք գիւղացու ուրախու-
թեանը կամ տխրութեանը: Այդպիսի հանդէսներին
մասնակցելով մարդս ընտելանում է ժողովրդի կեանքին
ու նրա սովորութիւններին, որով և դառնում է ժո-
ղովրդական մարդ: Ով որ չի կանգնում ժողովրդի մի-
ջին, չի մտնում նրա տունը, չի ուսումնասիրում նրա
դրութիւնը, նա խօրթ և անպիտան գաւազ է ժողո-
վրդի համար:

Այդպիսիք նրա ոչ ուրախութեան օրը գիտեն և ոչ
դառնութեան. բայց միշտ հեռուից «եղբայր-եղբայր»
են գոռում... Հայերի մէջ այսպիսի ուրախ հանդէսները

շատ անգամ բարեգործութիւններ են ծնում. հայր երբ որ գինու բաժակը ձեռքն է առնում՝ նա տրամադրվում է դէպի բարին: Այս առիթով ես ձեզ հարցրի սկզբում թէ ուսումնարանի բացման մասին արդեօք չի կարելի մի բան խօսել ու բարեմաղթութիւններ անել: Բայց այս թողնենք. այժմ ուրիշ բան: Ենթադրենք՝ որ այս գիւղում տարեկան երեւոյն հարսանիք լինի. հարսանքատէրը մի՞թէ կը խնայի մէկ մանկէթ ևս, նուիրել ուսումնարանի օգտին՝ իր արած այնքան ծախսերից յետոյ: Այսպիսի անսպասելի աղբիւրներ գտնելով՝ ուսումնարանը նիւթականապէս շատ շահուած կը լինի:

— Եղպէս աղբիւրներ շատ կան, բարեկամ. ամա առաջ ուսումնարանի ֆունդամէնտը դնենք, յետոյ:

«Առաջ պէտք է աղբիւրները գտնել, որից յետոյ ուսումնարանի հիմքը դրուած, վերջացած է:

— Աստուած տայ, ասաց բեզն ու տեղիցը կանգնեց: Նանը նրանց համար մի փիւսնդ ազ (լապտեր) էր շինել, ձէթի մէջը թաթախել: Մի քանի րոպէից յետոյ բեցը վառեց, այդ լապտերը, փէտէ կոթիցը բռնեց ու դէպի հարսանքատուն ճանապարհ ընկան...



ԺԸ.

ՀԱՏԳԵՑ ՀԱՐՍԱՆԵՍՑ:

Հարսանքատունը այնքան մեծ էր, որ նրա չորս պուճակի մշտական խաւարը տիրում էր: Այդ տունը չը բաւականացաւ բոլոր ժողովրդին մի տեղ հիւրօտիւրելու, գոմն էլ մաքրեցին-կապերտ, թաղիք, քէշա, չուլ ու փալաս փռեցին. այնտեղ գիւղի ալջախ դասը բազմեց: Տանը ասեղ-քցելու տեղ չ'կար: Ով մտել նստել էր, էլ չէր կարողանում դուրս գնալ: Դուրս գնալն էլ ամօթ էր: Մարդիկը մէջը-մէջքի տուած, երես երեսի արած, նստած էին: Սուփրէն ամենքի առաջ էլ միակերպ քցած էր: Վանին, տան հայրը, անդադար գործում էր մէջ տեղը-տէրտէրի դիմացը կանգնած. «տնտէս, հաւասար տէս... Սոված մարդ չ'մնայ, ծարաւ մարդ չը դուրս գայ: Աստօճ սիրող, ուտի, խմի, տունը ձերն ա, հաց ու բաժակը Աստօճունը... Ամեն բան էլ բոլ ա, ծտի եղ էլ ճարվում ա...»:

Վաննի ձայնը ոնց որ մի կարասից դուրս գար այնպէս էր:

—Տնանշէն, ասում էր թամադան, էս բոլոթեան մէջ մարդ սոված կը մնայ: Հրէս հաց, պանիր, սոխ... Էհ... Ինչքան բան էլ կերան-բ ո գ բ ա շ, խ ա շ լ ա մ ա, բ ու ղ լ ա մ ա, շ ի լ ա, խրոված և ամեն տասը թիքին մի մի գաւաթ գինի են խմել, առաջ էլ արաղ, հմի էլ խմում են ու հրէս կուտեն փլաւ, էլ Խնչ պէտք ա ըլի: Ախոռի երեխերքն էլ թիքա-պատառով կշտացան: Նստի, Վանի, մի քիչ էլ դու կեր, խմի, ուրախացի...

Մինչև այս կէտը էլ կենաց չէր մնացել, որ խմել էին: Թամադան շատ ուստա մարդ էր: Նա առաջուց բազմականները չորս թաղի էր բաժանել ու ամեն թաղում մի մի օգնական ընտրել իր համար:

—Ա՛յ պօմոռչիկներ, նա էլ մի կողմից էր գոռում, աչք ունեցէք, չոր ու գեջ իրար խառնեցէք, ով որ չը խմի՝ գլխին ածեցէք...

—Բաշուստա՛, բաշուստա՛...

Բեզն ու վերատեսուէն այս ընդհանուր ուրախութեան միջոցին դրան շէմքն էին հասել: Վ ա ն գ ն աւ ո ը ն ե ը ն այնքան շատ էին, որ չէր կարելի ճղելներս անցնել: Տան մէջ մոլորուած ինչ ինչ գազերից գոյացած գոլորշին դրան վերևից ծխի պէս դուրս էր մղվում, որ իսկոյն դիպաւ անսովոր մարդկանց՝ բեգի ու վերատեսչի քնթին: Դունապանը իսկոյն գոռաց. —Ա՛յ խալխ, ճամբա տուէք. Վանի - բեզն ա՛, աղէն ա՛...

«Աղէն ա՛, բեզն ա՛» — խօսքերն իրար տալով՝ հասցրին մեծամեծների ականջը: Սրանք ոտքի կանգնեցին:

«Կանգնեցէք, կանգնեցէք» — լսուեց քոխվի ու թամադայի ձայնը:

Միայն ալևորները մնացին ծալապատիկ նստած:

—Տուես ձեզ փէշքէշ միջի մարդկերանցով, ա՛յ աղէք, ձայն տուեց տնատէր Վանին. թագաւորն իմը չի՝ ձերն ա՛...

—Թագաւորի թախտն էլ փէշքէշ, կանչեց աղաբ-բաշին, գլխներիս վրա տեղ ունէք, աչքներիս միջի՛ն...

Թամադէն շտապ-շտապ գինու թասը ձեռքն առաւ ու գոռաց.

«Ա խալխ, մեր աղենունց ոտը բարով ըլի, էս օջաղին վրա գայ: Երկուսն էլ սաղ ըլեն: Էս դարիբ աղէն թէ աղբէր ունի՝ աղբօրը պսակի, թէ տղա ու աղջիկ՝ նրանց, թէ ոչ մինը չունի՝ Աստօժ տայ: Վանի-բեգ, դու էլ հաստատ ըլես, ըսօրէնց էլ քու որդկերանցը. նրանց թագին արժան ըլես, կանանչ ու կարմիրը կապես: Օջաղիցդ հացն ու գինին անպակաս: Ա՛յ աղէք, իմացած ըլէք՝ որ էս սուփրի թամադէն ես եմ: Ղորթա, ձեր պճեղը շատ բան գիտայ՝ քան իմ ո ս կ ե ք ա ք ու լ գ լ ու խը, ամա ներողութիւն արէք. աշխարհք ա՛, վախտ մեծանում են, վախտ պուճուրանում-տաւարած դառնում: Ոչմեծ վախտս եմ հպարտ, ոչ պուճուր վախտս դարդոտ: Մեծն էլ մեծ աշխատանք ունի, ա՛յ, էսքան խալխին ես պէտք ա կառավարեմ: Ուզենք՝ որ էրկսիդ տխուր օրն էլ ըսէնց անց կենայ: Ռա՛հմ ունենաք ըռանչպարի վրա. խղճմըտանք արէք նեղն ընկածին: Դուք պատուեցիք էս էլ ի ն ու բ ա ն դ ի ն, Քրիստոսն էլ ձեզ պատուի էն կեանքումը: Ա խալխը Աստուած էլաճն օրհնի, չելածը տայ... Իէ,

պօմօշնիկներ, քնչբանի էք, դարդակովի, անիճ նման...»

—Անճ, անճ...

«... Գեանքներդ խճ...»

—Մարտական, մարտական...

«Ողջ ըլէք—պատուական...»

Ամբոխը հետեւեց իր կառավարչին, որի օգնականները առիւծի աչքերով հսկում էին խմողն ու չխմողն իմանալու համար։ Խմողը կստորմ էր։ Տասն րոպէից յետոյ էլ կանգնած մարդ չը մնաց՝ բացի կանգնաւորներից։ Վերատեսուչը հետաքրքրութեամբ դիտում էր, թէ ինչպէս գինու ազդեցութեան տակ խառնիճազանները ամբոխը դարձնել կանոնաւորապէս հպատակում է իր կառավարչին։ Անի-բեգը համառօտակի իր շնորհակալութիւնը յայտնեց յետոյ բաժակն* ստացաւ վերատեսուչը։

«Տէր հայր, սիրելիք, ձայնը սովորականից աւելի բարձրացրեց նա, ես հարսանիքներում շատ եմ եղել, բայց ոչ մէկ անգի հարսանիք այն համն ու լազաթը չի ունեցել, ինչ որ մերը, էս պէս հարսանիքը։ Ուրիշ ազգի հարսանիքը կարելի է շատ ճոխ ու հարուստ է, հրաւիրածները գեղեցիկ գուգն ու զարդով շորեր ունեն, հարսանքատուն էլ ոսկեղէն զարդարանքով փայլելիս պսակալիս լինի, բայց այդ ամենը դրսի կողմից է, սուտ

* Աղաներին պատուելու համար քիչ բաժակ էին բերել։ Առանց բեգը շնորհակալութիւն յայտնելով ցոյց տուեց որ ինքը վերատեսուչից փոքր է։ Գիւղերում երբ երկու մարդի կենաց միասին են խմում, ով ամենից իր շնորհակալութիւն է յայտնում, նա իր նուստուսութիւնն է ցոյց տալիս։

ու շինծու, կեղծ ու անպիտան փայլ է, որ իրար հետ այդպէս «աչքակապուկի» խաղալով միմիծարկում են։ Աններքուստ ինչ ինչ զգուելի ապականութիւններով լի... Մեր հարսանիքը պարզ է, անարատ է, սուրբ է, երկու պսակվողների կանաչ ու կարմիր ծաղիկն է։ Աստուած շատ տայ մեր ազգին Էսպէս հարսանիքները ձեզ պէս բարեպաշտ ժողովուրդն էլ կեր ու խում անի ուրախանայ։ Հարսանիք որ չը լինի՝ ծնունդ ու երջանկութիւն էլ չի լինի։ Հարսանիքը բնկերական կեանքի ամենամեծ պայմանն է։ Ամեն մարդ ով քրիստոնէական զգացմունք ու եւանդ ունի՝ պէտք է սրտով մտնի այդ պայմանի տակ։ Խնդրենք Աստուածանից՝ որ հայ աղաքները-տղայ թէ աղջիկ հասնեն այս օրին և ամեն հայ տուն տարենը երեք հարսանիք ունենայ, տղայ ու աղջիկ պսակի, դրանով էլ մեր խեղճ, յետ մնացած ազգը աճի, բազմանայ...

Տէրտէրը ձայնը վեր քաշեց. «մէն»...

Լսողները յայտնեցին իրանց անբաւ շնորհակալութիւնը։ Վերատեսուչը նստեց։ Իսկոյն լսուեց սազի ծրնգ-ծնգոց։ Թագաւորն ուղարկեց նորեկ հիւրերի համար մի թաս գինի, որի երեսին դրած էր լոշի պատառ, սորա վրա ածած աղ։ Այս կը նշանակէր՝ որ թագաւորի սիրտը հնչտ է և ողորմած ստացողների վրա։ Այնուհետև նորեկները անեցին ուտել «եղումեղը», «տապակած հաւ», «ղայմախ», «կաթնահունց բլիթներ» ու «լոշագաթա», որոնք ամենաազիկ կերակուրներն էին, իսկապէս պահպանուած դրանց համար։

— Ուստա Գրիգոր, խօսեց թամազան. էդ օրհնուած ձէնիդ ենք կարօտ, ծնգծնգոցով բան չի դուրս գալ...

— Էս սհմթին: Ամա աղէքը թուրքի են ուզում՝
թէ հայի:

Աերատեսուէր շուտ պատասխանեց. «Մեր հայոց
երգերն ու խաղերը անմահական են. հայ մարդը իր
սեղանի վրա ինչի՞ պէտք է թուրքի խաղեր ասի... որ
մեր խաղն ասի, ճշմարիտ, աւելի քաղցր ու աւելի սա-
զական կը լինի, օտար ազգի մարդիկն էլ կիմանան՝ որ
մենք էլ ազգ ենք, ջոկ լեզու, ջոկ խաղեր ու տաղեր
ուենենք: Ինչի՞ թուրքերը չեն մեր պոչիցը—մեր խաղ
ու տաղիցը բռնողւմ, մենք ենք նրանցը անգիր անում:
Ինչ աշուղ իր անը թողում, ուրիշ ազգին ա հետևում,
նա լաւ աշուղ չի...»

— Լաւ աշուղ չի... կմկմաց աշուղը սազի ծընգ-
ծնգոցը գոխեց ու սկսեց—

— Էրկու հզար տարի մեր ազգն ու տակը
Քուրի մէջն ընկած՝ էրել ա կրակը...
Նրան թակել ա դարբնի թոխմախը,
Նրա լերդի մէջ քցել ախ-վախը,

վաշ—վաշ...
այ ղըլբաշ...»

Եղբար, էրկաթը քուրէն կը քցեն,
Որ թակեն, ջարդեն ու հաջաթ շինեն.
Ամա էս ազգը հաջաթ չը դառաւ,
Մնաց էրվելիս՝ հուշաթ էլ չարաւ.

վաշ—վաշ...
այ ղըլբաշ...»

Հուշաթի օրը թողմախով տուին,
Կրակն աւելի էլ թեժացրին.
Թէժ-թէժ կրակում պահեց նա հաւատ,
Հաւատի սէրը մեզանից անհատ.

վաշ—վաշ...
այ ղըլբաշ...»

— Թոխմախ զարգեց պէծեր դուրս թուան
Մենք էդ պէծերն ենք-ձեր շանին ղուրբան.
Մեր սուրբ պապերի ճամբից դուրս չը գանք.
Մեր գլուխն անօրէն դարբնին տուր չը տանք.

հազար վաշ—վաշ...
այ ղըլբաշ...»

«Ապրես, ապրես, անհամբերութեամբ ձայն տուեց
վերատեսուէրը: Վանի-բեզ, տես որքան գեղեցիկ մտքեր
է յայտնում, զուտ պատմութեան ծուծն է»:

— Իրավօ, աշուղ...

Տէր հայրը մէջ ընկաւ: Մեր աշուղը դրանից աւելի
լաւերը գիտի. միայն մի բան կայ. թողէք կանչն անենք,
էս խալխը քիչ սեհրակուեն, էն վախտը, աղա ջան,
ասել տուէք: Հմի լսածը կորած ա, չունքի, խալխը խմել,
ղովում են: Իա էնքան շինած խաղեր ու տաղեր ունի,
որ ո՛չ կը հատնի, ո՛չ կը պակսի: Տէր հօր խօսքը թագա-
ւորեց: Թամաղէն իսկոյն զուռնաչուն *) կանչեց, որ

*) Գիւղերում գուռնաչին ամեայեգուռանիկ ու պնդերէս
մարդն է. նա հարստանիքի բոլոր կարգերին ծանօթ է, այդ պատ-
ճառով կանցը սա է անում ու ստանում վարձ 1-2 մանեք
գոյացած գումարից: Գիւղացիք իրանք ասում են— «Եօլը գուռ-
նաչունն ա»:

կանչն սկսի: Մի մարդ էլ կանգնեց սրա մօտ, որ օգնի՝ փող տվողի անունը գուռնաչու միտը քցի:

«Ա. խախը, ցնծացէք, շատ գիշեր ա անցկացել. ում սրտիցը ինչ որ կը բղխայ թագաւորի սիրուն տայ... Դուք էլ տուն էք, աղջիկ ու տղայ ունէք. էս Հացափոխ ա՛ էսօր էս տանը, էքուց ձեր տանը...»:

Տէրտէրի առաջին դրին մէկ սինի, որ փողը նրա մէջ ժողովուէր: Առաջ խաչեղբայրը Հասցրեց փողը. ստացաւ ու սկսեց.

«Թագաւորի մականներ»:
— Հրամմէ...

Աստուած խէրն ու բարին ձեզ կամէ: Սուրբ Սարգիսը խաչաղբօրը մի ղոչ որդի տա, բարով նրա կարմիրը կապի. նրա սև օրը ըսէնց թռչի, նրա ոտը ոչ քարի դիպչի... Մեր թագաւորի սիրուն բաշխիչ ա մի սիպտակ իրէք մանէթ, սէլով սեղան, ոտով ոչխար...»

— Եէն կեննայ...

Տէրտէրը ստացաւ այդ փողը՝ դրեց սինու վրա:

Վերատեսուչն էլ շտապեց իր մասը տուեց: Կանչողն էլի սկսեց առաջուայ կարգով:

«Էս դարիբ աղի ոտը մեր Հանգին վրա գայ: Թէ պսակուած ա՛ Աստուած ղոչ տղերք տայ, թէ չէ՝ թագին արժան ըլի: Սրա հօղը փափուկ ըլի, երկնքի շողը հողի վրա անպակաս: Յորնի պէս ծլի, չինար բոյ քպշի, խնձոր-խնձոր պտուղ տայ: Ինչ մտքով էլ եկել ա գեղը, Աստծանից ստանայ: Աչքի լուսով ապրի, անկաջի ձէնով, ձէնով ու ոտով: Սրա սուրն ու ատամը կրտ-

րուկ մնայ: Բերել ա մեր թագաւորի սիրուն երեք սպիտակ մանէթ...»

— Եէն կեննայ...

Ապա Վանի-բեգը նուիրեց... Այսպէս, ամենքն էլ իրանց կարողութեան չափ, թագաւորի սիրոյն փող նուիրեցին: Արդէն դուք իմացաք, որ այս կանչը փող Հաց էր: Սա շատ լաւ կարգ է: Գիւղացին ահագին ծախքեր է անում Հարսանիքը՝ գլուխ բերելու համար և լաճախ պարտքով ըստ որում ամենքն էլ Հարսուտ չեն: Այս կանչը նրան մի քանի տասնեակ մանէթ է Համցնում, որով նա պարտքի գէթ մի մասը վճարում է: Պէտք է նախ Հարսանիքի ծաւալն ու ծախքերը կարճել, ապա թէ կանչը ոչնչացնել: Հարսանքատէրը ստիպուած է տունը մի մարդ հրակիրել, թէ և շատ տնից մէկ երկու և երեքն էլ են գնում: Ենթադրենք թէ գիւղը բաղկացած է 150 տնից, ուրեմն՝ Հարսանքատէրը ամենաքիչը երեք անգամ պէտք է Հաց ուտեցնի 150 հոգու փիասին: Այստեղ, ի Հարկ է, չենք յիշում կանանց աղջկանց ու տղա-աղաքների դասին, անակնկալ հիւրերին, ուրիշ եկող-գնացողներին. նոյնպէս չենք յիշում խաշաճաշը, որ թագ-վերացման հետեւեալ օրը անուշ են անում, մի խումբ մեծամեծների, այլ և տէրտէրի, բոլով ժամհարի, երեցփոխանի, գզրի, որբերի և չքաւորների տներն բաժին ներ ուղարկելը: Այս ամենից երևում է՝ որ այդ տեսակ Հարսանիքը տնաքանդութիւն է *):

*) Շատերը գուցէ կարծեն որ հարսանիքի ծաւալը այդպէս մեծացրել են կանգի-փող ստանալու համար: Սա սխալ կարծիք է, մեր հայեացքով: Յայտնի է, որ առաջ գիւղական կեանքի մեզ անելի անարևադարձն ու փարբամութիւն, սեր

Կանչը յիսուն մանէթից չանցաւ, որ կանչողը լի-
շեցրեց ամբոխին: Տէրտէրն իր պսակդրամի ու հալաւ
օրհնէքի փողը վերցրեց, որ առաջուց օրոշած էր,
մնացածը հասցրեց հարսանքատիրոջը:

Իսկոյն «փլաւ-կանչոցի» զուռնէն փչեցին, տուռը
դրմբացրին մի քանի ըոպէ: Փլաւը մօտ բերին: Մարդի-
կը իրանց հինգ մատը գդալ շինած՝ լաւաշի պատառով
սրբեցին ամանները, կասես՝ ամբողջ օրը ոչինչ չէին
կերել: Կառավարիչը տեղիցը կանգնեց ու ձայն հանեց,
որ ամենքն էլ կանգնեն:

«Պոմօշնիկներ, սո՛ւս կացրէք, ողորմաթասն ենք
խումմա»:

Այս կենացը ամենայարգելին էր նրանց համար:
Լաւթիւնը տիրեց:

«Աստօժ ըղորմի էս տան հիմք քցողին, էս տանը
ծնած ու մեռածին—Վերդի ապօրը, Վիտիս պապին,
նրա աղբէր Պօղօին, նրանց հրօղբէր Գալօին, սրա
աղբէր Աւետին: Աստօժ ըղորմի Մարգարին, Սաքնին,
Սիմի ապօրը, սրա տղայ Ակոփին, նրա մեծ աղբէր

ու մտերմութիւն կար՝ քան այժմ: Այս այսպէս լինելով մի
տմբողջ գիւղը մի տան մտան էր ապրում: Մէկի ուրախու-
թիւնը՝ ընդհանրութիւն ուրախութիւն էր պատմաւորում միւսի
տխրութիւնը՝ ցար: Մէկին գարակ ծնեց յամենքն են ուրախ,
սմենքն էլ ճաշկերութիւն հրաւիրում են: միւսի տղան պսա-
կվում է՝ ամբողջ գիւղն է դղրդում ուրախութիւնից: Մեր
պապերը տեսնելով որ հարսամքատէրը շատ ծախքերի տակ
է քնկնում, նրանք էլ երեսի կանցը աղաք են քցել, որ մինչ
այժմ տեսնում է:

Նաւնին, պուճուր աղբեր Գիրգորին, սրանց տղերանցն:
ու թոռներանցը: Աստօժ ըղորմի Խանում տատին,
Հոռոմ հարսին, Նազուլին, Սաբօղին, Անուշին, սրանց
աղջկերանցն ու տղերանցը: Աստօժ ըղորմի Աննման
տատին: Դոււմաշին, մեծ հարս Խասուն, Սալբնազի
շերիքին, Մարօին, սրա հարս Խաթօին, Գիւլնազին,
Խամփերուն, մեծին ու պուճուրին: Աստօժ ըղորմի էս
տան լաւ ուղողին, էս տան գերանները գցողին, պատը
դնողին, բարեկամներին ու դուշմաններին, թէ որ
կենդանի են՝ Աստօժ բարի լիս տայ նրանց: Նրանց
կենդանի աղօթքն ըլի էս տան վրա, հարս ու փեսի
վրա, էս գեղի վրա, ալամ-աշխարհի վրա: Իէ, խմեցէք,
ողորմի տուէք»:

Այս ողորմաթասը վերջ դրեց ընդհանուր կեր ու
խումին:

ԺԹ.

ԱՌԵԼԻ ԹԻՔԷՆ ՓՈՐ ՉԻ ԾԱԿԻԼ.

Գիւղերում հարսանքահացն ուտելուց լետոյ տանու-
տէրը, տէրտէրը ուրիշ մեծամեծների հետ դեռ էլի մտում
են փորների պակաս-պուտ տեղը լցնելու և աշուղի
խաղերը լսելու: Նրանք հասարակ դասի չափ ուտել-
խմելով երեւի չեն կշտանում: Այս անգամ էլ այսպէս
մի խումբ մարդիկ մնացին, բեզին ու վերատեսչին էլ

իրանց հետ պահեցին: Աշուղ Գրիգորն էլ սրանց միջին էր: Նորէն սուփրա փռեցին, պանիր ու լաւաշ, գինու գաւը մօտ բերին: Վերատեսուչը նկատեց:

«Այս քնչ բան է, մի թէ նորէն պէտք է հաց ուտել: Չէ որ մենք բոլորս էլ այս բոսկէն սուփրի վրա նըստած ուտում-խմում էինք»:

— Աղա ջան, շուտ վրաբերեց տանուտէրը. աւել թիք էն փոր չի ծակիլ. էն սուփրէն էլական էր, հմի սա քոխվական ու տէրտէրական ա...

«Քոխվա, ասաց բեգը, բա բեգականը որն ա»:

— Բեգականը ամենիցն էլ քաղցրն ա. էդ էն ա՛ որ ես ու դու գիտանք...

«Ես ոչինչ չը գիտեմ»:

— Քու մէրը մեռնի՛ որ չգիտենաս, վրաբերեց Միրզէն:

«Է՛հ, դու աղ, դու էլ միթամ բան ասեցիր. շատ բան գիտեմ՝ ձեզ քնչ»:

— Մեզ...

«Լա՛ւ, խօսքը կտրեց վերատեսուչը. հիմի էդպէս խօսելու վախտ չէ: Մենք դադարած ենք, շուտ պէտք է հանգստանանք: Հիմի ով սոված է՝ հաց ուտի, ով ծարաւ՝ գինի խմի, ով կուշտ՝ աշուղի խաղերին լսի: Ես հէնց աշուղի խաղերը լսելու համար եմ մնացել...»

— Լա՛ւ, շատ միք խօսալ, ձէն տուեց աշուղն ու աղաներին գրաւելու համար աւելի լաւերիցն սկսեց.

Ա. խ. . .

— Մաճկալ չեմ՝ ծէր տամ ակոսի՛ն,
Քոխվա չեմ՝ գովեմ բաքոսի՛ն.

Տէրաէր չեմ՝ առնեմ աբասի՛ն,
Աշուղ եմ՝ ձէն տամ Յիսուսի՛ն. . .
ճֆ... Յիսուսի՛ի՛ի՛ի՛ի՛ն. . .

Ա. խ. . .

Ա՛յ Յիսուս, մեռնեմ քու լուսի՛ն,
Կարօտ եմ աչքի լուսի՛ն. . .
Մտիկ իմ անշնորհք երեսի՛ն,
Արժան տես ինձ էդ սուրբ կուսի՛ն,
Էդ լուսի՛ի՛ի՛ն. . .

«Աստուած արժանի անի» գողացին ամենքը: «Ապրէս, շատ ապրես, լաւերիցն ասա, քնիցը ասա...»:

Այս բոսկում տէրտէրը գլուխը տմբտմբացնում էր: Տանուտէրը ձէն տուեց. տէրտէր, քունդ հէնց հմի տարաւ. . .

— Հա՛, որդի. երկնային Յիսուսը դըրա սըտի նը կատարի: Քոխվա, մի թաս գինի տուր խմեմ, քունս քալքի փախչի:

Մի տալ քոխվա. քնի մայէն գինին ա, ձայրն ա ամեն չարեաց ասաց աշուղն ու էլի սկսեց.

Այ բալանամ *)

Սարը սարին էր, քարը քարին,
Տունս ու տելս հազար բարի՛ն.

*) Այս երգը աշուղը հնարել էր իր անցեալի նկատմամբ: Ես երկու աչքով կոյր եր: Երբեմն շնորհալի տիրացուներից մեկն էր, չգիտեմ՝ որպիսի դժբաղտ դեպքով նա աչքերի լուսից զրկվում ու սկսում է աշուղութիւնը:

Փառքս փուլ եկաւ՝ շրջուեց տարին,
Ես ինչ դիմանամ էսքան ցաւին.
— Ինչ անե՞նք... մ.

— Ոսկի անունս էրկաթ դառաւ,
Էն վարդ երեսս դեղնեց՝ սառաւ.
Մատիս մատանին ժանգը կերաւ,
Տանս սարգ ու կարգ գնաց, կորաւ.
— Ինչ անե՞նք... մ.

— Լի էր իմ տունը, բաց էր դուռը,
Գարդակ չէր մնում խեղճի բուռը...
Օրերը թռան... ընկաւ հուրը
Լերդս ու թոքս... էս մեծ սուրը
— Ոնց տանե՞նք... մ.

— Թէ մնէլ տեսնեմ աչքս վառ վառ,
Արևի շողքը տանս պայծառ.
Թողէք էն վախտը լէշիս համար.
Բերեն մօնթերը խաչ ու խաչվառ...
Ա՛խ, այ նէյնի՛ ի՛ ի՛ ի՛ մ...

«Բրավօ, բրավօ-բացականչեց բեզը:
«Կեցցես, լաւ ես երգում...»

— Տէրտէր, այ տէրտէր, գոռաց տանուտէրը, ինչ
ես գլուխ տալիս խալիին...

— Որդիք, մրափն ինձ առել ա, սասց նա ու գը-
լուխը դրեց տանուտէրի ծնկան վրա: Աշուղը եղանակը
փոխեց. համաձայն վերադասիս պահանջման ու ձայն
տուեց: «Լսեցէք, ուրիշ եմ ասում»:

— Սան եախշի, ուստա Գրիգոր...

Աղբէր,

Ծառի ծէրին խնձոր կայ,
Կարմիր ա, քաղցր ա, ինձ ինչ:
Թաղի վրա շամամ կայ,
Նաշխուն ա, սիրուն ա, ինձ ինչ:
Ինձ ինչ, չե՛մ ուտում,
Ինձ ինչ չե՛մ տեսնում...

Թփի վրա վարդեր կան,
Կարմիր են, կոկոն են, ինձ ինչ.
Գետնի տակին սխտոր կայ,
Կծու ա, կսկծու, ինձ ինչ.

Ինձ ինչ—չե՛մ տեսնում,
Ինձ ինչ—չե՛մ ուտում.

Գեղի միջին մարդիկ կան,
Հարուստ են՝ փառքի մէջ, ինձ ինչ.
Ամեն տեղ էլ աշուղ կան,
Գարդակ են, լուրիսոս, ինձ ինչ.

Ինձ ինչ—չե՛մ տեսնում,
Ինձ ինչ—չե՛մ վախում...

Երգիչն այդ խաղը մի այնպիսի չը լսուած եղա-
նակով էր երգում, որ մարդիկն առանց երգի խմաստն
ըմբռնելու էլ շարունակ ծիծաղում էին:

«Տնա՞ղ էք անում, թէ ուրախանում էք» — կանգ
առաւ երգիչն ու հարցրեց:

— Տնաշէն, վրաբերեց Պետրոսը, մեզ ծիծաղու թու-
լացրիր ախր...



«Դէ որ չէք լսում, էլ թնչ ասեմ: Գինին մայրն է ամեն չարեաց» — ասաց նա ու սագը բնի մէջ դնելով — «Աղա՛, էդ տէրտէրի խուրմփոցն ա, չէ՛, խտոր ա ընկե՛լ թէ հէնց նստած ա խուրմփում...»

Ծիծաղը կրկին տիրեց: — Տնաշէն, նստած խուրմփալ կըլՔ...

«ԿըլՔ, կըլՔ, Վերդի ասաց աշուղը, *) լսեցէք, ձեզ մի անցք պատմեմ: Ողորմածիկ Մովսէսն ու Օսեփը իրար հետ ոտով Գեանջա գնալիս են ըլում. քաղքից մօտիկ, բաղերի գլխին՝ Մովսէսը ճամբէն գնալիս համ քնել ա համ երազ տեսել ու երազումը «Խւզ-Խւզ արել: Ընկերը հարցրել ա՛ էդ թնչ էր: Էդ էն էր՝ ասում ա Մովսէսը, որ աչքս կպաւ, խոզերը վրա դառան, ինձ ուտում էին: Էս որ կըլՔ, էդ չի ըլՔ...»:

Կրկին ծիծաղ:

«Որ ըզէնց ա, շարունակեց նա, որ էլ մեծ ու պուճուր չի մնացել ըստեղ: Հառամ ա մեր՝ մնալը: Կարգաւորը մեր խաթէր անկարգ քնել, չարչարվում ա: Ինձ մուրախաս արէք, աղէք ջան» — ասեց ու տեղիցը կանգնեց:

«Ուղիղ նկատեց աշուղը, ասաց վերատեսուչը. ժամանակ է, վերկացէք» ու ինքն էլ կանգնեց:

Թեթև աղմուկ տեղաց ու շուտ վերջացաւ: Տանուտէրն ուզում էր դեռ երկար նստել...

*) Աշուղի մտքի այբերը շատ սուր էին. Ըստ իսկոյն իմանում էր, թէ խօսողն ո՞վ է, ո՞ւմ ճայնէ լսվում: Իր համար ս ա գ, քեանմանցա, ք ա ու ե ուրիշ գործիքներ ինքն էր շինում իր ձեռքով: Սրա ձեռագործը շատ շատերին գարմաց-Յում էր: Նա կարողանում էր շօշափման օգնութեամբ ասեղ թելել...

«Գզեր, գզեր...»

«Ժամհար, ժամհար...»

Երկուսն էլ պատրաստ էին դուռն շէմքումը: Գրէզերը աշուղի ձեռք բռնեց, բռնեց ժամհարն էլ ձիթաթաթախ փեռն դադը վառեց, բարձր բռնեց, ու ամենքի առաջն ընկաւ:

«Բարի՛ գիշեր, տանտէր, հարսն ու փէսեդ ապրին»:
— Զեզ լիս բարի, կեր ու խումը անուշ...»

Թ.

Թէ ԻնՉի՞ ՌԻՐԱԻ ԵՆ ԳԻԻՂԱՑԻՔ:— ՀԱՐԲԱԾ ՄԱՐԴԻԿ:

«Ով որ ինչ ունի՝ կուտի-կըխմի,
«Ով ոչինչ չունի՝ կ'ուզի-կը մորի.
«Զուրքի գալիս ա երկէն աղիքը
«Որ մեր հանդիմ տայ գարնան ծաղիկը...»

Միւս օրը առաւօտից մինչև երեկոյ գիւղը դղրդում-որոտում էր: Բուռ-բարիկենդանի վերջին կիւրակին էլ իմացէք թէ՛ թնչ կը լինի հայ-գիւղացու դրուժիւնը, նրա սիրտն ու հոգին: Նա ուտ ս ի ն հեռու՛ շատ հեռու է խուրմ ու սիրով դիմաւորում պատին... Մի տեղ «տուր ու թմփոց» է, ձիւնի մէջը գլդի գլդր են գալիս տղերքը, մի ուրիշ տեղ հանաքը չ'անաք է դադնում, իրար կողմ՝ պահում «Տուէք հա՛, ձնի կլուակով»

փէտով, դմզով» գոռում: Մի տեղ քսանի չափ ջհէլ-ջիվան տղաներ լախտի են խաղում մի ընդարձակ կալում. պինդ հիւսած մազէ սամոտէնները՝ երկաթի պնդութեամբ՝ նրանց լախտիքն էին. կռնայտը տալով այնպէս էին մին-մնի թիկուէք, մէջք, կեա փեւր դաղում-դղղո-րում, որ Աստուած հեռու տանի... Ճ ժ ի միջի տղերքն աչքն էլ չէին ճպում: Մի ուրիշ տեղ «քեօսա-գեալդին»: քիւրքը թարս հագած, փափախը շրջած, երեսին սև մուր քսած, իր կնոջ հետ պողրուչկա բռնած, մէկ ա-հագին ձեռնափայտ խշատակը կախած, գուռնա-դհուլի առաջն խաղալով, նազ ու մազ անելով, մի քանի տղերան-ցով շրջապատուած՝ դէպի գիւղամէջն էր գնում, որին հետևում էր մեծ բազմութիւն: Ք ե օ ս ի կինը երեսն ա-մեն կերպ աշխատում էր ծածկած պահել, որ բեղերը չը նկատուեն, թէ և ամենքն էլ լաւ գիտէին՝ որ նա մարդ է ու հետը հանաքներ էին անում: Կանայքն ու աղջիկներն էլ իրանց ասպարէզն ունէին. նրանք ևս խրմ-բերի բաժանուած՝ տների սրահներից ու կուռներից նայում էին իրանց մարդկանց ու տղերանց քաջագործու-թիւններին, ուրախանում, կրկնում... Սրանց խօսելու նիւթն էլ խօ. պակասում չէր. մէկին գովում էին՝ որ լաւ է վազվզում- ուժդին է գոռում, լաւ «բայիաթի» կանչում, միւսին պախարակում էին՝ որ թամբալ է, ձների մէջն է խրվում, խաղալիս լ ա խ տ ք շուտ է տա-նել տալիս... թէ քեօսա-գեալդու կինը բոլոր կնանոնց նամուսը գետնումը դրեց, կնանոնց խի՞ են տնազ անում, մարդի կնգաշոր հագցնում՝ գեղամէջը քցում, լպստում... Այսպէս՝ աղերքը գիւղը «ուռում-դուլդուլա» էին քցել, կարծես՝ կախէթի կարմիր գինին սրանք լինէին խմած, ա-

մենաթարմ կերակուրները սրանք լինէին անուշ արած...

Բեզն ու վերատեսուչն էլ նոր առաւօտածաշը կե-րել, դուրս էին եկել աշխարհի տեսնելու: Նրանք կանգ-նեցին մէկ բարձր կտրի վրա:

«Բարեկամ, ասաց վերատեսուչը, այսօր խելքը գըլ-խին մարդ չի գտնուիլ. ուրեմն մենք ոչ ովի հետ դար-ձեալ չենք կարող խօսել.»:

— Եսօր սրանք ուտսին փախցնում են: Էս իրկուս ամեն տանից էլ թւանքներ կը քցեն....

«Թէ քնչ»:

— Որ ուտսի հրեշտակին վախացնեն, խռկեն գեղի սահմաններիցը:

«Ուրեմն այդքան սիրով կ'ընդունեն պասի գա-լուստը»:

— Բա ինչի՞ հմար ա էսքան ուրախութիւնը, խըն-դումը, խաղը:

«Նրա համար՝ որ պասին, այն էլ մեծ պասին են դիմում, որը գիւղացոց մէջ այսպէս լիուլի ուրախու-թիւն է պատճառում»:

— Իսկ իրանք գիտեն, թէ էդքան խի՞ են ուրախ:

«Կար ժամանակ, որ մեր պապերը շատ լաւ իմա-նում էին՝ թէ ինչի՞ բուռն բարիկեղանին այդչափ ուրախու-թիւն են անում. հիմիկուայ գիւղացիք նրանց գիտե-ցածների քառորդ մասն էլ չը գիտեն, ուրեմն՝ որտեղից կարող են այդչափ հասկանալ: Այժմ մեր մէջ ժողովր-դական սովորութիւնների ու ծեսերի մեծ մասը անգի-տակցական է դարձած: Առաջուան մարդիկը հասկանում էին որ այսուհետև մարդ պէտք է ներքուստ կլալիկուի, իր ամեն գործած մեղքերից ազատուի, թեթևանայ ու

դառնայ եկեղեցու աւագանից նոր դուրս եկած մարդ ապաշխարութեան, քառութեան և թողութեան շնորհիւ: Բայց լոկ փիլիսոփայութիւններով մեր գործը յառաջ չի գնալ, Վանի-բեգ»:

— Հա՛. դէ՛խնչ անես էսօր սրանց անկարելի է բան հասկացնել: Ես քեզանից աւելի եմ շտապում...:

«Գուցէ և վաղն էլ սրանք էս օրին կը լինեն»:

— Ես դ՛ո՛ւ մը ի՛ւ, էքուց-պասի առաջին երկուշաբթի օրն է: Սրանք իրանց սովորութիւնները բաց չեն թողնել, մեզ հետ ընկնել...:

«Ուրեմն՝ այստեղ ո՛ւր ենք կանգնել: Գրաւիչ ոչինչ չ'կայ: Գնանք, ցուցակագրենք այն ժողովրդական ազբիւրները, որոնք մինչ օրս մասնաւոր ձեւքերում կորել, անյայտացել են, որպիսին հասարակ ժողովում խօսելիս պատրաստ ունենանք»:

— Գնանք:

Նրանք այդ օրը այլ և՛ս դուրսը չերևացին:

Քանի որ վերատեսուչն ու բեգը ցուցակագրութեամբ էին զբաղվում, տանուտէրն էլ իր սիրդաշներէ հետ Գիքոնց օթախում ամբողջ օրը քէֆ էր քաշում: Երբոր օրը մի՛նաժուռեց, բեգը միայնակ տանիցը դուրս եկաւ ու դէպի Գիքոնց օթախը մտքամոլոր գնում էր: Նա «քէֆ-անողների» այնտեղ լինելը չէր իմանում, ինքըն էլ աննպատակ էր այն կողմն անցնում: Տանուտէրն էլ այդ միջոցին դուրս էր եկել, տեսնելով բեգին՝ համեցէք արեց ու տարաւ իրանց մօտ:

— Աղա՛ ջան, դ՛րթ ա, խմած ենք, ամա խելքներա էլ չենք խմել, խօսեց տանուտէրը. ես սկի իմ խմած

ըլիլը չեմ իմանում: Երեգ դու ասում էիր որ էդ դարիբ աղէն ու դու եկել էք էս գեղումը շիօլ բաց անէք, ամա էդ սկի լաւ բան չի, թո՛ղէք, ոնց որ ապրել ենք՝ էլ ընէնց ապրենք: Խալխի մէջը խրթմունք միք քցել, ձեր... հօրն ըզորմի...:

— Աղբէր, աղա ջան, ի ս տ ա մ եր ա մ, օլ մ ա գ... ն է տ .. ասաց Վերդին ու ձեռը քցեց, գլուխը տմտմբացրեց: Սրա բերանից փսլնքաջուրը կաթում էր...:

— Ապրես, շուն Վերդի... սրտմտիցս մի... մի կաթիլ ջուր խմեցիր... աղա ջան... ի ս տ ա մ եր ա մ խ...:

— Ղո՛ջախ Պէտի, ն է տ... ըստարի կեկենայ... Եկող տարի բ ա շ մ ու ս տ ա...:

— Հա՛, այ Միրզա, ես էլ էդ եմ ասում, խօ գիլի պէս չեմ կոնձկոնձում: Աղա ջան, եկող տարի դա՛, պ օ ժ օ լ ու ս տ ա, գ լ խ ի ս վ ը ա...:

— Էն վախտը, զատէտ առնեմ, զգրա՛ս տ ի՛...:

Վանի-բեգը տեսաւ որ ոչ մէկի գլխումը խելք չի մնացել, իրար էլ չեն հասկանում, տեղից սուս ու փուս կանգնեց ու ասաց. «Քոխվա Չատի, ես տեսնում եմ՝ որ էլ քեզանում քիչ խելք ա մնացել: Լսիր: Էս սհաթին Խջանց Ոսկանը Նաչալնիկիցը մի ս լ է ս տ չ ի բերեց: Քեզ ու էդ մարդկերանց վրա մեծ հեսաբ կայ: Վայ ձեր օրին: Ես հրէս գնում եմ, ձեր բոլորիդ կաշին էլ մաշկել պէտք ա տամ...:

— Զգրա՛ս տ ի՛, խ ա ը ա շ օ...:

Բեգը դուրս եկաւ:

Ի Ա .

Է՛ԼԻ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԵԱՆ ԽՆՁՈՐ :

«Չար մշակողին՝ չար սերմանց նորին,
չորացն գպտուղն»:

Շմալ-բեգը Գանձակից գաղտնի նամակագրութեամբ չորդոր է կարդում գիւղի տանուտէրին ու իշխաններին, որ մերժեն աղաների առաջարկութիւնը վնասակարութեան պատճառով: Արդեօք թնչ էր այս բեգի նպատակը, որ կռուի խնձոր էր գլորում դէպի միամիտ գիւղը: Եթէ մենք այժմ անցնենք քաղաք, տեսնուենք Շմալ-բեգին, մտնենանք նրա հոգուն, նրա տրամադրութեանը-այդ շատ հեռուն կը տանէր մեզ: Աւելի լաւ է՝ կարդանք նրա սրտի դաւ թարը, որով և կը լուծուի հանելուկը:

«Ես վերատեսչի հետ միթէ աւելի շատ բան չէի շինիլ. ինչի՞ Վանի-բեգին նա աջակից վերցրեց, այն էլ՝ խնդրելով ու նրա տունը մի քանի անգամ վիզիտ գնալով: Բոլոր գիւղերը ինձ հետ զանազան կապեր ունենալով, ինձանից ուռի պէս կը դուրան և այժմ այնքան

ստորացայ մի КАКОЙ ПИБУДЬ վերատեսչի աչքումը, որ Վանին ինձանից վեր դասուեց:.. Ես աւելի հարուստ, ճարպիկ, խորամանկ, բռնակալ, ինքնասէր, շողաքօր թող, երբեմն ծառայութեան պաշտօնի մէջ սեղանապետ եղած, այժմ էլ ամեն բան... և այս ամենից յետոյ թնչպէս կուլ տամ վերատեսչի ինձ տուած հարք: Ախր իմ անունս Վանի-բեգին էլ սարսափ կը բերի. բայց նա այժմ այնտեղ-գիւղացիներով շրջապատուած, իր հոչակն ու ծաւալն է մեծացնում և, ո՞ գիտէ, ինչպէս սիրուն հունձ էլ կ'անի, թաքուն ու աշկար կաշառքներ կ'առնի, խոստանալով թէ ձեր գործերը կը հոգամ... Այս ասենք ոչ ինչ, սովորական բան է: Միայն վերատեսչի հետ գիւղը գալըն մի նոր անուն, նոր փառք ու պատիւ էր ինձ համար. հիմնած ուսումնարանը ապագայում կարելի էր շինել մի նոր տեսակ հարստութեան միջոց: Ե՛ս, այն, յիմարեմ: Ես կարող էի, առանց վերատեսչի էլ, գիւղերում առաջուց նոր մօդնի ուսումնարաններ հաստատել ու յետոյ մի ընդարձակ տեղեկագիր ուղարկել վերատեսչին. սա էլ համ շնորհակալ կը լինէր ինձանից; Համ բոլոր ուսումնարանների խնամատար կը ճանաչէր... Լաւ որսորդ չեմ եղել: Վնաս չունի, ես այսուհետև ուրիշ կերպ կը գործեմ: Թող վերատեսչու չն իմանայ, որ աւելի առիւծ բեգեր կան, որոնք կարող են իրենց բոլոր շէնքը մի հարուածով ջնջել: Ահա այս բանում ես իմ ոյժը ցոյց կը տամ: Ես նրանց քցած սերմը այժմէն հողի մէջը կը փթացնեմ ու նորա տեղը ուրիշ սերմ կը գցեմ: Այս գաղափարն է մեզ ձեռնտու, ըստ որում

ուսումնարանները կամաց-կամաց կը բանան ժողովրդի կոյր աչքը և այնուհետև «մնաս բարև» բեգ, էլ ոնց կարող ես կուրուծիւնից օգտուել...

Շմալ-բեգը այսպիսի մուծ մտքերով էր տանջվում։ Նա մի նամակ խօ առաջ էր գրել-ուղարկել այս գիւղի տանուտէրին, մէկն էլ նոր էր ուղարկել։ Այս բաւական չէ։ Նա իւր արանքի միջոցով լուր էր տարածել քաղաքում, որ որպէս թէ բեգին ու վերատեսչին գիւղացիներն անպատուելով դուրս են արել գիւղիցը։ Այս լուրը հետզհետէ տարածվում էր Գանձակի առաջաւոր մարդկանց մէջ...

Շմալ-բեգի ուղարկած ձիււորը այս երեկոյ անժամանակ գիւղը հասաւ ու իր ծանօթ գիւղացու տանը հիւրասիրուեց։ Իր աղէն-Շմալ-բեգը պատուիրել էր՝ որ գիւղումը նա մի ըստէ աննպատակ չը ուշանայ, ինչպէս էլ և երբ էլ լինի՝ տանուտէրին գտնի, նամակը յանձնի նրան ու պատասխանը բերի։ Իեւ ծէգը չը քցած՝ դեռ աքաղաղները նոր էին կանչում, նա խնդրեց հիւրասիրողից, որ նեղութիւն կրի տանուտէրի տունը ցոյց տայ իրեն։ Տան-տէրը փոխանակ տանուտէրի՝ գզրի տունը ցոյց տուեց, որ աւելի մօտ էր։ Նրանք երկուսով միասին գնացին ու շնթուած տանուտէրին քնահառամ դարձնեցրին, շէմքը կանչեցին։ Օտարականը նամակը դէմ արեց նրան-աւելացնելով «Շմալ-բեգը թահրի ըղարկեց, ըստրան ջօղաբը տօք՝ վար տանիմ»։

— Գզիր, վազի պիտէր Վարդանին կանչի. թէզ, էս սհաթին»։

Գզիրը թուաւ։ Տանուտէրը գոմի օթախում ճրագ վառել տուեց, օտարականի ձին գոմը քնդեց, իրան էլ ներս կանչեց։

«Ադա՛, հարցրեց նա, սկի խաբար ես, ինչ կայ էս գրի միջին»։

— Ք՛ մատաղ, հինչ իմ պէննա, ես Շմալ-բեգին նհէտ գլաջա ընող ջուր ըմ ...»

«Ի՛նչ դու ըստեղ կաց, ես մի շորերս հագնեմ ու մի ստաքան արաղ խմեմ, թէ չէ՝ իմ հալը հալ չի։ Ադա՛, շէմքիցը ձայն տուեց նա, բա դու արաղ չես խմում»։

— Նաչախէ ըս հրցնօմ. թա օնիս՝ խէ չըմ խմել։

Տանուտէրը որ դուրս գնաց, օտարականը ինքն իրան սկսեց թոնթորել. «Ես ընեմ էն Աստուծ ա՛ ջմահաթ, վար էս մարդս շիջ տաահաչ ըլալ։ Թա արաղ ըս տօմ, լհա տօք, էլ հինչս հարցը-փորձ անօմ, ընդե-տանը-ընդետը՝ ջուարին կծալը-կապօմ... Վայլա, պրտէս ա կեամ՝ թա ըտրա էս տվարէն մին-երկու դանա շշակ ջոկիմ, իրեսս խաչըհանիմ օ եայլա... Եանէ էս գոմին ապրանքը լոխ իւրան քրտնքաւն ընի ըշտա-տած, եանէ սա լոխ խալխան չի...»

Վարդաբաղցու խօսքը բերնումը մնաց. ներս մտաւ տանուտէրը բեղերը ծամելով և առաջուանից առուզ ուղուարթ. «Օ՛, չարի մտիցն ընկնես. ա՛ աղա, արաղը մտահան արի, կաց, բերեմ»։

«Տէ, ա ջմահաթ, մհեդ սրա տիերն օ տուերը բրա-խէ, մհեգ սրա ջուար, ըսողին նանաջը շանը ընխէն նեստայ մի կցնէ։ Ատա կիւլիւ ջուար, պա խէ քու

ըռեխը մտահան չըս անօմ... պա տիւ գիտառ չըս՝ վար
ես հինչ բեզի գեադա ըմ... Մին քնիմ շհարը, եշ,
հինչ պէներ ըմ խաբար տամ աղին...»

Ներս մտաւ տանուտէրը՝ փոքրիկ փետէ բաժակը
ձեռքին դողդողացնելով:

«Ա՛ռ, ա՛ տղա, խմի, ջանդ տաքանայ»:

— Էք ըստառշինա, ինձ ղրաբաղցի կ'ասին. էս
խէ կուճուր ըմանով ըս տալի, ընդուճիս ըս խափօմ
թա լիւզվիս...

Իուրսը ոտի թմփթմփոց լսուեց: «Թէզ, աղբեր,
խմի, թէ չէ՝ պիսերն էլ գալիս ա՛ նա էլ կուզի: Որ
նրան էլ տամ՝ քոխակիներ հետս կը կուռի...»

— Պա տիւ վար քու կնգայ հախէն կարըմ չըս կեաս,
հո՛ւնցս ըստառշինօթին ընօմ: Լիաւ, լիաւ... վերջին
խօսքն եղաւ ու կուլ քցեց արաղը:

Խէր ըլի, տանուտէր, ըսէնց գիշերհանայ քնչ կայ»-
ասաց Վարդանը:

— Ա՛ռ. էս թուղթը մի կարգա՝ հէնց կարգա որ
ես էլ իմանամ, խէր ու շաուր նոր կիմանանք:

Տանուտէրը ոտնակախ նստեց: Ճրագը մօտ բերեց
գզիրը: Գրագիր Վարդանը բաց արեց. ծրարը սկսեց
ծանր ու բարակ կարգալ հետեւեալ նամակը.

«Պարոն տանուտէր Չատի,

— Ես երկրորդ նամակն է, որ ղարկում եմ քեզ:
Իո՛ւ գիտես, որ Գեանջու՛ մհալումը էս էլ բան իմացող
բէգերից միինն եմ. ուրեմն իմ ասածի ու գրածի մէջ

էլ սուտ ու կցան չի կարող լինիլ: Խօսքս՝ խօսք, պա-
տուէրս՝ պատուէր, գործս՝ գործ, գրածս գրած է: Իո՛ւ
ինքդ էլ գիտես՝ որ իմ ուժն էնքան մեծ է, որ եթէ
ես ուզեմ մէկի օգնել, ամենանեղ տեղիցն էլ կազատեմ:
Ով որ իմ խօսքովն է նստում՝ վեր կենում, գործում,
ես միշտ նրա պահապան հրեշտակն եմ, ամա ով ինձ
մարդատեղ չը դրեց, կամ խօսքս չը կատարեց, ես նրա
հոգեհառն եմ, ես էնպէսու՛ն մոմի պէս կը հալեմ, ջրի
պէս կը վազեցնեմ, ուր էլ գնայ՝ չի ազատուիլ ձեռիցս:
Ես գիտեմ՝ որ եդ գեղումը քեզանից հասկացող մարդ
չկայ, - Ոսկանը, Մահտեսի Վիրապը, Միրզէն, Վերդին,
Տէրտէրը-գրանք քու պճեղն էլ չաճեն: Ես քանի՛ օրս
Ոսկանը շհարումս դէս ու դէն է ընկնում, քեզ վրա
գանգատներ տալիս. նրա վրա ես բարկացայ՝ որ ով-
հետեւ ինձ չլսեց, դուրս կորաւ: Միամիտ կաց,
նա քեզ բան չի կարող անիլ, քանի որ ես քու
կուսնն եմ: Ես ուզում եմ՝ որ քեզ համար նշան
էլ բերել տամ գուբերնատօրիցը ու յուսով եմ՝ որ
կը յաջողուի: Նշան որ կը ստանաս, դու
էլ կը դառնաս մի բեգ: Ես ամեն բանից յետոյ
դու էլ իմ խօսքը պետք ա կատարես: Վանի-բեզի ու
էն միւս պարոնի խօսքը չուանի չը դնէք:
Իրանք երկուսն էլ ձեզանից թաքուն ուրիշ մտքեր
ունեն. դրանց միտքը էնպէս չար է՝ ինչպէս Ոսկանի
միտքը քեզ համար... Առանց եդ էլ խեղճ գեղիդ վրա
մեծ մեծ ծանրութիւններ կան. եդ անխիղճ մարդիկն
էլ շոկ բեռն են ուզում դառնար խեղճ ու նաչարի վրա:
Իրանց արարմունքը ոչ հոգու ա, ոչ էլ մարմնու, միայն
իրանց համար... Աչքաբաց կաց: Գու՛ մարդկերանց

Հետ խօսա, որ նրանք էլ քեզ Հետձայն տան, էդ բեգէրի լաւն ու վատը չուզեն: Ձեզ հազար դայրի սպառնալիքներ, ահ ու երկիւղ կը տան: կազեն վախացնելով բան շինել, ամա չը վախէք: Թէ որ տեղն ընկնի՝ կուրից ու դազանակից էլ չը վախէք: Վանի-բեգն քնչ ա, որ ձեզ ինչ անի: Ձեր քեօմագը ինձ նման ասլան ա: Մի անգամ որ քեզ պրիստաւը ուղղում էր բռնել տայ, Վանի-բեգն ազատեց թէ ես: Սխր որ ես ետա տեղովը ձեր խեղճ ու նաչար գեղի վրա ցաւում եմ, բա դուք չը պէտք ա ցաւէք: Ես որ քեզ վրա ցաւում եմ, դու քեզ վրա չը պէտք ա ցաւեա... Դէ, իմ բարձրաբառառ օրհնութիւնս ըլի ձեր քեօմագը:»

Ամեն բան որ լաւ կը վերջացնես, կը դաս Գեանջա որ խաբարն ինձ մի առ մի ասես ու, չմոռանաս, խանուճիս համար մի քիչ եղբեր ես, մեղը էլ որ ըլի հետը՝ աւելի լաւ: Էս նամակի պատասխանը գրի, դարաբայիցի գեանդիս ձեռքով ինձ ուղարկի քու գրածն էլ, էս իմ գրած նամակն էլ, որ ինձ պէտքն ա: Իմացար, կը սպասեմ բարի խաբարին: 187... փետրուար:

.....Շ մ ա լ բ ե գ :»

«Դէ, քոխվա Չափի, էլ քնչ ես մտքիդ տունն ընկել. խօ իմացար ամեն բանը» — ասաց գրագիր Վարդանը նամակը կարդալուց մի քանի ըրպէ յետոյ

— Լաւ... շատ լաւ իմացայ:

«Պէտք ա պատասխանը գրես ու էս նամակն էլ յետ իրան ղարկես:»

— Սխր էս թուղթը նա խի ա յետ ուղում: «Ասում ա՝ ինձ պէտքն ա»:

— Դէ, պատասխանը ըսենց գրի. «ինչ էլ խնդրում ես՝ աչքիս վրա, կը կատարենք: Միայն թէ էդ փուչ Ոսկանին չը թողնես ինձ վրա գանգատներ տայ չունքի՝ սո՛ւտ ա, փալչիւ ա, գողը, տուն քանգողը ինքն ա...»

Բա եղ ու մեղրի հմար բան չգրեմ:»

— Սա՛, բաշուստա, միայն թէ քու ողորմութիւնը մեզ վրա ըլի:

Գզիրը թանաքաման ու գրիչը բերեց տանիցը: Վարդանը տանուտէրի մտքով պատասխանը գրեց ու կարդաց: Տանուտէրը որովհետեւ անգրագէտ էր՝ իրեն յանձնուած արքունական կնքով վաւերացրեց ու երկու նամակն էլ մի ծրարի մէջ դրած յանձնեց ղարաբաղցուն:

Տար, սպրիս, կորցնես ոչ...»

— Խէ՛ ըմ կորցնըմ. փրփաղէս ծալան թորը կը կորչի...»

Ի Բ.

Պ Ա Յ Մ Ա Ն

«Ղ ո շ ու ն - ղ ո շ ու ն ի» խ ա ղ ա լ ու Հ ա մ ա ր :

Այսօր, մեծի պահոց առաջին երկուշաբթի օրը գիւղացիք երկու ընդհանրական գործ պէտք է կատարէին: Նախ՝ առաւօտեան իւրաքանչիւր տնից մէկը

պէտք է տես գնար քահանային մի շիշ օղի կամ մի գաւ գինի տանելով նրա տուն. երկրորդ՝ երիտասարդ մարդիկը պէտք է «Շահ-Շահի» կամ «Ղոշուհ-Ղոշուհի» խաղային: Երկուսն էլ խորհրդաւոր սովորութիւններ են: Տէր հօրը տես գնալով՝ հէնց պասի առաջին օրից նրան միջնորդ են բռնում Աստծու և գիւղի մէջ: «Շահ-Շահի» խաղալով կենդանի են պահում հայութեան մէջ մեր սուրբ թագաւորների անմահ յիշատակները...

Օրը պղտոր է, երկինքը մռայլ, չանգը լալուկ սարի կատարից կպած, ամպերը հիւսիսում մին մնի շալակ էլած, այնպէս, որ մարդ սիրտ չէր անում տանից դուրս գալ. միայն այսօր էլ տանը նստելու օր չէ: Տէրտէրանց տանըցիք վաղուց զարթնել, բեզին ու վերատեսչին էլ քնահառամ էին արել, որ ժողովրդի բերած գինի-արագը տեղաւորեն: Տէր-հօր փոքր տղէն շուտ շուտ դուրս ու տուն էր անում, թէ տեսնի՞ ո՞վ առաջ իրանց տուն կը գայ, ինչ կը բերի: Նա շէմքիցը տեսաւ մէկ հարսի, որ իրանց տան դռնովն անց էր կենում.

«Հարսի, հարսի, ասաց երեխան. մի լետ մտիկ արա, հրէ լալուկ սարն ու Երլեղը զգուել են»:

Հարսի խելքը կտրեց, նա դէս ու դէն նայեց, տեսաւ որ՝ երեխան սուտ խօսեց, մի լաւ «չանչ» արեց խաբեբայի վրայ ու գնաց... Ծիծաղեց մեր երեխան հարսի իմարութեան վրայ ու տուն ընկաւ:

Այդ երևոյթը ծածուկ չը մնաց միքանի երիտասարդներից, որոնք նոր կանգնել էին դիմացի կտրին, ի հարկ է, նպատակով:

«Այ քու խել տունը քանդուի հա, ասաց խմբի գլխաւորը, երեսի խօսքն էլ չիմացաւ. Դէ էն ա՛ բարիկենդանիս ուտողն ու չուտողը, հարուստն ու աղքատը, քոխվէն ու գղիբը, տէրտէրն ու ժամկոչը—գիւք մին անց կացաւ էլի»:

— Ի՛նչ ես ասում. նա որ յուշկալ ու դանանդա հարսն ըլի, էս վախտին, էս օրը-կէսօրին չի ջուրը գնալ...

«Եդ մնա: Խալխի դաւին մեզ չեն տուել: Մեր նաղլիցը խաբար առէք: Ախր երկինքը առգել-ոչ ձին ա գալիս, ոչ անձրեւ, ոչ քամի ա փչում, ոչ ցեխ ա, ոչ ցամաք, ա սըլ մեր օրն ա: Արևն էլ ամպի ծոցումը տապ ա արել, կարելի ա՛ մեր բաղդիցը գլուխը լիս կը քցի: Բա քնչ էք ասում,—«Շահ-Շահի» չը խաղանք: Ախր վախտն ա»: Այսպէս խօսեց մի նրիտասարդ՝ որի երակներում ասես թլթլում էր Հայի արիւնը...

— Ես առջ, մի վաղիլ, ա՛ Ղուկա թո՛ղ, հլա խալխը տէրուց տուն տես գնան, տէրի օխն ու թիւնը առնեն ու շինամէջը շնամ էջ շինեն, եղնա...

— Ա՛ Ղուկ, խօսեց մի ուրիշը, տեսնում եմ որ մեր թագաւորը քեզ պէտք ա դնենք: Բա Շահն ո՞վ կըլի...

«Պէտք ա օրէնքով ժամ գանք: ասց որ մեր մեծերիցը տեսել ու լսել ենք» վրաբերեց Ղուկը, առաջ ամենիս վրայ չուփ (վիճակ) կը քցենք, ում կընկնի, նա էլ կ'ըլի մեր թագաւորը: Էս էլ խօ կուռի ու զօռի բան չի: Դիտէք, ես պէտք ա դոն շուհի մեն ձ ա-

Լ ո Ր Ը զ ա ռ ն ա մ—Լոռից Մելիքովի պէս, որ Շահի ղոշուներն ջարդեմ, տրորտակ տամ. . .»

—Որ ըտէնց ա, ես էլ քու ըղաքի զինուորը կը ըլիմ, ա Ղուկ. . . Իէ գնանք, մեր կատարն էլ տաքացնենք, գնանք:

«Ի՞նչ. մենք մգեար քոխվէն ու տէրտէրն էնք»:

Վալլա թէ՛ քոխվէն էնք, վրաբերեց Ղուկը, առանց էն էլ մեր ջիգարը տաք ա, մեր սիրտը աժդահա, մեր արինը կարմիր՝ կրակի պէս. . . Ինանք, պատրաստուենք»:

Խօսողները քաշուեցին:

ԻԳ.

ԵՐԿՊԱՌԱՎՏՈՂ ԽՆՁՈՐԻ ՊՏՈՒՂԸ.

Տէրտէրը գիտէր, որ իրանց տան այսօրուայ եկող —գնացողները հանգիստ չեն տալ վերատեսչին ու բեգին, ուստի՝ առաջարկեց նրանց գոմի—օդէն, ուր սպասեն մինչև «պաս-շնորհաւորէքի» վերջը: Բայց վերատեսուչը ուրիշ կերպ մտածեց. ի նկատի ունելով մարդկանց ուղեղի առաւօտուայ թարմութիւնը՝ նա շուտով կանչել տուեց տանուտէրին ու խնդրեց՝ որ մէկ տուն տաքացնի, շուտով հրաւիրի այնտեղ գիւղի իշխան մարդկանց, ուր խօսելու է ինքը և յայտնելու իր նպատակը:

—Գլխիս վրայ, աչքիս վրայ, ուրախ-ուրախ պատասխանեց տանուտէրը. ես էդ բանը ուզում էի վաղ

ասեմ քեզ, աղա ջան. միայն դուք էրբ կը գաք. . .

«Հէնց էս սհաթին»:

—Որ ամեն բան պատրաստեմ, գզրին ղրկեմ ձեր ետեկց:

«Ձէ, մենք էնքան չենք ուշանալ: Միայն ասա, ո՞ւմ տանը պէտք է հաւաքուէք»:

—Վանի-բէգ ջան, դու խօ գիտես, Տէրուց Գիքնի. . .

«Լա՛ւ, ես գիտեմ. դու շուտ մարդիկ հաւաքի»:

Տանուտէրն էլ ասես թէ մի այդպիսի պատուէրի էր սպասում: Նա երեւի ինչ ինչ պլաններ ու գաղտնիքներ ունէր: «Հմի Շմալ-բէգի խօսքը անպատճառ կը կատարեմ: Լա՛ւ է՝ որ Ոսկանն էլ ըստեղ չի, թէ չէ՝ փուչը լաւ ամարդ դառնալու ու ինձ բէաբուռ անելու հմար հուշաթ կը կանգնէր: Խալխի էլ խառը վախտն ա, ո՞վ կ'իմանայ՝ թէ ես թնչ արի: Սրանց պէս ծակեր ումը տապանող բեգերին էլ որ օլին չը գամ, ու լաւ մարդ էլ երեւամ, էլ ինչ քոխվա եմ. . .» Նա այսպիսի դառը մտքերով դիմեց գործի. . .

Պոչաւոր և ձրիակիր տանուտէրն ու իշխանները մինչ այժմ ծածուկ աշխատել էին իրանց կողմի սակաւաթիւ մարդկանց այնպէս տրամադրել, որ հասարակաց ժողովում միաբերան ձայն տան «չենք ուզում, չենք ուզում», բայց թէ թնչ է այդ չուզած բանը, իսկապէս չէին հասկացրել, ըստ որում իրանք էլ նայում էին բանին օրհնուած Շմալ-բէգի ազդեցութեան տակ:

— Բանուստա, քոխվա ջան, հէնց ինչ որ բէգն ասի, մենք միաբերան չէի պոչիցը կը բռնենք, ձէն կ'ածենք. միայն թէ դու ունենաս մեզ վրայ... Խեղճ մարդ ենք, հետաք ենք ունենում, փորձանքի մէջ ենք ընկնում, դու լաւ աչք ունենաս... »

Այսպէս էին խօսք տալիս այն մարդիկը, որոնք Միրզի, Վերդու, Պետրոսի ու տանուտէրի ազգականներն էին և կամ դրանցից երբեմն-երբեմն պահպանուած: Այս եղանակով մի որոշ, իրարից ծածուկ մտմբտող դասակարգ էր կազմուել վերատեսչի նպատակի դէմ: Գիւղի մէջ նոր ձայն էր ընկել, թէ Քնչ է այդ «երկու բէգի» նպատակը, աջ ու ձախ խօսում, իրար հարց ու փորձ անում ու էլի չէին կարում ճիշտն իմանալ: Վատ տրամադրուած մարդիկը ամեն հարցնողի թուրքերէն առածով էին պատասխանում. «մեր գեղը լաւ մարդ չի գալ, դրանք էլ ուտելու են կելլ», խելքըներդ հաւաքեցէք: Այս միտումները մասամբ բէգի ականջն էր հասել, բայց բան չէր ասել վերատեսչին: Լաւ էր, որ հէնց այս ժամին իշխանների մօտ ամեն ինչ կը պարզուի, որով և ցեցերի սերմած որոմը խոր արմատներ չի բռնիլ միամիտների սրտի մէջ: Բայց... չէ որ Վանի-բէգը նրանց օր առաջ յայտնել էր իրենց նպատակը՝ գործին աւելի թեթեւ ու շուտ ընթացք տալու համար... »

Տէրունց Գիքնի օթախումը քսանից աւելի մարդիկ էին հաւաքուել, երբոր վերատեսուչն ու բէգը ներս մտան.

«Շնորհաւոր պաս, ասացին նրանք, ուրախութեամբ արժանանաք սուրբ յարութեանը որդիքներով, ազգականներով ու բարեկամներով»:

— Ի ուք էլ, դուք էլ...

Նրանք ոտնակախ նստեցին թախտին՝ վառարանից մօտիկ, խնդրելով որ ամենքն էլ նստեն:

Մի փոքր սարից-քօլից խօսելուց յետոյ՝ վերատեսուչը ուղղակի դիմեց բուն խնդրին.

«Տանուտէր, կարծեմ ձեզանից ոչ ով չը գիտէ՝ թէ մենք ուր ենք կելլ»:

— Աղան ջան, վրաբերեց Վերդին, ապրեն Վանի-բէգի ճուտերը, դա մեզ գլխի ա քցել, շատ-քիչ իմանում ենք:

Այս անակնկալ պատասխանից վերատեսուչը շրփոթուածի պէս եղաւ: Նա բեգի երեսին նայեց՝ ցոյց տալու համար թէ ինչի պայմանից շեղուել ու մարդկանց հետ առանձնապէս խօսել է: «Շատ լաւ, ուրեմն բեգը ձեզ յայտնել է մեր նպատակը... Ես և՛ս ասում եմ՝ որ ես հոգևոր իշխան ու թիւնից ուղարկուած մարդ եմ. իմ պաշտօնս հայոց ուսումնարանների թեմական վերատեսչութիւնն է. ուր էլ գտնուեմ՝ պարտական եմ այնտեղ ուսումնարան բաց անել. ուր էլ լինիմ՝ ինձանից ուսումնարանի շունչ պէտք է փչի... Այս մեծ բեռը իմ վզին է և ես պէտք է արդարանամ իմ իշխանաւորի առաջը նրանով՝ որ ամեն զիւղում էլ կանոնաւոր, մինչ օրս չը տեսնուած, ուսումնարաններ բաց անեմ և կըրթուած դաստիարակներ, բարեխիղճ ուսուցիչներ ուղարկեմ մեր գիւղական, խեղճ ու անմխիթար երեխաների համար... »:

Այստեղ վերատեսուչը մի փոքր կանգ առաւ. խ-
կոյն բեգը միջամտեց:

«Քոնիվա, վերատեսչի ասածները խօ իմանում էք:
Ձեր միտն ա, որ դուք առանց մեզ էլ շկօլ էիք սար-
քել, 100-200 երեխայ էր կարգում: Սրանից երևում ա՝
որ էս գեղի մէջ կարգալու՝ սէրը զարթնած ա. միայն
ճանապարհները չէք իմանում՝ թէ ոնց պէտք ա անէք.
որ ձեր շկօլը պողատու ըլի, վարժապետը էն քօսա-
խալՖան չ'ըլի... Այ, մեր հոգևոր վերատեսուչը էդ ա-
մեն պակասութիւնը կը հոգայ: Մենք պէտք ա սրան
խնդրենք, ոտներն ընկնենք, սա ա ձեր ոտն եկել-ձեզ
խնդրում, որ դուք զաբուլ անէք էս գեղումը շկօլ բաց
անենք ձեր տղաթևած երեխանց կարգալու հմար: Էս-
պէս չի, քոնիվա»:

— Ըտէնց ա, աղա ջան, ամա ռահաթը գիտայ,
թէ որ կուզի՝ ես սրտով ուրախ եմ...

— Այ աղէք, ասաց Վերդին, սմարանը լաւ բան ա,
ամա մի սհաթուայ ու մի օրուայ բան չի: Էս խալիբը
հմի առանց էդ էլ հազար կրակ ունեն, թողէք էդ
բանը գարունքին...

— Չէ, չէ, Վերդի-ապեր, գոռաց մի ուրիշը, ես
չեմ ուզում ոնց հմի-ոնց գարունքը...

— Աստօճ սիրէք, թողէք մենք մեր գլխին տղվզող
ճանճերը դէնն անենք, մեր պակասութիւնին կենանք.
Խնչ ա, հմի էլ սմարան... չեմ ուզում...

Սրանից յետոյ էլ միջոց չեղաւ վերատեսչին խօ-
սելու. լսվում էր միայն «չեմ ուզում» խօսքը: Տանու-
տէրը մի քանիսի վրա առ երեսս բարկացաւ որ ուզեն...:
Ընթերցող, դիմում եմ ձեզ. այստեղ դուք երևակայե-

ցէք, թէ ինչ դրուժեան մէջ կ'ընկնէր մեր խեղճ վե-
րատեսուչը: Նրա սրտի մէջ մի կասկած ընկաւ գէպի
միամիտ բեգը: Այս կասկածը աւելի հաստատուեց, երբ
յիշեց և այն՝ որ բեգը իրենց նպատակը առաջուց յայտ-
նել էր այդ մարդկանցը, որով և նախապատրաստել
այսպէս վարուելու, մանաւանդ՝ որ առհասարակ բեգերին
ձեռնտու չէր գիւղական ուսումնարանները: Վերատե-
սուչը գունափոխվեց: Բեզն իսկոյն զգաց ամեն ինչ և
ուզեց տեղն ու տեղն արդարանալ ու գոռաց.

«Քոնիվա»:

— Հրամմէ, աղա:

«Էս ինչ թալակ ես սարքել: Էս ինչ մարդիկ
ես հաւաքել: Իրանք էս գեղի ընչո՞ւմն են... Էս ինչ
շայկա ես կապել ու բերել, որ ձէն տան „չեմ ուզում“:
Ո՛ւր են գեղիդ իշխանները՝ Բեգլարը, Ոսկանը, Վիրապը,
Սարգիսը, մեծ-Միրզէն... Հը՞...»

— Աղա, խի՞ ես կզնվում. պըտզդնիկ օրա,
նրանք եկան ոչ...

Դէ թէգ, էս գեադէնունցը էս սհաթին դուրս ա-
րա՝ կորչին, թէ չէ կաշին կը մաշկեմ...»:

Աղա, ձայն տուեց մինը, գեադա ենք, զորթ ա,
իշխան չենք, ամա թագաւորի խարջատու ենք, մեր
տուրքն—գեօրա խօսում ենք...

«Դէ դուրս, անպիտաններ»-գոռալով Վանի-բեգը
տանուտէրի ձեռնափէտը խլիլն ու նրանց բոլորի դուրս
թռչելը մին եղաւ: Մնացին Միրզէն, Վերդին—տանու-
տէրը:

«Վերկաց, պ. վերատեսուչ, վերկաց գնանք: Տես,
քոնիվա, քու արեւը ոնց կը խաւարի: Թող հալա գայ էն

ա ս լ ա ն Ոսկանը, տես քու դամարը ինչ տեղից ենք կտրում»:

— Արմացքն ա, աղա, որ ինձ վրա չարանում էք: Ես ինչ անեմ: ձեր բանը էլ ա կ ա ն ա, հ ա կ ս են աչքիս վրա չէ կասեն էլ ընէնց...

Վերատեսուչը որ մնացել էր այդ անակնկալ աղմուկից շուտաբար, չգիտէր իր մտքին հաւատալ, թէ իր լըսածին ու տեսածին: Նա անորոշ դրութեամբ տեղիցը կանգնեց. «այս լաւ նշան չի, Վանի-բեգ, ասաց. այս մարդկանց մէջ մի ինչ որ չար ձեռք պտտում ու դժուարացնում է մեր գործը»:

— Ես շուտ կը գտնեմ ու կը կտրեմ այդ ձեռքը: «Դորանով դու ինձ միամտացրած կը լինես»: Նրանք արդէն հեռացել էին աղմկի տեղից:

Ի Գ.

«ՂՈՇՈՒՆ-ՂՈՇՈՒՆԻ» ԿԱՄ «ՇԱՀ-ՇԱՀԻ»:

Մեր տաքարիւն երիտասարդները պայմանադիր լինելուց յետոյ գնացին ու իրանց մէջ չ ո փ քցեցին, չ ո փ ը ն ը նկաւ մէկի՝ որին և ընդունեցին թագաւոր: Նրանք Գիւլջահանանց կալի ձիւնը յետ յետ էին արել, տրորել, կիտորել ու այդտեղը նշանակել թագաւորանիստ տեղ: Թագաւորի հագուստը շինծու էր: Նրա գլխին մի քառանկիւնի թագաձև փ ո ս տ էր դրած, փորը ուռցրած, կուրծքը, ուսերքը գարդարած զանազան ձևի գունաւոր կտորներէից: Վերարկուն կասես խախամբաշու ա բ ա

լինէր, որ ճարել էին մէկ չարչի թափառական հրէայից: Նրա ոտից մինչև գլուխը կպցրած էր գունաւոր թըղթեայ խաչեր ու մէնդալներ... Այսպէս, մի ծիծաղաշարժ, բայց և այնպէս խորհրդաւոր մարդ-նստել էր օրական թագաւորի գահին: Նրա առաջին դրած էր մի սեղան, որի վրա դարսած էր ինչ ինչ թղթեր, խաչեր, մենդալներ... Թագաւորական պալատը կալապանն էր, որի կտրին ցցած էր մի շատ երկար ձ ո ղ ի ծայրին բանդ արած կանաչ ու կարմիր աղուխ, որին քամին փռւապնում էր: Այս նրա ազատ դրոշակն էր: Թագաւորն ունէր իր թիկնապահներն ու ազատախօս թարգմանները: Մարդկանց դատը նա ինքն էր վճռում, յանցաւորին մէկ կողմէից մինչև քսան կողմէի տուգանքի ենթարկում: Մինը, միւսը գիտութեամբ գալիս էին ու սուտ-սուտ զանգատ անում որ և է հարուստից. նա իսկոյն բերել էր տալիս վերջինին ու վճռում, որ պէտք է 5-10 կողմէի փող վճարէ. ապա թէ ազատ է: Գանձապահն առանձին էր նշանակած որ արքունի դանձր ստանում և անկորուստ պահում էր:

Եւ որքան ուրախալի էր նա և տեսնել, թէ ինչպէս մի բուռը զօրք կարգով ու սարքով կանգնած է կալումը, իւրաքանչիւրի ձեռքին մի մի դազանակ. այդ էլ հրացանների տեղն էր: Մեծաւորի հրամանով, զօրքը վախա-վախտ խաղում էր, կամաց շարժվելով կեռ ու մեռ պտոյտներ կազմելով, մէկ կանգնում էր յետնայում, մէկ թեքվում՝ կռանում, հրացանները դարդկում: «Գը ուս» ձայն տալիս, ապա վեր թռչում երկու առաջ՝ մին յետ, երկու յետ՝ մին առաջ. ոստումներ, աւնում, գոռում «ա պ ը ի մ ե ղ թ ա դ ա փ ո ջ ը ր ք և

դարձեալ առաջուայ պէս կանգնում, լուում: Այս շարժման միջոցին շատերը շարժվում, իրանց տեղից ընկնում ու կրկին տեղաւորվում էին: Գիւղի մեծ ու փոքրը այս աննման խաղին թամաշա էր անում՝ որը հեռուից-որը մօտից: Չորս կտրիճ տղայք էլ գիւղի մէջն ընկած՝ անդադար մարդիկ էին որսում ու բերում, որ թագաւորի խարջ ու բեգաւոր վճարի...

Երբոր վերատեսուչն ու բեգը տանուտէրի ժողովից վրդոված դուրս եկան, մի փոքր գնացին թէ չէ՝ բեգը ոտը կախ քցեց ու ասաց. «տես, բարեկամ, մեր տղերքը «թագաւորի» են խաղում. հրէ բայրաղը, զոշուներ...»: Վերատեսուչը հետաքրքրուեց այդ խաղով. նա այնպէս յափշտակած նայեց այդ տեսարանին, որ կարծես մոռացաւ մի քանի րոպէ առաջ իր վրդովմունքը: — Ի՞նչպէս, բեգ, փոքրերն են խաղում, թէ մեծերը...

«Այստեղից էլ երևում է. բոլորը մեծ, երիտասարդ տղէք են»:

Երկուսն էլ մնացին կանգնած՝ նայելիս: Վերատեսուչի համար այդ նոր խաղ էր: Նա երբէք չէր կարծի՝ թէ գիւղացիք «զօրք-զօրքի» խաղունեն: Նրա հետաքրքրութիւնը աւելի շատացաւ և նա յիշելով հայոց պատմական անկախ կեանքը՝ հազար ու մի բան երևակայեց.

«Այ ժամանակ, մըմնջաց նա, կնուլ տուիր հայի անկախութիւնը, ամեն քաղաքական ուժ ու զօրութիւնը և այսօր նրա պատկերի լոկ ստուերն ենք տեսնում,

չոր կմախքը տեսնում... Ուր թէ կրկին կենդանարար զօրութիւն տիրէր մեր աշխարհին...»

Երկու չոմբախաւոր երիտասարդ փէյնի տակիցը յանկարծ դուրս եկան բեգերի առաջը:

«Աղա, ասաց մէկը. թագաւորը ձեզ կանչում ա»:

— Ի՞նչ թագաւոր, հարցրեց վերատեսուչը անմեղութեամբ:

«Մեր թագաւորն էլի. հրէն հա...»:

— Դրան ո՞վ ա թագաւոր շինել:

Ո՞վ... էն Աստօձք»:

— Լաւ, բա դուք ո՞վ էք:

«Մենք էլ թագաւորի նազիր-վեզիրն ենք: Տեսնում էք դոշներիս պլստրատին տվող մէնդալներին...»

Երկուսն էլ ժպտացին ու գնացին դէպի թագաւորը:

Բեգերին տանող տղերքը անչափ ուրախ էին՝ որ լաւ որսեր էին ճանգել, որոնք թագաւորի խարջ ու բեգաւոր առատ կը վճարէին: Այս բանը բեգը վերատեսուչին հասկացրեց: Երբոր մօտեցան՝ ողջունեցին թագաւորին, օրհնեցին նրա «օրտկան թախտը» և ապա վերատեսուչը հանեց երկու մանէթ թուղթ փող՝ դրեց գանձապեախ առաջն ասելով— «այս էլ մեր երկսիտ խարջը»: Թագաւորը փքուեց, բեղիւրը սրեց, գլուխը բարձր ու քաջ արեց՝ տեսնելով երկու մանէթը:

«Ո՛նց ա ձեր կուռք. չարութիւն, գողութիւն, սով խօ չկայ»—հարցրեց նա հպարտութեամբ:

—Չէ, թագաւորն ապրած կենայ, պատասխանեց բեգը խոնարհ շարժմունքով, մեր աշխարհը շատ խաւաղ ա, ամեն բան բոլ ա: Միայն դու էլի մի պակասեցնի քու ռահմը...

«Ո՞նց են դատամէրները, արդար-հալալ վճիռներ են անում, թէ կաշառքներ առնելով ռահաթին նեղացնում են...»

—Առանց կաշառքի մեր աշխարհումը շառ չեն կտրում. ամա էլի հալալ դատամէրներ շատ կան... Պէտք ա մի քանսին պատժես, որ ուրիշներն էլ խրատուեն...

—Լաւ, էդ ես գիտեմ: Ես էս դարունք պէտք ա երկիրս պտտեմ, էն վախտը միքանխին ռոգգոռ ու ծեպլու տակին կը չորացնեմ»: Այս խօսքից յետոյ նա գլուխը քցեց:

«Հմի մուքախաս էք» —ասացին թարգմանները՝ նրանց դռնից կախելով մի մի թղթեայ խաչ ու մէնդալ: Իսկոյն զօրքը գոռաց. հէյ հայ...

Այժմ հեռու կանգնած, զօրքին նայելով, մտածմանց միջում տատանվում էր մեր վերատեսուչը և ասես թէ չէր լսում իր ընկօր խօսքը-ախր ցուրտ ա, գնանք, ինչ որ տեսանք՝ մեզ բաւական ա: «Գիտես, բեգ, թէ քանի՜ այսպիսի երիտասարդներ, որոնք կարող էին լինել երևելի աշխարհակալ, իմաստուն կառավար և քաջ զօրապետ կրթութեան շնորհիւ, մեր խա-

ւար, աչքից ընկած ու խեղճ աշխարհում կորչում, փչանում են... Ե՞րբ պէտք է վերացականութիւնից դառնան դէպ իրական կեանքը մեր մոլի ազգասէրները և այսպիսի ժողովրդի մէջ ժողովրդական ուսում ու կրթութիւն տարածեն...»

Նրանք էլ չերևացին:

Անցաւ միջոց: Երևի «օրական թագաւորի» վաղճանը մօտ էր: Նա աւելի խստապահանջ եղաւ ու կրկնակի պահանջներ արեց ռահաթից: Ներքի թաղի զօրաւոր իշխանները յայտնապէս ապստամբուելով՝ ստիպեցին թագաւորին բաւականանալ օրինաւոր հարկառութեամբ:

Այս ներքին խռովութեան միջոցին երկու զինուոր յայտնուեցին ասելով.

—Թագաւորն ապրած ըլի, քու բարեկամ Շահը քեզ վրա կռիւ ա գալիս մեծ դռունով:

«Ի՞նչ»:

—Հրէ աշխարհիդ մի կուռն էլ քար ու քանդ ա անում:

Այս գուժը թագաւորին դարհուրանքի մէջ քցեց ու նա մտքի տուեն ընկաւ շինծու դրութեամբ:

Խորհրդականների վճռով, մի աստիճանաւոր մի գունդ զօրքով առաջ խաղաց ընդդիմադրելու Շահի աւերմունքին:

Եւ ահա, մի ըոպէից յետոյ էլ՝ մի արագավազ վասակ ցից արած ձողին-գրոշակը փախցրեց, ծիտ դառաւ, թռաւ:

«Տարան, բայրաղը փախցրի՛ն...» բղաւեցին երեխերքը: Մնացած զօրքը ընկաւ տանողի լետեկց: Գրոշակը շատ հեռու կանաչ ու կարմրին էր տալիս:

Այժմ ընկճեալ թագաւորը բարկութիւնից չիբուխ էր քաշում ու թանձր ծուխը փորն ածում. նա լուրի-մնջիկ աթոռին նստել ու էլ չէր նայում չորս կողմին... Երբոր տեսաւ՝ ոչ գրոշակը լետ բերին, ոչ զօրքը լետ եկաւ, մտածեց. «Հմի թշնամիս կը գայ ու ինձ էլ կենդանի կը բռնի, կը չարչարի, սրի կերակուր կը շինի. լաւ ա՛ որ ես իմ ձեռքովը մեռնեմ ու գլուխս էն անօրէնին չը տամ: Մտնեմ պալատս, էնտեղ իմ վճիռը անեմ»: Նա մտաւ կալապանը և այլ ևս այնտեղից դուրս չ'եկաւ. այնտեղ սուտամեռնուկ էր տուել...

Զօրքը շուտ վերադարձաւ. լետ բերեց գրոշակը և իր հետ երեկուտան քեօսա-գեալ դուռն, բայց թագաւորն իր տեղը չէր, նա կորել էր...

«Թագաւորն ո՛ւր ա»-հարցրեց զօրապետը գանձապետից:

—Նա ահ ու երկիւղից կեանքը ձեզ բաշխեց. մտաւ պալատը՝ ինքն իրան դեղ խմեց ու արեւը երկրին թողաց... Ես շատ աղաչեցի՝ որ նա էդ բանը չանի, ամա չը լսեց, ուզեց ինձ էլ թրով տալ, ես դուրս փախայ...

Զօրապետն այս լուրը ստուգելուց լետոյ, խնդրեց խորհրդականներին Շահի վճիռը կարդալ: «Շահի երեսը մուր քսել, նստեցնել սև իշի վրա ու ամեն տեղ տնէտուռն ման ածել, ամեն տանից լորի, ձաւար,

պասուայ կերակուրներ, խմիչքներ ու փող հաւաքել:

Վերջը հաւաքածն էլ, Շահին էլ բերել Վիտի-տիսանց տուռն-մեզ մօտ»:

Էջը վաղուց բերել, պատրաստ պահում էին: Թամաշաւորները ընկան իշին նստած Շահի լետեկց: Խորհրդականները մտան կալապանը և մի կախարդական գաւազանի հարուածով կենդանացրին՝ մեռած թագաւորին:

Հաւաքած փողերը նրանք երեկոյան բաժանեցին Իրար մէջ-մեծին մեծ՝ փողքին փոքր մասը տալով:

Այսպէս անցաւ, սիրելիս, պաս-երկուշաբթին էլ...

ԻԵ.

ՄԻ ՍՈՒՐ ՊԱՏԱՍԻԱՆ. ՎԵՐԱՏԵՍՉԻ ԻՐԱՒԱՆՑ
ՍԱՀՄԱՆԸ. ՏԵՐ ՀՕՐ ՀԱՄՈՁՄՈՒՆՔԸ:

Գիւղացին մտաւ իր դերի մէջ. նա էլ այն է՝ ինչ որ էր երկու օր առաջ: «Նարաբ կարամ քիւլփաթս գա-քունքահան անել առանց պարտք անելու» — ահա՛ նրա մտածմունքը:

Այսուհետև էլ պարապ մարդ չէք գտնի՝ գիւղա-միջում լկուհա չի տալիս: Ամեն մարդ՝ ինչպէս էլ լինի՝ իր կարիքները պէտք է հոգայ: Իսկ ծերունիքը, ոքոնք փոքրիկ երեխայի պէս միշտ տանն են մնում, պէտք է մի աժամ կենան, օրը երեք անգամ եկեղեցի

գնան ու շարունակ «տէր ողորմեա-տէր լիշեա» կրկնեն: Նրանց միխթարութիւնն էլ այդ է:

Վերատեսուչը գիտէր՝ որ եթէ այս երկու օրս էլ ուսումնարանի խնդիրը չը լուծուի, այնուհետև բանք աւելի կը ծանրանայ և պէտք է սպասէր մինչև կիւրակէ, որ այդ օրերում միայն գիւղացիք հաւաք կլինեն: Բայց այդքան ուշանալ ոչ ինքը կարող էր և ոչ բեգը: Սրան սպասում էին իր տանըցիք և իր պաշտօնական ծառայութիւնը մնում էր անգործավար: Իսկ վերատեսչին սպասում էին իր թեմի այն միւս գաւառները, որոնք «վերատեսուչ» խօսքը լսելով ոչ թէ մարդ կարող էին երևակայել, այլ՝ սատանան գիտէ՝ թէ Խնչպիսի ջանաւար... Սյդ աստիճան յետադէմ ու բաղդից կալ ու կապ փաթաթանի բացումը վիճակուել էր այս մարդին-վերատեսչին, որն իր եզական գործունէութեամբ, անձնական քաջութեամբ և առաքելական համբերութեամբ պէտք է կակղացնէր հայ ժողովրդի ապառաժ դարձած մամուկալած սիրտը, խղելով այն շղթան՝ որին կռել է դարաւոր տգիտութեան նպաստող ձեռքը... Նա պէտք է այդ ապառաժը ծրէր, փուշ ու տատասկը, քար ու քոլը մաքրէր, ակոս բաց անէր, կարող տեղում սերմը քցէր և իր ապագայ յաջորդին կենդանի օրինակ տալով ասէր. «ահա ես և մանկունք իմ... Սյս խոպան երկիրը ես կիսամշակ թողնում եմ քեզ, խնդրելով, որ դու էլ իմ օրինակին հետևես, պակասը լրացնես, ընթերցող մանուկների թիւը եռապատկես ու տասնապատկես...» Այո՛, բարի մարդ, դու այդպէս կը խրախուսէիր, դէպի գործ կը հրաւիրէիր. բայց տեսնում ենք՝ որ ժամանակակից գործողների յաջորդները ոչ թէ գործը վեհանձնութեամբ

շարունակում են, պակաս-պըռատը խոհեմութեամբ ուղղում, այլ... արհամարհանքով են նայում իրանցից առաջ կատարուած գործերի վրա, ինչքան էլ վերջիններս հոյակապ, հաստատուն և արդիւնաւոր լինէին, և փոխանակ յօնքը շտկելու՝ աչքն էլ հանում են... Սյս տեսութիւնը՝ մանրամասնութեամբ թողնենք մեր միւս երկասիրութեան, մօտենանք խնդրին:

Մութն աշխարհքը պատել էր, գիւղին գերեզմանական լուութիւնը տիրել: Սյս երեկոյ գիւղացիք աւելի շուտ քնեցին. նրանք շարունակ խաղալուց ու ուրախութիւն անելուց դադարել էին: Տէր Պողոսանք էլ վաղուց քնած կը լինէին, միայն «հիւրերի» պատուի համար զարթուն էին մնացել: Բեգը ժամհարին ուղարկել էր մահտեսի Վիրապին իրանց մօտ կանչելու: Որովհետև Վիրապը գիւղի իշխաններից ծերն էր, պատկառելին և ամենահարուստը, ունէր քսան-երեսուն ազգական տներ, որոնց համար նրա խօսքը սուրբ էր, այս պատճառաւ պէտք էր կանխաւ նրան համոզել և խնդրել, որ աջակցի ուսումնարանի հիմնարկութեան գործին: Ժամհարը վերադարձաւ ու այսպէս ասեց.

«Աղա՛ ջան, մուղղսին ասեց—ես քոխվէն չեմ, որ ծակերին հոտ ունելով պտիտ-պտիտն ընկնեմ: Ես կնիկ չեմ՝ որ էլական գործի հմար ծակերումը խօսամ: Իմ տեղը գեղամէջն ա, մէյդանն ա, խալխի մէջն ա: Իմ ճակատը ծակերումը խաւար ա, մէյդանում՝ պալ-ծառ: Ես սևերես մարդ չեմ: Էդ աղէքը որ գիտէին՝ առանց ծերի բան չեն շինելու, խի՛ նոր են տեղակում:

Ես ամեն բան էլ իմացել- պռծել եմ: Թէ դրանք իմ իմացած բանի հմար են կանչում, թող դաւթարխանէն դան ու կանչեն, թէ ուրիշ բան ա, ասեց Շահ մանու- իստէր՝ տ ա ն ձ ե ա գեալսն...»

— Աֆէրըմ ժամհար, ո՞նց ես էդ քարոզը մտիդ պահել, վրաբերեց տէրտէրը պարզամտութեամբ:

— Մէնակ խօ էդքան բան չասեց, շատ բան. ես անշաղ էդ մտիս պահեցի:

«Վանի-բեգ, ինչի լուեցիր, նկատեց վերատեսուչը. նա որ այդպէս համարձակ պատասխանել է, ինչ բարիք կարելի է սպասել նրանից»:

— Էքուցուանից պէտք ա զօւ գործ դնենք. իրանց կամքով բան չի շինուիլ: Սկի թագաւորական խարջ ու բեգաւոր իրանց կամքով չեն տալիս, մինչև որ էն օր- հնուած եսաւուլը զամշի ու մաթրախի տակ չի քցում...»

— Ախր զօւով որ սկսէք, ուրիշն էլ զօւ կունենայ, ասաց տէրտէրը. դուք խօ թագաւորական ղուլլուղի մարդիկ չէք, որ եսաւուլի մաթրախիցը մեծին ու պու- ճուրին պաշել տաք ու հաստ-իշականջ գլուխները կուաց- նէք. Քրիստոսն ասեց Պետրոս առաքեալին— «սուրդ տեղը դիր, թէ ոչ՝ սրով կ'ընկնենք». էս խօսքը մտա- հան էք արե՛լ...»

«Մենք ուժի բան չունենք. կրկնեց վերատեսուչը. առանց հասարակութեան կամքի ուօգ- նութեան էլ ես կարող եմ ուսումնարան բաց անել եկեղեցու գաւիթում: Այս իմ իրաւանց սահմանն է:

— Ի՞նչպէս...

«Ահա ինչպէս: Տէր հօր ասելով, եկեղեցին ունի 500

մանէթ դրամազլուխ, որի գործադրութեան իրաւունքը հոգևոր իշխանութեան ձեռքին է: Այդ դրամազլուխ տոկոսը, նոյնպէս և մօտիկ ուխտատեղիների արդիւնքը, որ երկուսը միասին կը գոյացնէ առ նուազն 200 մա- նէթ տարեկան, այդ կը յատկացնեմ ուսումնարանին: Յետոյ իւրաքանչիւր կարող աշակերտից տարեկան չորս մանէթ կառնուի, որից և գուցէ յիսուն մանէթից աւելի կը գոյանայ: Այսքան գումարը առ ժամս բաւական է մի փոքրիկ ուսումնարան պահելու համար: Եթէ ես այս միջոցին դիմեմ, ասացէք, ինչ կ'անէ ժողովուրդը...»:

— Ոչինչ, վրաբերեց տէրտէրը, միայն եկեղեցու փողը ախր կորածի պէս ա. մի թուման մէկի վրա ա, երեք թուման մէկի, ըսէնց ցաք ու ցրիւ արած ա: Սկի ոչ հետևող կայ էդ փողին, ոչ էլ սանաթները նորոգ: Ում ձեռքն էլ ընկել ա, հէնց գիտեն իրանցն ա՝ հոգու պարտք չի, սո՛ւս ու փուս կան...»

«Այդ ոչինչ. իշխանութիւնը ամեն մէկից դատաս- տանով կը պահանջի:»

— Միայն 200 մանէթով ինչ վարժապետ կը գայ էս գեղը, ասաց բեգը, որ խալֆիցը շատ բան գիտենայ:

«Հիանալի՜ ու գարմանալի վարժապետ կը զար- կեմ... Եթէ ուղիղ դատենք, մեր մի վարժապետի տա- րեկանը 1000 մանէթից էլ աւելի արժէ, բայց մ.օ.դ. ա ն ուրիշ կերպ է, խնդիրը փողումը չը, այլ հայասի- րութեան մէջ է: Տէրտէրն է՝ որ խուսափում, սրտով չի կայջում մեզ և մինչ օրս էլ չի կարողացել ժողո- վրդին ուսումնասիրութեան ճաշակ տալ... Սա կար- ծես մեր նպատակին դէմ լինի: Այս կարծիքը ինձ տալիս է իր սառնասրտութիւնը դէպի մեր նպատակն ու...»:

— Որդիք, խօսքը շուտ կտրեց նա, ձեր միտն ա՛ որ ես ձեզ ասեցի՝ իմ հացին ձեռը չը տաք, ինչ ուզում էք արէք՝ ես էլ կ'օգնեմ: Ախր ձեր ուզած բանը որ կատարուի, համ իմ մօնթերը պէտք ա ինձանից դուրս գան— թագա ուսումնարանը գնան, համ էլ գեղիս սրբատեղերից տարէնը մի քանի շալի ա գալիս՝ ընդուրից պէտք ա զրկուեմ: Դէ ձեզ եմ սոււմ, ես իմ ձեռովը ինձ վնաս տամ...

— Բա քու օգուտի խաթէր էս գեղումը շօլ չպէտք ա բաց անենք, բարկացած խօսեց բեգը. ուրիշ գեղերում տէրտէրներն իրանք են աղաչանք, պաղատանք անում՝ որ շօլ ունենան, գեղի աչքը բացուի, իրանց լաւ ու վատը ճանաչեն... ըստեղ դու ուզում ես խափանել... Ես հէնց գիտէի, որ մինը մատն ա խառնում մեր գործին, այ, աշկարա երևում ա, որ սա ա մեր բանը քանդում ու իրան ընէնց ա պահում, որ մենք գլխի չընկնենք...

«Ես չեմ հաւատում. տէրտէրը բան քանդող մարդ չի երևում. միայն ուզում է այնպէս անել, որ իրան վնաս չը հասնի»:

— Զէնց էդ ա միտքս, կ'որգս վկայ:

«Բայց դուք միամիտ մնացէք, որ ձեր օրինաւոր հասոյթներէից մազի չոփ անգամ չի պակասիլ»:

— Եանի որ պակասի՝ թնչ կ'ըլի. վրաբերեց բեգը. մինչև մարդ իրան վնաս չտայ՝ չի կարող մէկին օգնել: Առաջ պէտք ա տէրտէրը իրան վնաս տայ, յետոյ մէկէլները: Տէրտէրը ուրիշների հիւրն պէտք ա ըլի՝ իմացար...

— Իմացար, կրկնեց ծաղրածութեամբ տէրտէրը.

եւ իմացայ թող քառը չ'իմանայ: Դու հէնց ինձ հետ ընկել ես...

«Տէր հայր, ինչի էք նեղանում բեգի խօսքերից: Ես ևս նոյնն եմ կրկնում՝ որ քահանան պէտք է ժողովրդի համար առաքինութեան հայելին լինի: Ժամ էք ասում, կնոււնք անում, մեռել թաղում, տուն ու գերեզման օրհնում... կարծում էք այդ է միայն ձեր պարտքը... Զեր վարք ու բարքը օրինակելի պէտք է լինի ժողովրդի համար, ապա թէ դուք էլ ձեր կշիռը պահած կըլինէք, ձեր յարգ ու պատիւը աւելացած: Զեր խօսքը խրատ ու յորդոր պէտք է լինի: Դուք պէտք է առաջնորդէք ժողովրդին դէպի հալալ աշխատանքը, առաքինութիւն ու ուսումնասիրութիւնը: Ինչի այժմ ժողովուրդը այնպէս չէ տրամադրուած, որ մեր ուղած ազգօգուտ գործին իսկոյն կպչի ու չը ինայի իր լուման... Եթէ աւելի պահանջելու լինինք, ահա ինչ կ'ասենք: Դուք ձեզ մշտապէս հաւատացած ժողովրդի համար պէտք է լինէք խորհրատու հայր, անաչառ հաշուետես, ուսուցիչ, քարոզիչ, մխիթարիչ, բժիշկ, հրապարակախօս, գիւղատնտես, քաջ հովիւ և այն ամենը՝ ինչ որ նպաստում էր նրա բարօրութեանը: Դուք պէտք է սովորեցնէք ժողովրդին հայրենասիրութիւն, Աստուածաշտուութիւն, բարոյականութիւն... այն, սուրբ է և պաշտելի այս դառը ժամանակում այն քահանան, որ մեր ակնարկած մարդն է: Հիմիկուան քահանայքը, տէրտէր, «թուղթը շուռ տուր-արասին կուլ տուր» միայն գիտեն. և ժողովուրդը չ'ունելով մի ուրիշ բարեխիղճ առաջնորդող, հետզհետէ խղճացել, ընկել ու թշուառացել է: Ահա թէ ինչի մեր ճանա-

պարհն էլ այժմ այս աստիճան փշոտ է...»

— Որդի՛, էդ բոլորը լաւ ես ասում. ամա մի առակ կայ. ասում ա՛րջին տարան կալը լծելու, հօ-հօ-հօ-արին, ասեց, էն անկաջը քառանայ՝ թէ էդ ձէնը լսած ըլի: Հմի դրուստ մեր բանն ա. քառանամ թէ ուրիշ վախտ էլ յաջորդից, վարդապետից ան բեզից լսած ըլեմ էդ խօսքերը: Ձենք լսել, չենք էլ սովորել ու մնացել ենք մուլթը, ոնց որ մեր ժողովուրդը: Ասում ա՛ ինչ խռիկը, ինչ պռիկը, ինչ տէրտէրն ու իր կնիկը... Գիտէք հիմի ոնց ա. փողը ծլընգ, կարգը տլընգ ա... փող տուր՝ քօսա-խալֆին տանեմ՝ տէրտէր շինել տամ... էլ ես եմ ամենի աչքը. ինչանից լաւի տեղը գիտե՛ս, Վանի բեգ, մեր մհալումը...

— Քու լաւութիւնը չեմ տեսել, երբոր կը տեսնեմ՝ կ'ասեմ, որ շատ լաւն ես: Ամա հմի իմ աչքումը դու խառնակող, նար ու շատ անող մարդ ես երևում...

Սյդ խօսքը տէր հօր սրտին դիպաւ. նա տեղիցը կանգնեց ու համեստութեամբ պատասխանեց. — Ես խառնակող մարդ չեմ, Վանի բեգ. մեր ազգի միջին խառնակողն ու իրար քսողը դու ես, մենակ դու... Խօսքդ ու լաղաբդ շները կերել են... էս զարիբ մարդը, տեսար, ինչ սիրուն խօսեց, քէփս բաց արեց, ամա դու... դու գողումս նստել՝ միրուքս փէտում ես...

«Սպասիր, տէր հայր, երբ որ տեսաւ տէրտէրը խռոված դուրս է գնում՝ տեղիցը կանգնելով ձայն տուեց վերատեսուչը, սպասիր...»

— Գալիս եմ որդի, դու մի նեղանալ, ասաց նա շէմքումը կանգնած, ինչ էլ որ ըլի, ես իմ ձեռովը ինչ վնաս չեմ տալ. ձեր բանի մէջն էլ սկի չեմ

խառնուելի, ինչ ուզում էք՝ արէք... Աստօճ տայ, որ հէնց էքուց կարենաք ուսումնարանը բաց անիլ... Սյսպէս խօսելով դուրս գնաց, երևի՛ կիրքը մեղմացնելու նպատակով:



Չարմանում եմ, ճշմարիտ, թէ այսքան խօսելուց յետոյ ինչպէս տէրտէրն էլի մնաց յամառ...»:

— Ախր ես դրա միտքն լաւ եմ իմանում, պ. վերատեսուչ, դրան լաւ հմ ճանաչում. մարդ իր հօրեղբօրը չճանաչի... Դա շատ մեծասիրտ, ինքնահաւան, շահասէր ու թամբալ մարդ ա, ձեռովն էլ մի բան չի գալ ո՛չ լաւ, ո՛չ վատ... Հէնց դարդակ լիզուն ա փրփրտում...:

«Վնաս չունի. դա էլ շատերի հետ»-մտմտաց վերատեսուչը, որի աչքում այդ ամենը մի տեսակ շինծու խաբեբայութիւն էր երևում և որի կասկածը ուղղակի բեզի վրա էր, բայց լռութեամբ սպասում էր իրական փաստերի: Հանգամանքն էլ նպաստում էր այդ կասկածի հաստատուելուն:

Տէրտէրը հազալով էլի ներս մտաւ. Հը, ձայն հանեց բեզը, ինչանից խռովեցի՛ր, ման գ գ ի լ ը չուանց ո՛րտեղ էր...:

— Ես կեանքումս իսանից խռոված չեմ. ես համբերող եմ. «ով համբերիցէ՛ իսպառ նա կեցցէ»: Իմը իմ աղօթքն ա. դուք ձերն արէք՝ ես իմը, տեսնենք վերջը ո՛վ արքայութիւն կը գնայ: Ոնց որ դուք իմ ժամ ասելումը չէք խառնվում, ընէնց էլ ես ձեզ

ոչ պէտք ասօզնեմ, ոչ վնաս տամ. միայն զրադիցը թամաշա անեմ...

— Զրադիցը թամաշա անես ու մեր բանին քար շպուտես...

— Աստուած մի արասցէ. բանը թաքուն չի մնալ, էդ էլ կը յայտնուի ու եզնա իրեսիս թքեցէք...

«Եղբայր, վերջապէս մէջ ընկաւ վերատեսուէր. ինչ էք կռւում, կամ ինչ բան ունէք կռուի... Պէտք է շնորհակալ լինէք՝ որ տէրտէրը մեզ յարգում, պատվում ու հիւրասիրում է իր տանը, այլապէս՝ սա ինչ պարտական է մեզ...»:

— Էս տունը մեր պապինն աս, տէրտէրինը չէ. ես էլ էս տան ժառանգն եմ: Իմ գլուխը վեր չի ունում՝ որ տէրտէրը մեզ հակառակ աս...

— Ինչ էլ ասել եմ, Վանի բեգ, էն եմ, ինչ մի ուրտ ղ ո շ ու ն ը չի կարող փոխիլ...

Սրանց բարձրաձայն խօսելը նանը լսեց ու միջի օթախիցը փսփսալէ դուրս եկաւ. «Քիչ գլխահան ըլէք խալխի լակոտների խաթեր. նրանք ձեզ հաց ու ջուր չեն դառնայ. վեր կացէք, քնելու ժամն անց աս, քնեցէք, դինջացէք: Հաւերն էլ մեղք են, ձեր ձէնիցը քնում չեն...

— Էս ես, ասաց տէրտէրը դէպի տեղաշորը գնալով:

— Էս էլ մե՛նք...

Ի. 2.

ԵՐԿՈՒ ՀՍ.ԿԱՌԱԿ ՈՒԺԵՐ:

Գիւղացիք ինչպէս շուտ քնում, նոյնպէս էլ շուտ զարթնում են:

Արշալոյսը նոր բացուելիս տանուտէրին դուք միշտ կը գտնէք Բաքոսի տաճարում, որտեղից նա «իւրալիններով» դաւթարխանի կողմն է քաշվում, աչքերը չըռած՝ որսի սպասում... Այս առաւօտ նա տէրտէրին պատահեց եկեղեցու մօտ: Տէրտէրը գնում էր ժամ ասելու:

«Չմտի քոխվա, ասաց նա առաջ գնալով, իրիկունը շատ դալմադալ արի բեգերի հետ: Իրանք ուզում են էս գեղումը ուսումնարան բաց անեն, որ ինչքան օգուտ ունի, երկու էնքան էլ վնաս: Ես նրանց ասացի՝ ձեզ ոչ կ'օգնեմ, ոչ էլ վնաս կը տամ: Հմիկանց եղև դուք գիտէք: Չեմ ասում խառնի-խառնի արէք. առաջ վնասն իմացէք, էնու գորա խօսեցէք: Ես լսել եմ, որ դու ուհաթի վրա ես քցել. խալխն ինչ գի-

տեն էդ ղայդի բանի լաւն ու վատը: Դուք պէտք ա
աչքաբաց կենաք, իմ վնասն էլ իմանաք...»: //

Տէրտէր ջան, ես էլ քեզ պէս: Ո՛նց կ'ուզենք գե-
ղի վնասը: Մեզ ասողը-ասել, խրատողը-խրատել, պոճել
ա: Դու արխէին կաց...

«Որ ըտէնց ա՛ օրհնեալ լինիս»-առաց տէրտէրն
ու մտաւ եկեղեցին: Տանուտէրն էլ եկեղեցու դռնից էլ
համբուրեց ու յետ դարձաւ դէպի գինետուն:

Անցաւ միջոց:

Լոյսը բացուելուն պէս՝ գզիրը դաւթարխանի դու-
ռը բաց արեց, վառարանը վառեց ու սպասում էր իր
մեծերին: Սրանք էլ ահա գալիս են...

Մի քանի գանգատաւորներ սպասում էին տանու-
տէրին: Սա երբոր մօտեցաւ, գոռաց. «Գնացէք, էսօր
շառ կտրելու օր չի. վախտը որ կըլի՝ ես ձեզ իմաց
կանեմ»:

— Գո՛խվա, ախր էսքան չեն չարչարիլ: Սաղ մզ
տարի ա՛ գնում-դալիս ենք, աղաչում-պաղատում ենք.
ան մի անգամ հարկ արա-ան թարկ...

«Գզիր, սրանց խռկի, որ էլ էստեղարէնք մօտ չը
գան. մենք խորհուրդ ունենք»-հրամայեց նա ու բո-
լորը միասին ներս մտան, դուռը ներսից փակեցին:

— Դէ, գնացէք, կորէք, գոռաց գզիրը, թէ չէ...

— Զեր տունը, գզիր ջան, էն Ալլահը քանդի հա՛:

Աստօձը մեզ չի լսում, ասաց միւսը այրուած
սրտով. Ալլահ-Բիլլահը ձեզ հըրի տայ, ղահէն...

Այսպէս օրհնելով նրանք հեռացան:

«Գիտէք, աղբէր, ասեց տանուտէրը, տէր Պողո-
սը առաւօտս ինձ պատահեց ու շատ խնդրեց, որ էդ
բեգերի գործը խափանենք: Հալբաթ նա էլ ա Շմալ
բեգիցը գիր ստացել ու ինքն էլ վնաս ունի մէջ տե-
ղը, իրա մոնթերիցն-ու պատիւներիցը կը զրկուի: Հմի
ինչ էք ուզում, մից անենք: Բեգերն ուխտի պէս չօքել
են մեր դռանը: մենք պէտք ա սուս ու փուս դրանց
ճամբա տանք, գնան...»

«Ես ձեզ մի բան ասեմ, խօսեց Վերգին. սկի իմա-
նում էք թէ դրանց գործը մեզ ինչքան վնաս ա:
Ես իրիկունը ինձ ու ինձ հետաք եմ արել, իմացել:
Դրանց զարկած վարժապետը տարէնը 500 մանէթից
պակաս չի գալ էս գեղը. էդ փողը գեղը պէտք ա տայ:
Հմի վարժապետը մեզանից ուզելու ա հաց, շուր, ղուլ-
լուղչի, իրան դոնլուղը ամսէ ամիս... Նրա նազին ով
կարայ դիմանալ: Նա ամեն սհաթ մեզ վրա գանգատ-
ներ ա գրելու՝ թէ Ֆլանը էս արեց, Ֆստանը էս...
Գեղիս ըրեխանցը գեղի օրէնքով չի դաս տալու: Ինքը
պաս պէտք ա ուտի՝ մեր երեխէքն էլ պաս ուտել սո-
վորեն, վերջը՝ մլթոնի դուրս գան... Եդնա կը հրամա-
յեն թէ՛ սմարանի հմար տուն պէտք ա շինէք, էն էլ
քաղքավարի տուն, որ մեզ կը նստի չուանց 1500 մա-
նէթ: Թէ չուանց օրս գեղը մի քոխվա ա ունեցել, հմի
մի չորսն էլ կը դնեն սմարանի կողմի քոխվա: Մեր
ու էս քոխվի դախողը կը կտրեն, սմարանի ըռեխը
կը կախեն...»

— Պա՛ պա՛ պա՛— ձեզ մատաղ, սկի մօտ թողալու
չի, ասաց Միրզէն դարմացած: «Շատ լաւ, տղերք,
մէջ ընկաւ Մակիչը, բա շհարցիք գիժ են, որ մնի

տեղակ երկու-երեք սմարան են պահում՝ իրանց էգ ու որձը կարդացնում: Մենք մեզանից խելօք գործը չը պէտք ա տեսնանք ու էն նմանակին բան բըռնենք...»

— Մեզանից խելօքն էլ Շմալ բեգն ա, վրաբերեց տանուտէրը, նրան չը պէտք ա լսենք...

Բա էս բեգերը Շմալի ղտար խելք չունեն. բա շհարցիք խե են, սարսաղ են, գիժ են... Դո՛ւք գիտէք: Մի ձեռը ծափ չի տալ: Մի ծաղիկով գարունք չի գալ: Ես սուս ու փուս կը մնամ, ինչ ուզում էք՝ արէք...»:

— Մակիչ ջան, ասաց Պետին կեղծաւորութեամբ: շհարի ու գեղի արանքումը սար ու ձոր կայ. Մենք չենք կարա շհարցի դառնալ, նրանք էլ՝ գեղըցի: Ամենն էլ իրա տեղումն ա մարդ: Դու ընտեղ գե ա դ ա ես, ամա ըստեղ իշխան: Մեր պապերի ճամբիցը որ դուրս գանք, փշերի մէջը կխրուենք: Գնանք հալա էս բե- գերին մի հ ա ն գ ո վ ճամբու դնենք, ասենք՝ առաջ էն մէկէլ գեղերումը սմարան բաց արէք, երնա մենք մեզ ու մեզ էլ բաց կանենք...

— Հա... մտմաց տանուտէրը, լաւ պատճառ ա:

— Իէ գնանք, ասաց Վերդին. ամա, Պետի ապեր- դու մեծն ես՝ դու խօսի, մենք էլ դ ա մ դ կը պահենք: Նրանք դուրս գնացին:

Այժմ տեսնենք ինչ բանի են մ ե ը ո ն ք:

Տէր Պողոսը երբոր «եկեսցէ» ասելով իր բանին գնաց, վերատեսուչը-բեգի ասելով-իր լիշատակարանում ցուցակագրեց մինչ քսան իշխանների ազգ-անուններ:

«Հէնց այս առաւօտ ասաց նա, կանչենք այս մարդ- կանց գիւղական ժողովարանը, ուր մեր գործը մի վըճ- ուական ելքի հասցնենք:

— Պէտք ա տանուտէրին մօտ չը թողնել, ասաց բեգը, ժողովրդի ձէնը նրա բերանումը խօ չէ:

«Ո՛չ. տանուտէրը պէտք է լինի. նա իր մարդկան- ցով պէտք է ինձ մօտ նստած լինի. այլապէս՝ դրսից կարող են սրել-սրսրել միամիտներին ու այսպէս ներս ուղարկել: Նրանց հեռացնելով մենք մեր գործին վնա- սած կը լինենք»:

— Ափսոս, որ Ոսկանը գեղումը չի: Նա շատ զար- թուն, ժիր ու բարեգործ տղամարդ ա:

«Ես էլ ափսոսում եմ. բայց միթէ մի Ոսկան չար- ժենք»:

— Մենք մեր, նա իրա տեղն ունի:

«Նա քաղաքում շատ ուշացաւ: Երևի՛ իր գործը յաջողցրել է և սպասում է պրիստաւի հետ միասին գալ»:

— Հէնց ըտէնց էլ կըլի. Չատնի ըռեխը կը շարդի:

«Այժմ դէ դուրս գնանք դէպի ժողովարանը: Միայն խնդրում եմ, բեգ, կրքով չը վարվես մարդկանց հետ, մեղմ ու հանգիստ»:

Սրանք էլ դուրս գնացին:

Երկու հակառակ ուժեր միմեանց դէմ եղան գիւ- ղամիջումը:

— Մենք ձեր կուշտն էինք գալիս, աղա՛, ասաց Պետ- րոսը:

«Մենք ձեզ չէինք սպասում, արհամարհանքով պատասխանեց վերատեսուչը. դուք կարող էիք չը գալ...»

—Սխր մի թեթև գրից ունենք ձեզ հետ...

«Մենք ձեզ հետ զրոյց չունենք: Միայն էլի եկէք մեզ հետ: Ո՞րն է սրանց ժողովարանը, բեգ»:

—Ինչ հետ արի, մօտ է:

Բեգն առաջ ընկաւ: Մարդիկը նրանց յետևից իրար աչքով անելով գնացին: Երբոր ներս մտան ժողովարանը, վերատեսուչը՝ առանց ժամանակ կորցնելու՝ հանեց ծոցիցը իր յիշատակարանը ու կարգաց ցուցակագրած մարդկանց անունները, պատուիրելով տանուտէրին՝ որ խկոյն նրանց կանչեն: Վերջինս հրամայեց գզրին նոյնը՝ մարդկանց անունները տալով: Իրանք բաց անտախտի չոր տախտակների վրա նստոտեցին:

—Աղս, էդ մարդկերանցն սըր ես կանչում, հետաքրքրուեց Պետրոսը:

«Որ իմ հաշիւը այսօր և եթ վերջացնեմ»:

—Քու հաշիւը սմարան բաց անելն ա էլի:

«Հէնց այդ է»:

—Բա չէք ուզում մեր խորհուրդը լսել...

«Ձեր խորհուրդը երեկուան անկարգութիւնն է, որ միքանի յիմարների խաբէք ու բերէք ժողովը. նրանք էլ գողան՝ չենք ուզում. չենք ուզում...: Այս է ձեր խորհուրդը: Դուք էլ չէք կարող մեզ խաբել: Երբոր իմ ուզած մարդիկը կը գան, նրանց մօտ կը լսեմ ձեր խորհուրդը»:

—Սխր էն վախտն էլ մինը երկու կասի, մէկէլը՝ չորս թէ վերջն էլ դուրս կգալ երեկուան անհամութիւնը... Մենք չենք ուզում՝ որ ձեր քէֆին դիպչող ըլի: Որ

լաւութիւն չենք անում, փխութիւն էլ խի՛ անենք: Աստուած ձեզ հետ էլ, մեզ հետ էլ...

«Ի՛նչ ես յիմար յիմար փօսում, մէջ ընկաւ բեգը. պառաւել խելքդ կորցրել ես: Ով կարող է մեզ դիպչի, փխութիւն անի. դու, թէ էս մարդիկը: Քեզ վերատեսուչը հրամայեց, որ ձէնդ կտրի մինչև էն մարդկերանց գալը. դու էլի բլբլում-չես իմանում՝ քնչ ես խօսում...»:

—Ես մեղա Աստծու, աղա շան, իմ խաթէր խի էք նեղանում, ասաց Պետրոսն ու լռեց: Լռեցին և միւսները:

ԻԷ.

Ս.Ո.Ա.ՋԻՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԺՈՂՈՎ.

Շուտով ներս մտան մի քանի հոգի:

—Մեզ ով ա կանչել տուել, հարցրեց մահտեսի Վիրապը:

—Ն'ս, խնդրեմ նստէք, մի փոքր պպասէք»:

Ելի ներս մտան մի քանի հոգի. նրանք էլ նստեցին:

Այսպէս, մի քառորդ ժամում քսան հոգուց աւելի հաւաքուեցին:

Վերջին անգամ գզիրը ներս մտաւ ու ասաց. «Աղս, Խշանց Ոսկանը դժերս շհարիցը եկել ու հէնց շորերով քնած էր: Տանըցիք ասեցին՝ երբոր կը զարթնի՝ կը զարկենք դաւթարխանէն»:

Տանուտէրը սփարթնեց՝ լսելով Ոսկանի գալը. նա աչքի տակով մին Վերդուն էր նայում, մին Միրզին...

«Այդ այն Ոսկանն է, որին ամենքն էլ գովում են» գիտութեամբ հարցրեց վերատեսուչը՝ դիմացի մարդկանց տրամադրութիւնը իմանալու համար:

—Նա ա, աղա ջան, ասացին մի քանիսը. նրա բալէքն ապրեն...

«Այժմ սպասենք Ոսկանի գալու թէ մեր ասելիքն ասենք, վերջացնենք»:

—Աղա, ձեր խօսքը նա լաւ կ'իմանայ, թող նա գայ...

Մահտեսի Վիրասը երեկոյեան այն սուր ապուրանք անողը մինչև հիմա լուռ նայում էր վերատեսուչի ոտին ու գլխին, այժմ սիւստակ միրուքը ամբացնելով լեզու ածեց.

«Ս. խալիսը, դուք ձեզ հողի հետ հաւասարացնում էք էլի: Էսքան մարդըս բա մի Ոսկան չ'աժե՛նք: Ոսկանին մնանք՝ որ նա ինչ ասի՝ քոռի պէս լսենք: Կարելի ա նա մեզ քերծովը վէր ածեց. եղնա: Ղորթ ա, ասած ա, մինը կայ՝ հազար աժի, հազարը կայ՝ մին չ'աժի, ամա մենք ոչ էն հազարիցն ենք, ոչ էլ Ոսկանը էն մնեցր: Ի՞նչ էն մինն ու հազարը Երուսաղէմումը տեսայ: Սղա պարոն, ցրանք ըտլորն էլ կեղծաւորութիւն են անում: Ղորթ ա, Ոսկանը ջիգարով, սըրտով ու աչքաբայ տղամարդ ա, ամա էլի էս ծէրին չի հասնիլ... Այ, հմի կ'իմանանք նրա արարմունքը: Նա էս քոխիլի հոգիառն ա դառել, գնացել Գեանջա՝ գանգատներ տուել, ամա տեսնենք՝ կարո՞ւմ ա՝ սրա հոգին առնել: Որ առնի էլ՝ սրա հախն ա՛ն ծաւրան շատ ասեցի, այ՝ մարդը՝ զուլլուղը թող, գլխիդ սև ահաւ ա սլտում, ազգըդ ու տակդ քոխվա չի տեսել, դու էլ

չես կարող ըլիլ: Ցեղդ գէլի ցեղ ա, դու էլ նրա ճուտն ես, չես կարայ տանու դառնալ... Մախլոս, ամեն մարդ իրան եղովը կը տպակուի, իրան քեանդրովը կը խեղդուի: Խնդրե՛մ, աղա, հրամայիր, թէ կարելի ա...»:

Ոչ մի մարդ չը վստահացաւ կտրել ծերունու խօսքի թելը և դիմադրել նրան: Վերատեսուչը նկատելով որ մահտեսին թէև ծերունի, բայց թարմ ուժ ու յարգ ունեցողներից մէկն է, որ, հակառակ դրա կամքին, եթէ Ոսկանին սպասեն, նա կարող է դուրս գնալ և գուցէ իր հետ մարդկանց մեծ մասին դուրս կը տանի և կամ միշտ կ'ընդդիմադրէ Ոսկանի կամքին, որից կարող է յառաջանալ ինչ ինչ արգելքներ ու խոչընդոտներ, ասաց. «Շատ լաւ, ես էլ համաձայն եմ ձեզ հետ. իսկոյն անեմ իմ առաջարկութիւնը» և նամի առանձին եղանակով սկսեց.

«Ամենքդ էլ գիտէք, պարոններ, որ ես և բեզը ահա երեք օր է այս գիւղումն ենք, բեզն ազգասիրաբար ինձ ուղեկցեց ու այստեղ էլ աջակցում է: Պէտք է դուք էլ շնորհակալ լինէք այս մարդից, որ այն աստիճան ձեր բարիքն է ցանկանում՝ մինչ այս ուրախ օրերին թողեց տունտեղ ու ինձ հետ եկաւ, որ այս գիւղում հիմնենք մի կանոնաւոր ուսումնարան: Այս էլ իմացած լինէք, որ հայոց հոգևոր ուսումնարանների իրաւունքը իմ ձեռին է, կարող եմ բաց անել, փակել, կարգադրել... Այս իրաւունքը ինձ տուած է հոգևոր իշխանութիւնից: Որովհետև այս գաւառում ուսումնարան չկայ և ամենամեծ գիւղն էլ ձեր գիւղն է, մենք

առաջին անգամ այստեղ պէտք է բաց անենք, յետոյ միւս գիւղերումը: Դուք ինքներդ էլ գիտէք ուսման կարիքը: Դուք տեսնում էք՝ որ զննոց-կորաւ էն առատ ու միամիտ ժամանակը: այժմ ամեն բան դժուարացել է: Այժմ ամեն մարդից ուսումն է պահանջվում: Մեր երեխանցը պէտք է օրինակոր ուսում տանք, որ նրանց կուլ չը տայ ժամանակի ահեղ տագնապը, որ նրանց վնաս չը տայ ամեն խաբեբայ ու թոկից փախած սրիկայ... Բնջ կապէք, մարդիկ, ծերունի»:

Իե՞զ, դու խօսա, քեզ էլ տեսնենք, առաջարկեց ծերունին:

«Ինչ որ վերատեսուչը հրամայեց, իմ խօսք ու խնդիրքն էլ հէնց էր ա մահտեսի: Դուք գիտէք, որ իմ տղայ ու աղջիկը կարդում են և Ինչքան փող էլ տալիս եմ Գեանջու շկօլին՝ նրանց կարդալու հատը: Հէնց ինձանից պր իմ էր առէք ու ամենքդ էլ միաձայն ընդունեցէք առաջ մեզ, յետոյ մեր խօսքը: Եկօլը էս գեղի անունը էնպէս կբարձրացնի, որ ամեն մեծի մօտ էլ դուք պատիւ կը ստանաք: Ձեր պարծանքն ա: էնպէս արէք, որ ձեր կամքովը կատարուի էս գործը...»:

— Պաճար:

« Պաճայ »:

— Ա խալխը, գուք Բնջ էք ասում:

« Ես էս եմ ասում, մէջ ընկաւ Պետին, որ էդ բանը շատ լաւ բան ա: Մի երեխայ էլ մենք ունենք՝ կը կարդայ, մարդ կը դառնայ: Ամա էս գեղը ժամանակ չունի շկօլ բաց անելու: Աղէքը առաջ գնան էս մօտիկ գեղերումը բաց անեն, եղնա մենք աղաչանք անելով բաց կ'անենք »:

— Դու էլ պաճար:

« Հա »:

— Ե՛լ ով ինչ ունի՝ թող ասի:

Միրզէն խօսեց. « Վիրապ պպեր, որ գեղին օգուտ ա, առանց վնասի էլ չի՛ իմ հետաքով, գեղը մի տարումը 2000 մանէթի ծախսի տակ ա ընկնում: էդ ո՞վ պէտք ա տա, ես թէ դու »:

— Եանի պաճար...

« Պաճայ: Մթամ ասածս քիչ բան էր, որ չը պընծենեմ »:

— Հ՛ը, ձէն ածեն...

Վերդին խօսեց. « Ինձ ասող ա ըլել՝ որ էս սմարանում կարդացող երեխէքը մ լ թ ո ն ի պէտք ա դառնան ու ղ ո շ ու ն գնան... Թէկուզ բաց էլ անէք՝ ես իմ երեխէն ղարկել չեմ: Վարժապետը ո՞վ ա իմանում, Բնջ-թահրի մարդ կ'ըլի, պաս կուտի. երեխէքն էլ էդ կը սովըեն էլի... »:

— Քեզ էդ բան ասողը ղալաթ ա արել: Դու էլ պաճար:

« Ես ո՞նց կը պընծնիմ, ամա սուս եմ կենում »:

— Քոխվա, դու Բնջ մտքի ես, ասա:

« Ես էլ ի մարդ եմ, էլ ի հետ եմ »:

— Ձէ, եանի քու միտքը ո՞նց ա ցնծում:

« Աղբէր, իմ սիրտը վրա չի անում, թէկուզ մեղադրէք: Մեր վարժապետըմեր հաւանած պէտք ա ըլի. խամ ու անճանաչ վարժապետի ն ա գ ի ն ո՞վ կարալ դիմաւալ: օրը մի արդա պէտք ա գրի՝ ղարկի քաղաք մեզանից գանգատ... »:

Վերատեսուչը հետաքրքրութեամբ նայում էր թէ

ինչպէս ծերունին հերթով ձայներ է հաւաքում և աւելի հետաքրքրելին նրա անելի եզրակացութիւնն էր:

— Մնացած մարդիկ, դուք թնչ էք հրամայում:

«Ես, ասաց մէկը, էդ բեգերի ոտները կը պաչեմ, թէ որ ըստեղ մի լաւ սմարան սարքեն մեր երեխանց հմար: Մարդ գիր կարդալուցը, իր տղին գիր սովորացնելուցը կը փախչի. բա էլ ինչի հէր ենք: Բա էլ ո՛ւր ենք ժամը գնում տէրտէրին տուն թողնում... բա խի ենք տիրացուի ոտին— ձեռին ընկնում, որ մեր սանաթները գրի... Եդ չուզողները, մուղղըսի ջան, իրանց սարքին են մտիկ տալիս՝ ընէնց են խօսում: Գրանք ո՛նց կուզեն էս գեղումը ուսմարան ըլի, ան գեղին մի տէր ու տիրական լիս ընկնի...»:

— Ել ո՞վ... ձէն տայ:

«Մենք պէտք ա աղաչենք՝ որ դրանք մեզ մի լիս տան, դրանք են աղաչում, որ մենք լիսն ուզենք: Մթնի միջի մարդն ա իրան հմար ճրագ ուզում, թէ լիսի մարդն ա նրան խնդրում՝ թէ առ էս ճրագը, աղաքդ լիս արա ու դուրս արի էդ մթնիցը: Երուսաղէմը քու կուշտ եկաւ, մուղղսի, թէ դու նրա ոտը գընացիր ու լսի փայ դառար: Սրանից էլ պարզ բան: Էս՝ մեր քոխվա—քեանդիտուգէքը իրանց խղճմտանքը խի են ուրանում ու մեր գեղը էդ բարութիւնիցը զրկում: Ես ջուխտ երեխայ ունեմ նրանց թաթը կը բըռնեմ ու ձեզ կը բաշխեմ, այ բեգեր... կ'ուզի ըստեղ կարգացնել տուէք, կուզի տարէք քաղաք, ձեզ հալալ...»:

Սրանից յետոյ բոլորը միասին ձայն ածեցին ու բարձրաձայն պնդեցին, որ ուսումնարան լինելուն հակառակ չեն:

«Շատ բարի, վերջապէս խօսեց ծերունին. այժմ դուք սուս կացէք, ես իմն ասեմ» և նա դիմեց ուղղակի բեգերին. «Աղա՛ պարոններ, էս սմարանը, որ ուզում էք բաց անել, կարդացողին մարդ պէտք ա շինի՛ է թէ դհա առաւել փչացնի»:

— Ուսումնարանը երբոր երեխային փչացնի, դրամեղաւորը և պատասխանատուն ես եմ:

«Մենք քեզ էլ սրտեղից գտնենք, որ պատասխանք տաս, ան ո՞վ ա պարապ, ո՞վ էնքան խելք ունի, որ իմ սասած պակասութիւնը իմանայ...»:

— Ուսումնարանը կուռնենայ մի քանի հոգաբարձուներ, սրանք գեղի հասկացող մարդիկը պէտք է լինին: Սրանք երբոր քո սասած պակասութիւնը կը նկատեն, կամ վարժապետի թուլութիւնն ու ծուլութիւնը կը տեսնեն, ինձ փոչտով նամակ կը գրեն և ես կը քըննեմ գործը ու ըստ այնմ կը վարվեմ մինի ու միւսի հետ: Այդ կողմից միամիտ մնացէք:

«Բանից երևում ա՝ որ դու սմարանների, վարժապետների ու էն ջոկուած մարդկերանց նաչալնիկն ես էլի...»:

— Այդպէս է, ես նրանց իշանաւորը—կարգապահն եմ:

«Հըմմմ...» արեց ծերունին ու տեղիցը կանգնեց:

— Ախր ո՛ւր ես կանգնում, միջամտեց բեգը, վրձուենք, յետոյ ամենքս էլ կանգնենք:

«Է՛հ, աղա՛, քանի մեծանանք, բան շատ կը տեսնենք ու իմանանք: Ես էն թուլունը չեմ, որ ոսկուռը մի բաշտ կուլ տամ, բզումս մնայ ու խեղդուեմ... պէտք ա օխտը հետ չափեմ, մի հետ կուլ տամ...» Այս եղաւ:

Ծերունու վերջին խօսքը. նա լուռ ու մունջ դուրս գնաց:

«Ազա ջան, մուղղսի Վիրապին նոր միջ ճանաչիլ: Դա թաքուն, մըղմըղ, մտքումը խօսող մարդ ա: Զուանց օրս գեղը դրանից մի մազի չափ խէր չի տեսել, հմի էլ չի տեսնի: Ամա մարդի ճկատին գրողամազ կայ՝ ամենքն էլ դրա կշտին սուս են անում: Էդ ա դրա մեծ հունարը: Մենք սաղ գեղս էլահալան դաբուլ ենք, որ ըստեղ սմարան բաց անէք: Արխէին ձեր բանին կացէք: Ինչ թուղթ էլ ուզում էք, ոնց էլ օրէնքն ա, գրեցէք, հազար տեղից ձեռք քաշենք... Աղբէր, դուք դաբուլ չէք:»

— Ո՛վ չի դաբուլ, ասացին մի քանիսը. գլխին մենք ձեռք կը քաշենք...

«Շատ լաւ ու շատ էլ շնորհակալ եմ ձեզանից, ասաց վերատեսուչը տեղիցը կանգնելով, որ դուք մեր նպատակը անկատար չէք թողնում: Ե՛մ պէտքական թւթերը կը գրեմ, կը վերջացնեմ: Տանուտէր, մտքիդ լինի, որ էս երեկոյ գիւղի հասարակութեանը մէկ տեղ ժողովես, մենք էլ կը գանք-թղթերը կը կարդանք ու կը վերջացնենք: Զեզ էլ խնդրում եմ, պարոններ, որ ամեն մէկդ ձեր ազգականին ու բարեկամին վերցնէք, գաք այստեղ երեկոյեան: Ի հարկ է, ամեն մէկդ մի քանի ուրիշ մարդիկ կ'ունենաք, որ ձեզ լսեն ու գան»:

— Հէնց ամենքն էլ մերն են, ազա, ասաց մի սրախօս, ու մեզ կը լսեն: Իրիկնապահին էս դաւթարխանի չորս կողմը մարդկերանցով կը կապենք. միամիտ կաց...

Վերջին խօսակցութեան միջոցին տանուտէրը գոյնը թուցրել, գլուխը կախ բցել, ապուշի պէս իր ոտքերին ու գետնին էր նայում. կարծես ինքն էլ զգում էր՝ որ իր գլխին մի գալիք կայ: Այս բանը նկատում էին ամենքը:

Ժողովը արձակուեց:

Ի Ը .

Կ Ե Ղ Ծ Խ Ո Ր Հ Ո Ի Ր Դ :

Տանուտէրը իր կողմի մարդկանց հետ դուրսը մի փոքր կանգնելուց լետոյ՝ դէպի մահտեսի Վիրապի տունը քաշուեցին: Գիւղի մէջ մահտեսու տունը մի բերդ էր՝ ապառաժի դոշին հիմնած ու երեք կողմից քարէ հասար պատած: Ասլանի պէս կատաղի շները թուչունին անգամ չէին թողնում այդ տանը մօտենայ: Մահտեսու ապրուստը-կեանքը մինչ օրս ծածուկ էր մնացած գիւղացիներից, որոնք միայն նրա տաւարի նախիրն էին տեսնում սարերում ու ձմեռանոցներում: Ինքը մահտեսին եօթանասուն տարեկան մարդ էր և ունէր առասպելական անցեալ: Նա իր երիտասարդ օրերից սկսած գլուխը բարձի չէր դրած, տանը սուփրի չէր նստած, այլ մինչ իր ծերութիւնը գիշեր ու ցերեկ ձիու վրա նստած սարերում ու ձորերում էր կեանք անցկացրել: Նա շատ տարիներ թուրք դաջաղ ների

Հետ ընկեր էր եղած և իր բոլոր հարստութիւնը այդ ճանապարհով էր ձեռք բերած, որ վերջը Երուսաղէմ գնալով իր կորցրած հոգին որպէս թէ գտել էր... Գիւղի իշխաններից շատերը իրանց կեանքումը մահտեսուտունը չէին մտած ու նրա օջաղի առաջին մի կտոր հաց չէին կտրած, ինչպէս և տանուտէրն ու նրա հետի մարդիկը: Սրանք ստիպուած էին վերջապէս նրա տուն մտնել, նրա հետ խօսել: Մահտեսուտունը հռչակուած էր հէնց այն պատճառով, որ ամեն նեղն ընկած մարդ նրա խորհրդին էր դիմում:

«Քնիվա, այ մարդիկ, խօսք գցեց մահտեսին, հարցափորձ էք թէ հարցախնդիր»:

— Մահտեսի Վիրայ, ասաց տանուտէրը, թէ ծերութիւնդ, թէ էդ սիպտակ միրուքդ ու թէ էդ մաշի գրաշը կը սիրես՝ մեզ գրուստն ասա, թէ խելքդ քնչ կտրեց էս բեգերի սմարանիցը...:

«Իմ խելքը շատ բան կտրեց, ձեզ քնչ: Ղմի ո՛վ ա ում խելքովը բան բռնում: Գեղումը հազար բան անց կացել, երբ էք ինձ հարցրել, իմ խելքովը ժափ եկել, որ հմի ըսէնց թէք ջաբա էք քաշել: Հը, ծերին փորձելու էք եկե՛լ...»:

— Ձէ, քու հոգին գիտենայ: Ամա մեզ մի բան ասա: Ղմի որ իրար չ'ընկնենք, խօսք ու մին չ'անենք ու սուս կացած մնանք, բեգերն իրիկնապահին բանը կը վերջացնեն, խալխին ձեռք քաշիլ կը տան իրանց թղթերին...:

«Ես ձեզ քնչ ասեմ. դուք բեգերի խօսքը չ'ընդու-

նեցիք. ի հարկա, ձեր մարդութիւնն էլ պէտք անշանց տաք: Բանը խօսքն ասիլը չի, կատարիլն աս: Ով իրան: խօսքը չը կարենայ կատարիլ, նրանից էլ գէշ ու սարսաղ մարդ չը կայ: Նա որ ուժ չունի՝ բանին խի լաւ ու վատ ա ասում: Լաւ ասեցիր՝ նշանց տուր բանի լաւութիւնը, խալխն էլ տեսնան՝ որ լաւն ա ու հաւատան, փիս ասեցիր էլ ընէնց, թէ չէ՛ գլուխդ քարովը տուիր, որ լիզուգ երկու արիր: Ձեզ գրուստն ասեմ՝ բեգերի խօսքիցը շառը ծլծլում-ծլթծլթում էր. բէյնումս մի-գատ չը մտաւ՝ դուրս եկայ: Ամա իմ մտքինը սարին-քսիլն ընկնի...»

Մարդիկը շատ լաւ գիտէին՝ որ մահտեսին իր կեանքումը մարդի իր սերը, իր գաղտնիքը, իր միտքը ասած չի և այժմ էլ կարող է կեղծաւորութեամբ մի այն խօսել, այս պատճառով էլ՝ նրանք պնդում էին ստոյգն իմանալու ծերունու միտքը ու հայեացքը գէպի բեգերի առաջարկութիւնը: Այս դեերը որ միշտ իրար հակառակ են եղել, այժմ ձգտում են միանալ...:

— Մուղղսի, եանի մեր խօսքերը գրուստ չէր, հարցրեց Վերդին, որ բեգերի ճակատին ասեցինք: Եանի էդ սմարանը մեզ հազար շառի ու շամաթի մէջ չի քցելու: Ախր դու էս բանը մեզանից շատ լաւ ես իմանում. դու խի չես մեզ հետ-մեզ պէս ձէն տալիս, թէ չինք ուզում...:

Եանդար, ես էս գեղումը քանի տան գլխաւորն եմ, քանի ազգական տուն ունեմ, որ մեր ճղներն են ու առանց ինձ չեն կարայ լաւ ապրիլ...:

— Եհ-հա... Եարսուն տուն, դհա՛ աւելի...
«Բա եառսուն տան մարդիկը էս թաւուր վախտը

տանը պէտք ա քնեն թէ մեզ հետ ձէն տան: Չուանց նրանց իմ կուռը չքցեմ, ես իմ սրտինը մարդի կասեմ...»:

—Մոլղոսի ջան, վրաբերեց Պետրոսը, մի երկու էդքան մարդ էլ մենք ենք մեր կուռը քցել. նրանք մեզ հետ, դու էլ քու մարդկերանց հետ կըգոռանք, որ չենք ուզում սմարանը, պուծանք-գնանց: Քոխվէն էլ մեր կըռանն ա, նրանց թղթերը չի փեշատել, բանը կը մնայ անկատար...:

«Շատ լաւ, ասաց սառնասրտութեամբ մահտեսին, հէնց ինչպէս էլ փիքը էք արել, արէք: Ես էլ իմ մարդկերանցով ձեր քոմազն եմ: Կարդացողներիցը ո՛չ թէ գեղը, մի մարդ էլ օգուտ չի տեսնիլ...»

—Եանի Հաստատ մեր կողմն ես, մոլղոսի, կրկին հարցրեց Միրզէն:

«Ծերին չէք հաւատում: Անհաւատ մի ըլէք: Իրիկնապահին իմ մարդութիւնն էլ կը տեսնէք, ձերն էլ: Իուք գիտէք՝ որ առանց էդ էլ ես Վանի-բեգի հետ արա չուներմ. դա որ էս բանի միջին ա՛ ես պէտք ա թարս վարեմ: Ձեզ էլ խորհուրդ եմ տալիս, որ հէնց էս սհաթին ընկէք գեղը-խառնի խառնի արէք, ոնց որ գիտէք: Ոսկան լակոտիցը միք վախիլ, նա թէկուզ պրիստաւ էլ բերի, քոխվա, քեզ վրա սկի մի վախիլ. ծերը քամակիդ ա: Չ'ասէք թէ՛ էս խօսքերը նրա խաթէր եմ ասում, որ օջաղս էք եկել, չէ...»:

—Եանի Հաստատ, մոլղոսի, մեր կողմն ես. խորհուրդ սուրբ ա էլի:

«Իմ զրիցը դողրամա ա, իմ խօսքը Հաստատ, իմ խորհուրդը դրո՛ւստ»:

—Լաւ, տղերք, դէ, գնանք, աղբրի ալը պղտորենք... Տէր, դու յաջողես...:

Մահտեսին նրանց յետևից ինքն իրան սկսեց փնթփնթալ. «Հայվան մարդիկ, ձեր պահած գեղն էս ա քանդվում ա. վայ որ ես էլ միջին եմ: Ձեզ պէս տաւարներին հալքաթ ըդէնց կ'արածացնեմ: Շատ գէշութիւն ու չարութիւն էք արել, մինն էլ էդ՝ գնացէք, արէք: Ես էն մարդը չեմ՝ որ դուք կարենաք ինձանից խօսք գողանալ, ան իմ գլուխը թափ տալ: Քառսուն տարի չուերումն եմ օրերս անց կացրել, իմ ողորմածիկ կնիկը մի անգամ իմ սէրը չիմացաւ: Կը դալ վախտը-ինձ կը ճանաչէք, իմ միտքը կ'իմանաք: Ես էլ դուրս գամ, մարդկերանցս հանգիպեմ... Բանը որ դուրս գալի ա ընկել, թոկը որտեղ բարակի, թող ընտեղ կտրուի...»:

Սա էլ դուրս գնաց:

ԻԹ.

ԻՄ ՏԵՐԸ ԴՈՒՔ, ՁԵՐՆ ԱՍՏՕԶ.

«Գուրբ, գոր. փորեաց. Ի խորխորատ Ի նոյն անկցի»

Գիւղը-այդ պարզ ու անարատ ջուրը այժմ լղղու մ-պղտորում են: Տանուտէրը իւրայիններով մասամբ Շմալ բեգի ազդեցութեամբ, մասամբ իրանց անձնական շահերն ի նկատի առած, ջոկ ջոկ պտտում, սրա ու նրա դռներին կանգնում-ինչինչ խոստում ուն քնեք անելով պնդացնում են միամիտ մարդկանցը, որ հակառակ կանգնեն ուսումնարան բանալուն, մի և նոյն ժամանակ չարախօսութիւն անելով ուսումնարանի վնասակարութեան և թէ բեգերի այդ կերպ խաբեբայութեան մասին: Նրանք մօտենում էին այնպիսի մարդի, որին իրենց ատամը կտրում, իրանց աչքը ուտում էր: Այս մարդիկն էլ խեղճ էին, չքաւոր ու իրանց բարեկամ կամ ազգական: Երկրորդ կողմից էլ մահտեսի վիրապն էր իւրայիններին տրամադրում.

միայն նա չէր բամբասում ու չարախօսում, այլ պատուիրում էր որ՝ ինչ որ ինքը կասի հասարակութեան մէջ, բեգերի առջև, նոյնը իրանք ձայն տան, իսկ եթէ կը լռի ու մի քանի քայլ կը հեռանայ, նոյնը իրանք անեն: Այսպէս, խեղճ գիւղը լղղվում, պղտորվում ու խառնվում էր և այս բանը ոչ թէ միայն բեգերը չը գիտէին, այլ և այն մարդիկը, որոնք այսօր կատարելապէս համաձայնեցին «ուսնեայ ուսումնարան»: Որովհետև վերատեսուչը տանուտէրին պատուիրեց՝ այսօր ամբողջ հասարակութիւնը մէկ տեղ ժողովել. նա էլ մտածում էր՝ ժողովել մեծ մասամբ իրենց և մահտեսու մարդկանցը, որ գոնէ ձայնի առաւելութեամբ խափանէր գործը: Նա մոռանում էր՝ որ վերատեսուչը միայն իրան չպատուիրեց, այլ և նոյնը միւս մարդկանցը խնդրեց և թէ նրա այդ կերպ արած նենգ խարդախութիւնը նոյն ժամոյն կը բռնուէր...

Արևը հէնց որ գլխովերից, ամեն կողմից մարդիկ դէպի դաւթարխանի կողմն եկան, ուր կէս ժամում ամբողջ հասարակութիւնը ժողովեց, որը 250 հոգուց աւելի էր: Այսպէս շուտ ժողովուեցին, որ շուտ էլ ցրուեն, զնան՝ իրանց տաւարին «ապուռ» տան: Շատ տներից երկու-երեք մարդիկ էին եկել, միայն սրանք հեռու էին կանգնել, հաշուի մէջ չէին: Կուսակցական հոգին պտտում էր հասարակութեան գլխին, նա թէև մի տեղ էր խմբուած կանգնած, բայց մահտեսի վիրապի մարդիկը ներքի կողմն էին քաշուել, տանուտիրականները նրանց աջ կողմը, մնացածը վերի կողմն էր

բռնել: Վերջինս միւսների պատրաստուած լինելը չը գիտէր, ինչպէս և նրանք սրանց մեծ մասի անպատրաստ լինելը: Խնդիրը թէ և ոչ ովի համար մուծը չէր, բայց նրա լուծուածը շատերին անհասկանալի էր: Այդպիսիք զովնու՞մ, իրար մէջ հարց ու փորձ էին անու՞մ:

«Տղերք, դուք քնն միտք ունէք, զաբուլ էք թէ չէ, մեզ ասեցէք, որ մենք էլ էնու գետրա հարցնողին ջուղաբ տանք...»

— Ահա, դէ սո՛ւս կացէք: նոր էք ուզում իմանալ ձեր ջուղաբ տալու բանը: Վախիլ միք, ձեզ ոչ բան կը հարցնեն՝ ոչ էլ ջուղաբ կուզեն: Զօռով ուզում էք գլուխներդ մարդամէջ գցէք...

«Թէ մարդ չենք մեզ խֆ են կանչել. հալբաթ մի խօսք էլ մեզ կ'ընկնի»:

— Դէ ինչ որ մենք կասենք, կը բղաւենք, դուք էլ մեզ հետ...

Վայ թէ շիւ ընկնենք, թարս խօսանք...

— Արխէին կացէք, քոխվէն մեզ նշանց ա տուել. ամենքս էլ պէտք ա ձէն տանք: չենք ուզո՞ւմ...

Հասարակութեան այս հաւաք միջոցին մէկ էլ տեսնես ծլծլան աղբիւրի թմբի տակից երեք ձիաւոր դուրս եկան, բնկնելով սովորական լայն ճանապարհը՝ զնգացնելով ու թմփացնելով ուղղակի դէպի գիւղամէջ քջեցին ձիաները: Հասարակութիւնը ուշադրութիւնը լարած ապշեց նրանց վրա: Խսկոյն ճանաչուեց՝ որ մէջ տեղինը աստիճանաւոր է, իսկ միւսները չ ա փ ա ը ն ե ը:

«Տղերք, ասաց կարմրատակելով տանուտէրը, եաբաբ սա ո՞վ ա, պրիստաբ ա, սլէստէի ա, քեօմազի ա, զեմլամէր ա, քնն ա...»

— Տնաքանդ, քոխվա, վրաբերեց: Սիրդէն, քնն քանի ես, առաջը գնա, Քիքունց օթախը տար: Ըստեղ չը բերես, չուանց տեսնանք՝ ո՞վ ա...

Տանուտէրը ծլկեց, գզիրն էլ վազեց՝ որ, ձիանունց կապը բռնի, ման ածի, հանգստացնի ու աներին բեգե առ տայ:

Ա խալխը, ձէն տուեց Վերդին, ճամբու՞մը միք կանգնիլ. կարելի ա՞ էր բեգն ընտեղ ա գալիս:

Հասարակութիւնը մի փոքր ներքև քաշուեց:

Աստիճանաւորը ձիուցը ցած իջնելուն պէս պայուսակը ձեռքն առաւ ու տանուտէրի հետ դէպի ժողովարանն եկաւ արագ քայլերով: Նա մի բարձրահասակ, վիթխարի, մեծ քնթանի, սեւաչքունքանի, անկար մոլորունով պարուն էր: Նրա հայեացքը ազդեցիկ, ձայնը խրդխտ, լեզուն ճարտար: Նա հայ էր: — Ալլահ-Վերդի բեգը, որն առաջին անգամն էր ոտք դնում այս գիւղը: Ժողովուրդը գլուխ խոնարհեց նրան, որը մէջ տեղը յանկարծ կանգնելով ձայն տուեց:

«Ստարշինա, գեղու՞մը ուրիշ մարդ էլ կայ, թէ հէնց սրանք են»:

— Սղա ջան, դիմի էս ա: Ես օր խորհուրդ ունէինք՝ նրա հմար կանչել եմ:

«Ոսկան անու՞նով մի մարդ կայ՝ նա էլ ըստեղ ա թէ չէ»:

— Զէ, նա Գեանջա էր, նոր ա եկել, բզարած էր քնել ա...

«Դէ, հրաման քեզ. էս օր չէ ստի ն չես թող»

նիլ ցրուեն, մնան կանգնած: Մարդ դարկի, էս սհաթին կանչել տուր Ոսկանին: Էլ ու էս գեղի տերտերին էլ»:

Այս խօսքից յետոյ նա չափարի առաջնորդութեամբ Ժողովարանը մտաւ:

Նշմարիտ, տանուտերի ծնկները ծալուեց. նա շըփոթուեց ու չէր իմանում ինչ անի, ում հետ ինչ խօսի: Աստիճանաւորը որ Ոսկանին պահանջեց, արդէն մարդիկը հասկացան բանը ինչու՞մն է:

«Ձեզ մատաղ, Վերդի, Միրզա, Մակիչ, Պետրոս, ի մ տ էրը դուք, ձերն Աստօծ, պէտք ա ինչ փրկէք...»

— Էլ խօսալը վախտը չի, վրաբերեց Վերդին. դու աղի հրամանը կատարի, ջգրուի ոչ...»

— Քոխվա, նրանց մօտիցը մէկը ձայն տուեց, քու տէրը բողաբն ու զաթարն ըլին. էս ա ընկել ես՝ էլի թիզուկ քեզանով չես անում: Ա խալիսը լաւ իմացէք, էս աղէն մեր ուզած մարդն ա... Քոխվի թուրքը ցմաքել ա, ամա սկի խեղճ չը գաք... Լսում էք...»

Այս խօսքից յետ հասարակութիւնը խռնուեց) էլ իրար չը լսեցին ու կամաց աղմուկ բարձրացրին: Չափարը մտրակը ձեռքին ամբոխի մէջ պտտելով բարձր խօսողներին սպառնում— լուեցնում էր:

Աստիճանաւորի գալու լուրը իսկոյն հասաւ Ղերատեսչին և այն թէ հասարակութիւնը նրան պէտքն է, գործ է քննելու, աւելորդ համարեց դնալ այնտեղ ու իր գործը լառաջ քցել:

Է.

ՅԱՆՑԱԽՈՐԸ ԱՐԺԱՆԻ Է ՊԱՏԺԻ.

Ոսկանը հեռուից որ գումարուած հասարակութեանը տեսաւ՝ ջանը սուսաց, իսկոյն իմացաւ բանի էութիւնը. ու որքան ուժ ունէր շտապեց և հասաւ այն ընկեցին, երբոր աստիճանաւորն էլ գուրս եկաւ ձեռքին թղթեր բռնած: Տէրտերն էլ միւս կողմից եկաւ: Տանուտէրն երկուսի գալն էլ յայտնեց: Քննիչը-այսպէս անուանենք— Ոսկանին մի կողմը, տանուտէրին միւս կողմը կանգնացրեց ամբոխից հեռու ու ինքը բարձրաձայն գոչեց. «Ձեզանից ով որ ստարշինա Չատնի վրա գանգատ ունի, թող գնայ Ոսկանի կողմը, ով որ չունի՝ գնայ ստարշինի կողմը»:

Ամբոխը քսուեց դէպի Ոսկանը. հազիւ թէ քսան հոգու չափ էլ դէպի տանուտէրը թեքվեցին և իսկոյն նկատելով որ իրանք չեն կարող փրկել նորան, լեռ դարձան դէպի Ոսկանը՝ ինչպէս ճուտերը մօր մօտ: Միայն սիրդաշնեբը մնացին տանուտէրի մօտ կանգնած: Մահտեսի Վիրապն ու տերտէրը ոչ մի կողմ վրա

չը գնացին, մնացին իրանց տեղերը: Եւ երբ քննիչը սրանց հարցրեց թէ՛ դուք ինչի՞ որ և է կողմի վրա չէք թեք վում, մահտեսին պատասխանեց:

— Աղա՛, ես ոչ նրանցից եմ, ոչ սրանցից. չունքի՛ երկու կողմն էլ բարի պտուղ չեն...

«Հէնց բարի պտուղը մենակ դու ես»:

Տէրտէրը խօսեց.— Որդի՛, աւետարանն ասում ա՛ սիրիւր քու թշնամուն: Ես, դժբա՛ւ, շատ գանգատաբան ունիմ ասելու քոխի վրա, ամա աւետարանի խօսքին եմ լսում: Ես հոգևոր մարդ եմ, կեանքումս խալիսի բանումը չեմ խառնուած, ինչ պէտքս ա՛ հմի խառնուեմ...

«Ուրեմն՝ դու էլ լաւ տէր հայր չես. քեզ պէս տէրտէրի մտղովուրդն էլ էս օրին կըլի: Երկուսդ էլ հեռացէք»:

«Քննիչը նորէն յառաջ կանչեց՝ ամբոխին ու հարցրեց»:

«Ինչո՞ք գանգատաթուղթ էք գրել ստարշինի վրա թէ այն...»:

— Աղա՛, ջանք լսուեց ամբոխի միջից, երկու-երեքն ենք գրել տուեել, Ոսկանի ձեռքով նաչալնիկին դարկել, որ մեզ մի ճար ու իլլաջ անի էս Չատնի ու իրան հինգ սիրդաշի ձեռիցը, որ գեղը քանդում են...

— Գրել ենք, քեզ մատաղ, գրել ենք, գոռացին ամենքը:

«Ի՛նչ մօտեցէք, չը խօսէք: ինչ էլ կը հարցնեմ՝ մէնակ նրան շուղաբ տուէք»: Ես այս ասելուց յետոյ սկսեց մէկ թղթի նայել ու շարունակ հետևեալ հարցերը տալ:

«Առաջին՝ ստարշինան նհախ տեղը մարդի թա- կում, դուգսաղխանէն ա քցում ու մինչև կաշառք չի առնում՝ բաց չի թողնում էնտեղից: Ես բանը դրուստ ա...»:

— Եդ խօ իրա փէշակն ա, աղա ջան, կրկնուեցին ամեն կողմից այս խօսքերը:

Պետրոսը առաջ կանգնեց. գլխիդ մատաղ, ես էս գեղի քեանդխուդէն եմ, թող էս խեղճ քոխի կողմանէ բան խօսամ, ինչ որ դրուստն ա...»:

«Ինչ գնա՛, քու տեղը կաց. ստարշինան ինքը կա- րող ա գալ ու խօսալ»:

Տանուտէրը առաջ կանգնեց.— Խնդրեմ, աղա, իմա- նաք թէ՛ ես ունեմ նհախ տուն քցել ու կաշառք առել...»:

Իսկոյն տասը-քսան մարդ դուրս թափեցին ամբոխի միջից.— Մեզ, քոխվա, մեզ, խօ լաւ ես ճնաչում. հէնց դիտէիր արամունքդ կը պարտակու՞մ...

— Հրէս գլոսխս ճղել ես, քոխվա, երեք օր էլ տուե քցած պահեցիր-չուանց խեղճ օղլուշաղս ա մի մանէթ ճարել քեզ տուեել, որ ինձ նոր բաց թողացիր: Ասա՛, ես քնչ մեղք ունեի...»:

«Լաւ. սուսէք. էդ պեճանք: Երկրորդ՝ տաւաբը որ ձեր կանաչ արտերին վնաս են տուել, ան հանդի դուր ուղիւն բը թաքուն արածացնող ա ըլիլ, ստար- շինան տաւարածատիրոջից ջառը մէն վնասը մինը երկուսով խել ու իրան ջիբն ա քցել: Մէնակ կանաչա- վնասներիցը դա անցկենող ամառ ստացել ա 130 մա- նէթից աւելի: Եդ փոզը իրան ջբումն ա մնացել: Ես դրուստ ա թէ սուտ...»:

— Ըտեղ սուտ են գրել, աղա՛, աբա թող ս ա բ ու զ անեն...

«Սուտ չեն գրել, պարոն, դու ումնից էլ փող ես առել, միքանխսին կ վիտ ա ն ց ի ա ես տուել՝ փէչատովդ հաստատած. էդ կ վիտ ա ն ց ի է ք ը ա ն գործի մէջ կարած են: Խօ չես կարող փէչատդ ուրանալ... էս բանը հարցնելն էլ աւելորդ ա»:

Տանուտէրը գլուխը կախ քցեց:

Երբորդ՝ ձայն տուեց քննիչը. թագաւորական խարջը թ ո վ ջ ի անելիս, ստարշինան մի քանի մարդի հետ 370 մանէթ աւելի փող են քցել ու խալխիցը հաւաքել. դրանք մահանայ են արել՝ թէ էդ փողը մենք ծախս ենք արել բեգերին ու պրիստաւաններին պատուելու հմար... լետոյ փողը իրանք իրանց վրա փ ա յ են արել: Էս բանը դրուտ ա՛ թէ չէ»:

— Աղա՛ ջան, շուտ վրաբերեց մէկը, ես էլ էն թովջի անողներից միինն եմ. 370 սիպտակ մանէթ էդ մը հանով խարջի մէջը քցեցին, 30 մանէթ էլ մին՝ թէ լաջորդը երբոր եկաւ, ասեցին, նրան աջահամբոյր տուինք խալխի կողմիցը, ամա վերջը իմացանք՝ որ հայր սուրբին 5 մանէթ են տուել, գեղի վրա 30-ին հետաք տալիս: Ես շատ դէմ առայ՝ որ ոչ մինը չընդունեմ հետաքի մէջ, ա՛յ, երեսներին եմ ասում, ինձ ուզեցին դուրս անել թովջուցը, ես էլ սուս կացայ: Հարցրու քոխվիցը, աղա՛, ես թովջի անողներից միինն եմ թէ չէ, թէ ուրանայ՝ ջուխտ մատս պէքը կը կոխեմ ու գպա եկեղեցին քաշ կը տամ... Ա խալխը, սուտ ա ասածս...

— Իրուտ ա՛, գոռացին ամենքը: Մեր փողը մէկ

չետ տայ... թէ չէ՛ իրան տուեր կը քանդուի՛ր...

— Աղա՛, վերջապէս խօսեց Ոսկանը, էդ Չատին էս գեղի հին պապական կարգը, լաւ լաւ սովորութիւնները ոտի տակ դրեց: Էս գեղը կուռի ու խռովութեան քուն շինեց: Բարեկամ մարդկերանց իրար հետ քըցեց: Չար արարմունքներով ամենքի սիրտն էլ լափեց: Ինքը ազահ ա ու գող, իրա սիրդաշներն էլ վատթար: Հմի որ դու էս գեղիցը գնաս, դրանք իրանց մէջը կը նշանակին՝ թէ Ալլահ-Վերդի բեգի վրա ծախս արինք 30 մանէթ: Կը գայ խարջի օրը, կը քցեն թովջու մէջը... Ամա երկինքը գիտի՛ որ դու մի կողէկ վնաս չես տուել գեղին, ոչ էլ մի փոր հաց ես կերել նրանից:

— Ոսկան, հոգիդ մի էրիլ, էսօրէն էքուց կայ, ձայն տուեց լացակրկնած տանուտէրը:

— Աղբէր, դուք մեզանում էլ հոգի-հաւատ չէք թողել: Դու չէիր, որ համ Վանի-բեգի հացը կերար, համ եղնուց խալխին 15 մանէթ խարջ նշանց տուիր, որ մթամ բեգի հմար ծախս ես արել գեղի կողմիցը: Էս պէս էլ Ներսէս-բեգին. միտդ ա՛: Ամանչի, քու աբարմունքը սար ու քոլին էլ կը մաշէր...

Քննիչը ձեռքի շարժումով լուեցրեց ու էլի ինքը գլխեց:

«Չորրորդ ստարշինան մարդկերանց գանգատներին կարգին չի հետեւել: Էն մարդի գանգատն ա վճուել, կատարել, ումնից փող ա առել, կամ մի ուրիշ բան կաշառք առել: Եսպէս կաշառքներ նա մինչև 150 մանէթ աւելի ա առել էս մէկ տարուամը, ու քառսուն մարդ էլ իրան բանին ծառայացրել ա՛ որին երէք օր, որին չորս օր, որին երկու օր... որին հունձ ա անել

տուեւ, որին խոտ ա հարել տուեւ, որին կալն ա կասիւ տուեւ... Էս դրուստ ա թէ չէ»:

Այդ խօսքերը որ լսեց կատաղի ամբոխը՝ միաձայն գոռաց. այլ ևս «Հա» ու «չէ» չէր լսվում: Մէկն ասում էր. ես վեց մանէթ տուի՝ որ գործիս հետեւի, միւսը՝ ես ութ մանէթ, երրորդը՝ չորս... տանուտէրը շատերին իր ստացած փողի համար ստացականներ էր տուել այսպէս, թէ «այս ինչ մարդի այս ինչ գործին հետևալու համար նրանից ստացալ Չ ա փ ա հ ա խ այսքան մանէթ» և այս թղթի կտորները վաւերացրել էր իր կնիքով: Այդ ստացականներից մի քանիսը գործի մէջ կարած էին: Տանուտէրը երբ ուզեց արդարանալ, քննիչը իսկոյն նրան լիշեցրեց իր տուած այդ կերպ ըստացականները և ապա շարունակեց:

«Հինգերորդ՝ ստարշինան գեղին անհարկաւոր հանգերը. ե ա թ ա դ ա տ ե դ ը, մ ա մ գ ու տ ը, ք ա ը ու տ ը ի ն ք ն ա գ լ ու լ ս ծ ա խ ե լ ա ո չ խ ա ր ա տ է ր է ի վ ը ա, ամեն հանդի համար էլ 20—20 մանէթ կաշառք ա առել, որ էժան ծախի: Եդ ծախած հանդի փողերիցը 70 մանէթ ինքն ա կերել, խալխին նշանց չի տուել: Էս դրուստ ա թէ սուտ»:

— Աղա, իսկոյն վրաբերեց տանուտէրը՝ էդ իմ հոգու պարտքն ա, պէտք ա տամ. չունքի՝ պայմանագիր կայ մեր մէջ: Ոչխարատէրը կարելի ա ինձ 20 թուման էլ են բաշխել, խալխին քնչ...

Քննիչը ժպտաց ու շարունակեց.

«Վեցերորդ՝ ստարշինան իրա հենաբով մեղաւոր մարդկերանցից շտրափներ ա խլել-մնից՝ հինգ մանէթ, մէկէլից՝ չորս, մէկսէլից՝ իրեք... Էս հետաքով նրա

առած շտրափները 200 մանէթից անց ա կացել էս մի տարումը ու իրան շիբն ա կոխել... Էս դրուստ ա թէ սուտ»:

Կրկին աղմուկ ամբոխի կողմից: Տանուտէրը չուրացաւ տուգանք առնելը, միայն յայտնեց՝ որ շատացրել են: Նա ասաց. «շտրափը իմ ջափահախն ա, բա ես ինչով պէտք ա ապրեմ»:

«Ստացած տուգանքները, ասաց քննիչը, մանրամասն պէտք ա ցուցակագրուին ու յանձնուին հասարակաց գանձապահին հասարակութեան օգտին և ոչ քու շքի»:

«Եօթներորդ՝ ստարշինան գեղի գող տղերանցից կաշառք ա առնում ու նրանց դատաստանը ոչ ինքն ա անում, ոչ էլ նաչալնիկին յանձնում: Կամ թէ չէ՝ կորուստի տէրը որ գողին գտնում ա (գողը թուրք ըլի թէ հայ), ստարշինան երկու կողմիցն էլ փող ա առնում, գողին հաւատացնելով թէ քեզ կազատեմ, կորուստի տիրոջը՝ թէ պահանջդ կը կատարեմ: Էս բանը դրուստ ա թէ սուտ»:

— Աղա, ասաց տանուտէրը, թող անունն ասեն՝ ո՛ւմ եմ էդ բանը արել...

Մէկը շուտով առաջ կանգնեց ու գոռաց. «քոխով, ո՛ւր ա իմ էշը: Իշիս գողին գտայ՝ քեզ տուի. իշի կիսագինը գողիցն առար, ինձանից էլ վեց մանէթ կերար ու էշս ոտով գլխով կորցրիր... Աղա ջան, մի տուն լիքը քիւլի ա թ ունեմ, որ կրակն ածես՝ շրահոտ չի վեր ըլիլ, էն իշի ումուղին էինք: Էս անիրաւը ըսէնց տունս քանդեց...»

— Գարօ, էլ ինչ ես շատ խօսում, վրաբերեց տանուտէրը, գանգատ անելովդ էշդ լետ կգամ...

— Էջս գնաց... ամա քեզ պիտի իշութիւնն եմ ասում:

«Լուել»-ձայն տուեց քննիչը ու սկսեց.

«Ութերորդ» ստարշինան առաւօտից մինչև իրիկուն փրա սիրդաշների հետ միկիտանի դուքանումը քէփեր ա անդամ-խալի հաշտուով: Նա մի օր իր կարգին չի կենում ու դրանով էլ գեղին վատ օրինակ ա դառել: Ժողովուրդը չի ուզում գինի-արաղ ծախող ըլի գեղումը, ամա ստարշինան էդ միկիտանի դուքանը բաց անիլ տուել հէնց իրանց կէր ու խումի համար: Մեր էգ ու որձը գինի-արաղ խմիլ են սովորում, անկարգ գործեր են կատարվում... էդ դրուստ օ թէ չէ»:

Դարձեալ աղմուկ—:

— Աղա, ի վերջոյ ասաց տանուտէրը, մենք էդ դուքանը բաց անիլ ենք տուել նրա համար՝ որ վախտ-բե-վախտ էս գեղը բեգեր են գալիս՝ կարենանք գինի, արաղ ու միս ձարել նրանց պատուելու համար: Ուզում են թող փակեն, ո՞վ ա ինչ ասում...:

«Լուութիւն...» ձայն տուեց քննիչը ու շարունակեց. «էլի հարցնելու բաներ կան, ամա ես նրանց թողնում եմ: Էսօր պէտք ա դուրս գամ, ուրիշ գեղերում էլ գործեր ունեմ: Ստարշինա, դու ինքդ էլ պրի-զնատսիա ես ըլում, ինչ որ խալիսը գանգատուելեն քու վրա: Դու մեղաւոր ես. ու շատ բանում մեղաւոր ես: Ժողովուրդը քեզ հաւատացել է, դու նրան քերթել ես այս տարի ու կէսուայ մէջ:

Դու հմի քսան մարդ չունես, որ քեզ օգնի, լաւդ խօսի: Ես ինչ որ հարկաւորն է կը գրեմ ու էս բոլոր թղթերի հետ կառաջարկեմ նրան՝ ո՞վ որ ղարկեց էս

գեղը: Դու արժանի չես այս մեղալին ու գնչլին՝ որ կախած է դոշիցդ»: Այս խօսքում նշանադուրկ արեց նրան շինելով էլ առաջուայ տաւարած Չատին ու հրամայեց կնիքն էլ բերի: Այս վայրկենում Չատնի աչքերից արտասուք թափուեցին...:

— Բան չկայ, ասացին մի քանիսը, դու շատի ես լացացրել, հմի էլ քիչ դու լաց ըլի, որ մեղքերիցդ թեթեւանաս...:

«Օրջեստ, հմի դուք ո՞ր մարդին էք ուզում, որ ստարշինութիւնը նրան տամ...»:

Ամբոխի մէջ քչիոցն ընկաւ: Ամենքն էլ խնդրեցին Ոսկանին՝ որ յանձն առնի: Բայց նա այսպիսի պայման առաջարկեց.

— Որովհետեւ ես պէտք ա իմ տան բոլոր գործերը թողնեմ ու անխափան գեղի բոլոր պակասութիւններին հետեւիմ, այդ ճառայութեանս համար տարեկան 500 մանէթ դոն լուր տուէք, ես էլ յանձն կառնեմ ու սրբութեամբ կը կատարեմ գործերը: Եթէ մէկի տաւարը դողանան՝ դողը ես գանեմ, իսկ եթէ չը գտայ՝ կորուստը իմ սեփականութիւնից վճարեմ, թէ մէկի գանգատը կրեք, օրից աւելի գեռնին թողեցի, էսքան ու էսքամ շարափ տամ, թէ մէկի հետ ճանութիւն անեմ՝ իմ յօժար կամքովը բերդը մտնեմ... Տարուայ վերջն էլ գեղին 1000 մանէթ նազդ փող տամ դաւթարի մէջ ցրացակազրած, թէ ինչք համար, ումնից, ինչքան փող եմ ստացել: Իմ ու հասարակութեան մէջ ըսենց պի լաւ պայմանաթուղթ կը գրուի, թէ էս բանին ղարուլ

էք՝ քոխվա կը դառնամ, թէ չէ՝ տէրը մի արասցէ...»

Մի այսպիսի գեղեցիկ առաջարկութիւն առաջին անգամն էր լսում ժողովուրդը, և դրա համար էլ իսմոյն չ'ըմբռնելով Ոսկանի գաղափարը, թողեց նրան ուրնարեց մէկ ուրիշի-Արուսթիւն անունով:

Քննիչը նշանը քցեց ընտրուածի վիզը, կնիքն էլ լանձնեց նրան ու մի քանի խրատական խօսքեր ասելուց յետոյ՝ աւելացրեց. «պարզերես կաց, Չատնի պէս սև երես չ'ըլես, եթէ ոչ՝ օրէնքը քեզ աւելի խիստ կը պատժի»: Ապա դարձաւ ամբոխին. «Զեր փողի պահանջը Չատնիցը կ'առնուի. արդէն հաստատ է այդ: Այս բոլոր գործերը կ'առաջարկուի դատաստանին, որը զ ա կ օ ն ո վ կը վարուի Չատնի հետ և ոչ թէ միայն փողը կ'առնուի, այլ և ինքը կը պատժուի իր արած չարագործութեանց համար: Դուք միամիտ ու հանգիստ մնացէք: Թէ էս նոր ստարշինան էլ Չատնի պէս օրէնքիցը դուրս գայ, զանգատ արէք: Օրէնքը մեղաւորին սկի չի ներել, միայն մեղքը պէտք ա առաջուց հաստատուի: Իէ, թագա ստարշինա, հրամայիր ձիանը բերեն, շուտ. շտապում եմ...» Այս վերջին խօսքն եղաւ. էլի ներս մտաւ ժողովարանը, թղթերը պայուսակի մէջ պնդացրեց ու ձեռքին բռնած դուրս եկաւ:

Զիաները պատրաստ էին: Նա նստեց ու ասպանդակեց: Չափարներն աջ ու ձախ կողմն ընկան: Այս կտրիչի այսպէս շուտ գալ ու գնալը, արդար դատաստան անելը զարմացրեց ամենքին:

— Մուծն էր: Իրիկնազանգը ժամհարը ծնգծնգացրեց...:

Չատնի միւս ընկերները երբոր տեսան ամեն բան վերջացաւ ու իրանք չը կարողացան օգնել, այժմ առանձնացան ու խորհուրդ տուին Չատնին.

«Հէնց էս իրիկու ձիդ նստի, գնա Գեանջա, Շմալ բեգին ասա էս նազը: Գլուխը քարը՝ թէ քոխվութիւթիւնից դուրս արին, ախր մօտիկ 1000 մանէթ փող էլ են պահանջում, էս էլ կ'առնեն... Աղաչանք արա, որ Շմալ բեգը քեզ քեօմազ անի, ազատի... Գնա, էլ գարդ անիլու վախտը չի. թէ չէ՝ գեղի փող ա, էլ ի ձէն-դիփ կ'առնեն...»

Խեղճ Չատնի նրանց լսեց ու Հէնց այս երեկոյ ճանապարհ ընկաւ դէպի Գանձակ:

ԼԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ:

Ով որ պարզ ջուրը լղղեց ու պղտօրեց, ինքն ընկաւ նրա փրփրած հոսանքի մէջ, խեղտուեց ու խորասուզուեց: Ով որ խաղաղ ու միամիտ ամբոխը զինեց ուրիշի դէմ, շուտով ինքը զոհ գնաց: Ով որ մի ժամ առաջ մամառում էր՝ թէ ինչպէս մինից օգտուի, միւսից կաշառուի, երբորդի ունեցածի մի մասը ճանգի՝ լափշտակի, չորրորդից վրէժխնդիր լինի, հասարակաց բարոյական ամբարը խառնակի և այս ամենը միմիայն իր պաշտօնի ուժով, այսօր իրաւագուրկ եղած՝ զզջում է իր անցեալը, նզո-

վում է այն իր համար քաղցր ժամերն ու օրերը... Այս օրինակը լաւ հայելի է իրաւատէր մարդկանց համար, որ ճանաչեն իրանց ստանձնած պաշտօնի և իրաւանց սրբութիւնը. եթէ ոչ՝ մի օր հասարակաց անողոք դատաստանը նրանց էլ անաչառ օրէնքի դատապարտութեանը կը մատնէ:

Գիւղի հասարակութիւնը երախտագիտական զգացմունքով շնորհակալութիւն յայտնեց Ոսկանին իր կատարած մեծ գործի համար:

«Էդ իմ պարտքն ա, ասաց Ոսկանը, եթէ էս նոր քոխվէն էլ ծրից դուրս գայ, էլի պատրաստ եմ: Ես չեմ թողնի՝ որ իմ աչքի աղաքին մարդը գէլ դառնայ անմեղին կուլ տայ: Ես կուզեմ՝ որ մեծը կարգին մեծ, պուճուրը կարգին պուճուր ըլի: Սրանցից ամեն մինը իրա բանը պէտք ա ճանաչի: Անուսում խալի էք՝ բան չէք հասկանում, հէնց գիտէք՝ դուրսը գէնը էլ երկիր չկայ: Ո՛ւր ա, թէ կարգացած ըլէիք, իմ դարբ բան հասկանայիք. էլի մի բան էր... Հմի էս մնայ:

Ամեն բան դուք իմացաք էլ, տեսաք էլ: Ասում են էս գեղումն ուրիշ բեգեր էլ կան, ո՛վքեր են, ո՛ւր են եկել...»

— Ոսկան ջան, ասաց նոր տանուտէրը, զո՛րթ ա, նրանք տէրտէրանց տանն են վեր եկած: Էս չորս օր ա՛ զրանք ըստեղ են: Մինը Վանի-բեգն ա, մէկէլը սմարանն երբացանող ա, մեծ բեգ ա: Ուզում են էս գեղումը սմարան բաց անեն: Էս խալիը դիփ նրանց հրամանովն էր հաւաքուել, ամա բանը ուրիշ դայդի փոխուեց: Էդ սլէստչին եկաւ՝ իրա բանը

առաջ քցեց, բեգերն էլ չ'ուզեցին քէփին դիպեն, որ սուս արին:

«Էս գեղումը ուսմարան են բաց անում...»:

— Հա:

«Դուք քնչ էք ասել նրանց»:

— Մենք էլ ա հաւան դաբուլ կացանք, ամա Չատին ու էն մէկէլները թարս խօսացին:

«Թարս են խօսացել ու իրանք էլ թարսուեցին: Վանի-բեգի հետի մարդը ո՛նց մարդ ա»:

— Իմ վարավուրդով, մի շատ պատուական, դրստախօս ու շատ-շատ ուսում առած մարդ ա: Թալիմ կերած ձի չես տեսէլ, որ ասողերի հետ էլ խաղս ա ըլում, դրուստ էդ դայդի ա: Ինչ էլ խօսում ա՛ դիփ գրոջ: Բեգը նրա աղաքին ընէնց ա՛ ռոնց որ մենք բեգի աղաքին: Հմի դու իմացի՛ թէ քնչ կըլի...»

«Իմացայ. դա շկօլների մեծն ա-վարժապետների գլխաւորը:» Այս խօսքից յետոյ Ոսկանը ամբօխին դիմեց. «Դէ, ա խալիը, գնանք դպա ժամը, ամենքդ էլ մեզ հետ եկէք...»

Ամբօխը ծլլաշարով ընկաւ դէպի եկեղեցին:

Վերատեսուչը երբոր լսեց թէ՛ տանուտէրին պաշտօնազուրկ արին, չափազանց ուրախացաւ և նրա ուրախութեան շարժառիթը ոչ թէ այն էր՝ որ իր ցանկալի գործը այժմ միանգամայն յաջողակ էլք կ'ստանայ, այլ գլխաւորապէս այն՝ որ խեղճ գիւղացիք ազատուեցին մի տգետ, խարդախ, աւերիչ, գովող-զջլող տանուտէրից ու նրա խմբակից: Եւ պէտք է իմանալ, սիրելիս, որ խոհեմ, հեռատես, հասկացող, բարի ու անշահասէր տանուտէրը մի իր նման քահանայի հետ հրաշք-

ներ կարող է գործել գիւղում: Բայց ո՞ւր է այդպիսի անձը, ո՞ր հասարակութիւնը կարող է ծնել... Եթէ կան էլ, յանձն չեն առնում տանուտերական պաշտօնը այժմեան պայմաններով: Զեր միտն է Ոսկանի առաջարկութիւնը...

Վերատեսուչը ուզեց ժամհարին ուղարկել, որ ժողովրդին եկեղեցու գաւիթը հրաւիրի, տեսաւ՝ որ նրանք իրանց-իրանց էլ գալիս են. բեզն ու ինքն էլ եկեղեցու կողմը գնացին:

Արեգակի վերջին ճառագայթները ընկել էին սարերի գագաթների վրա: Արևմտադուռը կարմրաշողերով դեռ գունգունատում—փայլփլում էր: Այսօր եղանակն այնպէս ջերմ անցաւ, որ հալեցրեց արևկող տեղերի ձիւները ու ձնաջրերը առուններ դարձած թափվում էին բարձր տեղերից: Գիւղամէջն էլ ցխացել, մարդիկ ծնկնահար ցխաշաղախ էին եղել... Նրանք լցուեցին եկեղեցու բաց ու անպարիսպ գաւիթը: Ոսկանը քաղցր ժպիտով ու խորին յարգանքով դիմաւորեց վերատեսչին ու բեզին: Սրանք էլ յարգանքով նրա ձեռքը սեղմեցին: Հէնց ամբոխի մէջ վերատեսուչը սրտանց շնորհակալութիւն յայտնելով Ոսկանին՝ համառօտակի խրախուսեց՝ որ միշտ այդպէս աչքաբաց մնայ:

—Մեր էս խալիւր, գանգատուեց Ոսկանը, շատ միամիտ են. շատ-շատերը խաբում են սրանց, մեծ մեծ վնասներ տալիս: Բանի լաւն ու վատը առաջուց չեն կարում հասկանալ. աչքի տեսածին, անկաջի լսածին էն սհաթը հաւատում են: Էսպէս որ չըլէր՝ Չատին խի

քոխվա կրգառնար, Պետին, Միրզէն, Վերդին խի քեանդ-խուդա կը յիշուէին... Մի քիչ էլ իրանք պէտք ա աչքաբաց ըլեն, որ իրանց ջիւաւը խաբեբայ մարդի ճանգ չը քցեն: Էս բանի հմար էլ խելք, միտք, ուշք ա հարկաւոր. սրանք էդ էլ չունեն: Շատ վախտ իրանց լաւ ուզողին են բամբասում, ընկնում տուն քանդողների հետ...

—Ղորթ ա, աղա ջան, ինչ որ Ոսկանը ասում ա, վրաբերեց նոր տանուտէրը: Ա՛յ, օրինակ ասենք՝ ինձ՝ քոխվա շինեցին, ամա էս ինչ կարամ ընէնց քոխվութիւն անել, ոնց որ կարգն ա: Չուանց օրս սարերում ու քոլերում եմ ման եկել, իմ հունարը արջերին ու գէլերին եմ նշանց տուել, հմի ընէնց քոխվութիւն պէտք ա անեմ, որ ամենքն էլ ըռա գի ըլեն... Աստճու տուածից, մի դարդակ «այք բէն» էլ չեմ գիտում, որ իմ սրտի խոխուրդը իմ ձեռովը գրին բզեմ, ոչ ով չիմանայ...

«Մենք էլ հէնց այդ ենք ասում, խօսեց բարձաձայն վերատեսուչը, որ եթէ դուք չը գիտէք՝ գոնէ ձեր որդիքը գիտենան ու եդքան նեղութիւնների մէջ չընկնեն: Ի՞նչ անի մէնակ խեղճ Ոսկանը: Այս գիւղում եօթ-ութ հարիւր հոգուց աւելի տղամարդ կայ (* և միայն Ոսկանն է՝ որ մի փոքր բան է հասկանում ու շատ անգամ կարողանում է ձեզ ազատել վնասող ձեռքերից: Բայց երբ էք տեսել, որ մի ծաղկով զարուք

*) Գիւղը մօտ 300 տուն ունի. խրաքանցիւր տան վրա մեկ, երկու, երեք ու չորս տղամարդ նաշուելով ու միջին քիւշ նկատի առնելով՝ ութ նարիւրից անցնում է:

գայ: Դա այս գիւղի համար, ինչպէս ես նկատեցի, մի ծաղիկ է՝ փշերով շրջապատուած: Այդպէս որ մնաք՝ ինչպէս մինչ օրս մնացել էք, փշերն աւելի կը շատանան ու էդ մի ծաղկին էլ կը խեղտեն իրանց մէջ ու դուք էլ փշախեղտ կը լինէք: Ցանկացէք, որ ծաղիկներն աւելանան, փշերը արմատից չորանան, այնպէս, որ գիւղը մտնողը ծաղիկ մարդկանց բուրմունքից զմայլուի, էլ չուզի ուրիշ տեղ գնալ: Ասածիս ճարը արդէն գըտնուած է: Դրա ճարն ու դարմանը հէնց ես եմ, որ ընկել եմ սար ու ձոր, սիրով յանձն եմ առել ամեն նեղութիւնների յաղթել, ճիգը թափել՝ որ ո՛չ թէ միայն այս գիւղի՝ այլ և մեր երկրի բոլոր հայ-մանուկները ուսուսմով, խելքով ու շնորհքով փթթեն, ժամանակին մի մի հոտաւէտ ծաղիկներ դուրս գան մեր խեղճ ազգի համար: Ես աշխատում եմ՝ որ մեր մանուկները կ'ըթ ու ա ծ մարդիկ մեծանան և պաշտպանեն թէ իրանց ծնողաց և թէ հայրենի հողը աւերիչ ձեռքերից: Եթէ դուք այժմ չէք լսիլ խօսքս, իմացած եղէք, որ հայրութիւն չէք անում ձեր զաւակներին, նրանք էլ ապագայում իրանց խոնարհ որդիական պարտքը չեն կատարիլ...

— Մենք ամենքս մինչև երկինք շնորհակալ ենք ձեզանից, ասաց Ոսկանը, որ էդ գործը մեզ համար կատարում էք: Ապա յետ դարձաւ ամբօրին. ա խալխը, խօ լաւ լսեցիք ա զի ասածները: Աշխարհքի մեղաւորը խօ մենք չենք, որ սարըցի ենք: Մենք որ գիր չենք գիտում, փէշակ էլ չունենք, ուսում էլ եօխալը՛ր, դրա համար էլ սարըցի են ասում մեզ... Չուանց երբ պէտք ա հէնց սարի հայվանի պէս կենանք: Ասենք՝ մենք մեր

ինչ ըլիլուն զաբուլ... բա մեր երեխէքը խի մեզ նման մեծանան, ոնց որ աղէն հրամայեց, մի մի ծաղիկներ չը դառնան...

— Ոսկան ջան, ընդմիջեց մէկը, էսօր առաւօտ մենք բեզերի հետ էլ ենք խօսացել ու ուրախ ուրախ զաբուլ ենք կացել էդ բանին: Մենք խնդրել ենք, որ թղթերը գրեն, մենք էլ ձեռք դնենք: Դրանում ով որ քար էր քցում, քարն իրան գլխին ընկաւ, պոճանք: Հմի սարըցին նա ա, ով որ իրան տըղի կարգալը, էս Աստու սեղանի առաջին ծլւլալը չի ուզիլ: Ա խալխը, ամենքդ էլ մի բերան ձէն ածեցէք, ինչ բանի էք, խի էք լալկել: Խի էք թողնում, որ աղի բերնից վէր թափած մարգարիտները գետին ընկնեն...:

Ընդհանուր աղմուկ տեղաց և աղմկող ձայներից լսվում էր այսպիսի խօսքեր. «Մեր հօր մէջքը ծկըթի, ինչ կըլէր՝ որ մի ըսէնց բարեխօսի լսէին ու մեզ էլ գրի սև ու սիպտակը նշանց տալ տային... Սղբէր, մենք մեր երեխանցը զրկենք ոչ, որ եղնա էլ նրանք մեզ գ ե ո բ ե գ ե ո բ չանեն... Աշխարհումը ծոցիդ գիր ու զալամ չըլի, ձեռիդ սուր ու թուր, ուսիդ թոփ ու թուանք, տակիդ քեահլան ձի, բերնումդ հրեշտակի լիզու, գլխումդ գրի խելք, սրտումդ խղճմտանք, ինքդ աժդահա չըլես—նհախ ապրել ա, հայվանութիւն ա: Ամա հայվանն էլ ունի իր պոզերը, մենք էդ էլ չունենք: Խի հայվան կենանք—ն ա մ ա ր դ, որ կարող ենք մարդ ըլիլ—ջ ո մ ա ր դ...»:

ԼԲ.

ՔԱՐՈՉ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՎՃԻՌ.

Աղմուկը շուտով ընդհատուեց: Վերատեսուչը յայտնեց՝ որ Վանի բեգի օգնութեամբ ինքն արդէն գրել, վերջացրել է այն բոլոր թղթերը, որոնք վերաբերում են ուսումնարանի մշտական պահպանութեանը. մնում է՝ ժողովրդականք ստորագրեն և տանուտէրը վաւերացնի նրանց:

— «Հմի, էս մութ վախտը ուրիշ տուն գնալ չի ըլիլ, ասաց բեգը, եկէք մտնենք եկեղեցին ու էնտեղ կարդանք թուղթը, իմացէք միտքը, թէ որ մի բան աւելի կըլի գրած, վնաս չունի՝ կարող ենք ջնջել»:

— Բեգը լաւ ասեց, խօսեց Ոսկանը, մտնենք ժամը: Ամա, ա խախը, ամենքդ էլ մի մի շահու մոմ առէք, վառեցէք, որ Աստօծ մեր էս բանին յաջողութիւն տայ, մեր երեխանցը խելք ու շնորհք...

Այնուհետև դուրսը «տէր ողորմեա — տէր յիշեա» խօսքերից աւելի ոչինչ չը լսուեց: Նրանք եկեղեցու

պատերիցն ու միջնաներիցն այնքան վառած մոմեր կը պարհն, որ առաստաղից կախուած սարգի ոստայներն էլ պարզ նկատվում էին...

Ժամասացութիւնը իսկոյն վերջացաւ: Բեգը տէր հօրից խնդրեց՝ որ ուսումնարանի մասին մի համառօտ քարոզ խօսի. տէրտէրը կասկածանքի տակ չմնալու համար, առանց երկար մտածելու, սկսեց.

«Սիրելի ժողովուրդ, ես գիտեմ՝ որ դուք էս բեգերի խաթէր էք ժամ եկել, թէ չէ՝ էսքան հոգի ո՞վ ա տեսել ժամումը: «Խ ա դ ա դ ու լ թ իւ ն» եմ տուել՝ մի մարդ չի ըլիլ՝ որ երեսին խաչակնքի: Ժամ եկէք ժամի հմար, ոչ թէ խաթրիչուն: Էս լաւ իմացած ըլէք: Զեզ դրուստն ասեմ՝ ես միտք չունէի՝ որ էս գեղումը ուսմարան բաց ըլէր, դրա խաթէր էլ ոչ խէրին էի խառնվում, ոչ շառին: Հմի որ տեսնում եմ դուք ըտէնց հոգով ու մարմնով կպել էք, Աստօծ էլածն օրհնի: Ես էլ կուզեմ, որ «բեգերի» էս գործը բարի ըլի գեղին օգուտ: — Խալֆի ուսմարան չըլի, լաւն ըլի: Միայն ձեզանից մի բան եմ խնդրում. դուք գիտէք՝ որ ես միքանի մօնթ ունեմ. ուսմարանը որ բացուի, նրանք էլ ինձանից դուրս կը գան ու ես կը զրկվեմ իմ օգուտիցը: Էս ըսէնց ըլիլուցը ետոյ խնդիրս էս ա, որ դուք ձեր տուրքը քիչ աւելացնէք: Օրինակ, որ ազիզ օրերը գանձանակ եմ մանգալիս, գրոշներ քցող չկայ — որը մէխ ա քցում թէփշին, որը բամբակ, որը նալ, երկաթի կտոր, մի թղթի պատառ, մի երկու խուռնի... Զատկի իրան օրը չորս հատ հատ գրոշ գանձանակ ըլաւ ու երկու փէշ անպէտք բաներ: Զեր տուրքն եմ ասում. նեղանաք ոչ տեղն եկաւ՝ ասեցի: Դէ օրհնեալ էք և օրհնեալ եղիջիք»:

Տէր հօր վերջին խօսքերը գնդակի պէս ծակեցին ժողովրդի սիրտը: Շատերն ուզեցին ընդդիմախօսել, չը համարձակուեցին, ըստ որում գիտէին՝ որ եկեղեցին ընդդիմախօսութեան տեղը չէ: «Քանի մի հարիւր տունը վէր կոխած ուտում ես, երկու-երեք տէրտէրի արդիւնք ես ստանում, հէրիք չէ, ժամի միջին՝ բեզերի առաջին գեղի անունն էլ կտորում ես...» Այս մտքերով եռաց ամբօխը:

Վերատեսուչը շուտով տէր հօրից իրաւունք ըստանալով՝ թղթերը ձեռքին առաջ կանգնեց. նա մի նախաբանով ժողովրդին տրամադրեց ուշադրութեամբ լսելու և ինքն սկսեց կարգալ հետևեալը.

« Հ ա ս ար ա կ ա ց վ ճ ի ո »

Փ... գիւղի ժողովրդականքս միաձայն խորհրդով դիմում ենք Վրաստանի և Իմերէթի հայոց թեմի հոգևոր դպրոցաց թեմական վերատեսչին՝ խնդրելով մեր գիւղում ևս հիմնել մի օրինաւոր ծխական հոգևոր ուսումնարան, հետևեալ միջոցներով.

1). Մեր գիւղում գտնվում են հինգ առևտրական խանութ, որոնց տէրերը իւրաքանչիւր տարի գիւղին վճարում են մի մի որոշեալ գումար—առևտուր անելու թոյլտվութիւնը ստանալու համար: Առաջինը վճարում է տարեկան 70 մանէթ, երկրորդը՝ 55—երրորդը՝ 40—, չորրորդը 25—, հինգերորդը՝ 15—, ընդ ամենը 205 մանէթ: Հասարակաց ժողովը վճռեց, որ այս եկամտից

գոյացած գումարը հոգաբարձուք ամեն տարի պարտաւոր են ստանալ և գործ դնել ուսումնարանի օգտին:

2). Սոյն վճռի զօրութիւնով, գիւղիս տանուտէրը պարտաւոր է պահպանել ելլամտից մատեան «գիւղական կառավարութեան» մանր-մունր ծախքերը և մուտքերը գրելու համար: Տանուտէրը պէտք է համառօտակի գրել տայ մատեանի մէջ թէ՛ իւմից, իւմ մօտ, ինչի համար իրքան տուգանք առաւ և տուգանքներից քոյացած գումարը ամեն շաբաթ պէտք է յանձնէ հոգաբարձութեան գանձապահին՝ ստացական առնելով նրանից, իսկ ամիսը մէկ անգամ պարտաւոր է օրինաւոր հաշիւ տալ հոգաբարձական ժողովին: Այս աղբիւրից տարեկան առ նուազն կը գոյանայ 150 մանէթ—«կառավարութեան» ծախքը հանած:

3). Հասարակութիւնս ամեն տարի սովորաբար վաճառում է արօտատեղերի երեսը ոչխարատէրերի վրա շատ կամ քիչ գումարով: Սրանից գոյացած գումարի մի երրորդ մասը հոգաբարձուք պարտաւոր են ստանալ տանուտէրից և գործ դնել ուսումնարանի օգտին: Այս աղբիւրից ուսումնարանին տարեկան կը հասնի առ նուազն 100 մանէթ:

4). Հասարակութեանս ամեն մի տուն պարտաւորվում է կալամ ու տ քից մասը հանել ուսումնարանի համար: Հոգաբարձուք պէտք է տանուտէրի հետ արդարութեամբ բաժանեն տները չորս դասակարգի. առաջին դասը պարտաւոր է տալ վեց տեղական չանաղ ցորեան, երկրորդը՝ չորս, երրորդը՝ երկու, վերջին չքաւոր դասը ազատ են: Այս տուրքը պէտք է պարտաւորական համարուի: Ժողովողները հոգաբարձուք պէտք է

է լինեն: Միջին թուով, այս տուրքը կը հասնի 200 փութ ցորենի, որի արժէքն է 150 մանէթ-սովորական գնով:

5). Հասարակութեանս ամեն մի տուն պարտաւորվում է խոտ հարքից մասը հանել ուսումնարանի համար: Հոգաբարձուք տանուտէրի հետ պէտք է արդարութեամբ բաժանեն տները դարձեալ չորս դասակարգի. առաջին դասը պէտք է տայ տասը խոտ-խուրձ. երկրորդը՝ ութ—, երրորդը՝ վեց—, վերջին չունևոր դասը ազատ է: Այս տուրքը նոյնպէս պարտաւորական է համարվում: Պէտք է ժողովի հոգաբարձութիւնը և ժամանակին վաճառի, որից, միջին թուով, կը գոյանայ 2500 խոտ-խորձ և այդքանի արժէքն է 125 մանէթ-սովորական գնով:

6). Մեր եկեղեցին ունի մօտ 500 մանէթ գումար, որը ցրուած է զանազան մարդկանց վրա տեղական տոկոսով: Այդ գումարի տոկոսը նոյնպէս յատկացնում ենք ուսումնարանին, որ տարեկան 100 մանէթի կարող է հասնել, եթէ հոգաբարձուք հետևին և ոտանան:

7). Սոյն վճառի զօրութիւնով, գիւղիս իւրաքանչիւր հարսանքատէր կամ պսակվող պարտաւոր է նուիրել ուսումնարանին մէկ մանէթ: Հոգաբարձուք պէտք է զգաստ լինեն և միշտ ստանան այդ նուէրը, որից տարեկան կը գոյանայ մօտ 50 մանէթ:

8). Մեր հանդում գտնվող «Մանտուր» անունով ուխտատեղի արդիւնքը, որ մինչ օրս զանազան ձեռքերում անյայտացել է, այսուհետև յատկացնում ենք ուսումնարանին, որ հոգաբարձուք նրա տօնի օրերը աչալըջութեամբ վերահսկեն ու արդիւնքը ժողովեն, որից

կը գոյանայ տարեկան առ նուազն 40 մանէթ:

9). Վերոգրած մշտական աղբիւրներից տարեկան գոյանում է 900 մանէթ—նշանակած քանակութեան համեմատ: Այս գումարի իւրաքանչիւր տարուայ աւելցուցը, ուսումնարանի տարեկան ծախքը հանած, հոգաբարձուք իրանց պատասխանատվութեամբ պարտաւոր են շահեցնել ու կազմել դրամագլուխ՝ ուսումնարանի ապագան միանգամից ապահովելու և նրա ծաւալը մեծացնելու համար:

10). Գիւղի բոլոր երեխաները, առանց բացառութեան, պէտք է ընդունվեն ուսումնարանում և կարգան ձրի: Հոգաբարձուք ոչ մի կերպ դրամական պահանջ չը պէտք է անեն ծնողներից որպէս գին իրենց որդոց ուսումնառութեան:

11). Սոյն «Հասարակաց վճիռը» ներկայից սկսած զօրութիւն ունի մինչև տասը տարի և այդքան ժամանակամիջոցում ամենայն սրբութեամբ պէտք է կատարուեն սրա մէջ լիշատակած յօդուածները: Սրանից գրուեցաւ երկու օրինակ, մէկը մնալու է «գիւղական կառավարութեան» մէջ, միւսը առաջարկում ենք թեմական վերատեսչին՝ խնդրելով պարտ ու պատշաճ տրնօրէնութիւնը:

«Ահա, կարդալուց յետոյ ասաց վերատեսուչը, այս է գլխաւոր թուղթը, որ կարդացի: Ես, սիրելիք, այնպէս եմ արել, որ գիւղի բոլոր երեխայքը ձրի կարգան և ուսումնարանը մշտական լինի: Ուսումնարանը ժողովրդական է և ես նրա հիմքը հաստատում եմ ժողովրդի սրտի ու հոգու վրա: Ժողովրդի տուրքը շատ շատ է օտարներին, աւելի լաւ չէ, որ նա որդոց կը»

Թուօթեան գործը ապահովի իր մշտական տուրքով: Ով որ իմ կարգացած թղթի դէմ ասելու բան ունի, ես խնդրում եմ՝ առանց քաշուելու՝ խօսի, ձայն տայ...»:

Մարդիկը մին-մնի երեսին նայեցին: Ոսկանը որ առաջ էր կանգնած, երեսը դարձրեց. «Ս. խալիսը, լաւ իմացա՞ք կարգացածը: Մեր քոխվի առած շտրափները հմիկանց եղը ուսմարանինը պէտք ա ըլի ու նա էլ անկարգ շտրափներ չ'պէտք ա առնի... Կալերին ոնց որ աշուղներին ու դարվիշներին ց որ ն ա փ ա յ ենք տալիս, ընէնց էլ մեր ուսմարանին պէտք ա տանք... Խ ո տ հ ա ը ք ի ն մի քանի խոտ-խուրձը... Մեր հանդի երեսը որ ծախում ենք, առած փողի իրեքից մի փայլը պէտք ա տանք... Մեր ժամի փողի շահը, որ չուանց էսօր զուր կորել ա... Մեր «Մանտուռ խաչի արգիւնքը... Ով որ էս գեղումը հարսանիք ըլի՝ մի մանէթ պէտք ա բաշխի ուսմարանին... Էս ընէնց տուրքեր են, որ զեղին մի մաղի դդար վնաս չի հասնիլ: Ս.առնց էգ էլ՝ մենք ինչքան տալիս ենք աշուղներին, մուլլաներին, դարվիշներին, ամա սրանց տուածը կորած ա, մեր ուսմարանին տուածը էլ մերն ա մի ջբիցդ մէկէլ ջիբդ ես գցում. մեր երեսէքը մինը քսանով լետ կըստանան, մեր տները կը բերեն: Է՛լի ասում եմ էս տուրքը մեզ համար ոչինչ ա-մի կաթիլ ջրի պէս, ամա կաթիլներից գեօլ ա դառնում: Հմի ասեցէք՝ էս զրածին ղաբուլ էք թէ չէ»:

— Մենք էլ լաւ իմացանք, Ոսկան ջան. ասաց մէկը: շատ լաւ ա գրած: Սրտով ղաբուլ ենք...

— Մեզ մի մեծ վնաս չունինք, կամաց լսուեց ամենքից, խի՞ չենք ղաբուլ: Էգ զրածները հէնց մեզա-

նից դուրս ա գնում, կորչում- հազիր մեր երեսէքը դիր սովորեն, աչքաբացուեն...

«Շնորհակալ եմ, որ համաձայն էք, ընդհատեց աղմուկը վերատեսուչը. միայն մի բան կայ, պէտք է այն ևս հասկացնեմ: Ուսումնարանը պէտք է կառավարիչներ ունենայ, որ այդ ամենը ժողովեն, հոգան, գործեն այնպէս, ինչպէս ես նրանց կը պատուիրեմ: Իրանց «հոգաբարձու» անունն են տալիս: Ընտրեցէք ձեր միջից երեք մարդ, որ այժմէն նրանց էլ հաստատեմ հոգաբարձական պաշտօնի մէջ: Ես իմ կողմից մէկը և գլխաւորը Ոսկանին եմ առաջարկում, գիտեմ՝ որ դուք էլ նրան կընդունէք, ինքն էլ մեր առաջարկութիւնը...»

Ս.ղո՛, ասաց մէկը, մենք Ոսկանին ղաբուլ ենք. թող ինքը իրան հմար իրա սրտի ուզած ընկերներ գըտնի. մեր ջոկածը վնչ թէ դրա բաբ մարդ չ'ըլի... ասած ա բաբը բաբին որ չգտնի՝ օրը սև անց կկենայ...

Ս.յս խօսքը արձագանք գտաւ ժողովրդի կողմից: Ոսկանն իսկոյն երկու մարդի անուն տուեց, որ կարող էր նրանց հետ ամենայն արթնութեամբ գործ կատարել, թեմական վերատեսչից ստացած հրահանգների ու գիւղի հանգամանքների համեմատ:

«Այժմ ամեն ինչ վերջացած է, ասաց վերատեսուչը. մնում է՝ որ «հասարակաց վճռին» և «ընտրութեան թերթին» ստորագրէք, տանուտէրն էլ վաւերացնի ու ինձ տայ»:

Բեգը ամենայն համեստութեամբ խնդրեց, որ ով որ զրազէտ է, մարդկանց անունը կարող է ստորագրել, սեղանից մօտիկ կանգնի: Հինգ հոգի առաջ եկան: Իսկ դո՛ւք, սիրելիք, շարունակեց նա, այժմ կենա կենա

եկէք, սեղանը համբուրեցէք ու էս գիր գիտացողներին
ձեռք տուէք, որ զարուլ էք ու ձեր ազգ ու անունը
ձեռք քաշեն էս թղթերի վրա: Էս իրիկու ամեն բան
պէտք ա վերջանայ...»

Փողովուրդը ջերմեռանդութեամբ լցուել և միան-
գամայն ապահով էր այս «հիմնարկութեան» բարերար
հետեւանքի մասին: Սուրբ տաճարը կենդանի վկայ էր
անցքին: Մարիամ Աստուածածինը սուրբ սեղանից վառ-
վառն աչքերով գիտում էր ամենքի սիրտը, լսում
ամենքի խօսքը: Ո՛վ ուրեմն այս տեղ կարող էր կեղծ ու
խաբերայ լինել...

Մահտեսի Վիրապը միայն բացառութիւն կազմեց.
նա շուտ զողորմալով դուրս եկաւ ու խռովածի պէս
հեռացաւ:

Վերջում տէր հայրը «պահպանիչ» ասեց՝ բարձ-
րաձայն օրհնելով ու բարեմաղթելով հիմնարկած գործի
յաջողութեան մասին:

«Այս սուրբ տաճարը, ասաց վերատեսուչը, լինի
մեզ օգնական և երկիր տարիներով պահպանի իր ծո-
ցում մեր այս նոր հիմնարկութիւնը: Ես, եթէ
տէրը յաջողեց, շուտով կ'ուղարկեմ այս գիւղը մի հաս-
կացող, բարեխիղճ, լաւ վարքի ու բարքի տէր վար-
ժապետ, որը այս սուրբ տաճարի համար աւելի զար-
գացած ժողովուրդ կը պատրաստէ ծաղկափթիթ մա-
նուկներէ...»

— Ամէն, Աստուած տայ...:

Այս եղաւ վերջին խօսքը: Երկու ընկերացի լետոյ
ժամհարը վառած մոմերի նամ ծուխն երբ ժողովեց
ու եկեղեցու դուռը փակեց:

ԼԳ.

ԽՐԱԽՈՅՍ. ԳՈՂԸ ԲՈՒՆՈՒԵՑ.

Այս երեկոյ գրագետները «թղթերի» տակ ստորա-
գրեցին իրանց ձեռք տուած մարդկանց ազգ-անուն-
ները և տանուտէրն էլ վաւերացրեց նրանց:

Վերատեսուչը հոգաբարձուաց հաստատեց իրանց
պաշտօնի մէջ, տալով նրանց հաստատութեան թուղթ
և ապա խրախուսեց այսպէս.

«Այսուհետև դուք երեքդ միաբան եղբայրներ
պէտք է լինէք: Դուք պէտք է գործով ապացուցէք՝ որ
հասկանում էք հոգաբարձական պաշտօնի վսեմ նշանա-
կութիւնը. լոկ անուամբ սուտ չպէտք է փայլէք: Հո-
գաբարձուկը նշանակի՝ հոգ տանել մանուկների կրթու-
թեան գործին: Դուք ուսումնարանի կեանքը միանգա-
մից պէտք է ապահովէք թէ «հասարակաց վճռում»
որոշած դրամական աղբիւրներով և թէ այլ միջոցներով:
Դուք կարող էք գտնել ուրիշ միջոցներ ևս. ձեզանից
ծածուկ ոչինչ բան չկայ գիւղում: Բեգերից ու աստի-
ճանաւորից կարող էք նուէրք խնդրել և ես ձեզ հա-

մար կ'ուղարկեմ մատեաններ ուսումնարանի ծախք ու մուտքը մի առ մի գրելու: Դուք ինքներդ ընտրեցէք ձեզանից մէկին գանձապահ, որ նա իր պատասխանատուութեամբ ուսումնարանապատկան փողը պահպանի: Եղէք ամեն դէպքում սիրով ու միախոհ: Ժողովուրդն էլ երբ ձեզ գործի մէջ աշխատող ու սիրով կը տեսնի, աւելի կը գրաւուի: Դրանով դուք ձեր պատիւն ու ուսումնարանի հռչակը կը մեծացնէք և միշտ բարերար ազդեցութիւն կունենաք թէ այս գեղի և թէ շրջակայ գիւղերի վրա... Դուք ձերը համարեցէք գիւղի բոլոր մանուկներին և նրանց ծնողաց հետ միշտ սիրով վարուեցէք: Այժմէն, որքան կարելի է, աշխատեցէք ուսումնարանի համար փող ձեռք բերել: Ես ուսումնարանի հիմքը հաստատեցի եկեղեցու հովանաւորութեան տակ՝ ժողովուրդն ունենալով առհաւատչեայն: Դուք աշխատեցէք մեծացնել նրա ծաւալը: Ես կ'աշխատեմ յառաջիկայ մարտ ամսում մի բարեխիղճ ուսուցիչ ուղարկել այստեղ: Սիրով կընդունէք նորան և կը ծանօթացնէք գիւղի լաւ լաւ մարդկանց հետ: Ապա նա էլ կ'լինի ձեր աջակիցը և խորհրդատուն: Դուք նրա հետ միասին կը վարձէք մի տուն ու փառաւորապէս ուսումնարանի բացման հանդէսը կը կատարէք: Եւ ես, ուր էլ լինեմ, իմ խնամքն ու հովանաւորութիւնը չեմ պակասեցնի ուսումնարանից: Գոհ կը լինեմ՝ եթէ պատուէրս սրբութեամբ կատարել ու իմ յոյսերը պահել էք, դժգոհ —, եթէ հակառակը տեսնեմ: Այժմ ինչ էք ասում, Ոսկան, Բեգլար, Մակիչ, կատարելու էք ասածներս թէ ոչ...»

— Շատ սիրով, շատ սրտով կը կատարենք, ասաց

Ոսկանը լի քաղցր տրամադրութեամբ, քու ասածները մտաւ մեր բէյնի մէջ՝ ոնց որ նեղբերան ամանի փորը մեծ քար ընկնի ու էլ դուրս չգայ ընտեղից: Մարտ ամսին անպատճառ վարժապետին ղարկի, թող գայ. մենք համ նրա երեսը պարզ կ'անենք. համ մեր... Միայն թէ նրա դունուղը...

«Հա՛: Նրա ռոճիկը առ ժամս քիչ կը վճռեմ, յետոյ՝ երբոր ուսումնարանը կը հարստանայ, դուք ձեզ ու ձեզ էլ կը շատացնէք:»

— Ե՛ս էլ, աղա ջան, ասաց տանուտէրը, վախիւ մի, ձեռս է դբանի վրա կունենամ, չեմ թողնի՝ որ ոչ ով նեղութիւն քաշի...

«Գիտէք, ինչ կայ, ընդմիջեց բեգը. ես էլ էս գեղի ծնունդն եմ ու էս գեղի գաւակ: Իմ երախտագիտութիւնը գեղին ցոյց տալու համար՝ ամեն տարի, քանի կենդանի եմ, պարտաւորվում եմ էս մեր շկուլին տալ 25 մանէթ: Իմ ուժն էլ էդքանն ա պատում...»

— Շէն կենաս, Վանի բեգ ջան, քու խնամքը հէնց միշտ մեզ վրա պէտք ա ըլի. դու հէնց մեր մեծն ես ու մեզ լաւ լաւ խրատներ տվողը...

Այս քաղցր խօսակցութեան միջոցին գգիւրը ներս մտաւ ու մի ծրար դէմ արեց տանուտէրին: Սա էլ անզրագէտ լինելով՝ վերատեսչին խնդրեց՝ որ կարգայ ու հասկացնի միտքը: Վերատեսուչը ծրարից հանեց նամակը ու սկսեց միամտաբար կարդալ.

«Սիրելի տանուտէր Չատի,

էս երրորդ նամակն ա՛ որ զարկուծ եմ քեզ: Ենոր-
հակալ եմ առաջի նամակներս պատասխանը գրել էիր:
Մանաւանդ Հմի շատ նիգարան եմ, թէ քնչ արիք
ձեր գեղն եկած բեգերին: Դուք յաղթեցիք թէ նրանք:
Ել ըսկի մի խաբար չը լսուեց: Էսքան որ էդ չարամիտ
բեգերը գեղուծը մնացին, Հալբաթ կարողացել էք ձախել
դրանց վնասակար գործը: Եստ ուրախ եմ, եթէ էսպէս
ա: Յոյս էլ ունեմ՝ որ դրանց անպատուած ճանապարհ
դնէք: Դրանց խաբեբայուծիւնը քաղաքիս մեծ մարդ-
կանցն էլ յայտնի ա: Դուք էս չորս օրուծը ոնց չը
կարացիք դրանց գեղիցը փախցնիլ: Ախր դրանց միտքը
որ բարի ըլէր, ինձ էլ իմաց կանէին, ես էլ դրանց հետ
կը գայի... Ամա իմ կշտին իրանց կեղտոտ գործը չէին
կարող բռնել, դրա հմար էլ թաքուն եկան: Սաղ գե-
ղը դրմբացրէք, հազար ու մի շաւեր մոգոնեցէք, խալ-
խին շուռ տուեք ու խուկեցէք ձեր միջիցը: Թող էդ
խաբեբաները լաւ իմանան՝ որ գեղուծն էլ իմաստուն
մարդիկ կան, իրանք չեն կարող իրանց մուրազին հաս-
նիլ... Ես էլ միշտ ձեր օգնականն եմ ու ձեր բարին
կամեցողը:»

«Անիծած Ոսկանը չը կարողացաւ բան շինել, զուր
ըստեղ ման ու ման արեց ու լետ դառաւ: Ես նրան
ամեն բեգի մօտից էլ խուկել տուի: Դու արխէին կաց.
միշտ տանուտէր կը մնաս ու կը մնաս... Մինչև Ոս-
կանի գեղը հասնիլը դուք ձեր բանը վերջացրէք, գե-
ղը լլղեցէք, պղտորեցէք որ բեգերը չը կարենան ձու-
կը որսալ...»

«Պատասխանն ու էս իմ գրած նամակը իրար մէջ
դրած էլ եդ ինձ ուղարկիր գեազիս ձեռովը: Դու էլ

շուտով քաղաք արի, որ մի-մին պատմես՝ թէ բանը
ոնց քանդեցիք: 187... փետրուար- ՚ի ք. Գեանջա.»

«Ձեր բարեացակամ Եմալ-բեգ»:

Սրուռն ընկաւ լսողների վրա. նրանց մազերը բիզ
բիզ կանգնեցին: Ոչ ով չէր կարծիլ՝ թէ այսպէս բան
էլ կարող է պատահել ու նամակը բռնուել: Վերատե-
սուչը նոր գղջաց՝ որ զուր Վանի-բեգին էր վերաբերուծ
անյաջողութիւնները...

Մի քանի րոպէ ոչ ով չը խօսեց. միայն իրար ե-
րեսի էին նայուծ. նրանց սիրտն էր լեզու առել, իրար
հետ խօսուծ...

«Վերջապէս, ձայն հանեց վերատեսուչը, արդէն
գողը բռնուեց: Դուք էլ, եղբարք, արդէն իմացաք
թէ ով է ձեր թշնամին և որպիսի գնդակ է շարտուծ
մեր գործի վրա: Աստուած մեզ հետ է: Իսկ ես շատ
շուտով սև մուր կը քսեմ Եմալ-բեգի ճակատին: Թո՛-
ղէք այս նամակը ինձ մօտ մնայ: Խեղճը դեռ ևս կար-
ծուծ է՝ թէ Չատին տանուտէր է...»

— Սև մուրը, աղա՛ ջան, մենք դհա թէգ կը քսենք
նրա ճակատին: Էս գեղուծը թագաւորի պատիւ ունէր,
Հմիկանց եղը կը տեսնի. նրա ոտը հէնց կտրենք, որ
էլ էս գեղը չը մտնի...

Տանուտէրը հրամայեց զգրին, որ նամակ բերող
օտարականին մէկ գոմուծ տեղաւորի ու առաւօտը ճա-
նապարհ գնի՝ առանց իր երեսը բերելու:

Այս երեկոյ բոլորը միասին ուրախ ուրախ ընթրեցին:

Առաջօրեան «երկու ձիաւոր» գեղից դուրս գնաց: Զիաւոր մարդկանց մի խումբ նրանց շրջապատուած մինչև Գանձակ տանող ճանապարհի կէսը անցկացրեց:

Այնուհետև մայրերն իրանց որդոցը գգվում, յորդորում ու ուրախացնում էին, որ նրանք շուտով պէտք է գնան ուսումնարան, տետր ու ժամագիրք կարդան, ժամումը ծլվլան...

— Մէրա, ագի, մենք «էն խալփի» կուշտը կարդալու չենք գնալ:

«Ձէ, որդիք, ձեր վարժապետը «խալփէն» չի ըլիլ, մի սիրուն հագած-կապած, սև աչք-ունքանի, բոյով բուսաթով, շէնքով-շնորհքով, հալալ-զուլալ, ջհէլ-ջիվան տղայ կ'ըլի: Նա ձեզ նման երեխանցը շատ կը սիրի: Նրա կուշտը ո՞նց չէք գնալ...»

Երեխաներն էլ մի և նոյն բանը իրար ասելով, գուրգուրելով, խնդում-թուշկոտում էին, որ քանի ազատ են՝ խաղից կշտանան, յետոյ պէտք է նստեն-կարդան ու կարդան, մինչև որ ժամումը ծլվլան...

ՎԵՐՁԻՆ ԳԼՈՒԽ.

Այս անցքից յետոյ մէկ ամիս անցաւ: Լրագրութեան մէջ ընթերցող դասը մի լուր կարդաց —

Գանձակից մեզ գրում են՝ «Փ. գիւղում մի նոր սուսումնարան է բացուել: Մի քանի օրուայ մէջ ժո-

ղովուել են 70 մանուկներ և դեռ աւելանում են... Աւսուցիչը իր գեղեցիկ վարմունքով վայելում է ժողովրդի սէրն ու համակրութիւնը: Գանձակեցի Շմալ-բեգը որքան աշխատում է ժողովուրդը կուսակցութեան բաժանել ուսումնարանի դէմ, նա այնքան միանում է: Միակ խոչընդոտը ուսուցչի համար դասագրքերի փոփոխութիւնն է. ծնողը տետր ու ժամագիրք է տալիս իր երեխայի ձեռքը, ուսուցիչը նրանց փոխում-«մայր ենի լեզու» է տալիս... վերջապէս, ցանկալի էր՝ որ այդ ուսումնարանը օրինակելի լինէր շրջակայ գիւղերի համար»:

Բայց որպէս հիմնուեց այդ ուսումնարանը, որքան նեղութիւններ կրեց թեմական վերատեսուչը, քանի վարդապետական քարոզներ խօսեց, անսովոր կեանքի մէջ քանի օր ծփաց... ոչ ով էլ չը հետաքրքրուեց սրանցով: Կարդացին ու թերթը շրջեցին...:

Այդ լրից յետոյ չորս տարի էլ անցաւ: Գիւղին շրջապատող խոշորատեսիլ լեռների միջով կտրող որ և է ճանապարհով ցած եկող ստարականի աչքը նախ և առաջ հանդիպում էր մի հոյակապ շինութեան, որը հիմնած էր գիւղամիջի մի բլրակաձև բարձրութեան վրա: Նա իր բացառակի դրութեամբ ստարականի ուշադրութիւնը երկար միջոց իր վրա ձգած պահում էր: Սա երևի գիւղի եկեղեցին է, մտմտալով մօտենում էր ստարականը:

Սակայն՝ բարի ու աշխատասէր ուսուցիչը իսկույն

Հրաւիրում էր անձանօթին նախ կարդալ դուան ճակատաքարի քանդակած արձանագիրը «Ս ու ը բ Գ Է ո ը գ ե ա ն Ո Ւ Ս Ո Ւ մ ն ա Ր ա ն» և ապա ներս էր Հրաւիրում այդ բաղմասնեակ շէնքին նայելու, մանկանց շառաղարիմութեամբ զմայլվելու...



4699



ՅԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴԱՅ

ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐԸ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս



	Օրինակ
Տիկին Դարիա Յովհաննիսեան	10
Ստեփաննոս Իգմիրեանց	6
Հայկանոյշ Մարտիրոսեանց	10
Նիկողայոս Խարութեանց	10
Բարայեան	2
Տիկին Եւանգոլեանց.	2
Բարսեղ Առաքելեան	1
Նիկողայոս Ամիրադեանց	1
Կ. Մատինեանց	2
Մ. Մարտիրոսեանց	2
Գ. Չմիկեանց	1
Ո. Նրիցեանց	1
Ա. Սարդարեանց	1
Գ. Կուզինեանց	1
Ս Ղուկասեանց	1
Մ. Առայեանց	2
Գրիգոր Մանրաշեանց	1
Աբրահամեանց	1
Արշակ Թոշաեանց	1
Սարգիս Ղազարեանց	1
Սահակ Աղիբեց Մեխիբեանց	1
Արշակ Երուանդեանց	1
Հովհաննիս Երուանդեանց	1
Գայիանէ Երուանդեանց	1

Առագ Սուլխանեան	1
Զարար Դովյաթեանց	1
Յովհաննէս Նատիկեանց	4
Յովսէփ Երզնկեանց	1
Յակոբ Տէր Յովհանիսեանց	2
Աղէքսանդր Դարբեանց	1
Հաջի Մկրտիչ Փարսեղեանց	2
Անյայտ ոմն	4
Կոստանդին քահանայ Արարատեանց	1
Դպիր Մարտիրոս Անտօնեանց	1
Ներսէս Սահակեանց	1
Արշակ Մարտիրոսեանց	1
Արտէմ Օվջիեան	1
Յովսէփ Բարսեղեան Յովսէփեանց	1
Օրբորդ Հրիփսիմէ Բարսեղեան Յովսէփեանց	1
Գրիգոր Գեորգեան Սայինեանց	1
Բարսեղ Գեորգեան Սայինեանց	1
Աղէքսանդր Յովսէփեան Շայամեանց	1
Սարգիս Մամաջանեանց	1
Սիմէօն Յակոբեան Մատինեանց	1
Վահան Տէր Ղեռնդեան	1
Ստեփան Անեանց	1
Յովհաննէս Բողոսարեանց	1
Տիգրան Եսայեանց	1
Մովսէս Աբրահամեանց	1
Յովսէփ Յովհանիսեան Միրիմանեանց	1
Արշակ Ճշմարիտեանց	1
Յովհաննէս Սմբատեան Բարսամեանց	1
Վաղարշակ Սարգսեան Խոյեցեանց	1
Օրբորդ Ս. Մատինեանց	1
Ստեփան Թարեհոսեան	1
Հայրապետ Մէլիք Գրիգորեանց	1
Կարապետ Մէլիք Ղարազեօզեանց	2
Յարութիւն Ֆանատեանց	1
Սամսոն Խարազեանց	1
Առաքելեանց	1
Միսաք Էօքսիւզեանց	1
Պախազեանց Աղէքսանդր	1
Պետրոս Ասլանեանց	1
Թովմեանց	1

Աղէքսանդր Շահիկեանց	1
Սոսեանց	1
Սիրունեանց	1
Բորիսեանց Նիկողայոս	1
Օրբորդ Կ. Սուգանանեան	1
Պ. Սահակեան	1
Ա. Սիմէօնեանց	2
Գեորգ Շաղինեանց	2
Մուշեղ քահանայ տէր Ղեռնդեանց	2
Արշալիր տէր Ղեռնդեանց	1
Գարեգին տէր Ղեռնդեանց	1
Վարդանիկ տէր Ղեռնդեանց	1
Առաքել Արարատեան	1
Օրբորդ Աստղիկ Արարատեան	1
Աւետիս Աղայեանց	1
Գարիծեյեանց Խակ	1
Թարխանեանց Աղէքսանդր	1
Կ. Ծատուրեանց	1
Օրբորդ Մովիանեանց	1
Վարդուհի Գարիծեյեանց	1
Եգոր Կուզանեանց	1
Առաքելեանց Գաբրիէլ	1
Խոսրով Արզումանեանց	1
Բուդղան Սայամբէկեան	1
Սրբուհի Մէլիքեան	1
Մարտիրոս Յակովբեան Սիմէօնեանց (Զընկուշցի)	1
Հազարապետ Սուլխանեանց	1
Կարապետ Արզումանեանց	1
Առագ Սողոմօնեանց	1
Արտաշէս Միրզեանց	1
Քալանդար Խաչատրեանց	1
Արտէմ Դեմուրեանց	1
Երեմեայ Դայտեան	1
Տիգրան Վարդանեանց	1
Երուանդ Մանդիկեանց	1
Օսկանեանց Եագօր	1
Արշակ Շախմուրադեանց	1
Արշակ Սահակեանց	1
Յովհաննէս Ռամիկեանց	1
Դաւիթ Ռամիկեանց	1

Նիկողայոս Մարտիրոսեանց	1
Գրիգոր Քանանայ Կախեանց	2
Սիմոն Մաղաբեանց	1
Անտոն Բագարեանց	2
Կարապետ Ներսեսեան	2
Գարասիմ Բահաղրեանց	1
Իսահակ Խաչատուրեանց	2
Շիրազարեանց	2
Աւետիք Հախնազարեանց	2
Գրիգոր Շահբուղաղեանց	2
Սամուէլ Դարբիշեանց	2
Գրիգոր Դարբիշեանց	2
Օրիորդ Լ. Դարբիշեանց	2
Մ. քայի Բաղինեանց	1
Գրիգոր Նուբարեանց	1
Օրիորդ Աշխենիկ Արարատեանց	1
Դարգոյ Առաքելեանց	1
Բախշոյ Տէր Առաքելեանց	2
Մարտիրոս քահանայ Ամիրխանեանց	2
Ադէքսանդր Միրզոյեանց	2
Դաւիթ Արեշեանց	2
Ադէքսանդր Ատոմեանց	1
Հասրաթ Զանգիզեանց	1
Մի ոմն (Եօզրաբցի)	1

Շ Ա Մ Շ Ո Ւ Դ Ա

Յովսէփ քահանայ Արարատեանց	3
Տիրուհի Թեկլի Արարատեանց	2
Տիկին Վառվառէ Արարատեան	2
Արարատ Արարատեանց	1
Արմենակ, Հմայակ Է. Աշոտ Արարատեանց	1
Ովսանայ Արարատեանց	3

Շ Ո Ի Շ Ի

Պետրոս Նաղուբեանց	2
Զուրարեանց	1
Խորէն քահանայ Իսկենտրեանց	2
Մակեդոն Վարդանեանց	1

Նսայի Յարութիւնեանց	2
Միքայիլ Գրիգորեանց	2
Կոստանդին Բարուտեանց	1
Միրզա Տէր Սարգսեանց	2
Յովսէփ Մէլիք Շահնազարեանց	1
Թէոս տէր Յովսէփեանց	1
Գրիգոր Նաղուբեանց	1
Հմայեակ Նազարեանց	1
Գրիգոր Անարոնեանց	1
Կոստանդին	2
Թաթևոս Աղախանեանց	1
Նիկողայոս Շահնազարեանց	1
Բեկլեար Նաասարդեանց	2
Կոստանդին Պետրոսեանց	1
Միքայիլ Միլիբարեանց	1
Յովհաննէս քահանայ տէր Գրիգորեանց	1
Գրիգոր Լալաբեկեանց	2
Գրիգոր տէր Սարգսեանց	1
Կոստանդինեան Սեփաստեանց	1
Աղաջան Պողոսարեանց	1
Զաքար Էլջիեանց	1
Ալեքսեյ	2
Ներսէս տէր Յովհաննէսեանց	1
Խաչատուր Զայայեանց	1
Միքայիլ Պողոսեանց	1
Միքայիլ տէր Գասպարեանց	2
Դանիէլ Զարուհեանց	1
Առաքել Բաբախանեանց	1
Աստուածատուր Մալխասեանց	1
Գրիգոր տէր Մանուէլեանց	1
Կոստանդին Գրիգորեան	1
Վահան Դաղեանց	1
Գրիգոր Վարունցեանց	1
Բայաբեկ Մէլիք	1
Օհաննէս բեգ Մ. Նասրեկեանց	1
Կարապետ Գրիգորեանց	1
Անդրեաս Նաջարեանց	1
Միրզաջան Լալազարեանց	1
Բախշի բեգ Վարդանեանց	1

Ե Ր Ե Ի Ա Ն

Յովակիմ տեր Դարբեանց	1
Յովհաննէս Պոյճեանց	1
Խաչատուր տեր Մարութեանց	1
Յովակիմ Մովսէսեան Մարտիրոսեանց	1
Ղազարոս Պապազանեանց	1
Արշակ Խոջայնարեանց	1
Տրդատ Վարդանեանց	1
Յակոբ տեր Յովսէփեանց	1
Գեղամ Ազիզեանց	1
Նազար Սարգսեան	1
Մ. Միրզայեանց	1
Անանիայ տեր Գրիգորեանց	1
Խաչատուր Զարգարեանց	1
Հայրապետ Բաբասեան	1
Գեորգ Գասպարեանց	1
Համբարձում Վարդանեանց	1
Գեորգ Խանջարեանց	1
Հ. Ա. Աբգարեանց	1
Յակոբ մանտեփ Ղեռնդեանց	1
Յովհաննէս Քոջարեան	1
Յակովբ Դանիելեանց	1
Արտեմ Պապազանեանց	1
Առազ Մարգարեանց	1
Ա. Դեմուրեանց	1
Իգրան տեր Յակոբեան	1
Նիկողայոս Մէլիք Առագեանց	1
Տէր Աւետիսեան	1
Թադէոս Թադէոսեան	1
Սափրազ Բեգեան	1
Աղամ Մինասեան	1
Խաչատուր Այդէնեան	1
Վանան Պողոսեան	1
Թադէոս Դեոյեանց	1
Պողոս Սաքինեանց	1
Գ. Քնքուշեանց	1
Սամսոն Խաչատուրեանց	1

Ն Ո Ի Խ Ի

Ռոստոմ բէկ Սիլիկեանց	20
Սարգիս բէկ Ղարախանեանց	10
Միխայէլ Կեանջեցեանց	10
Մովսէս Եպիսկոպոսեանց	10
Գեորգ Մարգարեանց	10
Տիկին Վարսենիկ տեր Խաչատուրեանց	6
Տիկին Սաշինկա Խօջամիրեանց	4
Անուշկա Եաղուբեանց	6
Դաւիթ բէկ Սարգսեան	6
Գրիգոր Մէլիք Բեկարեանց	6
Աբրահամ Բինեարեանց	6
Վահան վարդապետ տեր Գրիգորեանց	6
Ալեքսանդր Նասիբեանց	4
Ալեքսանդր բէկ Մակեդոնսկի	2
Քրիստափոր Յակոբեանց	2
Թուման Եխաբեանց	4
Յարութիւն Քոջարեանց	2
Գրիգոր	2
Շեգանեանց	2
Զայիկայ Թարոսեանց	1
Օրիորդ Սիրանուշ Խօջամիրեանց	2
Տիկին Վարդուհի տեր Թարոսեանց	1
Տիկին Մարիամ տեր Պողոսեանց	1
Տիկին Կատինկայ Իշխանեանց	1
Տիկին Մարիամ տեր Պողոսեանց	1
Ս. Ղարակէօղեանց	2
Շուրէջի Նիկոյայ Արաբեկեանց	6
Տիկին Շուշան Սարգսեանց	2
Սիմօն Բաբարեխեանց (գանձակեցի)	6
Տիկին Շուշանիկ Սարգսեանց	1
Կարապետ Ղուկասեանց	1
Արտեմ Եղիազարեանց	1
Մանուգարեանց	1
Գերասիմ Գեորգեան	1
Աւետիս Դարբեանց	1
Գ. Ղուկասեանց	1
Մեսրոբ քանանայ Բիքեանց	1

Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Պ Ա Տ

Մէքիսիկէ քահանայ Կարապետեան	1
Աղեքսանդր Աբրահամեան	1
Գրիգոր Աղաբեգեան	1
Միքայէլ Ալապերդեան	1
Պատուական Աղապարեանց	1
Դաւիթ Դեյբասարեանց	1
Խրիստափոր Իշխանեանց	1
Բախիշ Լազարեան	1
Աբրահամ Լալայեան	1
Ռոստոմ Խարազեան	1
Ղուկաս Ղուկասեան	1
Յարութիւն Շահբագեանց	1
Պետրոս Շահբագեանց	1
Յարութիւն Սատարեանց	1
Սերգէի Վարդանեանց	1
Յովհաննէս Սարգսեան	1
Սիմէօն տէր Աղեքսանդրեան	1
Աւետիք տէր Յակոբեանց	1
Սողոմոն Բոյեանց	1
Աղբայեանց	1

Ք Ե Լ Ա Ի

Ուսուցիչ Երվանդ Ապրէլեան	1
Ստեփաննոս քահանայ տէր Սահակեան	1
Գեորգ առագ քահանայ տէր Սահակեան	2
Բագդասարեանց	1
Օր. Սիդօնեա Ալիազեան	1
Աղեքսանդր	1
Յարութիւն Թեղեանց	1
Կարապետ Ասլանեանց	1
Փրոնգ Բեգիջանեան	1
Գրիգոր Գրիգորեան	1
Փրոնգ Թարուգեանց	1
Աբէլ քահանայ Սուրբասեան	1
Յովսէփ քահանայ տէր Յարութիւնեան	1
Յովհաննէս Բաղդոյեանց	1
Բաղդասար Եւանգոյեան	1

Գեր. Թադէոս Արք Եպիսկոպոս	2
Գեր. Երեմիա Եպիսկոպոս Գալստեան	4
Արժ. Գրիգոր Վարդապետ Գարնակերեանց	2
Արժ. Եղիա Վարդապետ	3
Արժ. Գեորգ Վարդապետ Աբրահամեան (Ռշտունի)	1
Արժ. Բարդուղիմէոս Վարդապետ	1
Արժ. Յովհաննէս Վարդապետ	1
Արժ. Սահակ Աբեղայ Ամատունի	2
Արժ. Եղիա Վարդապետ	2
Վ. Ա.	1
Արժ. Ղեւոնդ Վարդապետ Յովակիմեան	2
Արժ. Աղամ Սարկաւաղ Արզումեանց	1
Արժ. Ներսէս Վարդապետ Հայկազունի	1
Կիւրեղ Սարկաւազ Նաւումեանց	1
Տիրացոյ Գալուստեան	1
Դայիր Մուշեղ տէր Սերովբեան	1
Ստեփաննոս Մուշեղեանց	2
Ամասիա Սուրբասեան	2
Ռուբէն Մեյիքատամանեանց	1
Բերք Տէր Պետրոսեանց	1
Ի. Սմբատեանց	2
Յովակիմ Շամբորեանց	1
Յարութիւն Տրդատեանց	1
Մկրտիչ տէր Գեորգեանց	1
Ս. Փրիլպոսեան	2
Արժ. Սահակ Վարդապետ Բաղդասարեանց	1
Օրիորդ Շուշանիկ Շամբորեանց	1
Օրիորդ Վերգիլեա Շամբորեան	1
Վահան Օնանջանեանց	1
Վահան Մամիկոնեանց	1
Յարութիւն տէր Բարսեղեանց	1
Զ Աբեղայեանց	1
Օրիորդ Սիրանոյ Յովհաննիսեան	1
Օրիորդ Փառանձմ Յովհաննիսեան	1

Բ Ա Գ Ո Ի

Եղիշէ քահանայ Գեղամեանց	4
Աւետիս Դարբեան	1
Հայկ Գիւլմսրեանց	2
Պետրոս Մեյրումեանց	1
Սողոմոն	—
Վ. Ռափայէիեանց	1
Աղէքսանդր Բաղքիեանց	1
Ա. Գալստեան	2
Օրիորդ Թ. Մամիկոնեան	2
Հ. Ղուկասեան	2
Աղ. Նիսիսեանց	1
Աղէքսանդր Գեօգայեանց	1
Աւաղ Անանեանց	1

Ա Ր Մ Ա Ի Ի Ր

Ռսուրցունի օրիորդ Մարիամ Մակարեան	1
Ռսուրց ը Յակովբ Ղալումեանց	1
Խաչատուր Պողոսեան Իւզբաշեանց	1
Յովնաննէս Մեյիք Դարբեանց	1
Ռսուրցիչ Բ. Թումէիեանց	1
Քրիստափոր Վարդապետեան	1
Տիրացու Սիմեօն Կործենեանց	1
Եղիա Պօպօլ	1
Խաչատուր տէր Յովնաննէսեանց	1
Գեորգ Կիրակոսեանց	1
Պատուական Մուրատեանց	1
Կարապետ Յարութիւնեանց	1

Գ Ա Ն Չ Ա Կ

Մկրտիչ Ղլմեանց	2
Մկրտիչ Ս. Ղաբուիեանց	2
Միքայէլ Խաչամեանց	2
Աղէքսանդր Իսահակեանց	2

Յովնաննէս Յայրբեանց	2
Գրիգոր Չերգէշտեանց	1

Գ Ե Ր Բ Է Ն Գ

Ռսուրցիչ Յարութիւն Մարաղեան	1
Ռսուրցունի Տիկին Մ. Մարաղեան	1
Ռսուրցունի օրիորդ Մ. Մակարեան	1
Տիկին Մարիամ Բեկլարեան	1
Թաթևոս Միրզայեանց	1
Եղեա Երուսաղէմեան	1
Աղաջան Պատայեան	1
Յարութիւն Ապրեսեան	1
Օրիորդ Սիրանոյշ Սպանդարեան	1
Օրիորդ Նունէ Սպանդարեան	1
Օրիորդ Կատերինէ Բաբայեան	1
Օրիորդ Աղէքսանդրեանց	1
Շմառն Վարդանեանց	1
Գրիգոր Ռաբբեանց	1
Իսահակ Յ. Նախկոպոսեանց	1
Սերգէյ Հախումեանց	1
Մարգարէ տէր Ոսկանեանց	1
Աղէքսանդր Երամիլեան	1
Նիկոլայ Ասիրեանց	1
Մինաս Յակովբեանց	1
Աղէքսանդր Ներսէսեան	1
Մ. Մայիսսեանց	1
Գաբր. Բաղդասարեանց	1
Սիմեօն Հ. Հախումեանց	1
Սարգիս Շիրազեանց	1
Աղէքսանդր Նազարեանց	1 *)

*) Նուիրում է մատաղանաս որբիկներին:

Ս Ղ Ն Ա Խ

Եղիշէ քահանայ տէր Աստուածատուրեանց	1
Ոմն	1

Կ Ա Ղ Զ Ո Ի Ա Ն

Բժիշկ Միրիանեանց 2

Ղ Ը Ջ Լ Ա Ր Վ Ա Կ

Աբգար Մ. տեր Գրիգորեանց 1

Շ Ա Մ Ա Խ Ի

Հայոց ուսումնարանի տեսուչ Յակովբ Ճաղարբեկեան 8

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Գրիգոր Մկրտչեան Համալսարանց 1

Ստեփան Դովիթով 1

Հայկ Քարայեղեանց 1

Մարիամ Միրզոյեանց 1

Գեորգ Նաւտիկեանց 1

Յովսէփ Կարապետեան Էջեանց 1

Աղեքսանդր Հայրապետեանց 1



Գ Ա Մ Ս Ս

Գրիգոր Մկրտչեան Համալսարանց

40

0014126

2013

« Ազգային գրադարան



NL0014126

